

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊՈՂՈՍՅԱՆ ՆԱԻՐԱ ՀԱԿՈՒԲԻ

ԳԵՐՄԱՆԱԲՆԱԿ ԹՈՒՐՔ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ ԱԿԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒ ԹԱՅԻՆ ԻՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼ ՈՒ ՄԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ
ԱՐՁԱԿՈՒ Մ 1960-2000-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ.
«ԳԱՍԹԱՐԲԱՅԹԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ» ԿԱՅԱՑՈՒ ՄԼ ՈՒ
ԹԵՄԱՏԻԿ ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒ ԹՅՈՒ ՆՆԵՐԸ

Առե նախտ սոԼ թյ ոԼ ն

Ժ. 01. 07 – «Արտասահմանյ ան գրականոԼ թյ ոԼ ն»
մասնագիտոԼ թյ ամբ բանասիրական գիտոԼ թյ ոԼ ննեՐի
թեկնածոԼ ի աստիճանի հայ ցման

Գիտական ղեկավար՝
բանասիրական գիտոԼ թյ ոԼ ննեՐի
թեկնածոԼ , դոցե նտՌ. Հ. Մելքոնյ ան

Երևան 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

.....3

Գլուխ 1 Գերմանիայի թուրքական համայնքի ձևավորումը եվ գրական անդրադարձները միգրանտական

թեմատիկային.....13

1.1 Գերմանիայի թուրքական համայնքի

ձևավորումը.....13

1.2 XX դարի թուրքական արձակիկայացման եվ զարգացման հիմնական փուլերը (1920-1970-

ականներ).....29

1.3 Թուրքաբնակ գրողների անդրադարձները միգրանտական

թեմատիկային և «գաթարբայ թերական գրականության»

ձևավորումը.....35

Գլուխ 2 Գերմանիայի թուրքական համայնքի գրականության սկզբնավորումն ու զարգացումը

.....48

2.1 Գերմանիայի թուրքական գրականության սկզբնավորումը.

գերմանական

թյուրքյուններ.....4

8

2.2 Սոցիալական խնդիրների արտացոլումը Գերմանիայի թուրքական

գրականության մեջ.....63

2.3 Արևմուտք-արևելք հակադրման և մշակույթների բախման խնդիրը

Գերմանիայի թուրքական գրականության

մեջ.....86

Գլուխ 3 Գերմանիայի թուրքական գրականության զարգացման

հիմնական միտումները 1990-2000-

ականներին.....101

3.1 Գերմանիայի թուրք գրականության երկրորդ փուլի ձևավորումը.

թեմատիկ

փոփոխությունները.....1

01

3.2 Ինքնուրույն խնդրի արծարծումը Գերմանիայի թուրքական գրականության մեջ 1990-ական թվականներին.....	124
3.3 Հայոց ցեղասպանության թեման Գերմանիայի թուրք գրողների ստեղծագործություններում.....	...
...129	
Եզրակացություններ.....	1
51	
Օգտագործված գրականության ցանկ.....	153

ՆԵՐԱՆՈՒ ԹՅՈՒՆ

XX դարի երկրորդ կեսերին ակտիվացած աշխատանքային միգրացիայի արդյունքում ԱՄՆ-ից մինչև Ավստրալիա տարածված թուրքական համայնքներից ամենամեծը և իր ունեցած լծակներով ամենահզորը Գերմանիայի թուրքական համայնքն է՝ այստեղ բնակվում է աշխարհասփյուռ թուրք-միգրանտների 75%-ը¹: Թեև Գերմանիայում պաշտոնապես փոքրամասնության կարգավիճակ և դրանից բխող իրավունքներ ունեն միայն լուծյան սերբերը, ֆրիզները և դանիացիները, սակայն գերմանաբնակ այլազգիների շարքում թե՛ թվով, թե՛ ունեցած ազդեցությամբ, թե՛ առկա խնդիրներով առանձնանում են թուրքերը: Պատահական չէ, որ Գերմանիայում միգրանտ հասկացությունը ասոցացվում է բացառապես թուրքերի հետ, որոնք ունեն և պահպանում են ազգային ու կրոնական հենք ունեցող մենթալիտետ, որն էլ բախվելով եվրոպական/գերմանական մենթալիտետի հետ՝ առաջ է բերում լուրջ խնդիրներ և հակասություններ: Այսօր էլ գերմանացիներից շատերի համար արդիական են հնչում XV դարի գերմանացի գրող Յանս Բոգենփյուլյուրի հետևյալ խոսքերը. «Թուրքերն [գերմանացիներին մեղքերի համար ուղարկված - Ն.Պ.] Աստծո պատիժն են»²:

Սակայն անհերքելի է նաև, որ թուրքական համայնքը իր ուրույն վարք ու բարքով, կենցաղով և ավանդույթներով դարձել է գերմանական հասարակության անբաժանելի մասը, իսկ երկրի քաղաքական, մշակութային, տնտեսական ամենահայտնի գործիչների ցուցակներում ավելի ու ավելի հաճախ հայտնվող թուրքական անունները՝ սովորական երևույթ: Այս պարագայում թուրքական համայնքի պատմության, մշակույթի նկատմամբ հետաքրքրության աճն էլ զարմանալի չէ: Գերմանաբնակ թուրքերին նվիրված պատմական, քաղաքագիտական, սոցիոլոգիական ու սուլմնասիրությունների կողքին կարևոր տեղ ունին նաև այդ համայնքի տարատեսակ խնդիրները, աշխարհայացքը, մտածելակերպը արտացոլող «Գերմանիայի թուրքական համայնքի գրականության» ու սուլմնասիրությունը: Սույն ատենախոսությունը նվիրված է

¹ Laurence J., Islam and citizenship in Germany, Muslim integration: challenging conventional wisdom in Europe and The United States, Washington DC, 2007, p. 57.

² Onur B., Alman Kültüründe Türk İmgesi 1, Ankara, 1993, s. 88.

Գերմանիայի թուրքական համայնքի գրականության կայացման և զարգացման հիմնական փուլերի ուսումնասիրությանը, տարբեր շրջանների գերմանաբնակ թուրք գրողների արձակ ստեղծագործությունների թեմատիկ առանձնահատկությունների վերհանմանը:

Թուրքական համայնքի զարգացմանը զուգահեռ իր կայացումը սկսած «համայնքային» գրականությունն անցել է բավական լուրջ և բարդ ուղի: Կես դարից էլ քիչ ժամանակաշրջանում այն բացառապես թուրքերի համար նախատեսված, նեղ, ներհամայնքային խնդիրներին անդրադարձող ստեղծագործությունների համախումբից վերածվել է համամարդկային հարցերի անդրադարձող, տասնյակ լեզուներով թարգմանվող գրականության: Գերմանիայում բնակվող թուրք գրողների մի մասը միջազգային հեղինակություն է վայելում, նրանց թվում քիչ չեն ոչ միայն գերմանական, այլ և ամենատարբեր եվրոպական և համաշխարհային գրական մրցանակների դափնեկիրներ: Ավելին, գերմանաբնակ թուրք գրող Ֆերիդուն Չափօղլուն նույնիսկ համարվում է գրականության Նոբելյան մրցանակի պոտենցիալ հավակնորդ:

Տրամագծորեն տարբեր գերմանական և թուրքական մշակույթների խաչմերուկում ձևավորված այս գրականությունը բազմաշերտ և ուսումնասիրության արժանի երևույթ է, որը գտնվում է ոչ միայն գերմանացի և թուրք, այլ նաև ռուս, ամերիկացի, անգլիացի հետազոտողների ուշադրության կենտրոնում: Սակայն, հարկ է նկատել, որ մեզ հայտնի ուսումնասիրություններում խնդիրը նման համապարփակ ընդգրկմամբ չի դարձել հետազոտման նյութ և վերլուծության առանցք կազմող հարցադրումները այլ տեսանկյունից են ներկայացված: Թեման միևնույն ժամանակ նոր է և դրահետկապված որոշ նոր իրողություններ, տարատեսակ խնդիրներ ու հարցեր են ի հայտ գալիս: Օրինակ՝ մինչ օրս բաց է մնում անգամ այդ գրականության ճշգրիտ անվանման հարցը. տարիների ընթացքում առաջ քաշված բազմաթիվ անուններից և ոչ մեկը միանշանակ ընդունված չէ:

Հայ կական գիտական շրջանակների կողմից Գերմանիայի թուրքական համայնքի և դրա գրականության ուսումնասիրությունը կարևորվում է տարբեր առումներով: Բացի զուտ թուրքագիտական, գրականագիտական շարժառիթներից մեզ համար կարևոր է նաև այն, որ թուրքական համայնքը ակտիվորեն օգտագործվում է Թուրքիայի Հանրապետության իշխանությունների կողմից հակահայ կական լոբբինգի համար: Ուստի այդ համայնքի, դրա խնդիրների, հասարակական տարբեր շերտերի մտածելակերպի վերհանման տեսանկյունից «համայնքային գրականության» ուսումնասիրությունը արդիական ու կարևոր է, քանի որ այդ գրականությանը իր մեջ պարունակում և արտացոլում է վերոթվարկյալ բոլոր խնդիրների խորքային պատճառներն ու ընկալումները:

Սույն ատենախոսությունը հայ կական իրականության մեջ թուրքական սփյուռքի գրականության ուսումնասիրության նվիրված առաջին աշխատությունն է: Ավելին, պետք է փաստենք, որ աշխատության մեջ ներառված Գերմանիայի թուրքական համայնքի կայացման և զարգացման առանձնահատկություններին վերաբերող մեր ուսումնասիրությունը ևս հայաստանյան իրականության մեջ առաջիններից մեկն է: Կուզենայինք շեշտել, որ հետխորհրդային երկրներում էլ թուրքական սփյուռքին և, մասնավորապես, գրականությանը նվիրված գիտական աշխատությունները ևս շատ քիչ են:

Ատենախոսության նպատակն է ներկայացնել Գերմանիայի թուրքական գրականության ձևավորումն ու զարգացումը, ցույց տալ գրականության թեմատիկ առանձնահատկությունները, Գերմանիայի թուրքական համայնքի կայացման և որոշ գործընթացների էվոլյուցիայի համատեքստում ներկայացնել դրանց ձևափոխումը: Դրա համար առանձնացվել են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել Գերմանիայի թուրքական սփյուռքի կայացման հիմնական փուլերը և խնդիրները 1960-2000-ական թվականներին:

2. Քննել XX դարի կեսերի թուրք գրականության մեջ «գաթարբայ թերական» ուղղվածության ձևավորման և կայացման նախադրյալներն ու առանձնահատկությունները:
3. Ներկայացնել Գերմանիայի թուրքական գրականության զարգացման փուլերը, թեմատիկ և ժանրային առանձնահատկությունները:
4. Ի ցույց դնել համայնքային տարբեր խնդիրների և զարգացումների ազդեցությունը թուրք գրողների գրական թեմաների ընտրության վրա:
5. Ներկայացնել միջմշակութայնության ազդեցությունը Գերմանիայի թուրքական գրականության վրա և դրա թեմատիկ ու ժանրային դրսևորումները:

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել թուրքերեն աղբյուրներ՝ թուրք գրողների վեպեր ու պատմվածքների ժողովածուներ, ինչպես նաև հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն գիտական հետազոտություններ, մամուլի հրատարակումներ:

Գերմանիայի թուրքական համայնքի ձևավորման պատմությունն ու կայացման հիմնական փուլերը ուսումնասիրելու և ներկայացնելու համար մեծապես օգտվել ենք խորհրդային թուրքագետներ Յուլ. Ռոզալիևի³, Ռ. Ստարչենկովի⁴, Ա. Պրոկոպովիչի⁵ աշխատություններից, որոնք պարունակում են խորհրդային գաղափարականացված քարոզչության որոշ տարրեր, սակայն ունեն հարուստ փաստագրական հիմք և հնարավորինս մանրամասն են ներկայացնում թուրքերի արտագաղթի պատճառներն ու ընթացքը: Գերմանիայի թուրքական համայնքում տեղի ունեցող առավել նոր զարգացումներին են նվիրված Յ. Նահապետյանի գիրքը⁶, ինչպես նաև

³ Розалиев Ю., Классы и классовая борьба в Турции, Москва, 1967, նույնի, Особенности развития капитализма в Турции (1923-1960 гг.), Москва, 1972, նույնի, Экономическая история Турецкой Республики, Москва, 1980.

⁴ Старченков Р., Трудовые ресурсы Турции. Демографический, экономический и социальные аспекты, Москва, 1981, նույնի, Проблема занятости и миграции населения Турции, Москва, 1975.

⁵ Прокопович А., Социально-экономические проблемы миграции турецких рабочих в страны Западной Европы, Турция: История, экономика, политика, Москва, 1984.

⁶ Նահապետյան Յ., Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ կական գործունեությունը, Երևան, 2010:

հետազոտողներ Ս. Սուլմլյոնսի⁷, Ն. Գուբանովի⁸ վերլուծական հոդվածները: XX դարի կեսերին թուրքիայում տիրող իրադրության, միգրացիայի սկզբնավորման, ընթացքի և հետևանքի մասին հետաքրքիր անդրադարձ կա Ռ. Քասաբայի խմբագրությամբ Քեմբրիջում տպագրված «Թուրքիայի պատմություն» գրքում⁹: Համայնքի մասին կարևոր տեղեկություններ ենք ստացել նաև թուրք հեղինակներ Ք. Սորթանի¹⁰, Ա. Գիթմեզի¹¹, Մ. Գյուլրի¹², Հ. Քեսքինի¹³, Ֆ. Շենի¹⁴, Բ. Թուրանի¹⁵, Օ. Թուրքդողանի¹⁶ աշխատություններից: Այս շարքում կուզենայինք հատկապես առանձնացնել թուրք նախկին դիվանագետ Ջ. Ունվերի հոլշերը¹⁷, որոնցում կարևոր անդրադարձներ կան դեռևս 1980-ականներին Գերմանիայում թուրքիայի Հանրապետության դեսպանատան կազմակերպած հակահայ կական գործողություններին:

Թուրքական համայնքի արդի վիճակին նվիրված ուշագրավ աշխատություն է գերմանացի տնտեսագետ Թ. Սարրացինի «Գերմանիա. ինքնավիզիոնացում» գիրքը¹⁸, որ լուրջ աղմուկ բարձրացրեց և քննադատության առարկա դարձավ: Պետք է նշենք, որ այս աշխատությունը հարուստ է փաստագրական նյութով, իսկ հեղինակի դատողությունները թեև երբեմն զգացմունքային են, սակայն արտացոլում են իրականությունը: Նույնը չի կարելի ասել թուրք հեղինակների մեծամասնության մասին, ովքեր միտում ունեն թուրքերին ներկայացնել որպես Գերմանիան կառուցողներ ու շենացողներ, իսկ առկա բոլոր խնդիրների մեջ մեղքի առյուծի

⁷ Сумленный С., Турецкое население Германии: Бомба замедленного действия, 21-й ВЕК, № 1 (3), 2006, стр. 47-61.

⁸ Губанов Н., Роль диаспоры в системе турецко-германских экономических отношений, Современная Турция: проблемы и решения, Москва, 2006, стр. 184-214.

⁹ The Cambridge History of Turkey, vol. 4: Turkey in the Modern World, Edited by Reşat Kasaba, Cambridge, 2008.

¹⁰ Mortan K., Sarfati M., Vatan Olan Gurbet. Almanya'ya İşçi göçünün 50. Yılı, İstanbul, 2011.

¹¹ Gitmez A. S., Yurtdışına İşçi Göçü ve Geri Dönüşler "Beklentiler... Gerçekleşenler", İstanbul, 1983, Uğurlu A.R. Almancı Yabancılar, İstanbul, 1997.

¹² Gür M., Sütü Küstürmek. Almanya'da Anadolu Kadınları, İstanbul, 2004.

¹³ Keskin H., Göçün 50 yılında Türklerin Gölgesinde Almanya. Geleceğe Yönelik Uyum Politikası İçin Görüşler, İstanbul, 2011.

¹⁴ Şen F., 50. Yılında Göç, Ankara, 2011.

¹⁵ Turan K., Almanya'da Türk Olmak, İstanbul, 1992.

¹⁶ Türkdogan O., İkinci Neslin Dramı Avrupa'daki İşçilerimiz ve Çocukları, İstanbul, 1984.

¹⁷ Ünver C. O., Otuzbeş Yıllık Göç ve Bürokrasi Tanıklıklarım, Ankara, 2008.

¹⁸ Саррацин Т., Германия. Самоликвидация, Москва, 2012.

բաժինը բարդել գերմանացիների վրա, ինչը ի հարկե հեռու է օբյեկտիվ գնահատական լինելուց:

Ատենախոսության համար օգտակար տեսական գրականագիտական աշխատություններից հարկ ենք համարում առանձնացնել Էդ. Ջրբաշյանի¹⁹, Մ. Բախտինի²⁰, Վ. Խալիզևի²¹ մենագրությունները:

Մեթոդաբանական նպատակահարմարությունից ելնելով՝ գերմանիայի թուրքական գրականության կայացումն ու զարգացումը դիտարկել ենք XX դարի կեսերի թուրքական արձակի համապատկերում: Այդ արձակի որոշակի առանձնահատկությունների ուսումնասիրման համար օգտագործել ենք հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն հետազոտություններ: Հայերեն աշխատություններից հատկապես կարևորում ենք հայ թուրքագետներ Ա. Սաֆարյանի²², Ռ. Մելքոնյանի²³, Ս. Գալչոյանի²⁴, Ա. Մարտիրոսյանի²⁵, Է. Խաչատրյանի²⁶ ժամանակակից թուրք գրականության տարբերասպեկտերին նվիրված աշխատություններն ու հոդվածները, որտեղ հեղինակներն անդրադարձնում են XX դարի թուրքական արձակի զարգացման ուղղություններին:

XX դարի թուրքական արձակի առանձնահատկություններին բավական խորը և համակողմանի է անդրադարձել խորհրդային արևելագիտությունը: Հատկապես հարկ է առանձնացնել և կարևորել

¹⁹Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան, 1980, նույնի, Գրականագիտության ներածություն, Երևան, 2011:

²⁰Бахтин М., Вопросы литературы и эстетики: Исследования разных лет, Москва, 1975.

²¹Хализев В., Теория литературы, Москва, 2002.

²² Սաֆարյան Ա., Չիյա Գյոթալ փը և «Թյուրքականության հիմունքները», Երևան, 2012:

²³ Մելքոնյան Ռ., Թուրք գրող Ֆաբիր Բայբուրթի «Գերանդին» վեպը, Գարուն, N 12, Երևան 2004, էջ 71-73, նույնի, Թուրք գրող Ֆաբիր Բայբուրթը, Նոր-դար, N 4, Երևան, 2004 էջ 117-124, նույնի, «Գյուղական ինստիտուտները» և գրական կյանքը Թուրքիայում (1940-50-ական թթ.), Կանթեղ, N 1 (22), Երևան, 2005, էջ 139-144, նույնի, «Գասթաբայթերների» թեմատիկան թուրք գրող Ֆաբիր Բայբուրթի ստեղծագործություններում, Արևելագիտության հարցեր, հ. 6, 2006, էջ 258-261, նույնի, Հայոց ցեղասպանության թեման արդի թուրքական գրականության մեջ, Երևան, 2010:

²⁴ Գալչոյան Ս., Դասակարգերի փոխարարությունն ինդիքը Յաշար Քեմալի «Թիթեղը» վիպակում, Արևելագիտության հարցեր, հ. 7, Երևան, 2012, էջ 342-362:

²⁵ Մարտիրոսյան Ա., Թուրքական քաղաքական վեպի թեմատիկ առանձնահատկությունների շուրջ (1980-ական թվականներ), Արևելագիտության հարցեր, հ. 7, Երևան, 2012, էջ 371-378:

²⁶ Խաչատրյան Է., Օրհան Քեմալ. գրական դիմանկարի փորձ, Արևելագիտության հարցեր, հ. 7, Երևան, 2012, էջ 363-370:

խորհրդային ու ռուսաստանյան գիտնականներ Լ. Ալկանայի²⁷, Ա. Բաբանի²⁸, Ն. Յակովլևայի²⁹, Ի. Բարուլինայի³⁰, Ռ. Ֆիշի³¹, Ս. Ուտուրգաուրիի³², Ե. Մաշտակովայի³³, Մ. Ռեպենկովայի³⁴, Վ. Սլոբոդենյուկի³⁵ աշխատությունները: XX դարի թուրք գրականության տարբեր ուղղությունների, հոսանքների, թեմատիկ առանձնահատկությունների վերլուծությանն են նվիրված թուրք գրականագետներ Թ. Չալմանի³⁶, Գ. Այթաչի³⁷, Յ. Էջևիթի³⁸, Մ. Ունլուի³⁹ աշխատությունները: Մեր ատենախոսության մեջ կարևորել ենք նաև թուրք գրողների տեսական հայացքներն ու գրական բանավեճերը, որոնք վերաբերել են թուրքական վեպի և դրա թեմատիկ առանձնահատկություններին⁴⁰:

Գերմանիայի թուրք գրականությանը վերաբերող ուսումնասիրություններից հարկ է նշել Լ. Ադելսոնի⁴¹ հիմնարար աշխատությունը, գրականագետներ Թ. Չիզմանի և Վ. Յեշիլադայի խմբագրությամբ տպագրված և գերմանաբնակ թուրք գրող Չաֆեր Շենոջաքի ստեղծագործական կյանքը ներկայացնող գերմաներեն-

²⁷ Алькаева Л., Из истории турецкого романа (20-50-е годы XX в.), Москва, 1975, Սուլսի, Очерки по истории турецкой литературы (1908-1939), Москва, 1959, Սուլսի, Сюжеты и герои в турецком романе, (конец XIX начало XX вв), Москва, 1966.

²⁸ Бабаев А., Очерки современной турецкой литературы, Москва, 1959.

²⁹ Яковлева Н., Турецкая новелла от первых шагов до поры зрелости, Плата за молчание: рассказы турецких писателей, Москва, 1974.

³⁰ Баролина И., Турецкая народная песня/Тюркские литература и фольклор, Москва, 2004.

³¹ Фиш Р., Писатели Турции: Книги и судьбы, Москва, 1963, Սուլսի, Турецкие дневники. Встречи. Размышления, Москва, 1977.

³² Утургаури С., Турецкая проза 60-70-х годов: основные тенденции развития, Москва, 1982, Սուլսի, О некоторых особенностях современного турецкого критического реализма (на примере новеллистики Бекира Ыылдыза), Народы Азии и Африки: история, экономика, культура, N 6, Москва, 1976, Սուլսի, Турецкая диаспора в Германии. Социокультурная эволюция, Сборник "Ближний Восток и современность". Выпуск 21., Москва, ИИИиБВ, 2004, стр. 457-467.

³³ Маштакова Е., К истории турецкого романа, Вопросы тюркской филологии, выпуск 4, Изд. Центр ИСАА при МГУ, Москва, 1999.

³⁴ Репенкова М., От реализма к постмодернизму. Современная турецкая проза, Москва, 2008.

³⁵ Слободенюк В., Художественная литература турецкой диаспоры в Германии во второй половине XX-го начале XXI-го века: к вопросу о культуре пограничья, Научные проблемы гуманитарных исследований, N 4, Пятигорск, 2011, стр. 33-38.

³⁶ Halman T. S., A millenium of Turkish literature (Concise history), Ankara, 2009.

³⁷ Aytaç G., Çağdaş Türk Romani Üzerine İncelemeler, Ankara, 2012.

³⁸ Ecevit Y., Türk Romanında Postmodernist Açılımlar, İstanbul, 2004.

³⁹ Ünlü M., Türkçede Öykü-Roman, İstanbul, 2009.

⁴⁰ Beş Romancı Köy Romanı Üzerine Tartışıyor, İstanbul, 1960.

⁴¹ Adelson L. A., The Turkish Turn in Contemporary German Literature: Toward a New Critical Grammar of Migration., New York, 2005.

անգլերեն երկլեզու ժողովածուն⁴², Բ. Օնուրի⁴³ թուրք-գերմանական մշակութային կապերը ներկայացնող գիրքը, Ա. Օզթուրքի գաթարբայ թերական բանահյուսությանը նվիրված ախատությունը⁴⁴: Առանձնացնենք նաև Թ. Էքիզի⁴⁵, Ի. Բոյաջըի⁴⁶, Մ. Գյոբենլիի⁴⁷, Ի. Օզբաքըրի⁴⁸, Յ. Քոջադորուի⁴⁹, Է. Չենգինի⁵⁰ հոդվածները, որոնք կարևոր տեղեկատվական աղբյուր են հանդիսացել:

Ատենախոսության հիմնական նյութն են եղել գերմանաբնակ թուրք գրողների ստեղծագործությունները, որոնց քննության և վերլուծության հիման վրա ենք առանձնացրել Գերմանիայի թուրք գրականության մեջ առաջ քաշված հիմնական խնդիրները, ներկայացրել 1960-ականներից մինչև մեր օրերը թեմաների ընտրության ու փոփոխության դինամիկան: Ուսումնասիրված գրողների մի մասն, ինչպես օրինակ, Յ. Փազարբայան⁵¹, Յ. Բեքթաշը⁵², Գ. Դալը⁵³, Ա. Օրենը⁵⁴ սկսել են իրենց ստեղծագործական ուղին դեռևս

⁴² Zafer Şenocak, ed. By Cheessman T., Yeşilada K., Cardiff, 2003.

⁴³ Onur B., Alman Kültüründe Türk İmgesi 1, Ankara, 1993, ևսլ խի, Almanya'da Türk Kültürü- Çok-Kültürlülük- Kültürlerarası Eğitim, İstanbul, 2012.

⁴⁴ Öztürk A.O., Almanya Türküleri: Türk Göçmen Edebiyatının Sözlü Öncü Kolu, Ankara, 2001.

⁴⁵ Ekiz T., Avrupa Türk Edebiyatı ve Bir Temsilcisi: Emine Sevgi Özdamar, Journal of Arts and Science, N 7, Çankaya Üniversitesi, Ankara, 2007, s. 33-47.

⁴⁶ Boyacı İ., Pazarkaya Örneğinde Göçmen Türk Aydınının Kimlik Problemi ve Bu Problemin Çözümü, Turkish Studies, International Periodical For the Languages, Literature and History of Turkish or Turkic, vol. 5/2 Spring, 2010, 878-896, http://www.turkishstudies.net/Makaleler/1442262050_boyac%C4%B1_ismail.pdf.

⁴⁷ Göbenli M., Göç ve Edebiyat, Multitudes/Altyazı, No. 3-4, Paris, 2003, s. 3-11.

⁴⁸ Özbakır İ., Almanya “Konuk İşçi Edebiyatı’nın Bir Türk Temsilcisi Renan Demirkan’ın Üç Şekerli Demli Çay”ında Kimlik Problemi, Türklük Bilimi Araştırmaları IX, 2000, <http://www.ibrahimozbakir.com/privat/makaleler/demirkan.pdf>, s. 211-222.

⁴⁹ Kocadoru Y., Yüksel Pazarkaya ve Nevfel Cumart’ın Şiirlerindeki Almanya İmgelerinin Karşılaştırılması, Osmangazi Üniversitesi Sosyal Bilimler Dergisi, Cilt 5, Sayı 1, Eskişehir, 2004, s. 67-73.

⁵⁰ Zengin E., Türk-Alman Edebiyatına Tarihsel Bir Bakış ve Bu Edebiyata İlişkin Kavramlar, Hacettepe Üniversitesi Türkiyat Araştırmaları Dergisi, Bahar (Sayı 12), Ankara, 2010, s. 329-349, <http://hutad.hacettepe.edu.tr/index.php/hutad/article/viewFile/121/87>.

⁵¹ Pazarkaya Y., Kemal ile Burak. Cennet Ülkesine Yolculuk, Ankara, 1998, ևսլ խի, Oturma izni, İstanbul, 1977.

⁵² Bektaş H., Kapıkule Nerde, İstanbul, 1983, ևսլ խի, Hamriyanım, İstanbul, 1989, ևսլ խի, Bektaş H., Gölge Kokusu, İstanbul, 2000.

⁵³ Dal G., E-5, İstanbul, 1979, ևսլ խի, İş Sürgünleri, İstanbul, 1976, ևսլ խի, Kolları Yolunmuş Maymun, İstanbul, 1988.

⁵⁴ Ören A., Beklenmedik Bir Ziyaretçi, İstanbul, 1995, ևսլ խի, Berlin Savignyplatz, İstanbul, 1993, ևսլ խի, Muhteşem Gündoğdu, İstanbul, 2011, ևսլ խի, Nar Çiçeği, 1988, ևսլ խի, Özel Bir Sürgün, İstanbul, 2004.

1970-ականներին, մյուսները՝ Է. Ս. Օզդամարը⁵⁵, 2. Շենոջաքը⁵⁶, Ռ. Դեմիրքանը⁵⁷, Յ. Քարան⁵⁸ գրական ասպարեզ են եկել 1980-ականների վերջին - 1990-ականների սկզբին: Ատենախոսության մեջ քննության ենք ենթարկել Թուրքիայում «գասաթարբայ թերական» թեմատիկայի շրջանակներում տպագրված Ֆ. Բայքուրթի⁵⁹, Ա. Աղաողլուի⁶⁰, Բ. Յըլդըզի⁶¹, Դ. Աքչամի⁶², Ն. Բեհրամի⁶³ ստեղծագործությունները: Ատենախոսության մեջ ընգրկել ենք նաև գրողներ Մ. Ջանբուլաթի⁶⁴, Է. Օզդենի⁶⁵, Ա. Սոնայի⁶⁶, Ս. Շեյնհարթի⁶⁷, Ս. Թուրանի⁶⁸, Բ. Յալչընի⁶⁹ գործերը, որոնք համեմատաբար ավելի քիչ են հայտնի ընթերցողների և մասնագետների շրջանում: Այս հեղինակների մասին խոսելիս գրականագետները սովորաբար բավարարվում են անունների թվարկմամբ, մինչդեռ նրանց գրքերում հանդիպում ենք թուրքական համայնքի համար արդիական խնդիրների հետաքրքիր արծարծումներ, սուր հարցադրումներ:

Կցանկանայինք հատուկ առանձնացնել գրող Յ. Փազարբայի⁷⁰ Գերմանիայի թուրք գրականության կայացմանը նվիրված հոդվածը, որն այս թեմայով թերևս ամենաարժեքավոր վերլուծական նյութն է:

⁵⁵ Özdamar E. S., Annedili, İstanbul, 2013, Նույնի, Aynadaki Avlu, İstanbul, 2012, Նույնի, Haliçli Köprü, İstanbul, 2008, Նույնի, Hayat Bir Kervansaray, İstanbul, 2008, Նույնի, Tuhaf Yıldızlar Dünyaya Bakıyorlar Gözlerini Kırpmadan, İstanbul, 2012.

⁵⁶ Şenocak Z., Dünyanın İki Ucu, İstanbul, 2011, Նույնի, Tehlikeli Akrabalık, İstanbul, 2006, Նույնի, Yolculuk Nereye, İstanbul, 2007.

⁵⁷ Demirkan R., Üç Şekerli Demli Çay, İstanbul, 1991.

⁵⁸ Kara Y., Selam Berlin, İstanbul, 2004.

⁵⁹ Baykurt F., Yarım Ekmek, İstanbul, 2002, Նույնի, Koca Ren, İstanbul, 2003, Նույնի, Barış Çöreği, İstanbul, 1982, Նույնի, Yüksek Fırımlar, İstanbul, 2002.

⁶⁰ Ağaoğlu A., Fikrimin İnce Gülü, İstanbul, 2006.

⁶¹ Yıldız B., Alman Ekmeği, İstanbul, 2011, Նույնի, Beyaz Türkü, İstanbul, 2010, Նույնի, Türkler Almanya'da, İstanbul, 2012, Ыылдыз Б., Солнце в стене: повести и рассказы турецких писателей, Москва, 1979.

⁶² Akçam D., Sevdam Ürktü, Ankara, 1998.

⁶³ Behram N., Kız Ali, İstanbul, 2001, Նույնի, Gurbet, İstanbul, 1998.

⁶⁴ Canbolat M., Vatan Haini Niyazi, İstanbul, 1999.

⁶⁵ Özgen E., Derin Sularda, İstanbul, 1990.

⁶⁶ Sonay A., Burada Yaşamak İstiyorum, İstanbul, 1999.

⁶⁷ Scheinhardt S., Pusuda Kin, İstanbul, 2006.

⁶⁸ Turan S., Şok: Bir Hostesin Anıları, İstanbul, 1993.

⁶⁹ Yalçın K., Yaşama Gücü, İstanbul, 2013, Նույնի, Anadolu'nun evlatları: Yüz yılın tanıkları, Köln, 2008, Նույնի, Sarı Gelin, İstanbul, 2005.

⁷⁰ Pazarkaya Y., Göç Süreciyle Yurtdışında Oluşan Türk Edebiyatı; Türk Edebiyatı Tarihi, Cilt 4, Ankara-İstanbul, 2007 s. 579-593.

Էր: Նաև նշենք 2. Շենոջափ⁷¹ երկու հրապարակախոսական հոդվածները, որոնք լույս են սփռում համայնքի արդի խնդիրների վրա:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացված են աշխատանքի նպատակները, գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, օգտագործված գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ **ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ ՄԻԳՐԱՆՏԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՅԻՆ** բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ **ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ** ենթագլխում ներկայացված է թուրքական սփյուռքի կայացման պատմությունը: Երկրորդ՝ **XX ԴԱՐԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՁԱԿԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ (1920-1970-ականներ)** ենթագլխում անդրադարձել ենք XX դարի կեսերին թուրքական արձակում «գասթարբայ թերական» թեմատիկայի սկզբնավորմանը: Երրորդ՝ **ԹՈՒՐՔԱԲՆԱԿ ԳՐՈՂՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ ՄԻԳՐԱՆՏԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՅԻՆ ԵՎ «ԳԱՍԹԱՐԲԱՅԹԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ** ենթագլխում ներկայացվում է 1960-ականներին սկսված և մինչև 1980-ականները զարգացում ապրող «գասթարբայ թերական» թեմատիկան թուրքիայում բնակվող, բայց միգրանտական փորձ ունեցող գրողների ստեղծագործություններում:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՒ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ վերնագրով երկրորդ գլուխը ևս բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ **ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԹՅՈՒՐՔՈՒՆԵՐ** ենթագլխում ներկայացնում ենք 1960-ականների վերջին - 1970-ականների սկզբին արդեն գերմանաբնակ թուրք գրողների առաջին ստեղծագործությունների ի հայտ գալ: Այս գլխի երկրորդ՝

⁷¹ Şenocak Z., Turkey: the lost generation, http://www.ghi-dc.org/files/publications/bu_supp/supp006/bus6_175.pdf.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՒՆՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ենթագլխում քննության են առնվում գերմանալեզու թուրք գրողների առաջին ստեղծագործությունների թեմատիկ առանձնահատկությունները: Երրորդ՝ **ԱՐԵՎՄՈՒՏՔ-ԱՐԵՎԵԼՔ ՀԱԿԱԴՐՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԲԱԽԱՆ ԽՆԴԻՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ** ենթագլուխը նվիրված է թուրք գրողների ստեղծագործություններում գերմանական և թուրքական մշակույթների կիզակետում հայտնված մարդկանց հոգեվիճակի արտացոլմանը:

Երրորդ գլուխը՝ **ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 1990-2000-ԱԿԱՆՆԵՐԻՆ** ևս երեք ենթագլուխ ունի: Առաջին՝ **ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԶԵՎԱԿՈՐՈՒՄԸ. ԹԵՄԱՏԻԿ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** ենթագլխում ներկայացվում են XX դարի վերջին տասնամյակում գերմանիայի թուրքական գրականության մեջ տեղի ունեցած լուրջ փոփոխությունները: Երկրորդ՝ **ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԻ ԱՐՃԱՐՃՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ** ենթագլխում լուսաբանվում է հետզհետե մեծ կարևորություն ձեռք բերող ինքնության խնդիրը և գրականության անդրադարձները դրան: Երրորդ՝ **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ** ենթագլխում ներկայացված է թուրք գրողների անդրադարձը Հայոց ցեղասպանությանը և առհասարակ հայկական թեմատիկային:

Ատենախոսության վերջում ներկայացված են եզրակացությունները:

ԳԼՈՒԽԱՌԱՋԻՆ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱԿՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ ՄԻԳՐԱՆՏԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՅԻՆ

1.1 ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱԿՈՐՈՒՄԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ավերված ու հսկայական մարդկային կորուստներ կրած Գերմանիան արդեն 1950 թ. կարողացավ վերականգնել արդյունաբերության նախապատերազմյան մակարդակը, իսկ 1956 թ. ավելացնել այն կրկնակի անգամ: Աշխարհը խոսեց «գերմանական տնտեսական հրաշքի» մասին: Տնտեսության զարգացմանը զուգընթաց, սակայն, ակնառու էր դառնում աշխատուժի պակասը: Բավական խոսուեն է միայն այն փաստը, որ 1961 թ. գործազուրկների թիվը երկրում 94856 էր, իսկ թափուր աշխատատեղերի քանակը՝ 572758⁷²: Աշխատանքի ներքին շուկայում առաջացած բացը գերմանական իշխանությանը ներդրող ուժերը լրացնել ավելի թույլ զարգացած երկրների հետ հյուրաշխատողներ (գերմաներեն՝ Gastarbeiter) հրավիրելու վերաբերյալ միջպետական պայմանագրեր կնքելու միջոցով⁷³: Գաթարբայթերական առաջին պայմանագիրը Գերմանիան կնքեց 1955 թ. Իտալիայի⁷⁴, այնուհետև 1962 թ. Իսպանիայի, 1963 թ. Հունաստանի, 1964 թ. Պորտուգալիայի, 1965 թ. Թունիսի և 1968 թ. Հարավսլավիայի հետ⁷⁵:

Օրըստօրե հզորացող գերմանական տնտեսության համար աշխատուժի մատակարար դարձավ նաև Թուրքիայի Հանրապետությունը: Աշխատուժի փոխանակման պայմանագիր

⁷² Turan K., *Almanya'da Türk Olmak*, İstanbul, 1992, s. 14.

⁷³ Նշենք, որ գերմանացիներն արդեն իսկ ունեին ժամանակավոր միգրանտների աշխատուժն օգտագործելու փորձ: 1880-1910 թթ. տնտեսության ծաղկման ժամանակաշրջանում գյուղատնտեսության, շինարարության, ածխի և երկաթի արդյունահանման ոլորտներում աշխատում էր 1.000.000-ից ավելի միգրանտ (աշխատողների մոտ 4.1%-ը)՝ հիմնականում Լեհաստանից, Ռումինիայից, Հունգարիայից և Իտալիայից: Մանրամասն տե՛ս Türkdoğan O., İkinci Neslin Dramı Avrupa'daki İşçilerimiz ve Çocukları, İstanbul, 1984, s. 25, Gitmez A. S., Yurtdışına İşçi Göçü Ve Geri Dönüşler "Beklentiler...Gerçekleşenler", İstanbul, 1983, s. 46, Uğurlu A. R., *Almanca Yabancılar*, İstanbul, 1997, s. 8.

⁷⁴ Hoff H., *Fifty Years after the invite, Turks are still outsiders in Germany*, <http://www.time.com/time/world/article/0,8599,2026645,00.html>.

⁷⁵ Keskin H., *Göçün 50 Yılında Türklerin Gölgesinde Almanya. Geleceğe Yönelik Uyum Politikası İçin Görüşler*, İstanbul, 2011, s. 37.

ստորագրել ու առաջարկով Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախագահ Թեոդոր Հոյսը հանդես եկավ 1957 թ. Թուրքիա կատարած պաշտոնական այցի ընթացքում⁷⁶: Նույն տարվա ապրիլին Հոյսի անմիջական հովանավորությամբ միգրանտների առաջին փոքրիկ խումբը՝ 12 երիտասարդ թուրք ինժեներներ իրենց ընտանիքներով, աշխատանքի անցան Համբուրգում⁷⁷:

1950-ականների վերջում բնակչության արագ աճի, առեւտրի չափերի հասնող գործազրկության, աղքատության տարածման, գյուղաբնակների հողազրկության, ռազմական ծախսերի մեծացման, տնտեսական և քաղաքական միջարք խնդիրների պատճառով⁷⁸ ծանր վիճակում գտնվող Թուրքիայի կառավարող շրջանակներին նման պայմանագիրը հնարավորություն էր տալ ու մի կողմից նվազեցնել գործազուրկների թիվը և եականորեն թուլացնել առկասոցիալական լարվածությունը, մյուս կողմից՝ հարստացնել երկիրը արտերկրում աշխատող հայրենակիցների ուղարկած գումարներով, իսկ նրանց վերադարձից հետո Եվրոպայի առաջատար երկրում ձեռք բերված փորձը կիրառել սեփական տնտեսության մեջ⁷⁹: Թուրքիայի նախկին վարչապետ Սուլեյման Դեմիրելը ասել է. «Թուրքիայից Եվրոպա՝ Գերմանիա, աշխատուժե ուղարկելը շատ կարևոր էր Թուրքիայի զարգացման համար: Մենք Գերմանիան դիտարկում էինք որպես դպրոց: Մեր նպատակն էր, որ մեկնողները իրենց գործում հմտացած ետ վերադառնան»⁸⁰: Հաշվի առնելով վերոնշյալ

⁷⁶ Թուրքիան և Գերմանիան արդեն իսկ ունեին փոխադարձ աշխատանքային միգրացիայի փորձ: Հոյսի հրավերից 100 տարի առաջ՝ 1857 թ. օսմանյան սուլթանի հրավերով Գերմանիայից արհեստավորներ և հողագործներ են ներգաղթել կայսրության տարածք, իսկ 1933 թ. Թուրքիայի Հանրապետության նախագահ Մուսթաֆա Բեմալի հրավերով 100 գերմանացի գիտնական փորձի փոխանակման նպատակով գնացին Թուրքիա և մոտ 15 տարի աշխատեցին երկրի տարբեր գիտական հաստատություններում: Բացի այդ, XIX դարի վերջին - XX դարի սկզբին Գերմանիա սովորելու կամ վերապատրաստվելու մեկնած թուրք ուսանողների ու զինվորականների մի մասը հաստատվեց այդ երկրում: Որոշ աղբյուրների վկայությամբ XX դարի սկզբին օսմանյան և գերմանական իշխանությունների միջև աշխատուժի տրամադրման վերաբերյալ համաձայնություն է եղել Բեմլինի «Փերա Սիգարա» ընկերության աշխատողների թվում կային նաև թուրքեր: Այս մասին մանրամասն տե՛ս Mortan K., Sarfati M., Vatan Olan Gurbet. Almanya'ya İşçi Göçünün 50. Yılı, İstanbul, 2011, s. 2-14, Uğurlu A. R., Երկրի առաջը, էջ 8-9, Türkdöğän O., Երկրի առաջը, էջ 26:

⁷⁷ Batı Avrupa Türkleri F. Almanya'da 30. yıl, Ankara, Avrupa Türk İslam Birliği, 1992, s. 7.

⁷⁸ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Розалиев Ю., Особенности развития капитализма в Турции (1923-1960 гг.), Москва, 1972, стр. 297-300, ևսև Старченков Р., Трудовые ресурсы Турции. Демографический, экономический и социальные аспекты, Москва, 1981, стр. 101-109.

⁷⁹ Batı Avrupa Türkleri F. Almanya'da 30. yıl, s. 47.

⁸⁰ Mortan K., Sarfati M., Vatan Olan Gurbet. Almanya'ya İşçi Göçünün 50. Yılı, İstanbul, 2011, s. 11.

պատճառները՝ թուրքական իշխանությունները պայմանագիր կնքեցին Բելգիայի, Յուգոսլավիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի, Շվեդիայի, Մերձավոր Արևելքի նավթային պետությունների և անգամ Ավստրալիայի հետ: Սակայն աշխատուժի փոխանակման միջպետական առաջին և մասշտաբներով ամենախոշոր պայմանագիրը կնքվեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ 1961 թ. հոկտեմբերի 30-ին Անկարայում⁸¹: Պայմանագիրը նախատեսում էր երկու, առավելագույնը երեք տարին մեկ անգամ հյուր-աշխատողների կազմի փոփոխությունն՝ ռոտացիա: Ավելին, պայմանագրի 10-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր ցանկացած պահի առանց վարչարարական խոչընդոտներ ստեղծելու ետ ընդունել Գերմանիայում գտնվող իր աշխատողներին: Ընտանիքների վերամիավորումը արգելվում էր: Հետևաբար, ի սկզբանե թուրքերի Գերմանիայում մշտական բնակության մասին խոսք չկար: Մարդիկ պարտավորվում էին գնալ արտերկիր, փող աշխատել, վերադառնալ և կուտակած գումարով ավելի բարեկեցիկ ապրել Թուրքիայում:

Մեկնել ցանկացողները հայտ էին ներկայացնում Ստամբուլում գործող «Գերմանական համագործակցության բյուրոյի» տարածաշրջանային մասնաճյուղեր, որտեղ անց էր կացվում նախնական հարցազրույց: Հարցազրույցը հաջողությամբ հաղթահարողներին հրավիրում էին Ստամբուլ իրենց հմտությունները ցույց տալու և բուժզննությունն անցնելու համար: Այս փուլում հայտատուների մոտ 40%-ը հիմնականում առողջական խնդիրների պատճառով մերժում էր ստանում և միայն բուժզննման արդյունքում առողջ համարվածները գերմանացի գործատուի հետ անհատական պայմանագիր կնքելուց հետո ուղևորվում էին Գերմանիա⁸²: Ի սկզբանե թուրքական իշխանությունները հայտարարել էին, որ մինչ 1967 թ. 220 հազար մարդ կմեկնի Գերմանիա աշխատելու, սակայն, ըստ պաշտոնական տվյալների, 1965 թ. այս թիվը գերազանցվել էր, և դեռ 300 հազար մարդ

⁸¹ Göksu T., Türkiye'nin Dış Göç Politikası. 21. Yüzyılında Türk Dış Politikası. editor Bal İ., İstanbul, 2004, s. 127.

⁸² Այս մասին առավել մանրամասն տե՛ս Старченков Р., Проблема занятости и миграции населения Турции, Москва, 1975, стр. 114-115, Demircioglu M., Federal Almanya'dan Kesin Dönüş Yapan İşçilerimizin Sosyo - Politik Sorunları, pp. 122-124, www.journals.istanbul.edu.tr/iusskd.

Էլ սպասուժ Էր Գերմանիա մեկնելու իր հերթին⁸³: Արդեն 1972 թ. մամուլում տպագրվեց Գերմանիա մեկնած 500.000-րդ թուրք հյուրաշխատողի Նեջաթի Գյուլվենի նկարը⁸⁴: Ավելին, Ն. Գյուլվենի մեկնումը վերածվեց իսկական տոնախմբության⁸⁵: Նույն տարվա տվյալներով դեռևս 1.051.138 մարդ սպասում էր Գերմանիա մեկնելու իր հերթին⁸⁶՝ հույս ունենալով «արևմտյան դրախտում» գտնել աղքատությանից ու թշվառությանից ազատվելու միջոցներ:

Գերմանիա տեղափոխված թուրք հյուրաշխատողների բնակության և աշխատանքի պայմանները, սակայն, բարվոք չէին. մեծամասամբ խուլ գյուղերից, որևէ մասնագիտություն չունեցող և երբեմն անգամ անտառածանաչ այս մարդիկ, հայտնվելով Բեռլինի, Մյունխենի, Ֆրանկֆուրտի պես մեծ քաղաքներում, ստիպված էին ապրել համակենտրոնացման ճամբարներ հիշեցնող շենքերում, որտեղ 4-5 մարդ նույն սենյակում էին քնում⁸⁷, աշխատել առանց հանգստյան օրերի ու արձակուրդի, կատարել ամենածանր, վտանգավոր գործերը՝ վարձատրվելով տեղացիներից երկու-երեք անգամ քիչ և հաճախ ենթարկվել անհարգալից վերաբերմունքի (օրինակ, այդ տարիներին մի գերմանական թերթում տպագրված հայտարարության մեջ ասվում էր. «Վաճառվում է ֆերմերական տուփ և վիճակում: Հարմար է ձիերի և ժամանակավոր աշխատողների տեղավորման համար»⁸⁸): Չնայած այս ամենին, թուրքերը տուն վերադառնալ չէին շտապում, քանի որ գերմանական ամենացածր աշխատավարձը և անգամ գործազրկության նպաստը մի քանի անգամ գերազանցում էր միգրանտների պրոտեստիալ եկամուտը Թուրքիայում: Ստամբուլում գործող Դաշնային աշխատանքային բյուրոյի նախագահ Հանս Հառնսոփսկին 1971 թ. տված իր հարցազրույցում նշել է. «Պետք է Անատոլիան⁸⁹ տեսնել: Դրանից

⁸³ Розалиев Ю., Классы и классовая борьба в Турции, Москва, 1967, стр. 113.

⁸⁴ The Cambridge History of Turkey, vol. 4: Turkey in the Modern World, Edited by R. Kasaba, London, 2008, p. 199.

⁸⁵ Gitmez A. S., Yurtdışına İşçi Göçü ve Geri Dönüşler "Beklentiler...Gerçekleşenler", İstanbul, 1983, s. 109.

⁸⁶ Մանրամասն տե՛ս Gür M., Sütü küstürmek. Almanya'da Anadolu kadınları, İstanbul, 2004, s. 157.

⁸⁷ Uğurlu A.R, նշված աշխ., էջ 17.

⁸⁸ Прокопович А., Социально-экономические проблемы миграции турецких рабочих в страны Западной Европы, Турция: История, экономика, политика, Москва, 1984, стр. 237.

⁸⁹ Անատոլիա, առավել ևս Արևելյան Անատոլիա եզրույթը հակասում է օբյեկտիվ գիտական իրողություններին և ատենախոսության մեջ հանդիպող նմանատիպ

հետո կհասկանաք, թե ինչու՞ Գերմանիայում գտնվող թուրքերը Նույնիսկ բարակներում իրենց լավ են զգում»⁹⁰: Ուստի զարմանալի է, որ միգրանտները գոհունակությամբ ընդունեցին 1962 թ. դեկտեմբերի 12-ին ռոտացիայի սկզբունքը վերացնելու վերաբերյալ դաշնային բյուրոյի որոշումը⁹¹ և մեծ մասամբ օգտվեցին աշխատանքային պայմանագիրը վերականգնելու հնարավորությունից: Իսկ 1964 թ. սկսած ընտանիքների վերամիավորման ծրագրի շրջանակներում միգրանտները կարողացան Գերմանիա տեղափոխել ծնողներին, կանանց ու երեխաներին, ինչը, անխուսափելիորեն, թուլացնում էր կապը հայրենիքի հետ և կրկնապատկում Գերմանիայում մնալու հավանականությունը: Նույնիսկ 1966-1967 թթ. տնտեսական ճգնաժամը չստիպեց թուրքերին հայրենիք վերադառնալ: Ավելի է, 1968 թ. Թուրքիայում սկսված ուսանողական շարժման դաժան ճնշումներն ու հետապնդումները ստիպեցին, որ բազմաթիվ «68-ականներ»⁹² մեկնեն Գերմանիա: Յարկ Եսկատել, որ Գերմանիան արդեն 1970-ականների սկզբից վերածվել էր յուրահատուկ մի աքսորավայրի, ուր հնարավորության դեպքում Թուրքիայից փախչում էին այլախոհ, ընդդիմադիր քաղաքական գործիչները, լրագրողները, գրողները. ընդ որում և՛ թուրք, և՛ քուրդ, և՛ հայ ու այլ ազգերի ներկայացուցիչ: Այս երևույթը

ձևակերպումները բացառապես մեջբերումներ են, ուստի հնարավոր չի եղել փոխել:

⁹⁰ Gitmez A. S, նշված աշխ., էջ 109.

⁹¹ Губанов Н., Роль диаспоры в системе турецко-германских экономических отношений, Современная Турция: проблемы и решения, Москва, 2006, стр. 199.

⁹² 1960-70- ականներին ամբողջ աշխարհում՝ ԱՄՆ-ից ու Յարավային Ամերիկայից մինչև Եվրոպա և Աֆրիկա ծավալվեց լայնամասշտաբ ծախսակողմյան ուսանողական-երիտասարդական շարժումներ, որոնց մասնակիցները ներկայացնում էին մի շարք սոցիալական ու քաղաքական պահանջներ՝ Վիետնամի պատերազմի դադարեցումից մինչև սևամորթների իրավունքների ճանաչում: Շարժման անկյունաքարը դարձավ «ապստամբությունների տարի» անունով հայտնի 1968 թ., արդյունքում ուսանողական շարժման մասնակիցներին սկսեցին կոչել «68-ականների սերունդ» կամ ուղղակի «68-ականներ»: Թուրք երիտասարդությունը ևս անմասն չմնաց և ակտիվ գործունեություն ծավալեց այս տարիներին՝ բողոքելով Դեմոկրատական կուսակցության վարած ներքին ու արտաքին քաղաքականության դեմ և հանդես գալով Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի հռչակած սկզբունքներին հավատարիմ մնալու կոչերով: Թուրքական «68-ականների» շարքերում առավել հայտնի են Դենիզ Գեզմիշը, Մահիր Չայանը, Իբրահիմ Քայփաքթայան, Յարուն Քարադենիզը և այլոք: Մանրամասն տե՛ս Bulut F., 68 Kuşağı Gençlik Olaylarının Uluslararası Boyutu ve Türkiye’de 68 Kuşağına Göre Atatürk ve Atatürkçülük Anlayışı, Çağdaş Türkiye Tarihi Araştırmaları Dergisi, XI/23, 2011/Güz, Buca-İzmir, s. 123-149, http://web.deu.edu.tr/ataturkiler/ai/uploaded_files/file/dergi_23_en_on/06_.pdf, և ակ Տենոկակ Շ., Turkey: The lost generation, p. 175, http://www.ghi-dc.org/files/publications/bu_supp/supp006/bus6_175.pdf.

հատկապես սրվեց 1971 թ. գինվորական միջամտության և 1970-1980-ականներին թուրքիայում ծավալված բռնության և ներքին տարատեսակ ալիքներից հետո: Թուրքական պետության և այնքան էլ չէր անհանգստանում միգրանտների շուտափույթ վերադարձի մասին, քանի որ հետզհետե աճող դրամական փոխանցումները նպաստում էին մի շարք տնտեսական խնդիրների կարգավորմանը: Հատկանշական է խորհրդային թուրքագետ Ռ. Ֆիշի նկարագրած դրվագը. «Կես միլիոն մարկ, կես միլիոն մարկ, - գոռում է լրագրավաճառ տղան: Մենք գնում ենք երեկոյան թերթեր: Վերնագրում ասված է. “Այսօր Գերմանիայից վերադարձած մեր աշխատողները բերել և Սիրքեջի կայարանում փոխանակել են կես միլիոն մարկ”»⁹³: Արտարժույթի ներհոսքն ավելացնելու համար երկրի իշխանությունները սահմանել էին հատուկ տոկոսադրույք արտարժույթով փոխանցումների, թուրքական բանկերում արտարժույթային հաշիվների համար: Գերմանիայում «գասթարբայ թերևերի» կուտակած միջոցները թուրքիաբերելու համար անգամ հատուկ պայմաններով ստեղծվեցին միգրանտների բաժնետիրական ընկերություններ⁹⁴: Այս նախաձեռնությունը թեև լայն տարածում չգտավ, բայց ինքը փաստն արդեն խոսու է:

Մյուս կողմից գերմանացիներին ձեռնտու էր ցածր աշխատավարձով ծանր աշխատանք կատարելու պատրաստ թուրքերի ներկայությունը: Ավելին, 1960-ականների վերջին մի շարք վերլուծաբաններ թուրք միգրանտների հետ էին կապում ակտիվ զարգացող եվրոպական տնտեսության և ներքին ապագան: Օրինակ, 1970 թ. ֆրանսիական «Soir» պարբերականում լույս տեսած մի վերլուծական հոդվածում ասվում էր. «Թուրքիան՝ աշխատուժի և փնտրող եվրոպական արդյունաբերողների համար ամենամեծ աղբյուրներից մեկն է: Եվրոպացի արդյունաբերողները գիտեն, որ աշխատուժի մյուս աղբյուրները շուտով սպառվելու են: Թուրքիան վաղվա աշխատուժի հանքն է: Թուրքերն այժմ եվրոպայում մոդայիկ են: Իրենց ֆիզիկական հատկանիշներով և բնավորության

⁹³ Фиш Р., Турецкие дневники. Встречи. Размышления, Москва, 1977, стр. 8.

⁹⁴ Розалиев Ю., Экономическая история Турецкой Республики, Москва, 1980, стр. 277.

առանձնահատկություններով թուրքերն արդեն գրավել են գերմանացիներին: Մեկ տարվա ընթացքում Ֆրանսիան էլ կգրավեն»⁹⁵:

Այսպիսով, 1960-ականների վերջում միգրացիայի երկարաձգումը ձեռնտու էր թե՛ թուրքերին, թե՛ գերմանացիներին: Սակայն 1973 թ. համաշխարհային նավթային ճգնաժամի պատճառով առաջ եկած տնտեսական խնդիրները ստիպեցին գերմանական իշխանություններին կատարել ներգաղթյալների հոսքը: Պաշտոնական ներգաղթի կատարման արդյունքում, սակայն, աննախադեպ չափերի հասած ապրիկների ներգաղթի (մարդիկ որպես զբոսաշրջիկներ կամ հյուրախաղերի մեկնող սպորտային, պարային խմբերի անդամներ հատում էին սահմանն ու այլևս չէին վերադառնում) և ընտանիքների վերամիավորման գործընթացի շարունակման պատճառով գերմանաբնակ թուրքերի թիվը շարունակեց ավելանալ: Չարմանալի չէ, որ 1973 թ. «Der Spiegel» հանրահայտ ամսագրում տպագրված մի հոդված վերտառված էր. «Թուրքերը գալիս են: Փրկեք ինքներդ ձեզ»⁹⁶:

Որոշ ժամանակ անց նավթային ճգնաժամը հաղթահարվեց, սակայն 1960-ականների 100% զբաղվածությունն ապահովել այլևս չհաջողվեց: Գործազրկության առաջնային թիրախ դարձան միգրանտները, քանի որ գործատուների մեծ մասը նախընտրում էր աշխատանքի վերցնել տեղացիներին, իսկ արագ տեմպերով ավտոմատացող տնտեսությունում որակավորում չունեցող աշխատուժի կարիքը գնալով պակասում էր: Գործազուրկների սոցիալական ապահովման հոգսն ընկնում էր պետության ուսերին, ինչը մտահոգության առիթ էր դառնում և ստիպում փնտրել միգրանտների խնդիրը լուծելու ճանապարհներ: Բայց քանի որ 1970-ականների կեսերին Գերմանիան չէր ընկալվում որպես միգրանտական երկիր, իշխանությունների ջանքերն ավելի շատ ուղղված էին ոչ թե ինտեգրման, այլ միգրանտների ներհոսքի կանխմանն ու արտահոսքի խթանմանը: 1975 թ. պաշտոնապես հայտարարվեց, որ Գերմանիան հատել է օտարերկրացիներին ընդունելու սահմանը, և որոշում ընդունվեց մեկ վարչական

⁹⁵ Gitmez A. S., նշված աշխ., էջ 107.

⁹⁶ Mortan K., նշված աշխ., էջ 249.

շրջանում միգրանտների քանակը սահմանափակել բնակչության 6%-ով: Միաժամանակ օրենքի ուժով արգելվեց ոչ օրինական ներգաղթյալներին աշխատանք տալ, այն խախտողներին սպառնում էր հինգ տարվա ազատազրկում և 5000 մարկ տուգանք: Սրան զուգահեռ քայլեր ձեռնարկվեցին ընտանիքների վերամիավորման ծավալները նվազեցնելու ուղղությամբ⁹⁷: 1980 թ. հոկտեմբերի 5-ին Գերմանիան վիզային ռեժիմ սահմանեց⁹⁸: Այս բոլոր միջոցառումներին հակառակ քաղաքական փախտականները հեղեղեցին Գերմանիան 1980 թ. սեպտեմբերի 12-ին թուրքիայում տեղի ունեցած հեղաշրջումից հետո⁹⁹, իսկ գերմանաբնակ գաղթարքայ թերևորների մեծամասնությունը հրաժարվեց թուրքիա վերադառնալու մտքից: Չարմանալի է, որ երբ 1983 թ. միգրանտներին առաջարկվեց որոշակի գումար թուրքիա վերադառնալու համար¹⁰⁰, միայն 150 հազար թուրք հայրենադարձվելու ցանկություն հայտնեց: Այսպիսով, 1980-ականների կեսերից միգրանտական խնդիրը մտավ գերմանական ներքին քաղաքականության օրակարգ: Միգրանտների թեմայով այդ շրջանում ակտիվորեն կազմակերպվում էին կլոր-սեղան քննարկումներ, գիտաժողովներ, բացվեց միջազգային միգրացիայի և զարգացման կենտրոնը: Այս փուլում, սակայն, միգրանտների ինտեգրացիան գրեթե նույնականացվում էր ուժացման հետ, այսինքն մեծ մասամբ քննարկվում էր միգրանտներին արագորեն գերմանաֆիկացնելու հարցը:

Մինչ պետական պաշտոնյաները քննարկում և ուսումնասիրում էին թուրք միգրանտների ինտեգրման հնարավորությունները,

⁹⁷ Ünver C. O., Otuzbeş Yıllık Göç ve Bürokrasi Tanıklıklarım, Ankara, 2008, s. 81.

⁹⁸ Batı Avrupa Türkleri F. Almanya'da 30. yıl, s. 27.

⁹⁹ 1970-ականների վերջից թուրքիան գտնվում էր տնտեսական և քաղաքական խոր ճգնաժամում, արդյունքում 1980 թ. նախագահական ընտրություններն ընթացան ավելի քան 100 փուլով և կողմերն այդպես էլ չկարողացան համաձայնության գալ: Ելնելով այս իրավիճակից՝ ազգային անվտանգության խորհուրդը սեպտեմբերի 12-ին հայտարարեց խորհրդարանի և կառավարության լուծարման մասին՝ երկրում իշխանական բոլոր լծակները կենտրոնացան զինվորականների ձեռքերում: Հեղաշրջումից հետո լուծարվեցին քաղաքական կուսակցությունները, սկսվեցին հետապնդումներ այլախոհների հանդեպ: 1982 թ. նոյեմբերի 7-ին ընդունվեց նոր սահմանադրությունը, որը վերջ դրեց զինվորական վերնախավի կառավարմանը: Մանրամասն տե՛ս Սաֆրասոյան Ռ., Մելքոնյան Ռ., Դումանյան Ա., Տեր-Մաթևոսյան Վ., Չաքրյան Յ., Յովհաննիսյան Ա., Թուրքիայի Հանրապետության պատմություն, Բուհական դասագիրք, Երևան, 2014, էջ 237-255:

¹⁰⁰ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Նահապետյան Յ., Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայկական գործունեությունը, Երևան, 2010, էջ 72: Տե՛ս նաև Batı Avrupa Türkleri F. Almanya'da 30. yıl, s. 21.

գերմանական հասարակության մի հատված՝ ծայրահեղ աջակողմյան հայացքներով ոգեշնչված հակամիգրանտական արշավ սկսեց: 1981 թ. տասնհինգ գերմանացի համալսարանական պրոֆեսորներ հրապարակեցին այսպես կոչված Յեյ դելբերգյան մանիֆեստը, որում կոչ էին անում ազատվել թուրքերից և նախագուշացնում, որ հակառակ դեպքում մի քանի տարի անց գերմանացիներն իրենց թաղամասերում օտար կդառնան¹⁰¹: Գերմանական մամուլը հեղեղվեց հակաթուրքական հոդվածներով: Օրինակ, «Der Spiegel» ամսագրի 1989 թ. փետրվարի 13-ի համարում տեղ գտած հոդվածը վերտառված էր «Փախստականներ, միգրանտներ և գասթարբայթերներ. նոր գերմանացիները»: Յոդվածի հեղինակը մտավախություն և էր հայտնում, որ եթե միգրանտների հոսքը չնվազի, 2000 թ. Գերմանիայի վարչապետը թուրք կլինի¹⁰²: Պաշտոնապես չարտոնված, սակայն նաև չարգելվող այս քարոզարշավի հետևանքով թուրքերի նկատմամբ թշնամանքն այնքան խորացավ, որ մի շարք գերմանական սրճարաններում և զվարճանքի վայրերում արգելվեց թուրքերի մուտքը, հիվանդանոցներում թուրք հիվանդներ չէին ընդունում, վարձով տուն չէին տալիս¹⁰³: Ավելին, 1985-1995 թթ. ընթացքում մոտ 100 թուրք «սքինհեդների» [հայերեն՝ սափրագլուխներ, ծայրահեղ աջակողմյան ազգայնամուլական ուղղության հետևորդներ – Ն. Պ.] հարձակումների զոհ դարձավ¹⁰⁴: Յավելենք, որ մեր օրերում ևս «սքինհեդական» հարձակումներ տեղի են ունենում:

1989 թ. Բեռլինի պատի փլուզումը և դրան հաջորդած Գերմանիայի Դաշնային և Դեմոկրատական Յանրապետությունների միավորումը որակապես նոր իրավիճակ ստեղծեցին նաև թուրքերի համար: Աշխատառուկան հեղեղվեց տնտեսապես թույլ զարգացած ԳԴՅ տարբեր տարածաշրջաններից, ինչպես նաև նախկին սոցճամբարի պետություններից եկող ներգաղթյալներով: Բավական բարձր կրթական, մասնագիտական մակարդակ ունեցող, հաճախ լեզվին տիրապետող կամ դրա կրողը հանդիսացող այս մարդիկ աշխատառուկայում լուրջ մրցակցություն առաջացրին: Բացի այդ,

¹⁰¹ The Cambridge History of Turkey, p. 193.

¹⁰² Batı Avrupa Türkleri F. Almanya'da 30. yıl, s. 23.

¹⁰³ Նույն տեղում, էջ 19:

¹⁰⁴ Keskin H., նշված աշխ., էջ 21.

տնտեսապես ավելի հետամնաց նախկին ԳԴՀ տարածքի բնակիչները գտնում էին, որ թուրքերից և այլ մուսուլմաններից ստացվող օգուտը մի քանի անգամ ավելի քիչ է, քան նրանց վճարվող սոցիալական նպաստների գումարը, որը ավելի լավ կլիներ ուղղել երկրի երկու մասերի միջև զարգացածության տարբերությունները վերացնելուն: Մի կողմից բնակչության դժգոհությունն ու գերմանական հասարակության մեջ տարածում գտած քսենոֆոբիայի և անհանդուրժողականության դրսևորումները, մյուս կողմից էլ հասարակական-քաղաքական առումով առաջին գասթարբայթերներից անհամեմատ ավելի ակտիվ թուրք միգրանտների երկրորդ սերնդի պայքարը առավել լայն իրավունքներ ունենալու, խտրական վերաբերմունքից պաշտպանված լինելու համար ստիպեցին ֆաշիստական անցյալից ամեն կերպ ձերբազատվել ցանկացող գերմանական իշխանություններին քայլեր ձեռնարկել հասարակության հավասարակշռությունը պահպանելու համար: Առաջ քաշվեց բազմամշակութայնության գաղափարը: 1990 թ. որոշում կայացվեց փոփոխություն կատարել սահմանադրության մեջ և մի շարք պայմանների (այդ թվում ամբողջական զբաղվածություն, բավարար կենցաղային պայմաններ և գերմաներենի լավ իմացություն) բավարարելու դեպքում աշխատելու անժամկետ իրավունք շնորհել միգրանտներին: Իսկ 1991 թ. ընդունված Քաղաքացիության մասին նոր օրենքով քաղաքացիությունն ստանալու «արյան սկզբունքին» զուգահեռ թույլատրվեց նաև «հողի սկզբունքի» կիրառումը¹⁰⁵: Նոր օրենքով Գերմանիայում ծնված երեխան 23 տարին լրանալուց հետո սեփական ցանկությամբ կարող է ընտրել Գերմանիայի քաղաքացիությունը: Ավելին, Գերմանիայում ծնված, բայց ինչ-որ պատճառներով մինչև 21 տարեկան երկրից հեռացած երիտասարդներին ևս թույլ տրվեց գերմանական քաղաքացիություն ստանալ: Այս դրական փոփոխությունների հետ մեկտեղ օրենքով էլ ավելի բարդացվեց նորեկ միգրանտների ապրելու և աշխատելու իրավունք ստանալու մեխանիզմը, և, որ

¹⁰⁵ Diehl C., Blohm M., Rights or Identity? Naturalization Processes among "Labor Migrants" in Germany, *International Migration Review*, Vol. 37, No. 1, The Center for Migration Studies, New York, 2003, p. 135.

ամենակարևորն է, արգելվեց երկքաղաքացիությունը¹⁰⁶: Արդյունքում 2000 թ. օրենքի ուժի մեջ մտնելուց հետո քաղաքացիությունն ստանալու համար դիմողների թիվը նվազեց: Օրինակ, եթե 1999 թ. քաղաքացիությունն ստանալու համար դիմել էր 104 հազար մարդ, ապա 2007 թ.՝ միայն 29 հազար¹⁰⁷: Իսկ 2008 թվականից գործածության մեջ մտած «Քաղաքացիության թեսթը» (անհրաժեշտ է 60 րոպեում ճիշտ պատասխանել 310 հարցանոց հարցաշարից ընտրված 33 հարցից առնվազն 17-ին) գրեթե անհաղթահարելի արգելք դարձավ հատկապես առաջին և երկրորդ սերնդի միգրանտների համար¹⁰⁸: Ոչ պաշտոնական տվյալներով 2000 թ.-ից հետո Գերմանիայից մոտ 40 հազար թուրք վերադարձել է Թուրքիա¹⁰⁹: Նրանց թվում են այնպիսի հայտնի մարդիկ, ինչպես, օրինակ, ֆուտբոլիստներ Իլիհան Մանսուզը, Ումիթ Բարանը, Ումիթ Դավալան, երգիչներ Թարքանը, Ռաֆեթ Էլ Ռոմանը, Ազեր Բյուլբյուլը¹¹⁰: Հայրենադարձվել ցանկացողների խումբը, սակայն, մեծ թիվ չի կազմում, թուրքերի մեծ մասը, հատկապես երկրորդ-երրորդ սերնդի ներկայացուցիչներն իրենց համարում են գերմանական հասարակության մի մասնիկ:

Հարկ է նշել, որ 1990-ականների վերջից Գերմանիան սկսել է լրջորեն զբաղվել միգրանտների ինտեգրման հարցով: Ինտեգրացիոն միջոցառումների շարքում հատկապես արժանահիշատակ է 2006 թ. կանցլեր Անգելա Մերկելի հովանավորությամբ «խոսել իրար հետ, այլ ոչ իրար մասին» կարգախոսով իրականացված առաջին ինտեգրացիոն ժողովն ու 2007 թ. վերջնական վեհաժողովը, որոնց արդյունքում ընդունվեց «ինտեգրացիայի ազգային ակնարկ»: Մոտ 200 էջ ծավալով այս ծրագիրը բաղկացած էր տեղական և դաշնային 150 պետական և մասնավոր հաստատությունների մասնակցությամբ նախատեսող մոտ 400 նախագծերից: Առաջին հայացքից բավական խոստումնալից թվացող այս ծրագիրը մասնագիտական քննադատությանը չի դիմանում: Նախ, այդ ակնարկն ավելի քան 750

¹⁰⁶ Almanya'ya Emek Göçü - Bir Bavul, Umut Ve Hayalleriyle Çıktılar Yola, Editörler: Fındıkçıoğlu Ü. S., Güler E. Z., İstanbul, s. 20.

¹⁰⁷ Keskin H., նշված աշխ., էջ 157.

¹⁰⁸ Şen F., 50. Yılında Göç, Ankara, 2011, s. 128.

¹⁰⁹ Mortan K., նշված աշխ., էջ 4.

¹¹⁰ Almanya'ya Emek Göçü - Bir Bavul, Umut ve Hayalleriyle Çıktılar Yola, s. 38.

միլիոն եվրո բյուջեն առանց այն էլ ծախսվում է ամեն տարի¹¹¹: Բացի այդ, «Ազգային պլանում» շրջանցված են այնպիսի կարևորագույն թեմաներ, ինչպիսիք են քաղաքացիության ստացումը, երկքաղաքացիությունը, ռասիզմի դեմ պայքարը: Պատահական չէ, որ Գերմանիայի թուրքերի միությունը և Կրոնական կառույցների միությունը բոյկոտեցին այս վեհաժողովները¹¹²: «Ազգային պլանում» նախատեսված ծրագրերը մնացին թղթի վրա: Ավելին, 2010 թ. Անգելա Մերկելը հայտարարեց, որ բազմամշակութայնության գաղափարն իրեն սպառել է և անհրաժեշտ է ինտեգրման նոր ճանապարհներ գտնել: Փաստորեն գերմանական իշխանություններն ամենաբարձր մակարդակով ընդունեցին, որ իրենց իրականացրած միջոցառումներից և ոչ մեկը շոշափելի արդյունք չի տվել:

Նշենք, որ համայնքի ձևավորումից անցած 50 տարիների ընթացքում թուրքերի դերը գերմանական հասարակությունում շատ փոխվել է: Դեռ 1995 թ. նոյեմբերի 27-ին «Թայմս» թերթը գրել էր. «...նրանց (գերմանացիների) կարծիքով «թուրքը» կիսակոտրված Օփել ավտոմեքենայով, քաղաքի կենտրոնում «ոյոներ»¹¹³ վաճառող տղամարդն է կամ էլ անկյունի խանութում այծի պանիր ու պիստակ վաճառող կինը: Ավելի մեծ քաղաքներում թուրքերին ընկալում են որպես տեքստիլ վաճառողներ կամ տուրիստական ընկերությունների աշխատողներ: Մինչդեռ գերմանացիների մեջ ապրող և երկրի միգրանտական բնակչության մոտ 1/3-ը կազմող թուրքերի մեծ մասը գերմանացիների համար աննկատմիջին խավի են վերածվել»¹¹⁴: Թուրք ներգաղթյալների երկրորդ և երրորդ սերնդի ներկայացուցիչների մեծ մասը տիրապետում է գերմաներենին, թուրքերի 56%-ը ապրում է գերմանաբնակ թաղամասերում, 18-30 տարեկան թուրքերի մոտ 90%-ը շփվում է գերմանացիների հետ¹¹⁵: 1990-ականների կեսերից թուրքերը նախընտրում են ներդրումներ անել

¹¹¹ Keskin H., նշված աշխ., էջ 31.

¹¹² Նույն տեղում, էջ 45:

¹¹³ «Օյոները» (թուրքերեն «dönmek» պտտվել բառից) թուրքական արագ սննդի տեսակ է, որը մեզանում ավելի հայտնի է շաուրմա անունով: Գերմանիայի քաղաքներում լայն տարածում գտած «ոյոների» վաճառակետերը երկրում թուրքական ներկայության յուրօրինակ խորհրդանիշն են դարձել:

¹¹⁴ Koçak B., Kılıç K. "Avrupa'nın Türk Patronları" En Üsttekiler, İstanbul, 1996, s. 14.

¹¹⁵ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Şen F., նշված աշխ., էջ 124-125:

Գերմանիայի անշարժ գույքի շուկայում: Վերջին 10 տարում Գերմանիայում սեփականությունը նույնպես թուրքերի քանակը 6%-ից հասել է 25%-ի: Թուրք գործարարներն էլ ավելի ու ավելի ակտիվ ներգրավվում են Գերմանիայի տնտեսության մեջ՝ մասնավորապես սննդի, շինարարության, տեքստիլ արդյունաբերության, տուրիզմի ոլորտներում: Միջին և փոքր բիզնեսով զբաղվող գործարարների կողքին քիչ չեն նաև «կահույքի արքա» Մեդեթ Բոզքուրթի, «բետոնի թագավոր» Վուրալ Օզերի, «Էգե-թուրք» ընկերության հիմնադիր Բուրհան Օնգյորենի նման խոշոր ձեռնարկատերերը¹¹⁶: Թուրքերն ներկայացված են գերմանական հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Բավական է նշել, օրինակ, հայտնի կինոռեժիսոր Ֆաթիհ Աքընի, ազգային հավաքականի ֆուտբոլիստ Մեսութ Օզիլը, «Մուլտի-կուլտի» ռադիոյի տնօրեն Ջեմ Դալամանի, հայտնի բժիշկ-օրթոպեդ Ֆարուք Դուրբիևի, գերմանական արդյունաբերության վարպետների միության նախագահ Սելչուկ Բուղարի անունները: Գնալով մեծանում է թուրքերի մասնակցությունը Գերմանիայի քաղաքական կյանքում: 2011 թ. տվյալներով երկրի խորհրդարանի երկու պալատներում, ինչպես նաև նահանգների խորհրդարանների կազմում ընդհանուր առմամբ 80 թուրք պատգամավոր կար, այդ թվում Բունդեսթագի պատգամավորներ Յաքքը Քեսքինը, Լալե Աքգյունը, Ահմեթ Իյդիրլին, Թաջիթդին Յաքքընը, Սոցիալ-դեմոկրատական կուսակցության փոխնախագահ Այդան Օզքինը¹¹⁷, Բեռլինի խորհրդարանի անդամներ Օզջան Մուլընը, Էմինե Դեմիրբյուքեն և այլոք¹¹⁸: Գործադիր իշխանության համակարգում ներկայացված թուրքերից են Ներքին Սաքսոնիայի սոցիալական ապահովության ու ինտեգրացիայի նախարար Այգյուլ Օզքանը, Բադեն Վյուրթեմբերգի ինտեգրացիայի նախարար Բիլբայ Օնեյը¹¹⁹, իսկ ամենահայտնի թուրք

¹¹⁶ Pürsün D., Nasıl Kazandılar–Almanya’da zirveye çıkan Türk İşadamları Anlatıyor, İstanbul, 1998, s. 75.

¹¹⁷ Hastürk M., Almanya Siyasetinde Türk Rüzgârı Esiyor, <http://www.sabah.com.tr/dunya/2011/12/06/almanya-siyasetinde-turk-ruzgari-esiyor>.

¹¹⁸ Ünver C. O., նշված աշխ., էջ 268-269.

¹¹⁹ Alman siyasetinde Türk kökenliler, <http://www.dw.de/alman-siyasetinde-t%C3%BCrk-k%C3%B6kenliler/a-15481848>.

քաղաքական գործիչն է «գերմանական Օբամա» անունով հայ տնի Կանաչների առաջնորդ Ջեմ Օզդեմիրը¹²⁰:

Հասարակությանը բարեհաջող ինտեգրման այս օրինակները, սակայն, ավելի շուտ բացառություն են, քան օրինաչափություն: Իսկ գերմանական հասարակությանը զուգահեռ ապրող թուրքական ենթամշակույթի գոյությունն անհերքելի է: Գերմանական մեծ քաղաքների թուրքական թաղամասերում կամ գետտոներում մարդիկ ապրում են ավանդական թուրքական կենցաղով. խոսում են միայն թուրքերեն, օգտվում բացառապես թուրքական խանութներից ու սրճարաններից: Այս թաղամասերում սովորական երևույթ են «պատվի սպանություններն» ու «արյան վրեժ» լուծելու դեպքերը: Կանանց աջակցության «Փափաթյա» կենտրոնի տվյալների համաձայն 1996-2005 թթ. ընթացքում 50 պատվի սպանություն է կատարվել¹²¹:

Բնականաբար, թուրքական համայնքը կրթության, բարեկեցության և այլ ընդհանուր ցուցանիշներով ավանդաբար հետ է մնում թե գերմանացիներից, թե եվրոպական այլ երկրներից, նախկին սոցիալիստական ճամբարի պետություններից և նույնիսկ Յնդկաստանից ու Չինաստանից եկած միգրանտներից: Ցածր եկամուտներ ունեցող, սոցիալական նպաստով ապրող թուրքերի մեծ մասը գետտոյացված է, կյանքը նրանց համար սահմանափակվում է աշխատանք-սրճարան-մզկիթ-տուն շրջանակով, որտեղ գերմանացիների հետ շփումների համար տեղ չկա: Երեխաների մեծ մասը տանն է դաստիարակվում, մանկապարտեզ չի գնում¹²²: Արդյունքում գերմաներեն լեզվի ոչ բավարար իմացությունը դառնում է դարոցում վատ առաջադիմության պատճառ: Նշենք նաև, որ այս աշակերտների թուրքերենի իմացությունն էլ բավարար չէ, քանի որ ծնողների մեծ մասը խառնաշփոթից խուսափելու համար

¹²⁰ Ջեմ Օզդեմիրը ծնվել է 1965 թ. Գերմանիայում Թուրքիայից մեկնած միգրանտների ընտանիքում: Հայրը ծագումով չերքեզ է: Օզդեմիրը 1994 թ. առաջին անգամ ընտրվել է Բուրսայի պատգամավոր: 2008 թ. ընտրվել է Կանաչների կուսակցության համանախագահ: Ջեմ Օզդեմիրը բազմիցս հայտարարել է, որ թե՛ Թուրքիան, թե՛ Գերմանիան պետք է ճանաչեն Հայոց ցեղասպանության փաստը: 2015 թ. մարտին ՀՀ կատարած այցի շրջանակներում Օզդեմիրն այցելել է Ծիծեռնակաբերդ և պսակ դրել ցեղասպանության զոհերի հիշատակին:

¹²¹ Сумленный С., Турецкое население Германии: Бомба замедленного действия, 21-й ВЕК, № 1 (3), Ереван, 2006., стр. 54.

¹²² Türkdöğän O., նշված աշխ., էջ 42:

երեխաներին թուրքերենի դասերի չեն ուղարկում¹²³: Արդյունքում երեկոները տանը՝ «Թուրքիայում», իսկ առավոտները դպրոցում՝ «Գերմանիայում» ապրող աշակերտների մեծ մասը լեզուներից ոչ մեկին չի արժեք չի տիրապետում¹²⁴: Լեզվական պատնեշը խանգարում է ուսմանը: Թուրք երեխաների միայն 42%-ն է տարրական դպրոցի վկայական ստանում, միջնակարգ դպրոցն ավարտում է 30%-ը¹²⁵, ցածր գնահատականների պատճառով միայն 14%-ն է բուհ ընդունվելու թույլ տվող ուսուցիչները ստանում¹²⁶: Արդյունքում աշխատանքի ընդունվելու հնարավորությունները կտրուկ նվազում են, գործազրկության մակարդակն էլ՝ աճում: Կրթության և զբաղվածության պակասը նպաստում է թուրքերի շրջանում մարմնավաճառության, խաղամոլության, թմրամոլության տարածմանը: Չարմանալի է, որ թեև թուրքերի հոծ բնակչության վայրերում տեղացիները կարծես թե հարմարվել են նրանց ներկայության հետ, սակայն գերմանացիների մի նշանակալի մասերկրում բնակվող մուսուլմաններին և, մասնավորապես, թուրքերին է համարում առկա սոցիալական խնդիրների գլխավոր մեղավոր, զգուշավորություն և նույնիսկ տհաճություն ամեն ինչում նրանց հետ: Հակառակ թուրքական համայնքի մի մասի ունեցած հաջողություններին «դյուներ» պատրաստող, բանջարավաճառ, հավաքարար թուրքի դասական կերպարը շատերի համար անփոփոխ է մնում: Գերմանիայում հայտնի անեկդոտի համաձայն. «Ի՞նչ գործ կարող է թուրքն ունենալ համալսարանում» հարցի պատասխանը միանշանակ է. «Հավաքարարի գործ»: Մեկ այլ անեկդոտում էլ «Ինչու՞ թուրքերը ընդհանրապես չեն ծիծաղում» հարցին գերմանացին պատասխանում է. «Եթե դու թուրք լինեիր, կծիծաղեիր»¹²⁷: Այսինքն Գերմանիայում 50 տարի բնակվելուց հետո էլ թուրքերը տեղի բնակչության կողմից մեծ մասամբ չեն ընկալվում որպես հասարակության լիիրավ անդամ: Կարելի է

¹²³ Գերմանիայում թուրքերեն լեզվով կրթության մասին մանրամասն տե՛ս Yalçın K., *Նշված աշխ.*, էջ 13-17:

¹²⁴ Նույն տեղում, էջ 38:

¹²⁵ Саррацин Т., Германия. Самоликвидация, Москва, 2012, стр. 58.

¹²⁶ Bozkurt A., Education the key for Germany's Turks, <http://www.todayszaman.com/columnist-261884-education-the-key-for-germanys-turks.html>.

¹²⁷ Թուրքերի մասին գերմանական անեկդոտները մանրամասն տե՛ս Ünver C.O., *Նշված աշխ.*, էջ 304-305:

եզրակացնել, որ մի կողմից թուրքերի մոտ ինտեգրվելու ցանկության բացակայությունը, մյուս կողմից էլ գերմանական հասարակության նրանց ընդունելու անպատաստ լինելը հավասարապես խոչընդոտում են ինտեգրացիոն գործընթացի առաջխաղացմանը:

Կարևոր ենք համարում անդրադառնալ նաև գերմանական թուրքերի նկատմամբ թուրքիայի Հանրապետության վարած քաղաքականությանը: Ինչպես արդեն նշել ենք, արտագաղթի առաջին տարիներին գերմանական թուրքերը հիմնականում ընկալվում էին որպես արտարժույթային փոխանցումներ ապահովողներ: Ժամանակի ընթացքում, սակայն, թուրքական իշխանությունները փորձեցին օգտագործել համայնքը իրենց շահերի լոբբինգի համար: Թուրքական սփյուռքի հետկապերը սերտացնելու և համայնքներում սեփական ազդեցությունը ուժեղացնելու համար 2010 թ. թուրքիայի կառավարության կազմում ստեղծվեց Օտարերկրյա հասարակությունների և հարակից հասարակությունների վարչությունը, որ համակարգում է հայրենիք-սփյուռք հարաբերությունները, կազմակերպում մշակութային, կրթական ծրագրեր օտարերկրներում բնակվող թուրքերի մոտ թուրքիայի նկատմամբ սերը վառ պահելու համար: Ավելին, 2014 թ. նախագահական ընտրություններին առաջին անգամ սփյուռքում բնակվող թուրքերն ընտրելու իրավունք ստացան: Թուրքիայի նախկին վարչապետ Ահմեթ Դավութօղլուի առաջ քաշած օսմանյան սփյուռքի և նեոօսմանիզմի գաղափարների համատեքստում թուրքական իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ պատաստ են օգնել երկրից դուրս բնակվող իրենց հայրենակիցներին: 2015 թ. հունվարին Ա. Դավութօղլու նույնիսկ հայտարարեց, որ թուրքիան պատաստ է աշխատանքով ապահովել եվրոպայում գործազուրկ մնացած թուրքերին: Նմանատիպ հայտարարություններով հանդես են եկել նաև այլ բարձրաստիճան պաշտոնյաներ: Մասնավորապես, Գերմանիայի թուրքական համայնքի հիմնադրման 50-ամյակին նվիրված միջոցառումներից մեկի ժամանակ ելույթ ունենալով՝ ներկայիս նախագահ, իսկայն ժամանակ դեռ վարչապետ Ռ. Թ. Էրդողանը նույնիսկ խոստացավ Գերմանիայի քաղաքացիությունն ստանալու

համար թուրքական անձնագրից հրաժարված թուրքերի համար թողարկել թուրքական անձնագրին համարժեք այսպես կոչված «կապույտ քարտեր»¹²⁸: Միևնույն ժամանակ նա կոչ արեց թուրքերին ինտեգրվել, բայց չձուլվել և դրահամար նախսովորել թուրքերեն, հետո գերմաներեն, քանի որ բազմազանություները հասարակության հարստությունն են: Իսկ Թուրքիայի նախկին նախագահ Աբդուլլահ Գյուլը գերմանական լրատվամիջոցներին տված մի հարցազրույցում, պնդելով, թե Գերմանիան սխալ քաղաքականություն է վարում ներգաղթյալների նկատմամբ և ոտնահարում է նրանց իրավունքները, նշել է. «Գերմանիայի նախագահը պետք է հիշի, որ նաև իր երկրում ապրող միլիոնավոր թուրքերի նախագահն է: Ես Թուրքիայում ապրող բոլոր փոքրամասնությունների՝ գերմանացիների, քրիստոնյաների, հրեաների ու հայերի նախագահն եմ, նշում եմ նրանց տները, այցելում եմ նրանց սրբավայրերը»¹²⁹: Այս հայտարարությունները խիստ հետաքրքրական են, քանի որ իցույց են դնում թուրքական կառավարող շրջանակների վարած երկակի ստանդարտների քաղաքականությունը. արտերկրում բնակվող թուրքերի ինքնության պահպանման ու իրավունքների պաշտպանության խնդիրները բարձրաձայնելուն զուգահեռ սեփական երկրում նրանք շարունակում են ոտնահարել փոքրամասնությունների իրավունքներն ու ամեն կերպնպաստում նրանց ու ծագմանը:

Այսպիսով, XX դ. երկրորդ կեսին տնտեսական վերելքի տարիներին սկիզբ առած աշխատուժի ներգաղթի հետևանքով ներկայումս Գերմանիան միգրանտների թվով աշխարհում առաջիններից մեկն է: Թեև միգրանտներն արդեն վաղուց դարձել են երկրի անբաժանելի մասը, տեղի բնակիչների և մուսուլման միգրանտների մշակույթների, ավանդույթների, կենցաղի միջև առկա տարբերությունները փոխադարձ անվստահություն և, դժգոհություններ ու լարվածություն են առաջացնում: Անցած տարիների ընթացքում Գերմանիայի իշխանությունները, մի

¹²⁸ Başbakan Erdoğan'dan 'Mavi Kart' sürprizi, <http://www.Turkpress.De/Siyaset/Basbakan-Erdogandan-mavi-kart-surprizi>.

¹²⁹ Cumhurbaşkanı Gül'ün Türk ve Alman Gazetelerine Ortak Demeci Açıklaması, <http://www.sondakika.com/haber-cumhurbaskani-gul-un-turk-ve-alman-gazetelerine-2991833/>.

կողմից, միգրացիան նվազեցնելու և, մյուս կողմից էլ, երկրում բնակվող միգրանտներին ինչ-որ կերպ ինտեգրելու համար ձեռնարկել են քայլեր, որոնց արդյունքները, իրենց իսկ գնահատմամբ, գոհացուցիչ չեն: Ցայսօր թուրքերի բավականին մեծ մասը շարունակում է գետտո հիշեցնող թուրքական թաղամասերում ապրել գերմանականից խիստ տարբեր ու դրա հետ գրեթե չհատվող իրականության մեջ:

1.2 XX դարի թուրքական առաջիկա գիտնական եւ շարժման ճիշտացում Փուլեր (1920-1970-ականներ)

XIX դարի կեսերին Օսմանյան կայսրությունում ընթացող թանգիմաթյան բարեփոխումների արդյունքում սկիզբ առած հասարակական կյանքի տարբեր ոլորտների եվրոպականացման համատեքստում թուրք գրականության մեջ սկսեցին հաստատվել և զարգանալ արձակի որոշ ժանրեր, որոնք էլ մասնագետների կարծիքով եվրոպական ազդեցության դրսևորումներից կարելի է համարել¹³⁰: Չնայած այս ժանրի նախատիպ կարելի է համարել ավելի վաղ շրջանում պարսկական գրականությանից փոխառված ու թարգմանված այնպիսի պատումներ, ինչպիսիք են «Յուսուֆն ու Չուլեյկան», «Լեյլան և Մեջնունը», «Խոսրովն ու Շիրինը», ինչպես նաև ժողովրդական բանահյուսության մեջ հայտնի «Դեդե Բորքուդի», «Բյոռուղունի», «Ֆերիաթի և Շիրինի» պատմությունները¹³¹, սակայն միայն XIX դ. երկրորդ կեսից է արձակը որպես հասարակությանը հուզող խնդիրների հայելի, աստիճանաբար զարգանալով, դառնում թուրք գրականության կարևորագույն բաղկացուցիչը:

Թուրք գրողների առաջին փորձերն արձակի և, մասնավորապես, վիպագրության ասպարեզում ավելի շատ հիշեցնում են եվրոպական և հատկապես ֆրանսիական գրողների ստեղծագործությունների թարգմանություններ, նմանակումներ, քան ինքնուրույն ստեղծագործություններ: Այդպիսին են, օրինակ, 1862 թ. տպագրված և

¹³⁰ Маштакова Е., Утургаури С., Современные исследования советских тюркологов литературного процесса в Турции, Советская тюркология, № 6, Баку, 1986, стр. 35.

¹³¹ Ünlü M., Türkçe' de Öykü-Roman, İstanbul, 2009, s. 11.

թուրք իրականության մեջ առաջինը համարվող Յուսուֆ Բյամիլ փաշայի «Տելեմակոս» վեպը, Ահմեդ Միդհատ փաշայի, Նամըք Քեմալի, Շեմսեդդին Սամիի ստեղծագործությունները: Այս շրջանի թուրքական արձակի վրա լուրջ ազդեցություն են ունեցել եվրոպական գրականության մեջ տարածված սենտիմենտալ իզմի, ռոմանտիզմի, սիմվոլիզմի ու նույնիսկ միստիցիզմի գրական ուղղությունները¹³²: Օսմանյան արձակի կայացման հարցում փոքր չէ նաև թուրքահպատակ հայ գրողների ներդրումը: Օրինակ, Յուսուֆ Կարդան փաշայի (1813-1879) հայատառ թուրքերենով գրված «Պատում Աբաբիի մասին» ստեղծագործությունը գրականագետ Ե. Մաշտակովայի կարծիքով «կարելի է համարել թուրքիայում նոր տիպի առաջին արձակ ստեղծագործությունը: Սա բարոյախոսական լուսավորչական վեպ է, ներկայացված բավական զարգացած ձևով: Ճատմիչոցներ, որոնց տիրապետում էր հեղինակը, դեռ երկար ժամանակ անհասանելի են լինելու հաջորդ սերնդի գրողների համար»¹³³:

Արդեն XX դարի առաջին քառորդում հաճախ պարզ, խորը վերլուծություններից ու հարուստ գեղարվեստական արտահայտչամիջոցներից զուրկ ստեղծագործություններին փոխարինելու եկան Օմեր Սեյֆեդդինի (1884-1920), Յալիդե Էդիփի (1884-1964), Յաքուբ Քադրի Քարասումանօղլուի (1889-1974) անհամեմատ ավելի հասուն ստեղծագործությունները¹³⁴: Այս հեղինակները գրականություն բերեցին նոր հերոսներ և թեմաներ, XX դարի սկզբի անկայուն, անհանգիստ քաղաքական ու տնտեսական իրողության ազդեցության տակ սկսեցին ավելի շատ ուշադրություն դարձնել հասարակական խնդիրներին: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո գրականության կարևորագույն թեմա դարձավ թուրքիզմը: Պատահական չէ, որ այս շրջանի շատ գրողների ստեղծագործությունները հեղեղված են ազգայնամոլական տրամադրություններով ու գաղափարներով: 1923 թ. թուրքիայի

¹³² Яковлева Н., Турецкая новелла от первых шагов до поры зрелости; Плата за молчание: рассказы турецких писателей, Москва, 1974, стр. 4.

¹³³ Маштакова Е., К истории турецкого романа, Вопросы тюркской филологии, выпуск 4, Москва, 1999, стр. 210.

¹³⁴ Մանրամասն տե՛ս Սաֆարյան Ա., Չիյա Գոքալ փը և «թուրքականության հիմունքները», Երևան, 2012, էջ 97-103, նաև Սահակյան Լ., Դավթյան Ա., Յաքուբ Քադրի Քարասումանօղլու. Գրական դիմանկարի փորձ, Կանթեղ, №1, Երևան, 2010, էջ 41-50:

Հանրապետության հռչակումից հետո այս ուղղությունն իր տեղը գիջում է քեմալիզմի և քեմալական շարժման գովերգմանն ու փառաբանմանը նվիրված ստեղծագործություններին:

Քարոզչական-հայրենասիրական բնույթի այս թեմաներին գուգահեռ գրողներն անշուշտ չէին կարող չանդրադառնալ նաև հասարակ ժողովրդի խնդիրներին, չարժարժել սոցիալական թեմաներ: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ XX դարի սկզբից արձակի հիմնական ուղղությունը ռեալիզմն էր և, մասնավորապես, քննադատական ռեալիզմը¹³⁵: Ուստի պատահական չէ, որ Ռեֆիք Հալիդ Քարայի (1888-1965), Հուսեյն Ռահմի Գյուլբիլնարի (1864-1944), ավելի ուշ նաև Ռեշադ Էնիսի (1889-1956), Սաբահադդին Ալիի (1907-1948) ստեղծագործություններում կարևորագույն տեղ է զբաղեցնում գյուղի ու քաղաքի սովորական մարդկանց անհաղթահարելի աղքատության, փոքր ու մեծ ողբերգությունների, չարքաշ կյանքի արտացոլումը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Թուրքիայում նկատվում է գրականության և հրապարակախոսության որոշակի ակտիվացում, հիմնադրվում և հրատարակվում են գրական-հասարակական թերթեր, հանդեսներ, որոնցից է արձակագիր Սաբահադդին Ալիի խմբագրած «Մարկո-փաշա» երգիծական հանդեսը¹³⁶: Առհասարակ, 1940-1950-ականներին երգիծանքն իր ուրույն տեղն ունի թուրք գրականության մեջ: Գրողներ Ռեֆաթ Ըլգազը (1911- 1993), Ադնան Վելի (1916-1972), Հալիդուն Թաները (1915-1986), Բյուլլենթ Օրանը (1924-2004), Մուգաֆֆեր Իզգյուն (ծնվ. 1933 թ.) և այլոք

¹³⁵ XX դարի առաջին կեսի թուրք գրականության մասին մանրամասն տե՛ս Алькаева Л., Сюжеты и герои в турецком романе, (конец XIX начало XX вв.), Москва, 1966, նույնի, Очерки по истории турецкой литературы (1908-1939), Москва, 1959, Бабаев А., Очерки современной турецкой литературы, Москва, 1959.

¹³⁶ Մարկո փաշան թուրքական իրականության մեջ տարածված կիսաերգիծական հերոս է, որի նախատիպն է համարվում XIX դ. հայտնի բժիշկ, ծագումով հույն Մարկո փաշան: Վերջինիս հանգստությունն ու հիվանդներին ժամերով համբերատար լսելու ունակությունը դարձել է նույնիսկ աֆորիզմների հիմք. թուրքերը ընկերների պակասը շեշտելու համար օգտագործում են «Գնա, վիշտդ Մարկո փաշային պատմիր» արտահայտությունը:

«Մարկո փաշա» երգիծական շարաթաթերթը սկսել է տպագրվել 1946 թ. և վաճառվել Թուրքիայի համար աննախադեպ մեծ տպաքանակներով: Ոչ իշխանահաճո թեմաների անդրդադնալու համար հեղինակները ձերբակալվում են, թերթն էլ փակվում: Ուշագրավ է, որ ամեն անգամ թերթի փակվելուց հետո հեղինակները սկսում էին նոր շարաթաթերթի հրատարակում՝ տալով դրան խորհրդանշական անուններ. «Մարկո փաշա» ամսագրից հետո սկսեց տպագրվել «Մեռած փաշա», «Հայտնի փաշա», «Մեր փաշա» անուններով:

հոլմորի ու սատիրայի միջոցով ներկայացնում էին հասարակության արատները, հակասությաններն ու խնդիրները: Թուրք երգիծաբանների շարքում հարկ է առանձնացնել Ազիզ Նեսիհի (1915-1995) անունը, ում անվանում էին «ժամանակի Նասրեդդին Յոջա»¹³⁷:

1950-ականներին ծաղկման շրջան է մտնում թուրքական արձակը, որի գլխավոր թեման է դառնում թուրքական գյուղն իր բոլոր խնդիրներով: Ավանդաբար ագրարային թուրքիայում գյուղի նկատմամբ հետաքրքրությունը բնավ զարմանալի չէ: Գյուղն և գյուղացիները մշտապես այս կամ այն չափով եղել են թուրք գրողների ու շադրոնայան կենտրոնում: Գյուղական թեմատիկային նվիրված առաջին ստեղծագործությունն է համարվում 1890 թ. գրված Նաբիգադե Նազըմի (1862-1893) «Քարաբիբիբ» վեպը¹³⁸: Ավելի ուշ գյուղագրական թեմային են անդրադարձել նաև Սադրի Էրթեմը (1838-1943), Ռեֆիք Յալիդը, Օմեր Սեյֆեդդինս (1884-1920) ու Սաիդ Ֆաիքը (1906-1954): Սակայն 1950-60-ականներին գրական ասպարեզ մտած գյուղից սերող, հիմնականում «գյուղական ինստիտուտների» շրջանավարտ հանդիսացող Մահմութ Մաքալը (ծնվ. 1930), Քեմալ Թահիրը (1910-1973), Ֆաբիր Բայբուրթը (1929-1999), Յաշար Քեմալը (1923-2015), Բեքիր Յըլդըզը (1933-1998) և այլոք կարողացան նորովի լուսաբանել գյուղի խնդիրները: Չարմանալի չէ, որ նրանց ստեղծագործությունները աչքի են ընկնում երևույթների ու փաստերի նկարագրության իսկությամբ, խնդիրների վերաբերյալ խորը գիտելիքով, հերոսների ճշմարտացիությամբ, կենդանի ժողովրդական լեզվով¹³⁹: Յեղիսակները վարպետորեն ներկայացնում

¹³⁷ Թուրք երգիծաբանների մասին առավել մանրամասն տե՛ս Меликли Т., История литературы Турции, Москва, 2010, стр. 175-182.

¹³⁸ Çelik R., 20. Yüzyılın ikinci yarısında Rus edebiyatında ve Türk edebiyatında köye yaklaşım, Turkish Studies International Periodical For the Languages, Literature and History of Turkish or Turkic Volume 4/8, Ankara, 2009, s. 792.

¹³⁹ Алькаева Л., Бабаев А., Турецкая литература. Краткий очерк., Москва, 1967, стр. 132, տե՛ս նաև Halman T. S., A Millenium of Turkish literature (Concise history), Ankara, 2009, p. 167.

¹³⁹ Գյուղագրական արձակի զարգացման առանձնահատկությունների մասին մանրամասն տես Մելքոնյան Ռ., Գյուղական ինստիտուտները» և գրական կյանքը թուրքիայում (1940-50-ական թթ.), «Կանթեղ», N 1 (22), Երևան, 2005, էջ 139-144, Գալչոյան Ս., Դասակարգերի փոխարարությունների Յաշար Քեմալի «Թիթեղը» վիպակում, Արևելագիտության հարցեր, հ. 7, Երևան, 2012, էջ 342-362, Çelik R., նշված աշխ., էջ 797, Алькаева Л., Из истории турецкого романа (20-50-е годы XX в.), Москва, 1975, стр. 25,

են աղքատության, հերոսների անկման պատկերներ, պատմում գյուղի սնանկացման, գործազրկության, մեծ քաղաքում ապրուստ գտնելու հաջողու անհաջող փորձերի մասին: Հիմնականում սոցիալական ռեալիզմի ուղղության համատեքստում գրված այս ստեղծագործությունները մեծ ժողովրդականություն էին վայելում, դրանց մի մասն էլ հայտնի դարձավ նաև Թուրքիայի սահմաններից դուրս: 1950-ականների կեսերին հանրահայտ թուրք գրող Յաշար Քեմալն ասել է. «Ինչ վերաբերում է թուրքական վեպի երեկվան, այսօրվան և վաղվան, երեկ էլավ վիպագիրներ ունեինք՝ Հալիդ Չիյան, Հուսեյն Ռահմին, Ռեֆիք Հալիդը, Հալիդե Էդիփը, Յաքուբ Քադրին, Օսման Ջեմալ Քայգըլը, Սաբահադդին Ալին... Նրանք մեզ համար ամուր վիպական ավանդույթներ ստեղծեցին... Մեր վեպը մտնում է ոսկի դարաշրջան: Սրանից հետո եկողները ավելի էլ են գրել ու... Չեմ երկարացնում, սիրելիս, Օրհան Քեմալ, Հալիքարնաս Բալըքչը, Ֆաթիր Բայքուրթունեցող վեպը չի կարող կործանվել»¹⁴⁰: Փաստերը ցույց են տալիս, որ հետագա տասնամյակներում էլ վեպը մնում է գերական հարստանում նոր թեմատիկաներով, դառնալով նաև նոր ուղղությունների (օրինակ՝ պոստմոդեռնիզմի) արտահայտման հիմնական ժանրը¹⁴¹:

1960-ականների երկրորդ կեսից «սոցիալական ռեալիզմը» սկսում է աստիճանաբար զիջել դիրքերը, և թուրք գրականության մեջ նկատվում են նոր տենդենցներ, որոնք վերաբերում են թեմատիկաներին, հոսանքներին և ուղղություններին: Այս շրջանի գրականությունը համատեքստ է: Մոդեռնիստական տարբեր ուղղությունների ազդեցության տակ թուրք գրականություն մտան «աննպատակ արվեստի» կամ «մաքուր արվեստի» գաղափարները¹⁴²: Սակայն գրականությունը չէր կարող չարձագանքել երկրում տիրող խիստ լարված սոցիալական և քաղաքական իրավիճակին, չտալ որոշակի գնահատականներ: Ուստի 1950-60 թթ. բազմակուսակցական

նյւնի, Очерки по истории турецкой литературы (1908-1939), Москва, 1959, стр. 133, Алькаева Л., Бабаев А., Турецкая литература. Краткий очерк., Москва, 1967, стр. 53.

¹⁴⁰ Beş romancı köy romanı üzerine tartışıyor, İstanbul, 1960, s. 95.

¹⁴¹ Վեպի ժանրի առանձնահատկությունների մասին մանրամասն տե՛ս Бахтин М., Слово о романе, https://vk.com/doc280125750_353421450?hash=507d14c93915568b6a&dl=787ada658421daa953, և ևս Хализев В. Е., Теория литературы, Москва, 2002, стр. 363-372.

¹⁴² Бабаев А., Աշված աշխ., էջ. 50:

համակարգի անցման (1946 թ.) հետ կապված ոգևորության անհիմն
լինելու գիտակցումը, Դեմոկրատական կուսակցության
իշխանության հետ կապված պատրանքների կորուստը և 1960 թ. մայիս
27-ի հեղաշրջման¹⁴³ արդյունքներից հիասթափությունը նպաստեցին
«հուսահատության կամ ճգնաժամի գրականության» զարգացմանը:
Միևնույն ժամանակ մի շարք գրողներ սկսեցին մեծ տեղ տալ
Օսմանյան կայսրության պատմության և քեմալական շարժման
առանձին դրվագներին, պատմական անցյալի համատեքստում
ներկայացնել և նույնիսկ քարոզել պանթոլոքիստական և
իսլամիստական գաղափարներ¹⁴⁴: Գրական այս խայտաբղետությանը
վերջ տվեց 1971 թ. մարտի 12-ի հեղաշրջումը, որից հետո ստեղծված
քաղաքական իրավիճակում գրականության մեջ գերիշխող դարձավ
քաղաքական վեպը՝ մնացած բոլոր ուղղությունները թողնելով
ետին պլանում: «Մարտի 12-ի վեպը» ընդհանուր անունով հայտնի այս
նոր հոսանքի կարևորագույն ներկայացուցիչների՝ Չեթին Ալթանի
(1927-2015), Բիլգե Քարասուհի (1930-1995), Էրդալ Օզի (1935-2006), Սևգի
Սոսյալի (1936-1976), Ադալեթ Աղաօղլուի (ծնվ. 1929 թ.), Ֆյուրուզանի
(ծնվ. 1932 թ.), Նազլը Էրայի (ծնվ. 1945 թ.) և այլ գրողների
ստեղծագործությունները նվիրված էին հեղաշրջմանը, դրա
հետևանքներին, քաղաքական պայքարում ներգրավված մարդկանց
հոգևոր ճգնաժամին, նրանց ներքին պայքարին, նաև քաղաքական
խնդիրների հորձանուտում հայտնված կանանց խնդիրներին,
Ֆեմինիստական գաղափարների տարածմանը և գրված էին մոտ կես դար
թուրքական գրականության մեջ իշխող ռեալիզմի մեթոդներից
լիովին տարբեր գեղարվեստական մեթոդներով¹⁴⁵: «Մարտի 12-ի
վեպերով» թուրք գրականության մեջ տարածում է գտնում սոցիալ-
հոգեբանական արձակն ու էքզիստենցիալիստական մոտիվները¹⁴⁶:

¹⁴³ Այս մասին մանրամասն տե՛ս Սաֆրասոյան Ռ., Մելքոնյան Ռ. և ուրիշներ, նշված
աշխ., էջ 148-192, ինչպես նաև Դումանյան Ա., Ազգայնական շարժում կուսակցության
(«Գորշ գայլեր») գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում 1960-70-ական
թթ., Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 4, Երևան, 2006, էջ
103-113:

¹⁴⁴ Утургаури С., Турецкая проза 60-70-х годов: основные тенденции развития, Москва, 1982, стр. 11.

¹⁴⁵ «Մարտի 12-ի» վեպի մասին առավել մանրամասն տե՛ս Ecevit Y., Türk Romanında
Postmodernist Açılımlar, İstanbul, 2004, s. 83-91, ինչպես նաև Մարտիրոսյան Ա., Քաղաքական
վեպի ժանրի ձևավորումն ու զարգացումը թուրքական գրականության մեջ (XX
դարի 50-70-ական թթ.), Գարուն, թիվ 11-12, Երևան, 2012, էջ 20-24:

¹⁴⁶ Репенкова М., От реализма к постмодернизму. Современная турецкая проза, Москва, 2008, стр. 14.

1970-ականների սկզբից առաջ եկած այս նոր միտումներն 1980 թ. սեպտեմբերի 12-ի հեղաշրջումից հետո էլ ավելի խորացան, իսկ որոշ ժամանակ անց սկսեցին փոխակերպվել ոչ միայն թուրքական, այլ համաշխարհային գրականության մեջ լայն տարածում գտած հետմոդեռնիզմի ազդեցության տակ¹⁴⁷:

Այսպիսով, XX դարի ընթացքում թուրքական արձակն անցավ զարգացման բարդ և բովանդակալից ճանապարհ: Դարասկզբի պարզունակ, գեղարվեստական արտահայտչամիջոցներով աչքի չընկնող ստեղծագործություններին 1950-ականներին փոխարինելու եկան ավելի արժեքավոր գործեր: Յիմնականում ռեալիզմի ուղղության շրջանակներում ստեղծագործող թուրք գրողներն իրենց ստեղծագործություններում համակողմանի ներկայացնում են գերակա խնդիրները՝ սոցիալական հարցերից մինչև ռազմական հեղաշրջումներ ու այլախոհների հետապնդումներ՝ արձակը վերածելով հասարակական զարգացումների յուրօրինակ հայելու:

**1.3 ԹՄԻՐՔԱԲԱԿ ԳՐՈՂՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ ՄԻԳՐԱՆՏԱԿԱՆ
ԹԵՄԱՏԻԿԱՅԻՆ ԵՎ «ԳԱՍԹԱՐԲԱՅԹԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ»
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ**

1960-1980-ականների գրական զարգացումների հորձանուտում իրենց սահմանափակ, բայց հաստատուն տեղն ունեն 1960-ականներին սկիզբ առած թուրք միգրանտների եվրոպական ողիսականը ներկայացնող ստեղծագործությունները: Այս արտագաղթը դարձավ գրականության նյութ, քանի որ մի կողմից, ինչպես արդեն նշել ենք, 1960-80-ականների թուրքական իրականության մեջ այն բավականին կարևոր տնտեսական ու քաղաքական դեր ունեցավ և համաշխարհային թուրքական սփյուռքի ձևավորման հիմք հանդիսացավ, մյուս կողմից էլ «գասթարբայ թերների» թվում կային հացի խնդիրը լուծելու համար արտասահման մեկնած գրողներ, ովքեր էլ սկսեցին գեղարվեստի լեզվով ներկայացնել եվրոպայում իրենց կյանքն ու

¹⁴⁷ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Մարտիրոսյան Ա., Թուրքական քաղաքական վեպի թեմատիկ առանձնահատկությունների շուրջ (1980-ական թվականներ), Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), հ. 7, Երևան, 2012, էջ 371-378:

ձեռք բերած փորձառությունը: Այսպես կոչված «գասթարբայթերական» թեմատիկայով գրված ստեղծագործություններում հիմնականում նկարագրվում էին եվրոպա մեկնած միգրանտների սոցիալական, բարոյական, հոգեբանական վիճակը, անսովոր միջավայրում հարմարվելու դժվարությունները, տեղացիների անհանդուրժողականության դրսևորումները: Թուրք հեղինակներն անդրադառնում էին նաև Թուրքիայի ընդհանուր իրավիճակի, առանձին մարդկանց ու ընտանիքների կյանքի վրա արտագաղթի ազդեցությանը: Այս թեմայով գրված գրեթե բոլոր ստեղծագործություններում էլ տեսնում ենք թուրքական գյուղերից Գերմանիայում հայտնված կիսագրագետ կանանց ու տղամարդկանց, ում «արևմտյան դրախտում» սպասում էր իրենց համար լիովին անհասկանալի նորմերին հարմարվելու անխուսափելիություն, կարոտը և բավական ծանր աշխատանք: Գերմանական աշխատավարձն անշուշտ անհամեմատելի բարձր է թուրքականից, և «գասթարբայթերների» տուն ուղարկած գումարների շնորհիվ Թուրքիայում մնացած ընտանիքների հոգսը թեթևանում էր, սակայն այդ միջոցով բնականաբար հնարավոր չէր համընդհանուր աղքատության և գործազրկության խնդիրը լուծել: Ավելին, տարեցտարի ձգձգվող արտագնա աշխատանքը շատ ընտանիքների համար աղետի է վերածվում: Դարերի վեր հաստատված ընտանեկան կարգը խաթարվում է, տղամարդու ավանդական դերը՝ նվազում, իսկ կնոջ որպես որոշում կայացնողի դերը՝ աճում: Ամենից շատ տուժում են փաստորեն անհայր, իսկ հաճախ նաև անմայր, տատիկ-պապիկների խնամքին հանձնված հարյուր հազարավոր երեխաներ: Միգրացիայի արդյունքում առաջ եկած այս և բազմաթիվ այլ խնդիրներ թուրք գրականության մեջ առաջին անգամ բարձրաձայնել է հայտնի գրող Բեքիր Յըլդըզը¹⁴⁸:

Ծանր ֆինանսական դրությունը և երեք երեխաների ապրուստը հոգալու անհրաժեշտությունը բազմաթիվ թուրքերի պես նրան էլ ստիպեցին 1962 թ. մեկնել Գերմանիա, որտեղ Բ. Յըլդըզը չորս տարի աշխատեց Յեյդելբերգի տպագրական մեքենաների գործարանում նախ

¹⁴⁸ Pazarkaya Y., Göç süreciyle yurtdışında oluşan Türk edebiyatı, Türk Edebiyatı Tarihi, c.4, Ankara-İstanbul, 2007, s. 580.

որպես հավաքարար, ապա վարպետ, հետո հրատարակչությունում տեքստ շարող: Թուրքիա վերադառնալով՝ նա փոքրիկ տպագրական մեքենա գնեց և կարծես «թուրքական աշխատուժը գրոշներով գնող» Արևմուտքին մարտահրավեր նետելով՝ իր նորաբաց տպագրատունը անվանեց «Ասիա»¹⁴⁹: Վերադարձից հետո Բ. Յըլդըզը 1966 թ. հրատարակեց «Թուրքերը Գերմանիայում» ինքնակենսագրական վեպ-ռեպորտաժը, որը, մասնագետների կարծիքով, ամբողջովին չէր բացահայտում հեղինակի գեղարվեստական տաղանդը, սակայն աչքի էր ընկնում թեմայի թարմությամբ¹⁵⁰: «Գասթարբայ թերական» թեմատիկային են նվիրված նաև հեղինակի «Սափտակ երգ», «Երկաթե տիկնիկ», «Գերմանական հաց» ժողովածուները: Լինելով թուրքական քննադատական ռեալիզմի ներկայացուցիչ՝ Բ. Յըլդըզը իր ստեղծագործություններում ներկայացնում էր «Ուրֆայի խուլ գյուղը» (որտեղից էլ ինքն էր ծագումով), գյուղացիների չարքառաօրյան, նրանց կյանքը պայմանավորող նախապաշարմունքները, զրկանքներն ու անարդարությունը: «Գասթարբայ թերական» թեմատիկային նվիրված գրքերում ևս հեղինակը որդեգրել է այս գիծը՝ նկարագրելով նույն հասարակ մարդկանց կյանքը Գերմանիայի մեծ, անծանոթ քաղաքներում: «Մենք մեծագույն քոչվորների սերունդներն ենք, - գրում է նա, - Մենք այժմ էլ քոչում ենք աշխարհով մեկ՝ հայտնվելով Արևմտյան Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Ավստրիայում և նույնիսկ Ավստրալիայում: Ներկայիս գաղթը, սակայն, նման չի անցյալին: Մեզ չեն ծեծել, չեն քշել մեր հողից: Ավելին, մեզնից ամեն մեկին անձնագիր են տվել և մեծ կնիք դրել «բանվոր»¹⁵¹: Յեղինակը փորձում է հասկանալ և ներկայացնել այն պատճառները, որոնք ստիպում են մարդկանց գաղթել կամ դիմել «փախուստի»։ այդպես է կոչում միգրացիան «Թուրքերը Գերմանիայում» վեպի գլխավոր հերոս Յուզեն: Նաասում է. «Մի ժամանակ մեր նախնիները սրերով էին գրավում Եվրոպան, այժմ մենք անձնագրերով չենք կարողանում անցնել: Սրերի տերերը կարող էին անել, ինչ

¹⁴⁹ Утургаури С., О некоторых особенностях современного турецкого критического реализма (на примере новеллистики Б. Ыылдыза), Народы Азии и Африки: история, экономика, культура, N 6, Москва, 1976, стр. 114.

¹⁵⁰ Репенкова М., նշված աշխ., էջ 80.

¹⁵¹ Утургаури С., նշված աշխ., էջ 124.

ցանկանային: Անձնագրերի տերերը ստիպված են անել այն, ինչ իրենց հրամայում են»¹⁵²: Չնայած Բ. Յըլդըզի հերոսներից յուրաքանչյուրն իր յուրահատուկ ճակատագիրն ու խնդիրներն ունի, սակայն արտագաղթելու հիմնական պատճառը բոլորի մոտ նույնն է՝ աղքատությունն ու գործազրկությունը, հացի խնդիրը. «...Հացի հետ պահմտոցի խաղացող մի ցեղից, ավելի ճիշտ ազգից եմ սերում, իսկապես, - գրում է հեղինակը «Գերմանական հաց» վիպակում, - Հաց... հողից ավելին կարող է լինել հացը: Այժմ էլ օտարության մեջ է թաքնված: Դեռևս միլիոնավոր պահմտոցի խաղացողներ կան, որ պատրաստ են հացն այստեղ, Հիսուսի այս երկրում փնտրել: Մեկը գոնե բացեր աչքերիս կապը... մեկը մեզ սովորեցներ հացը թաքցնողների խորամանկությունը...»¹⁵³: Բ. Յըլդըզի գործերից իմանում ենք, որ հացի փնտրտուքներում Գերմանիա մեկնել ցանկացողների թիվն այնքան մեծ է, որ մարդիկ նորածին երեխաներին են գրանցում ցուցակներում, որպեսզի մինչև չափահաս դառնալը նրանց հերթը հասնի: Երեխաներին սովից փրկելու անհրաժեշտության առաջ խամրում են նույնիսկ պատմական հիշողությունները և որոշակի արժեքները: «Մաուզերը» պատմվածքի հերոս Ռեշիդն, օրինակ, մեկնելու թույլ տվությունն ստանալու համար անհրաժեշտ կաշառքը տալու համար պատրաստ է պապի մաուզերը վաճառել արտասահմանցի զբոսաշրջիկներին: Դարդանելի ճակատամարտի մասնակից պապի համար հաղթանակ ու ազատություն խորհրդանշող այս մաուզերի վաճառքը, այն էլ «գյավուրներին» որպես պատի զարդարանք անընդունելի է, սակայն նույնիսկ նա չի կարող չընդունել թոռի իրավացիությունը. «Ամենամեծ պատերազմը Չանաքքալեում չէր, հիմա է, պապի՛կ: Երեխաներս սովից հոչեն մեռնելու»¹⁵⁴: Այս փաստարկն էլ ստիպում է պապին համաձայնել վաճառել մաուզերը: Ռեշիդի պատմությունը բացառությունն չէ: Գերմանիա հասնելու համար մարդիկ ոչ միայն կաշառք են տալիս, այլ նաև կեղծում փաստաթղթերը¹⁵⁵, նույնիսկ

¹⁵² Yıldız B., Türkler Almanya’da, İstanbul, 2012, s. 5.

¹⁵³ Yıldız B., Alman ekmeği, İstanbul, 2011, s.2.

¹⁵⁴ Yıldız B., Beyaz Türkü, İstanbul, 2010, s. 71.

¹⁵⁵ Yıldız B., Türkler Almanya’da, s.12.

երեխայի մահը ծնողներին չի ստիպում հրաժարվել պայմանագրի երկարացումից¹⁵⁶:

Գերմանիայի մասին մեկնողների մեծամասնությունը բացարձակորեն պատկերացում չունի: Գյուղացիների միամտության հավաքական պատկերն է «Ինքնատեղը» պատմվածքի հերոս Փեհլիվան Ռուսթեմը, ում կարծիքով «Ստամբուլում կաթնային գետեր են հոսում, իսկ Գերմանիայում փողը երկնքից է թափվում»¹⁵⁷: Սակայն Գերմանիա հասնելուն պես պարզ է դառնում, որ հեքիաթային Գերմանիա գոյություն չունի: Բ. Յըլդըզը, մանրակրկիտ նկարագրելով աշխատողների առօրյան, վերականգնում է առաջին միգրանտների կյանքի պատկերը և հնարավորություն տալիս հասկանալ թուրքական համայնքի կայացման առանձնահատկությունները: Բոլոր միգրանտներն ապրում են միանման կացարաններում, աշխատում մեծ գործարաններում, ուր քանվորը համակարգի գործունեության համար անհրաժեշտ սովորական գործիք է: Նույնիսկ դեռահասներն են ստիպված աշխատել. «Խաղալիքի, գիրք ու տետրի համար նախատեսված փոքրիկ ձեռքերով գործարանների, արհեստանոցների դռներն են բացում... Կոպեկներ են աշխատում, - գրում է Բ. Յըլդըզը «Գերմանական հաց» վիպակում, - Քանի որ նրանց աշխատանքը պլաստիկ խաղալիքներից էժան է գնահատվում»¹⁵⁸: Որոշ ժամանակ անց թուրքերը սովորում են նոր կյանքին, ուր ամեն ինչ պլասավորված է, ուր այլընտրանքի բացակայության պարագայում կարելի է նույնիսկ խոզի միս ուտել, քանի որ ըստ Բ. Յըլդըզի գուցե «անհավատների» համար աշխատելը ավելի մեծ մեղք է, քան խոզի միս ուտելը¹⁵⁹: Առաջին միգրանտների պարագայում դեռ լուրջ սրություն չունեցող ինքնության պահպանման ու փոխակերպման հարցը Բ. Յըլդըզի ստեղծագործություններում ներկայացված է հենց այդպիսի առօրյա դրսևորումներով: Միգրանտները դեռ ամուր կապերով կապված են թուրքիայի հետ, ցանկանում էին ետ վերադառնալ, բայց նոր կյանքն ու նոր հնարավորությունները փոխում են մարդկանց:

¹⁵⁶ Ёлдыз Б., Солнце в стене; Солнце в стене: повести и рассказы турецких писателей, Москва, 1979, стр. 177-183.

¹⁵⁷ Утургаури С., Աշված աշխ, էջ 119:

¹⁵⁸ Yıldız B., Alman ekmeği, s. 3.

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 44:

Կանայք սկսում են տղամարդկանց հավասար, իսկ երբեմն նրանցից շատ աշխատել: «Ճանուցագիր» պատմվածքի հերոս Օսմանի մայրն ասում է. «Չայրդիմ գործերն է անելու, ես՝ նրանը, ...որպեսզի մարկ, շատ մարկ աշխատենք»¹⁶⁰: Գերմանական էմանսիպացված հասարակության ազդեցության տակ կանանց մի մասը սկսում է տաբատ կրել և հրաժարվում ենթարկվել ամուսնուն: Տղամարդկանց համար էլ թուրքիայում ապրող ընտանիքին փող ուղարկելուց ավելի կարևոր առաջնահերթություն է դառնում ամբողջ աշխատած գումարով գերմանական բարեկեցության խորհրդանիշ մեքենա կամ այլ թանկարժեք տեխնիկա գնելը: Սակայն այս ամենը երջանկությունն բերել չի կարող, քանի որ խորթ է և օտար: Արդյունքում հոր հույսին մնացած ութ ամսեկան երեխան կաթի շշի ծծակով խեղդամահ է լինում, ամուսինը սպանում է իրեն չլսող կնոջը, նոր գնած մեքենան փչանում է թուրքիայի վատ ճանապարհների պատճառով, իսկ թանկարժեք տեխնիկան օգուտ տալու փոխարեն վնասվածքներ է առաջացնում: Յեղիսակի պատմվածքներում ներկայացվող այս օրինակները այլաբանորեն ցույց են տալիս Գերմանիայի և թուրքիայի միջև եղած անհաղթահարելի տարբերությունը: Գերմանական իրականության համար սովորական իրերն ու երևույթները տեղ չունեն թուրքական իրականության մեջ: Այն, ինչ գերմանացու ձեռքերում օգտակար և կիրառելի է, թուրքերին միայն վնաս է բերում:

Բ. Յըլդըզն անդրադառնում է նաև գերմանական ու թուրքական մշակույթների բախմանը, նկարագրում է երկու հասարակությունների իրար հակասող բարքերը: Գասթարբայթերների համար տարօրինակ է ամեն ինչ՝ կանանց բաց հագուստներից մինչև պարտքով փող տալու խնդրանքը զարմացած մերժելը. «Մենք ոչ ոքի չենք օգնում, - ասում է գերմանացի բանվորը «Թուրքերը Գերմանիայում» վեպում, - քանի որ ոչ ոք օգնություն չի խնդրում: Ամոթ չի չօգնելը, ամոթ է օգնություն խնդրելը»¹⁶¹: Անսովոր է թուրքերի համար նաև գերմանական ճշտապահությունը. «Ձյունն թե արև լինի, ճիշտ ժամը 17:00-ին

¹⁶⁰ Yıldız B., Beyaz Türkü, s.10.

¹⁶¹ Նույն տեղում, էջ 59:

մանկապարտեզի դռները բացվում էին: Մտուրում չէին սպասեցնում: Առավոտներն էլ էր նույն կերպ: Ավելի շուտ հակառակը: Մինչև 8:00 չլինեք, դռները չէին բացվում: Այդպես դեռ փոքրուց, նորածին տարիքից երեխաները սովորում են բռնություն, վայրկյաններին»¹⁶²: Գերմանացիներն էլ, իրենց հերթին, չեն հասկանում թուրքերի արտասովոր ավանդույթները: Օրինակ, երբ «Գերմանական հացը» վիպակի հերոսը փորձում է իր գերմանացի ընկերոջ Մյուլլերի հին հացը անխնա աղբը նետող երեխաներին բացատրել, որ դա մեղք է, Մյուլլերը ծիծաղելով նրան պատասխանում է, որ աղբատույան պատճառով ձևավորված սովորությունը արդիական չէ հարուստ ու ապահով Գերմանիայում¹⁶³:

Աղբատ, անբաղաբավարի թուրքերի նկատմամբ գերմանացիների տածած արհամարհանքն ևս դառնում են Բ. Յըլդըզի ստեղծագործությունների թեմա: «Գերմանական հացը» վիպակի հերոսը ցավով տեսնում է, որ իր վաղեմի ընկեր Մյուլլերի կինը՝ Ռենատան թույլ չի տալիս երեխաներին հագնել թուրքիայից նվեր բերած հագուստները: Բացի այդ, նա անմիջապես, հյուրի ներկայությամբ լվանում է դրանք, որ թուրքական կեղտոտ մանրէներից մաքրվեն¹⁶⁴: Բայց եթե Ռենատան գոնե համաձայնվում է ամուսնու ընկերոջն իր տանը ընդունել և հյուրասիրել, ապա գերմանացիները մեծ մասամբ թուրքերին նույնիսկ մարդ էլ չեն համարում, տարբերում միայն համարներով, նույնիսկ չեն էլ փորձում անունները հիշել կամ նրանց կարծիքով հետաքրքրվել: Օրինակ, «32-ամյա Մարիան» պատմվածքում տնօրենը խնդրում է վարպետին երկու թուրք ընտրել և իր մոտ ուղարկել: Վարպետն էլ գալիս, ընտրում և առանց որևէ բան բացատրելու հրամայում լվացվելու տնօրենի մոտ մտնել: Տնօրենն էլ նրանց նստեցնում է մեքենան և տանում իր կնոջ՝ Մարիայի մոտ: Պարզվում է, որ թուրքերի տասարդները՝ նոր տպավորություններ փնտրող Մարիայի ծննդյան նվերն են: Գերմանացիների վարքը անբարոյական համարելով հանդերձ պատմվածքի անանուն հերոսը համաձայնվում է կատարել կնոջ սեռական ցանկությունները՝ վախենալով զրկվել

¹⁶² Yıldız B., Alman ekmeği, s. 23.

¹⁶³ Նույն տեղում, էջ 29:

¹⁶⁴ Նույն տեղում, էջ 7:

աշխատանքից: Սակայն երկրորդ տղան հրաժարվում է նույնիսկ նրան մոտ գնալ՝ ասելով, որ ինքը չի կարող պառկել մի կնոջ հետ, ում հետ քնել է իր ընկերը, այդ կինն արդեն իր հարսն է¹⁶⁵: Այս և մի շարք այլ դրվագներով Բ. Յըլդըզը կարծես արտահայտում է իր վերաբերմունքը նման այլ ասերված բարքերի նկատմամբ:

Այսպիսով, Բ. Յըլդըզի ստեղծագործությունները բավականաչափ նյութ են տալիս միգրանտների առաջին սերնդի սոցիալական և հոգեբանական խնդիրները հասկանալու և ուսումնասիրելու համար: Հենվելով սեփական փորձի վրա՝ նա ներկայացրել է միգրանտների կյանքը, կենցաղի առանձնահատկությունները, բոլոր այն հիմնական խնդիրներն ու բարդությունները, որոնց նրանք հանդիպում էին նոր երկրում:

Հետագա տարիներին «գասթարբայ թերական» թեմատիկային են անդրադարձել նաև Նևզաթ Ուսթյունը (1924-1979), Դուրսուն Աքչամը (1930-2003), Լեյլա Էրբիլը (1931-2013), Յուսուֆ Չիյա Բահադընլըն (ծնվ. 1927 թ.), Ադալեթ Աղաօղլուն (ծնվ. 1929 թ.), Նիհաթ Բեհրամը (ծնվ. 1946 թ.) և այլոք: Բոլոր այս հեղինակներն էլ Բ. Յըլդըզի նման ներկայացնում են հիմնականում գասթարբայ թերների գերմանական կյանքը, նոր միջավայրին հարմարվելու բարդությունը, կարոտը և անխուսափելի օտարումը, ինչպես նաև թուրքիայում մնացած ընտանիքների խնդիրները:

Ն. Բեհրամն «Օտարություն» վեպում այսպես է նկարագրում միգրանտներին. «Բոլորի ձեռքերին նույն փաստաթղթերն են՝ պետությունն ու Ալլահին հիշեցնող փաստաթղթեր, պետությանն ու Ալլահին հիշեցնող նույն անուններով՝ Ռամազան Յավուզթյունը, Մուսլիմ Յուրթթաշ, Օզգյուր Թանրըքուլու, Հայրիյե Թանրըքուլու: Նույն խոսքերով պատասխանում են նույն հարցերին: Հեռվից նայում եմ թուրքիայի գյուղական վայրերը հիշեցնող դեմքերին: Թուրքիայի սարերը, գետերը, դաշտերը հիշեցնող¹⁶⁶»: Սակայն Գերմանիայում մի քանի տարի աշխատելու արդյունք են դառնում բազմաթիվ հիվանդություններն ու խնդիրները: Ն. Բեհրամը «Օտարություն» վեպի հերոսներից՝ Օսմանի կնոջն

¹⁶⁵ Yıldız B., Beyaz türkü, s. 44.

¹⁶⁶ Behram N, Gurbet, İstanbul, 1998, s. 10.

այսպես է ներկայացնում. «Ոստիկանին ոչ մի կերպ էր կարողանում հավատացնել, որ 25 տարեկան է: Իմ կարծիքով իրավացի էր, որ չէր հավատում: Հավատալու համար պետք էր նրա աշխատած տեղում մի շաբաթ աշխատել որպես Օսմանի կին և որպես օտարերկրացի»¹⁶⁷: Չուտ ֆիզիկական դժվարություններին գումարվում են հոգեկան տանջանքներն, որ առաջին հերթին կապված են ընտանիքների բաժանման հետ: «Օտարություն» վեպի մեկ այլ հերոս Սաբրին մեկնելուց առաջ որդուն ասում է. «...Տան տերն ես մնում, տան տղամարդը, հասկանում ես: Ճատ չի տևի, հենց աշխատանք գտա, միանգամից կգաք: Նամակ կգրես: Ես էլ կպատասխանեմ: Քեզ գնացք կուղարկեմ, ուղղաթիռ, գրպանի դանակ, ինչ կուզես, նույնիսկ հեծանիվ: Գաս թե չէ կարուսեղներ կնստենք: Թռչելով կգնաս կգաս»¹⁶⁸:

Կործանվող մի թուրքական ընտանիքի պատմությունն է ներկայացնում Լեյլա Էրբիլը «Բարձրյալը» պատմվածքում¹⁶⁹: Նամակագրության տեսքով գրված պատմվածքը գեղջկուհի Չարիֆեի պայքարն է Գերմանիայում նոր ընտանիք ստեղծած ամուսնուն՝ Շուայփին ետքերելու համար: Նրա ջանքերը, սակայն, ապարդյուն են, նա ոչ միայն չի կարողանում ամուսնուն վերադարձնել, այլ, չդիմանալով կյանքի դառնություններին, հայտնվում է հոգեբուժարանում: Եվ Չարիֆեն մենակ չէ, գերմանական հորձանուտում նրանց համադրողացիներից շատերն են կործանվել. «Հայ դարը, Հուսեյն ու Ռահիմը ծախվեցին գյավուրներին... Իդրիս Հանիֆեն ու կույր Մուսան գժվեցին... Մեհմեդը մեքենայի տակ ընկավ»¹⁷⁰:

Բաժանված ընտանիքների խնդրին է անդրադառնում նաև Նևզաթ Ուսթյունը «Գերմանիա, Գերմանիա» պատմվածքում: Ամուսնուն ետքերելու համար հերոսուհին՝ Էլիֆը նրան իր մահվան մասին կեղծ հեռագիր է ուղարկում: Ռըզան վերադառնում է տուն, բայց նոր կնոջ՝ Երիտասարդ ու գեղեցիկ գերմանուհի Էդոյայի հետ: Կնոջը ողջ-առողջ տեսնելով, որոշում է վերադառնալ Գերմանիա:

¹⁶⁷ Նույն տեղում, էջ 11:

¹⁶⁸ Նույն տեղում, էջ 63:

¹⁶⁹ Утургаури С., Турецкая проза 60-70-х годов: основные тенденции развития, Москва, Наука, 1982, стр. 25.

¹⁷⁰ Նույն տեղում, էջ 28:

Ամուսնուն չկորցնելու համար Էլիֆը, բուն գյուղացի թուրք կանանց բնորոշ հնազանդությամբ, պատրաստ է նույնիսկ Էդդային ընդունել որպես երկրորդ կին, սակայն Ռոզան վերադառնալ չի ուզում: Թեև իրեն մեղավոր զգալով մեկնման վերջին պահին՝ Ստամբուլի կայարանում, նա խոստանում է Էլիֆին բաժանվել գերմանուհուց, բայց կինը հասկանում է, որ դրանք դատարկ խոսքեր են: Երբ գնացքը շարժվում է, Էլիֆն ընկնում է գետնին ու սկսում գոռալ. «Գերմանիա, Գերմանիա: Ինչ արեցիր ինձ հետ, Գերմանիա: Անիծված լինես դու, Գերմանիա»¹⁷¹:

Եթե Լ. Էրբիլի և Ն. Ուսթյունի հերոսների համար Գերմանիան անծօքի է վերածվում, ապա Ադալ Եթ Ադադլունի «Իմ երազանքի նուրբ վարդը» վեպի հերոսի՝ Բայրամի կարծիքով Գերմանիան նրան տվել է ազատություն, համագյուղացիների մշտական ծաղրուծանակին արժանի պատասխան տալու հնարավորություն: Գերմանիայից տուն՝ Բալլըհիսար, տանող ճանապարհին, որի ընթացքում Էլ զարգանում են վեպի դեպքերը (ընթերցողը հնարավորություն է ստանում ծանոթանալ «գայսթարբայթերների» առօրյային, տեսնել սահմանային մաքսատան աշխատողների կաշառակերությունը, վերադարձողների՝ նեյլոնից վերնաշապիկներով, ճենապակիով, օգտագործված հեռուստացույցներով, պլաստիկ իրերով, Էլեկտրական սարքերով բեռնված մեքենաները, ինչպես նաև գերմանացի կնոջ հետ Թուրքիա վերադարձող միգրանտներին), նա պատկերացնում է իր հաղթական վերադարձը գյուղ: Ճանապարհի ընթացքում հերոսի ներքին մենախոսություններից ընթերցողն իմանում է Գերմանիա մեկնելուց առաջ Բայրամի կյանքի մանրամասները (1971 թ. մարտի 12-ի դեպքերին նրա մասնակցության համատեքստում ծանոթանում 1960-70-ականների Թուրքիայի ներքաղաքական խնդիրներին¹⁷²)՝ աղքատություն, մեծ սեր, սիրած աղջկան հասնելու համար Գերմանիա մեկնելու որոշում, սեփական հերթն արագացնելու համար ամենամոտ ընկերոջը դավաճանել, ապա երեք տարվա չարքաշ աշխատանքի ու գրկանքների արդյունքում ձեռք բերված 1974 թ. արտադրության մեղրագույն Մերսեդես, որի

¹⁷¹ Նույն տեղում, էջ 126-127:

¹⁷² Ağaoğlu A., Fikrimin Ince Güllü, İstanbul, 2006, s. 129.

շնորհիվ այլևս ոչ մի բալլը հիսարցի չէր կարողանալ ու նրան «հնչեգյուլ Բայրամ» ասելով ծաղրել¹⁷³: Հակառակը, բոլորը նայելու են շողշողացող Մերսեդեսին, զարմանալու են ու նախանձելու, հասկանալու են, որ նա արդեն ապահովված մարդ է դարձել և սկսելու են ակնածանքով վերաբերվել իրեն¹⁷⁴: Մեծ գոհողություներով գնով ձեռք բերված մեքենան դարձել է Բայրամի միակ ընկերն ու սերը: Մեքենայի նշանը նրան թվում է գիշերը դաշտերի վրա կախվող Հյուսիսային աստղից ավելի փայլուն, իսկ ազդակի ձայնը «կնոջ ձայնից էլ գեղեցիկ: Բոլոր երգերից, թյուրթյուներից գեղեցիկ...»¹⁷⁵: Մեքենայի գաղափարն այնքան կարևոր է Բայրամի համար, որ նա նույնիսկ սկսում է մտածել, որ չարժի ամուսնանալ Քեզբանի՝ տարիներ շարունակ իր սիրած աղջկա հետ, քանի որ ընտանիքն ու երեխաները, անխուսափելիորեն, կխանգարեն ավելի լավ մեքենա ունենալուն¹⁷⁶: Նման մարդու համար իսկական ողբերգություն են դառնում ճանապարհին նախ Մերսեդեսի աստղի անհետացումը, ապա լուսարձակների գողանալն ու դռան խազվելը: Մեքենայի փչանալուց առանց այն էլ հուսալքված Բայրամի դժբախտություններն այսքանով չեն վերջանում: Թուրքիայում ամեն ինչ նրան թվում է աղքատ, կեղտոտ ու անսահման օտար. «Յոթ ժամ է հայրենիքում էր Բայրամը, - գրում է Ա. Աղաօղլուն, - բայց շարունակում էր իրեն զգալ «առևսլանդեր», Մյունխենի փողոցներում, գործարանի մուտքի մոտ քարտն ընդունող մեքենայի դիմաց կանգնած օտարերկրացի»¹⁷⁷: Այս զգացումն էլ ավելի է խորանում, երբ գյուղի շեմին՝ աղբյուրի մոտ պատահամբ հանդիպում է համադյուղացի մի երիտասարդի, ով պատմում է, որ Քեզբանն, իմանալով Բայրամի ընկերոջ հանդեպ արած դավաճանության մասին, ամուսնացել է մի ձկնորսի հետ: Ամեն ինչ անմիաստ է դառնում Բայրամի համար, նա նույնիսկ չի հասկանում, ուր գնալ, քանի որ ոչ մի ճանապարհի վերջում նրան ոչ ոք չի

¹⁷³ Նույն տեղում, էջ 14:

¹⁷⁴ Ünlü M., նշված աշխ., էջ 491.

¹⁷⁵ Ağaoğlu A., Fikrimin İnce Güllü, էջ 5.

¹⁷⁶ Նույն տեղում, էջ 146.

¹⁷⁷ Նույն տեղում, էջ 159:

սպասում¹⁷⁸: Յերոսի կյանքի պատմությանը նման ավարտ տալով՝ Ա. Աղաողլուն թերևս Բ. Յըլդըզի նման ցույց է տալիս, որ մի մենթալ իտեռում դրական ընկալվող երևույթներն ու մոտեցումները մեկ այլ հարթակում ոչ միայն անօգուտ են, այլև վտանգավոր և կործանարար կարող են լինել: Ավելին, մարդն ինքն իրենից փախչել չի կարող: Յրաժարվելով իր սեփական արժեքներից՝ նամիկնույնն է չի դառնում նոր արժեքների կրող, այլ հայտնվում է փակուղում:

Կործանված երազանքների և չիրականացած պատրանքների թեման իր արտացոլումն է գտնում նաև մեկ այլ հայտնի թուրք գրող Դուրսուն Աքչամի¹⁷⁹ «Լեռների սուլթանը» վեպում: Վեպի գործողությունները ծավալվում են թուրքիայի արևելքում՝ դատելով հերոսների անուններից քրդաբնակ շրջաններից մեկում: Գլխավոր հերոսը՝ Շիթոն, թուրքիայից Գերմանիա եկած ապրիևի ներգաղթյալ է, սակայն նա սովորական խեղճուկրակ գյուղացի չէ: Թուրքիայում փախցրել է իր սիրելի աղջկան՝ Ջևոյին, որի հայրն այդ մասին իմանալով՝ իր մարդկանց ուղարկել է նրանց հետևից: Սկսված հրաձգության ժամանակ Շիթոն մի քանիսին սպանել է, բայց Ջևոն էլ պատահաբար վիրավորվել և մահացել է: Իր վշտի մեջ անսփոփ, մարդասպանության մեջ մեղադրվող Շիթոն մի քանի տարի թաքնվել է լեռներում, որտեղ էլ խիզախության ու արած հերոսությունների համար ստացել «Լեռների սուլթան» մականունը¹⁸⁰: Տարիներ անց բարեկեցիկ կյանքի հույսով Գերմանիայում հայտնված Շիթոն հրաժարվում է ցածր վարձատրվող օրինական աշխատանքից և հարստանալու հեշտ ձև գտնում. նա կազմակերպում է գերմանացի կանանց և թուրք տղամարդկանց ֆիկտիվ ամուսնություններ, զբաղվում կավատությամբ: Մանր-մուկ խարդախություններով փող

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 267:

¹⁷⁹ Դուրսուն Աքչամը ճանաչված թուրք մտավորական և պատմաբան, սոցիոլոգ Թաներ Աքչամի հայրն է: Թաներ Աքչամը հայտնի է իր հայամետոդիքորոշմամբ, բազմիցս հանդես է եկել Յայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչերով:

¹⁸⁰ Մինչ 1970-ականները որևէ հանցագործության կամ այլևայլ պատճառներով լեռներում թաքնվելու սովորույթը տարածված է եղել թուրքիայում: Նման մարդկանց կոչում էին «Էշքիյաներ»: Որպես «բարի» ավազակներ հայտնի էշքիյաները կոչուպուտի, ավազակային հարձակումների միջոցով վատակած գումարները կիսում էին աղքատների հետ, պաշտպանում անօգնական մարդկանց: Չարմանալի չէ, որ ժողովուրդը սիրում էր թուրքական «ռոբինհուդներին», նրանց տալիս հերոսական մականուններ, դարձնում երգերի ու պատմությունների հերոս:

վաստակող Շիթոն, սակայն, հավատարիմ է մնում գյուղական ավանդույթներին, իր կնոջն անարգած ընկերոջը սպանում է և հայտնվում գերմանական բանտում: Նման ավարտ տալով վեպին՝ Դ. Աքչամը կարծես ևս մեկ անգամ ընդգծում է թուրքական և գերմանական իրականության տարբեր լինելը. Գերմանիայում «պատվի սպանություն» հասկացությունն ընկալելի չէ, այնտեղ անհնար է լեռներում թաքնվել արդարադատությունից: Թուրքիայում մեծ խիզախության ու տղամարդկության ցուցիչ համարվող արարքը Գերմանիայում արժանանում է պարսավանքի:

Թուրքերի գերմանական ողիսականը ներկայացնող ուշագրավ դրվագներ կան նաև Դ. Աքչամի պատմվածքներում: «Սուլեյմանի աչքերը» պատմվածքում գլխավոր հերոսի՝ Սուլեյմանի, հետգնացքի նույն ճամփորդախցիկ գնացող մի գերմանուհու միջոցով հեղինակը ներկայացնում է թուրքերի նկատմամբ գերմանացիների վերաբերմունքը. «Թուրքեր... 30 տարվա մեջ ձեզ նմաններին շատ ավճառալից ճանաչեցի՝ կոտլետի, լահմաջոյի, սխտորի հոտով ձեր մշակույթը, շալվարով, սվիտերով, գնզգնզացող խաղալիքները... Խոչընդոտներին հակառակ գալիս եք... Ի՞նչու եք գալիս: Ասացի արդեն, կերակրվելու համար: ...բեդվիներին հիշեցնող մորուքներով, գլխարկավոր մոլլաներով, սև գլխաշորով կանանցով մեր երկիրը գրավեցիք¹⁸¹: ...նրանք [թուրքերը - Ն.Պ.] քրիստոնյաների հացն ուտում, քրիստոնյաներին «գյավուր» են ասում: Նույնիսկ լեզու չեն ուզում սովորել: Թող գնան իսլամական երկրներ... սակայն չեն գնում: Քանի որ քրիստոնյաների փողը շատ են սիրում, բարձրախոսներով էզան կանչել, Ղուրան կարդալ, շնորհավորանքները, այաթները գյավուրների սկավառակների վրա գրել շատ են սիրում: Թողնես միայն սոցիալական օգնություն ստանան, ուտեն-խմեն, մզկիթում պառկեն: Մեր երկիրը բարեգործական միություն է դարձել, ծոյլերի հավաքատեղի»¹⁸²: Գերմանացիների նմանօրինակ դժգոհություններին հակառակ ժամանակի հետ թուրքերը գերմանական իրականության մի մասն են դառնում, ավելին դանդաղ ու դժկամորեն, բայց ընկալում են

¹⁸¹ Akçam D., Sevdam Ürktü, Ankara, 1998, s. 53.

¹⁸² Նույն տեղում, էջ 54:

ընդունող հասարակության որոշ նորմեր, սովորություններ: Օրինակ, «Աֆղանցի» պատմվածքի հերոսը կամաց-կամաց սովորում է, որ Գերմանիայում շունը հայ հոյանք չէ, այլ երեխաների, թռչունների նման սիրելի արարած¹⁸³ և համակերպվում, որ կինն իրեն անվանի «իմ սիրելի Աֆղան» (աֆղանական շուն): Կանայք սովորում են իրենց իրավունքները պաշտպանել և ամուսնու դաժան ծեծին դիմանալու փոխարեն ոստիկանություն զանգել . «Չայրենիքում կնոջս ինչպես էլ ծեծեի, ձայնն էլ դուրս չէր գա, - անկեղծանում է «Տղամարդը» պատմվածքի հերոսը ոստիկանի հետ, - Այստեղ եկավ, ճիշտ ճանապարհից շեղվեց:»¹⁸⁴:

«Ալի աղջիկ» վեպում թուրք գրող Նիհաթ Բեհրամն է ստեղծում Եվրոպայի և Ասիայի՝ ավելի կոնկրետ Թուրքիայի, հակադրման հետաքրքիր պատկերներ: Եվրոպան անվանում է «լուսավորության քաղաք», Ասիան՝ «մթության թագավորություն»: Երկար արկածներից հետո «թուրքական սովորական անխոտ, անծառ, անջուր, առանց դեղի, առանց լույսի, առանց բժշկի, առանց դպրոցի մի գյուղաքաղաքից»¹⁸⁵ Եվրոպական ինչ-որ քաղաքում հայտնված փոքրիկ Ալիի ճանապարհը հեղինակն այսպես է նկարագրում. «Այսպիսով, հայտնվեց Եվրոպայի Լուսավորության քաղաքներում... Անատոլիայից դեպի Ասիան այնող լանջերից, մթության քաղաքներից վիրավոր եկավ»¹⁸⁶:

Այսպիսով, 1960-ականների երկրորդ կեսից մինչ 1980-ականների կեսերը «գաթարբայ թերական» թեմատիկան թուրք գրականության մեջ արծարծվող խնդիրների շարքում պահպանում է իր ոչ առաջնային, բայց հաստատուն տեղը: Նշենք նաև, որ թուրքական սփյուռքի ակտիվացմանը զուգահեռ այս թեման ներկայումս ևս չի կորցնում իր արդիականությունը: Պատահական չէ, որ, օրինակ, Նոբելյան մրցանակակիր Օրհան Փամուքի հանրահայտ «Ձյունը» վեպի հերոսը գերմանաբնակ թուրք է, և հեղինակն իր հերոսի մենակության համատեքստում անդրադառնում է թուրքական համայնքի խնդիրներին, ինքնության հարցին:

¹⁸³ Նույն տեղում, էջ 8:

¹⁸⁴ Նույն տեղում, էջ 44:

¹⁸⁵ Behran N., Kız Ali, İstanbul, 2001, s. 56.

¹⁸⁶ Նույն տեղում, էջ 7:

Ամփոփելով, հիշենք թուրք գրող Քեմալ Թահիրի (1910-1973) խոսքերը. «Մենք կարծում ենք, թե վեպը մեր ցանկության է ենթարկվում: Վեպը գրում ենք, որովհետև սրտներս այդպես է ուզում: Որտեղի՞ց է գալիս այս սրտերիս ուզածը գրելը: Կրկին հին վիպագիրներից է գալիս: Այսինքն, վեպի տեսակը հնարել են, առաջ են քաշել, այդ պատճառով մենք էլ իմացել ենք, որ աշխարհում այդպիսի բան կա, մտածել ենք «Մեր երկրի մասին պատմելու համար սա էլ օգտագործենք»¹⁸⁷:

¹⁸⁷ Beş romancı köy romanı üzerine tartışıyor, s. 33.

**ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐԲԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒՄԸ ՈՒ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ**

**2.1 ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒՄԸ.
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԹՅՈՒՐՔՅՈՒՆԵՐ**

1960-ականների վերջին 1970-ականների սկզբին հրատարակվում են գերմանալեզու թուրք գրողների առաջին ստեղծագործությունները: Հանրահայտ թուրք գրող Արաս Օրենը (ծնվ. 1939 թ.) գրում է. «Մեր ճամպուրակներում բերեցինք մեր լեզուն և որպես փոքրիկ նվեր մեր մշակույթը և արվեստը: Դրանցով ցանկանում ենք մի փոքր փոխել այս հասարակությունը»¹⁸⁸: Տևական ժամանակ, սակայն, թուրքերը և նրանց ստեղծած գրականությունը գերմանական հասարակության ուշադրությունից դուրս էին: Մոտավորապես 15-20 տարի թուրք գրողները ստեղծագործում էին գրեթե բացառապես թուրքերենով թուրքերի համար:

Գերմանացիներն սկսեցին հետաքրքրվել իրենց երկրում բնակվող թուրք-միգրանտներով միայն 1980-ականների կեսերին, ինչը պայմանավորված էր նախորդ գլխում նշված մի շարք քաղաքական և սոցիալական պատճառներով: Գերմանական հասարակության մեջ միգրանտական հարցի շուրջ ընթացող խմորումների լավագույն արտացոլումը և գրեթե 20 տարի անտեսված թուրքերի դրույթան ներկայացումը դարձավ գրող-հրատարակախոս Գյունթեր Վալրաֆի (ծնվ. 1942 թ.) «Հատակին» գիրքը: Գրքի հեղինակը միգրանտական առօրյան հասկանալու համար որոշում է «գասթարբայթերի» կերպարով հանդես գալ: Նա երկու տարի (1974-1976) ապրում է ապօրինի թուրք միգրանտ Ալի Լևենթի անվան տակ, հասարակ թուրքերի նման աշխատում շինարարություններում, Մաքդոնալսում¹⁸⁹: Թուրք միգրանտի կերպարանքով ձեռք բերած փորձառությունը դառնում է գրքի հիմնական նյութը: «Հատակին» գիրքը, որ հետագայում թարգմանվեց 23 լեզուներով, շատ մեծ

¹⁸⁸ Zengin E., Türk- Alman Edebiyatına Tarihsel Bir Bakış ve Bu Edebiyata İlişkin Kavramlar, Hacettepe Üniversitesi Türkiyat Araştırmaları Dergisi, 2010 Bahar (12), s. 331, <http://hutad.hacettepe.edu.tr/index.php/hutad/article/viewFile/121/87>.

¹⁸⁹ Գիրքն ամբողջությամբ տե՛ս Wallraf G., En alttakiler, Köln, 1986.

հաջողություն ունեցավ: Ինքը Գ. Վալրաֆն է ասում. «Գիրքս 5 միլիոն օրինակով է վաճառվել, հետևաբար Գերմանիայում 5 միլիոն Ալի է ապրում...»¹⁹⁰: 1980-ականների կեսերից բոլոր այս «Ալիների» խնդիրը վերջապես մտնում է քաղաքական ու հասարակական օրակարգ և արդեն շուրջ երեք տասնամյակ ոչ միայն պահպանում իր տեղը երկրի կարևորագույն ներքին հարցերի բուրգում, այլ ավելին՝ ազդում նաև ներքին ու արտաքին քաղաքականության առաջնահերթությունների վրա:

Միգրանտական խնդրի քաղաքական ու տնտեսական ասպեկտներից ոչ պակաս կարևոր և քննարկման կարոտ էր մշակութային ասպեկտը և, մասնավորապես, գրականությունը: 1984 թ. գերմաներենով տպագրվեց թուրք հեղինակների պատմվածքները ներառող «Թուրքերը խոսում են գերմաներեն» ժողովածուն: Միգրանտական (Գերմանիայում բացի թուրքականից սկսել էր զարգանալ նաև իտալական, արաբական, պարսկական, իսկ հետագայում նաև արևելաեվրոպական գրականություն) գրականության նկատմամբ աճող հետաքրքրության մասին է վկայում 1985 թ. Մյունխենի համալսարանի կողմից ոչ գերմանացի գրողների համար Ադելբերտ ֆոն Շամիսոյի անվան հատուկ մրցանակի ստեղծումը: Մրցանակի հիմնադիր Յարալդ Վայնրիխի վկայությամբ. «Ադելբերտ ֆոն Շամիսոյի մրցանակի ստեղծումը կոչված է ցույց տալ ոչ գերմանախոս հեղինակներին, որ արտերկրից ներմուծված գրականությունն ընդունելի է գերմանացիների համար և մենք կարող ենք այն արժևորել թե որպես մեր գրականության հարստացում, թե որպես համաշխարհային գրականության մաս: Եվ թե նույնիսկ երբեմն մենք չգիտենք, ինչպես դիմել այս կիսատար-կիսահարազատ հեղինակներին, ովքեր հաճախ չունեն գերմանական անձնագիր, բայց ունեն գերմանական գրիչ, մենք անմիջապես ազատվում ենք լեզվական անհարմարությունից՝ կոչելով նրանց «Շամիսոյի թոռներ»¹⁹¹: Մրցանակի առաջին դափնեկիր դարձավ վերոնշյալ Արաս Օրենը, հետագա տարիներին մրցանակը ստացել են նաև թուրք գրողներ

¹⁹⁰ Mortan K., նշված աշխ., էջ 5:

¹⁹¹ Gramling D., The Caravansarai Turns Twenty: or Rethinking new German literature in Turkish?, p. 66, <http://www.journals.istanbul.edu.tr/iuaded/article/view/1023010317/1023009556>.

Չաֆեր Շենոջաքը (ծնվ. 1961 թ.), Էմինե Սևգի Օզդամարը (ծնվ. 1946 թ.), Ֆերիդուն Չափոզլուն (ծնվ. 1964 թ.):

Նույն 1985 թ. Բադ Յամբուրգ քաղաքում անցկացվող գրականագիտական գիտաժողովին Գերմանիայի միգրանտական գրականության անառնիստական անգամ դարձավ նաև գիտական քննարկման առարկա: Աշխարհի 10 երկրներ ներկայացնող գերմանական 16 հեղինակ գերմանացի գրականագետների, գրողների և քննադատների հետանդրադարձան այլևս «ոչ միայն գերմանական» գրականությանը: Գիտաժողովի ընթացքում պաշտոնական շրջանառության մեջ դրվեց «գասթարբայթերական գրականության» տերմինը, որը, սակայն, ի սկզբանե չստացավ գրողների մեծ մասի հավանությունը: Օրինակ, հայտնի թուրք գրող Յուսուբ Գազարբայանի հանդես եկավ այս տերմինը քննադատող «Գրականությանը գրականություն է» հոդվածով, որտեղ նախիր անձնական օրինակով ցույց էր տալիս, որ ոչ բոլոր միգրանտ-գրողներն են «գասթարբայթերներ» և պնդում, որ այդպիսի կլիշե-անվանումները խորացնում են խորականության մթնոլորտը: Յ. Գազարբայանի դեմ էր նաև «միգրանտական գրականություն» տերմինին՝ այն համարելով էթնիկ խորականության դրսևորում¹⁹²: Նմանատիպ արձագանքների արդյունքում «գասթարբայթերական գրականություն» տերմինը լայն կիրառում չստացավ: Հետագայում, երբ «գասթարբայթերները» աստիճանաբար դարձան Գերմանիայի մշտական բնակիչներ, այն ընդհանրապես կորցրեց իր նշանակությունը և ներկայումս կարող է օգտագործվել միայն Գերմանիայի թուրքական գրականության միառանձին շերտնկարագրելու համար:

«Գասթարբայթերական գրականություն» տերմինին փոխարինելու եկավ «միգրանտական գրականություն» անունը, որը, սակայն, խիստ ընդհանրական լինելու պատճառով բավականաչափ ճշգրիտ չէր: Ժամանակի ընթացքում կիրառության մեջ մտան նաև «փոքրամասնության գրականություն», «Գերմանիայի թուրքական գրականություն», «թուրք-գերմանական գրականություն», «գերմանականների գրականություն»,

¹⁹² Boyacı I., Pazarkaya Örneğinde Göçmen Türk Aydınının Kimlik Problemi ve Bu Problemin Çözümü, Turkish Studies, International Periodical For the Languages, Literature and History of Turkish or Turkic, Volume 5/2 Spring 2010, s. 880, http://www.turkishstudies.net/Makaleler/1442262050_boyac%C4%B1_ismail.pdf.

«սահմանային գրականություն», «բնականության գրականություն» տերմինները: Վերջին տարիներին լայն տարածում է գտել նաև «միջմշակութային գրականություն» հասկացությունը, որի կողմնակիցները Գերմանիայի թուրքական գրականությունը դիտարկում են որպես գերմանական և թուրքական մշակույթների յուրօրինակ միաձուլում, Արևմուտք-Արևելք ավանդական հակամարտության կիզակետում ձևավորված վերազգային երևույթ: Դրա հետ միասին ոչ գերմանացիների կողմից Գերմանիայում ստեղծվող գրականության անվան հարցը բաց է մնում: Տերմինների նման բազմազանության պատճառն են մի կողմից թուրք գրողների ստեղծագործություններում տեղի ունեցող բովանդակային, լեզվական, ժանրային դիսամիկ փոփոխությունները, մյուս կողմից էլ սոցիալական, քաղաքական, սոցիոմշակութային տեսանկյունից երկու հասարակությունների փոխադարձ ընկալման խնդիրը¹⁹³: Արդյունքում վերոնշյալ տերմիններից և ոչ մեկը միանշանակ ընդունված չէ գիտական հանրության մեջ¹⁹⁴: Թերևս սա է պատճառը, որ վերջերս նույնիսկ շրջանառության մեջ է դրվել և բավական համակիրներ ձեռք բերել «Չսահմանվող (Nitelendirilmeyen) գրականություն» անունը¹⁹⁵:

Այնուամենայնիվ, հստակ է մի բան. այս չսահմանվող գրականության սկզբնավորողները թուրքիայից Գերմանիա տեղափոխված «գասթարբայթերներն» էին: Այս ընդհանրական անվան տակ միավորված են տարբեր սոցիալական խավերի պատկանող և ամենատարբեր քաղաքական կողմնորոշումներ ունեցող մարդիկ: Յետևաբար օրինաչափ է, որ առաջին թուրք գրողների շարքերը բավական խայտաբղետ էին. Ֆաթիմ Բայքուրթից (1929-1999) ու Արաս Օրենից մինչև հասարակ բանվոր-վարպետներ Ֆեթիհ Սավաշչըն (1930-1989) ու Յափիբ Բեքթաշը (ծնվ. 1951 թ.): Առաջին հայացքից այնքան տարբեր այս գրողներին միավորում էր մի բան. նրանք հայտնվել էին Գերմանիայում հասուն տարիքում, բոլորն էլ ծնվել և ապրել էին թուրքական մշակութային միջավայրում, դաստիարակվել այդ

¹⁹³ Zengin E., նշված աշխ., էջ 333:

¹⁹⁴ Topçu H., Avrupa Ve Amerika'da Türk Edebiyatı, Turkish Studies International Periodical For the Languages, Literature and History of Turkish or Turkic Volume 4 /1-I Winter, 2009, s. 705.

¹⁹⁵ Ekiz T., Avrupa Turk Edebiyatı ve Bir Temsilcisi: Emine Sevgi Ozdamar, cankaya universitesi, journal of arts and science, sayı 7, 2007, s. 35.

երկրի սովորույթների ու բարքերի համաձայն, թուրքական ինքնության կրողն էին: Սա է պատճառը, որ Գերմանիայի թուրքական համայնքի գրականությունը կայացման փուլում գտնվում էր թուրքական մշակույթի ազդեցության տակ, ավելին, թուրք գրողների արժարժած խնդիրների սպեկտրը գրեթե ամբողջությամբ համընկնում էր նույն ընթացքում Թուրքիայում «գասթաբայթերական» ուղղության շրջանակներում տպագրվող գրքերում արտացոլված խնդիրների հետ: Բացի այդ, Ֆաբիո Բայքուրթի, Նևզաթ Ուսթյունի, Դուրսուն Աքչամի ստեղծագործությունները կարելի է հավասարապես համարել թե՛ թուրքական, թե՛ «գասթաբայթերական» գրականության մաս: Թեմաների ընտրության առումով գրականությունը համասեռ էր: Տարբեր բարդության ու գեղեցկության գեղարվեստական մեթոդներով, տարբեր սյուժետային հանգուցալուծումներով թուրք գրողները գրում էին նույն բանի մասին, անդրադառնում էին թուրքական ու գերմանական իրականության առանձնահատկություններին, ներկայացնում թուրքերի Գերմանիա գալու պատճառները, հայրենիքից հեռու նոր միջավայրին հարմարվելու բարդությունները, նոր նորմերի անընդունելի լինելը, օտար լինելու զգացումը, տեղացիների կողմից թշամանքի դրսևորումները, հայրենիքի կարոտն ու մի օր ետ վերադառնալու երազանքը: Նրանց ստեղծագործությունների էջերից գասթաբայթերների, նրանց կանանց ու երեխաների պատմությունները կարծես վերակենդանացնում են միգրանտների անցած ուղին, հնարավորություն տալիս ավելի լավ հասկանալ նրանց խնդիրները: Կարելի է պնդել, որ վերը նշված և այլ բազմաթիվ անլուծելի խնդիրները, դրանք ինչ որ կերպ բարձրաձայնելու ցանկությունը դարձան գրականության ձևավորման հիմք ու դրա ակտիվ զարգացման խթան: Թուրք գրականագետ Նիլուֆեր Քուրույազը ջնջում է, որ առաջին թուրք գրողների համար գրելը իրենց ապրած մենակությունը, օտարությունը, հայրենիքի կարոտը, շրջապատի խորթությունը, նոր երկրում հարմարվելու

բարդութիւնը, ֆինանսական խնդիրներն արտահայտելու ձևեր: Սա է պատճառը, որ նրանց կոչում են «տիրութեան», «ցավի» գրողներ¹⁹⁶:

Գերմանական իրականութեան մեջ առաջին թուրք գրողների բարձրածայնած բուրք վերոնշյալ խնդիրներին ավելի վաղ սկսել էին անդրադառնալ ժողովրդական աշուղ-երգիչները, որոնց ստեղծագործութիւնները, թեմայով զբաղվող մասնագետների մեծ մասի կարծիքով, հիմք ծառայեցին գրականութեան ձևավորման համար: Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաև այն փաստը, որ Գերմանիայում գրված թուրքական բանահյուսութիւնը մեզանում ուսումնասիրված չէ, նպատակահարմար ենք համարել համառոտ անդրադարձ կատարել այս թեմային:

Թուրքական գրականութեան մեջ լայն տարածում ունեն ժողովրդական երգերը՝ թյուրքյուները: Սովորաբար եռատող կամ քառատող հանգավորված տներից բաղկացած թյուրքյուներն անդրադառնում են մարդու կյանքի գրեթե բոլոր ոլորտներին՝ բովանդակային առումով ընդգրկելով թեմաների ամենալայն շրջանակ՝ կենցաղին ու ընտանիքին նվիրված երգերից մինչև կրոնական, հայրենասիրական, սիրային և անգամ բանտային երգեր: Այս շարքում իրենց կարևոր տեղն ունեն նաև հայրենիքն ու ընտանիքը հեռվում թողած մարդկանց կյանքին, նրանց տառապանքներին վերաբերող պանդխտութեան երգերը¹⁹⁷: Ուստի օրինաչափ է, որ օտարութեան մեջ հայտնված թուրք-աշխատողները, որոնց թվում կային նաև աշուղներ ու ժողովրդական բանաստեղծներ, իրենց «գասթաբայթերական» առօրյան դարձրին թյուրքյուների թեմա՝ օգտագործելով երգերը որպես ծանր աշխատանքային օրերից հետո լիցքաթափվելու, խորթ միջավայրում գոյատևելու, սեփական հույզերը ինչ-որ կերպ արտահայտելու միջոց:

«Գերմանական թյուրքյուներ» ընդհանուր անունով հայտնի այս երգերը նման են թուրքական համայնքի յուրօրինակ տարեգրութեան՝ արտացոլում են դրա զարգացման հիմնական

¹⁹⁶ Kocadoru Y., Yüksel Pazarkaya ve Nevfel Cumart'ın Şiirlerindeki Almanya İmgelerinin Karşılaştırılması, Osmangazi Üniversitesi Sosyal Bilimler Dergisi, Cilt: 5, Sayı: 1, Haziran 2004, s. 69.

¹⁹⁷ Այս մասին մանրամասն տե՛ս Баролина И., Турецкая народная песня/Тюркские литература и фольклор, Москва, 2004, стр. 64-67.

փուլերը, համայնքային պատմության առանցքային իրադարձությունները: Հատկանշական է, որ թյուրքյունների քանակի աճը կամ նվազումը համեմատական է համայնքում տիրող ընդհանուր տրամադրվածությանը. համեմատաբար հանգիստ շրջաններում դրանք պակասում են, իսկ այնպիսի բեկումնային փուլերում, ինչպիսին էին, օրինակ, 1973 թ. հյուր-աշխատողների փոխանակման վերաբերյալ թուրք-գերմանական միջպետական պայմանագրի կասեցումը կամ 1990-ականների կեսերին գերմանական ազգայնական խմբավորումների կողմից թուրքերի վրա կատարած հարձակումները՝ ավելանում: Բնական է, որ համայնքի ձևավորումից անցած հիսուն տարվա ընթացքում թուրքերի համար խնդիրների առաջնահերթության փոփոխմանը զուգահեռ փոխվել են նաև թյուրքյունների թեմաները: Տարիների ընթացքում հայրենիքի կարոտին, վերադարձի երազանքին նվիրված երգերը վերածվել են լեզվի, մշակույթի պահպանման խնդիրներին վերաբերող երգերի: Հարկ է նշել, որ այս փոխակերպումը հատուկ է ոչ միայն ժողովրդական ստեղծագործություններին, այլ նաև գեղարվեստական գրականության գործերին: Ընդ որում, գրականության երկու ոլորտներում նույն ժամանակահատվածում արծարծվող խնդիրները օրինաչափորեն համընկնում են: Ժողովրդական և գեղարվեստական գրականության հեղինակների նախընտրությունները համընկնում են նաև ստեղծագործությունների լեզվի հարցում: Եթե առաջին թուրք գրողները գրում էին գրեթե բացառապես թուրքերենով և թուրքական լսարանի համար, ապա 1980-ականների վերջից գերմանալեզու գրականությանը սկսում է գերակշռել: Նմանապես աշուղները ի սկզբանե ստեղծագործում էին թուրքերենով, 1980-ականների կեսերից առաջ եկան խառը գերմաներեն-թուրքերեն գրված թյուրքյուներ, իսկ ավելի ուշ գերմաներեն թյուրքյուները սկսեցին ավելի ու ավելի մեծ տարածում գտնել:

Ինչ վերաբերում է թյուրքյուների թեմատիկ առանձնահատկություններին՝ դրանք որպես կանոն նվիրված են լինում ոչ թե մեկ կոնկրետ խնդրի, այլ իրենց մեջ արտացոլում են տվյալ պահին արդիական խնդիրների ողջ բույլը: Այսպես, 1960-

ականներից մինչև 1970-ականների կեսերը դրանց հիմնական թեման հայրենիքի կարոտն ու օտար միջավայրում հարմարվելու բարդությունն էր: Թյուրքյուններում արտացոլված էր նաև այն մեծ հիասթափությունը, որ սպասում էր «արևմտյան դրախտի» փոխարեն գերմանական գործարաններում հայտնված թուրք-աշխատողներին: Բազմաթիվ թյուրքյունների թեմա է դարձել նոր միջավայրում ինտեգրմանը խոչընդոտող կարևորագույն գործոնը՝ լեզվի չիմացությունը: Օրինակ, աշուղ Յասան Յըլմազի «Գերմանիայից մի նամակ ուղարկեցի» թյուրքյունի հիվանդ հերոսը գերմաներեն չիմանալու պատճառով չի կարողանում իր վիճակը բացատրել .

...Geniş olur Almanya'nın yolları *Լայն են Գերմանիայի ճանապարհները,*
Nasil iştir anlaşılmaz dilleri. *ինչպես անհասկանալի լեզուները:*¹⁹⁸

Ինդրին մեկ այլ անդրադարձ է աշուղ Ռըզաթանների թյուրքյունն .

...Ulan Almanca germanca *Անիծված* *գերմաներեն-*
մերմաներեն,

Konuşup anlayamadım seni *Չկարողացաքեզ հասկանալ ,*
Boğazımda laflar tikanır kalır *Բռտերը կոկորդումս կանգնում,*
մնում էս,

Meister başlar dır dir dir... *Վարպետը սկսում է դըռ-դըռ-*
*դըռ:*¹⁹⁹

Թյուրքյուններում ի հայտեկող կարևոր ու առանցքային կերպար է գործարանում բանվորների անմիջական ղեկավարը՝ «վարպետը», ով հաճախմիակ գերմանացին է, ում հետթուրք բանվորներն անմիջական շփում ունեն: Որպես Գերմանիայի և գերմանացու հավաքական կերպար ընկալվող վարպետը դառնում է բողոքների թիրախ, արժանանում քննադատության, երբեմն նույնիսկ վիրավորանքների և հայ հոյանքների տեսքով.

Karakter sıfıra inmiş *Տրամադրությունն չի մնացել ,*
İnsanlıktan geri kalmış *Մարդկությունն է վերացել ,*
Yapmadıkları kalmamış *Էլ չմնաց մի վատություն ,*

¹⁹⁸ Öztürk A. O., Göçmen edebiyatı olarak Almanya türküleri üzerine, <http://www.turkuler.com/yazi/gocmenedebiyati.asp>.

¹⁹⁹ Sever M., Ahlaklı, Zeki ve Çalışkan Türk İşçisi!, <http://www.sabah.com.tr/Pazar/Yazarlar/sever/2011/04/17/ahlakli-zeki-ve-caliskan-turk-iscisi>.

Hiç utanmaz meisterler.
վարպետները:

Որ չանեն այդ անամոթ

(աշուղ Մուսթաֆա
Չիֆթչի)²⁰⁰

Գերմաներենի չափաորթու անհասկանալի էթուրքերի համար նաև Գերմանիան: Այդ երկրի սովորույթները, հագուստը, անգամ ուտելիքները տարօրինակ են թվում: Նոր գարմանալի իրականությունը ևս պատկերված է թյուրքյուներում՝ ընդ որում հիմնականում բացասական երանգներով.

...Tualetler su kullanmaz

...Չու գարանում ջուր չեն

o qatmaq nirdim,

Kıçlarını hiç yıkamaz

Յետները չեն լվանում,

Allah'tan kuldun utanmaz

Աստուգ, մահից չեն վախենում

Yuh olsun şu Almanlara

Անամոթ գերմանացիները:

Yabancıyı çekemezler

Օտարներին չեն սիրում,

Domuzdan başka yemezler

Խոզից բացի միս չեն ուտում,

Insanlık nedir bilmezler

Մարդկություն չեն հասկանում

Yuh olsun şu Almanlara...

Անամոթ գերմանացիները...²⁰¹

Աշուղ Մեթին Թյուրքոզի երգերից մեկում հանդիպում ենք հետևյալ տողերը.

Yemek listeleri şöyle

Կերակրացանկն այսպիսին է.

Her gün yerler patatesi

Ամեն օր ուտում են կարտոֆիլ,

Domuz eti at eti

Խոզի միս, ձիու միս,

Yılan eti it eti

Օձի միս, շան միս,

Kaplumbağa kurbağa

Կրիա, գորտ, խխուռնջ,

Sümüklüböcek tospağa

Կենդանիների ցեղ.²⁰²

Hayvanların sülalesi.

Նոր միջավայրում կրած դժվարություններին գումարվում է Թուրքիայում և այնտեղ մնացած ընտանիքի կարոտը: Աշուղ Յասնի մի երգում ասվում է.

²⁰⁰Ataseven F., Arafta Üretilen Yazınsal Metinler, Turkish Migration Conference: Selected Proceedings, Editors: Şeker G., Tilbe A., Ökmen M., Yazgan P., Eroğlu D., Sirkeci İ, London, p. 510.

²⁰¹ Öztürk A. O., Alamanya Türküleri: Türk Göçmen Edebiyatının Sözlü Öncü Kolu, Ankara, 2001, s. 71.

²⁰² Kızıllıbuga M., Almanya'da Neler Var, <http://mutlukizilbuga.blogspot.com/2014/01/almanyada-neler-var.html>.

Trenin yolları demir değil mi?
Հ Ե ° Լ

İşçiye verilen emir değil mi?
Silaya kavuşmak nasip değil mi?
Mezarım yad elde kaldı neyleyim?
անեմ.²⁰³

Գ ու ց ե գ ն ա ց ք ի ո ե լ ս եր ը եր կ ա թ ի ց

Ու բանվորին ասածը հրաման Հ Ե ° ,
Հայրենիք հասնել վիճակված Հ Ե ° ,
Գերեզմանս օտար ախում մնաց, ի ° ն չ

Կարոտի երգերում աշուղներն հիշում են երեխաներին, պատմում օրըստօրե անտանելի դարձող կարոտի մասին.

Beş tane yavrumu bıraktım sefil
Sana iş bulamaya geldim Almanya
գտնել ու , Գերմանիա,

Հինգ երեխաթողեցի, եկա
Քեզ մոտ գործ

Ben de bir insanım köle değil
Çekilmez derdinden öldüm Almanya.
Գերմանիա.²⁰⁴

Ես էլ մարդ եմ, ստրուկ չեմ,
Անտանելի դարդից մեռա,

Trene bindimde tren vızıldar
Türkiye 'de kaldı körpe kuzular
գառնուկներս,

Գնացք նստեցի, գնացքն արագ գնաց,
Թուրքիայում մնացին որբ

Ah çektikçe ciğerlerim sızılar
Ağlaman yavrular yine gelirim
Trene bindimde dönüyor teker
Silada yavrular hasretlik çeker
քաղ ու մ,

Ախեն քաղում, սիրտս մղկտում է,
Մի և ցեք, երեխաներ, նորից կգամ:
Գնացք նստեցի գնացի,
Հայրենիքում երեխաները կարոտ են

Bana bu ayrımlık ölümden beter
վատ է,

Ինձ համար այս բաժանումը մահից էլ

Ağlaman yavrular yine gelirim.

Մի և ցեք, երեխաներ, նորից կգամ.²⁰⁵

Ժամանակի ընթացքում, սակայն, պարզ է դառնում, որ ետադարձի ճանապարհ չկա: Աշուղ Յուսուֆ Փոլաթօղլուն գրում է.

Geride bıraktık kaçınıcı yazı
Özlem ateşiyile yakıyor yıllar....
Elbet bir başka Fırat'ın suyu...

Ետևում մնաց քանի-քանի ամառ,
Կարոտի կրակով վառվող տարիներ...
Իհարկե ուրիշ է Եփրատի ջուրը,

²⁰³ Öztürk A. O., Göçmen Edebiyatı Olarak Almanya Türküleri Üzerine, <http://www.turkuler.com/yazi/gocmenedebiyati.asp>.

²⁰⁴ Öztürk A. O., Almanya Türküleri: Türk Göçmen Edebiyatının Sözlü Öncü Kolu, s. 115.

²⁰⁵ Gür M., Աշուղ աշխ, էջ 112.

*Hiç de aynı değil Elbe'nin huyu
բնավ...*

Նման չէ Էլբայի բնավորությանը

*Köln'ü ben Konya'ya bezetemedim...
նմանեցնել ...*

Քյոլնն ես չեմ կարող Քոնիային

*İlk gelenler torunlara karıştı...
խառնվեցին.²⁰⁶*

Առաջին եկողները թոռներին

Միևնույն ժամանակ թյուրքյուներում հնչում են հայրենիք
վերադառնալու կոչեր.

*Çiftçi dön git sarıl kara sapana
հողին,*

Գյուղացի, վերադարձիր, գնա փաթաթվի քո

*Yeter köle olduğun Almanya .
եղար.²⁰⁷*

Յերիք, ինչքան գերմանացու ստրուկը

*Kemteri halktandır halkın ozanı
աշունդն է,*

Քեմերին ժողովրդից է, ժողովրդի

*Geç anladık bize kuyu kazanı
փորողին,*

Ուշ հասկացանք մեզ համար փոս

işte budur Almanya'nın düzeni

Սա է, ահա, Գերմանիայի կարգը

*Yurda dön gardaşım yurda dön yurda.
հայրենիք.²⁰⁸*

Յայրենիք վերադարձիր, եղբայր,

Յայրենիք վերադառնալու կոչերի հետսերտորեն կապված են նաև
հեռվում մնացած ընտանիքի անդամների անուկից գրված
թյուրքյուները, որոնցում կանայք ու երեխաները տղամարդկանց
խնդրում են վերադառնալ .

Almanya, sen de babamı götürdüün

Գերմանիա, դու էլ հորս տարար,

*Hallerimiz yaman oldu dön baba
հայրիկ,*

Մեր վիճակը շատ վատ է, վերադարձիր,

Hanı söz vermiştin çabuk geleceğim

Խոսք տվեցիր, որ շուտ տկգաս,

*Hallerimiz yaman oldu dön baba
հայրիկ...*

Մեր վիճակը շատ վատ է, վերադարձիր,

²⁰⁶ Batı Avrupa Türkleri F. Almanya'da 30. yıl, s. 14.

²⁰⁷ Öztürk A. O., Göçmen Edebiyatı Olarak Almanya Türküleri Üzerine, <http://www.turkuler.com/yazi/ocmenedebiyati.asp>.

²⁰⁸ Նույն տեղում:

Nolur dön baba vay zalim baba ey
hայ րիկ,

Baba bilir misin bize ne oldu

Bir sene demiştin onbir yıl oldu...

Այս թեմային հետաքրքիր անդրադարձներ ունի նաև աշուղ
Յայ դար Ավջըն.

Saçım uzun ben bu saçı satarım

Almanya'ya dertli mektup atarım

Gözetirim postayı mektup gelmezse

չգա

Hasta olur yataklarda yatarım.

Almanya acı vatan

Adama hiç gülmeyi

Nedendir bilemedim

Gidenler hiç gelmeyi

Üçü kızı iki oğlan

Kime bırakıp gittin

Böyle güzel yuvayı

Ateşe yakıp gittin

Almanya'ya gitmişsin

Orada evlenmişsin

Ta yedi sene oldu

Evine gelmemişsin.

Այս կոչերը, սակայն, այդպես էլ իրականության չվերածվեցին:
«Յայ րենիք վերադառնալ ու» մասին երազանքներն էլ հիմնականում
երազանքներ մնացին: Թուրքերը չէին շտապում թողնել իրենց
համեմատաբար կայուն աշխատանքն ու վերադառնալ
գործարկությունն ու բազմաթիվ այլ խնդիրներից տառապող
Թուրքիա: Աշուղ Մուզաֆերը գրում է.

Gelen pişman Almanya'ya

Bir de kalıp ta gelmeyen.

Ի՞նչ կլինի, ետ դարձիր, դաժան

Յայ րիկ, գիտես, ի՞նչ եղավ,

Մի տարի ասեցիր, տասնմեկ դարձավ.²⁰⁹

Երկար մազս ես կծախեմ,

Գերմանիա նամակ կուղարկեմ,

Փոստատու նը կհսկեմ, թե նամակ

Կհիվանդանամ կպառկեմ.²¹⁰

Գերմանիա, տխուր հայրենիք,

Մարդուն չի ժպտում երբեք,

Չգիտեմ, թե ինչն է

Գնացողը ետ չի գալիս:

Երեքն աղջիկ, երկուսը տղա

Ու՞մ թողեցիր, գնացիր,

Այս գեղեցիկ ընտանիքը

Քանդեցիր ու գնացիր:

Գերմանիա ես գնացել,

Այնտեղ ամուսնացել,

7 տարի արդեն եղավ

Դու տու՛ն չես վերադարձել ...²¹¹

Գերմանիա եկողն է փոշմանում,

Մեկ էլ տանը մնացողը.²¹²

²⁰⁹ Öztürk A. O., Almanya Türküleri: Türk Göçmen Edebiyatının Sözlü Öncü Kolu, s. 98.

²¹⁰ Նույն տեղում, էջ 141:

²¹¹ Նույն տեղում, էջ 143:

Ահա թե ինչ ու 1973 թ. աշխատուժի միջպետական պայմանագրի կասեցումն ու հետագա տարիներին ամենատարբեր միջոցներով թուրքերի ներգաղթի կասեցմանը և միգրանտներին հայրենիք վերադարձնելու փորձերը բուռն դժգոհության և առաջացրին, թուրքերի տեսանկյունից գերմանացիների «անշնորհակալ ու թյուրնը» նկարագրող թյուրքյուների հիմք դարձան.

Domuz ahırlarını verir Türk'e kiraya խոզի բներ են տալիս թուրքերին վարձով,

Alman ev sahipleri doymuyorlar paraya. Գերմանացի տան տերերը փողից չեն կշտանում:²¹³

Թյուրքյուների հեղինակները երգերում դիմում են կոնկրետ մարդկանց, մասնավորապես, երկրի ղեկավարությանը.

<i>Helmuth Kohl und Strauss</i>	<i>Յեւ մուտք ունի²¹⁴ և Շտրաուսը²¹⁵</i>
<i>Wollen Ausländer raus</i>	<i>Ասացին «դու օտարերկրացիներ»,</i>
<i>Biz de insan değil miyiz</i>	<i>Մենք էլ մարդ չենք, ի՞նչ է,</i>
<i>Severek yaşamak varken</i>	<i>Միրով ապրելու փոխարեն</i>
<i>Şimdi bir de vize çıktı</i>	<i>Այժմ էլ վիզան դու քեզի,</i>
<i>Nice gönülleri yıktı</i>	<i>Ինչքան սրտեր կոտրեց,</i>
<i>Gurbetçiler dertten bıktı</i>	<i>Պանդուխտները հոգնեցին վշտերից,</i>
<i>Gülerek yaşamak varken.</i>	<i>Մինչդեռ հնարավոր է ծիծաղելով</i>

ապրել:²¹⁶

Դժգոհության և խորը վրդովմունքը ստիպում են աշուղներին գերմանական իշխանության նույնականացնել \$աշխատների հետ: Մեթին Թյուրքոզը գրում է.

<i>Âşığın dedikleri</i>	<i>Աշուղն ասաց.</i>
<i>Doldurduk gedikleri</i>	<i>Փակեցինք բացերն,</i>
<i>Türkleri geri yolluyor</i>	<i>Ու հիտլ երիշները</i>

²¹² Öztürk A. O., *Alamanya türküleri: Türk göçmen edebiyatının sözlü öncü kolu*, s. 151.
²¹³ Նույն տեղում, էջ 185:
²¹⁴ Յեւ մուտք ունի (ծնվ. 1930 թ.) գերմանացի քաղաքական գործիչ է: 1982-1998 թթ. եղել է Գերմանիայի կանցլեր:
²¹⁵ Ֆրանց ժոզեֆ Շտրաուսը (1915-1988) գերմանացի քաղաքական գործիչ է, գրադեցրել է տարբեր պաշտոններ, այդ թվում 1978-1988 թթ. եղել է Բավարիայի վարչապետ:
²¹⁶ Göç Türküleri, <http://www.ozturk.de/kose.php?id=160>.

Hitler'in köpekleri.
ու դարկու մ.²¹⁷

Թուրքերին հետ են

Ու շագրավ է այս թեմային Դերդիյոքլ արխմբի անդրարարծը.

Fırınlar yaktığın çağa doğru mu? Ու՞ր են գնում, պարոն
գերմանացի,

Yolculuk nereye Alman efendi? Գուցե դեպի վառածդ
վառարանները,

Kasaplık yaptığın çağa doğru mu? Ու՞ր են գնում, պարոն
գերմանացի,

Yolculuk nereye Alman efendi? Գուցե մսագործ եղածդ
ժամանակները:

Hitler de küçüktü sonra büyüdü Զիտլերն էլ փոքրիկ էր, հետո
մեծացավ,

Kurdu orduları aldı yürüdü. Չորք ստեղծեց, առաջ ընկավ,
İnsanlık üstünde kurşun eridi Մարդկու թյան դեմ պատերազմեց:

Yolculuk nereye Alman efendi? Ու՞ր են գնում, պարոն
գերմանացի,

Senin tarihinde kara leke var Պատմու թյանդ վրաբիծկա,
Silmeye çalıştın bu güne kadar, Փորձում ես մաքրել մինչ օրս,

İster misin Nazizim dirilsin tekrar? \$աշիգմին են վերդառնալ
ու գում,

Yolculuk nereye Alman efendi? Ու՞ր են գնում, պարոն
գերմանացի.²¹⁸

Բոլոր դժվարություններին և դժգոհություններին հակառակ
Գերմանիայից չհեռացող թուրքերին են նվիրված աշուղ Մեթին
Թյուրքոզի թյուրքյուները մեկի կրկներգի խոսքերը.

...Alamanya, Alamanya Գերմանիա, Գերմանիա,
Benden aptal bulaman ya Ինձնից հիմար չես կարող գտնել,

Alamanya Alamanya Գերմանիա, Գերմանիա,
Türk işçisi gibi bulaman ya. Թուրք բանվորի նման չես կարող

գտնել.²¹⁹

²¹⁷ Öztürk A.O., Göçmen edebiyatı olarak Almanya türküleri üzerine, <http://www.turkuler.com/yazi/gocmenedebiyati.asp>.

²¹⁸ Pulur H., "Alamanya Yangınları" <http://www.milliyet.com.tr/2008/02/22/yazar/pulur.html>.

²¹⁹ Alamanya, Alamanya..., երգի տեսահոլովակը http://www.youtube.com/watch?v=0Ck_J0BYqY0.

Almanya herşeyin üstündesin, sen bizim olacaksın.

*Թուրք եմ, գերմաներեն չ գիտեմ, բայց գրպանս լիքն է միշտ,
Գերմանիա, ամեն ինչ ից վերես, երեխայի նպաստը շատ է,
Ի՞նչ կարիք կա աշխատելու, երեխա ունեցիր,
տղամարդկու թյուր մահացել է՞,
Գերմանիա, ամեն ինչ ից վերես, ինչ էլ երգս գեղեցիկ է,
Շնորհակալ ու թյուր կարմիրներին, կանաչներին, մեզ
հիշեցին,
Քրիստոսյա Դեմոկրատների չտվածը վաղուց ենք վերցրել,
Եթե գնանք ընտրու թյան, ձեռքերու մս ընտրաթերթիկ,
Գերմանիա, ամեն ինչ ից վերես, մերը կդառնաս.²²⁵*

1990-ականների կեսերից թյուրքյուները Գերմանիայում սկսեցին իրենց տեղը գիջել փոփ-մշակույթի ավելի արդիական ձևերին, օրինակ, հիփ-հոփին ու ռեփին, որոնք թուրք հետազոտող Ա. Քայայի բնորոշմամբ թուրքլ են տալիս միգրանտներին ստեղծել սինկրետիկ մշակույթ՝ սփյուռքի գիտակցության և միջմշակութայնության խաչմերուկում²²⁶: Սրա հետ մեկտեղ այսօր էլ կան երիտասարդ հեղինակներ, ովքեր փորձում են պահպանել ավանդույթներն ու թյուրքյուների միջոցով արթնացնել գերմանաբնակ թուրքերի արդեն չորրորդ սերնդի մարող ինքնագիտակցությունը:

Այսպիսով, 1960-ականների վերջից գերմանական մշակութային դաշտում հայտնվում են թուրք գրականության առաջին արտահայտումները՝ նախժողովրդական երգեր թյուրքյուների, ապա նաև առաջին արձակ ստեղծագործությունների տեսքով: Թե՛ թեմատիկ, թե՛ ժանրային առանձնահատկություններով այս շրջանում Գերմանիայի թուրքական գրականությունը հիմնականում միատարր է և նախատեսված թուրք ընթերցողի համար:

²²⁵ Öztürk A. O., Göçmen edebiyatı olarak Almanya türküleri üzerine, <http://www.turkuler.com/yazi/gocmenedebiyati.asp>.

²²⁶ Kaya A., Aesthetics od Diaspora: contemporary minstrels in Turkish Berlin, Journal of Ethnic and Migration Studies, vol. 28, No 1, January 2002, p. 45, http://media.library.ku.edu.tr/reserve/resspring05/CIVL%20202%20J.Drabble/Mod4_Aesthetics%20of%20diaspora_idem.pdf.

2.2 ՍՈՑԻԱԼ ԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՒՆ ՈՒ ՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արդեն նշել ենք, որ «գաթարբայ թերական» գրականության ծիրում գրված առաջին ստեղծագործությունների հիմնական թեման միգրանտների սոցիալ-տնտեսական վիճակն էր: Օգտագործելով ռեալիզմի ուղղությանը հատուկ մեթոդներ ու պատկերամիջոցներ՝ նրանք փորձում էին հնարավորինս մանրամասն պատկերել միգրանտական առօրյան: Ավելին, Թուրքիայի հետ սերտորեն պահպանվող կապը ստիպում էր գերմանաբնակ թուրք գրողներին անդրադառնալ նաև այնտեղ տիրող սոցիալական, տնտեսական և հատկապես բարդ քաղաքական իրավիճակին: Թուրքիայում մարդու իրավունքների ոտնահարման, այլակարծության նկատմամբ անհանդուրժողականության խնդիրը շատ վառ է արտահայտված, օրինակ, գրող Յափիբ Բեքթաշի «Ստվերի հոտը» վեպում: Յեղիսկը ներկայացնում է XX դարի 60-70-ականներին Թուրքիայում ծավալված ձախակողմյան շարժումը, կոմունիստների հալածանքները, նրանց նկատմամբ իշխանությանը ու ոստիկանության անմարդկային վերաբերմունքը, փրկվելու համար հայրենիքը լքելու անխուսափելիությունը: Գրքից պարզ է դառնում, որ Նույնիսկ կոմունիստների երեխաներն էին դատապարտված ծնողների հայացքների համար մշտապես մեղադրանքներ լսել, արժանանալ «կոմունիստի վիժվածք»²²⁷, «գյավուր-կոմունիստ»²²⁸ վիրավորական պիտակներին: Յ. Բեքթաշը վեպում ուշագրավ համեմատականներ է տանում իր ժամանակի ու ավելի վաղ շրջանի Թուրքիայի քաղաքական դրության միջև. «Իսմեթ փաշայի միակուսակցական շրջանն էր: Այն ժամանակ աղքատ լինելը մեղք էր: Յիմա էլ է այդպես, չէ՞: Մեզ վրա էլ ճնշում կար: Դիմանալ ու չէր»²²⁹:

Թուրք գրողները, ներկայացնելով իրենց արդեն հասուն հերոսների մանկությունը, հաճախ մտովի վերադառնում են Թուրքիա և ի ցույց դնում XX դարի կեսերին թուրքական գյուղերում տիրող ծայրահեղ ծանր սոցիալական իրավիճակի

²²⁷ Bektaş H., Gölge Kokusu, İstanbul, 2000, s. 10.

²²⁸ Նույն տեղում, էջ 192:

²²⁹ Նույն տեղում, էջ 1:

պատկերները: Շեշտենք, որ նրանցից շատերի համար այս նկարագրություններն ինքնակենսագրական են և արտացոլում են նրանց ունեցած փորձառությունը: Ս. Շեյնհարթը (ծնվ. 1946 թ.), օրինակ, «Ատելությունը ծուղակում» վեպում, հերոսուհուն՝ Սունայի մանկությունը ներկայացնելիս, նկարագրում է դպրոցում հիվանդանոց չունեցող իրենց գյուղն, ուր անհաղթահարելի աղքատության մեջ ապրող երեխաների ու նրանց ծնողների համար մոտակա ավանից գնված է ժանազին պլաստիկից գունավոր կոշիկները դարձել են բարձի տակ պահելու արժանի թանկարժեք նվեր²³⁰: Յ. Բեքթաշի «Իմ համրիյան»²³¹ վեպի հերոսուհի Ֆաթման էլ իր մանկությունն այսպես է բնութագրում. «Դաշտերում եմ մի քիչ աշխատել: Դպրո՞ց... Մեր գյուղում դպրոց չկար... Որոշ տղաներ հարևան գյուղի դպրոցն էին գնում, բայց աղջիկներին թույլ չէին տալ իս»²³²: Աղքատության անբաժան ուղեկիցն համատարած անգրագիտությունն էլ հանգեցնում էր սնոտիապատության, կրոնական մոլորությունների, որոնք երբեմն զավեշտի են հասնում: Օրինակ, Ֆ. Սավաշչըի «Երբ պայթում է վառարանը» պատմվածքի հերոսներ Օզերն ու Թալեաթը լրջորեն վիճում և միմյանցից նեղանում են, քանի որ Օզերը գործարանի հսկայական վառարանը նմանեցնում է դժոխքին, իսկ նրա ընկեր Թալեաթը գտնում է, որ դժոխքի կրակները տասն անգամ ավելի ուժեղ են: Առաջին գասթարաբայ թերևորի կերպարն ճշգրտորեն ամբողջացնում է Ա. Օրենն իր «Յուրահատուկ աքսոր» գրքում. «Այն ժամանակ մյուս բոլոր միգրանտ աշխատողների պես Թուրքիայից եկած գասթարաբայ թերևորն էլ ոչ միայն հասարակության ընկալման հարցում, այլև սոցիալական տեսանկյունից միատարր էին: Սոցիալական բաժանումներ դեռ չկար: Բոլորի սոցիալական կարգավիճակը նույնն էր՝ հյուր-աշխատող: Ամենավատ, ամենաքիչ վարձատրվող, ամենադժվար գործերում աշխատող: Անկախ նրանից, անցյալում լիցեյի դիպլոմ էին ունեցել, մասնագետ ու արհեստավոր էին եղել թե միայն սեփական անունը գրել-կարդալ իմացել՝ հասարակության բուրգի ամենաստորին շերտում էր նրանց

²³⁰ Sheinhart S., Pusuda Kin, İstanbul, 2006, s. 25.

²³¹ Համրիյանը թուրքական գյուղերում ավանդական տիկնիկ է:

²³² Bektaş H., Hamriyanım, İstanbul, 1989, s. 129.

տեղը: Մեծամասնությունը քաղաքից չէր, գյուղական արմատներով էր: Մեկ էլ այս պաշտոնական գասթարբայթերներին պետք է ավելացնենք ապրիլի փախտականներին: Նրանց վիճակն էլ ավելի վատ էր»²³³: Նման խավարամիտ, սահմանափակ թուրք գյուղացիների կյանքում հանկարծ հայտնվում է «գերմանական երազանքը»: Դրախտի նման այս երկրի մասին պատմությունները ձմռան երկար գիշերներին պատմվող հեքիաթներ են հիշեցնում: Ս. Շեյնհարթը գրում է. «Մեր յուզով տապավում էինք: Անկարայում, Ստամբուլում նախագահն ո՞վ է, ի՞նչ է կատարվում, երկրի վիճակն ինչպե՞ս է, մարդիկ ինչպե՞ս են այլ տեղերում ապրում մեզ չէր հետաքրքրում, բայց Գերմանիան օրնիբուն բոլորի մտքում էր»²³⁴: Գերմանիա մեկնելը վերածվում է նվիրական երազանքի, իսկ գնալու թույլ տվությունն ստանալը հարսանիքի նմանվող խնջույք անելու առիթ է դառնում: Յ. Փազարբայան «Քեմալը և Բուրաքը» վիպակում փոքրիկ հերոսի՝ Քեմալի, աչքերով նկարագրում է նրա հոր՝ Իբրահիմի, Գերմանիա մեկնելու առիթով սկսված իրարանցումը. «Նույնիսկ գյուղի կենդանիներն էին Քեմալի հոր հետ ուրախացել և նրա մեկնումը տոնում», - գրում է Յ. Փազարբայան, - Ամբողջ աշխարհը ուրախության մեջ էր, միայն Քեմալը, մայրն ու տատն էին մատաղի գառների պես կանգնել -մնացել: Նրանց այս վիճակը ոչ ոք չէր հասկանում: Իբրահիմը մեծ բախտի էր արժանացել: Նագնում էր դրախտային երկիր, որի մասին երազում էին յոթ գյուղի բոլոր տղամարդիկ, որի մասին ասքեր էին պատմում: Շատ մարդ էր դիմել մայրաքաղաքի պետական գրասենյակ, բայց մինչ այդ օրը շատ քիչ մարդ էր դրական պատասխան ստացել²³⁵... Իսկ Քեմալի մայրը միևնույնն է լալիս էր, որ ամուսինը թողնում, գնում է և մոր գրկում նստած փոքրիկ քույրն էլ, նրա լացը տեսնելով, սկսում արտասվել, ինքն էլ էր լալիս: Մեկ էլ տատիկն էր լալիս, որ իր որդին թողնում-հեռանում է»²³⁶: Իբրահիմը գնում է, իսկ ընտանիքի անդամներն անհամբեր սպասում են նրա վերադարձին: Այս ընտանիքի պատմությունը հազարավոր թուրքական ընտանիքների

²³³ Ören A., Özel Bir Sürgün, İstanbul, 2004, s. 76.

²³⁴ Sheinhart S., Pusuda Kin., s. 30.

²³⁵ Pazarkaya Y., Kemal ile Burak. Cennet Ülkesine Yolculuk, Ankara, 1998, s. 8.

²³⁶ Նույն տեղում, էջ 6:

պատմությունն է: Առաջին գաթարբայթերների ընտանիքները տարիներով սպասում էին հայրերի վերադարձին և զարմանալի չէ, որ անգամ կարճատև արձակուրդը դառնում էր տոն, ուրախություն: Հիմնականում ավտոմեքենայով վերադարձող աշխատողներին հերոսների պես էին դիմավորում: Գերմանիայում հին համարվող մեքենան թուրքական իրականության մեջ իսկական ճոխություն էր, իսկ որպես նվեր բերած հազար ու մի անհասականալի, անսովոր իրերը, որոնց գոյության մասին նույնիսկ ամենագետ հոջան ու դարոցական ուսուցիչը չէին լսել²³⁷, հրճվանքի աղբյուր: «...Հայրերը երեխաներին կարճ ժամանակ անց այնտեղից հրաշալի խաղալիքներ էին ուղարկում, - գրում է Յ. Փազարբայան,- Քայլող, խոսող, լացող տիկնիկներ, մեքենա-կոնստրուկտորներ, շարժվող փոքրիկ բեռնատարներ, գրպանի լապտերներ, ձեռքի ժամացույցներ: Հորից այսպիսի հրաշք նվերներ ստացած երեխաների շուրջ միանգամից հավաքվում էին գյուղի բոլոր երեխաները և բոլորն էլ նրանց լավ ընկերն էին դառնում: Իսկ կանանց համար ամենաթանկ նվերներն պսպղուն, նեյլոնե հագուստներն էին»²³⁸: Հատկանշական է, որ գյուղում բոլորին նվեր պետք է հասներ: Հ. Բեքթաշի «Իմ համրիյան» վեպի հերոսուհի Ֆաթման, արձակուրդի մասին խոսելիս, տհաճությամբ նշում է. «...Հիմնական գլխացավանքն էլ գյուղում է սկսում: Կարծես Հաջից ենք ետգալիս: Փոքրից մեծ բոլորն, անխոր բոլորը մարդու ձեռքին են նայում: Նրանց սպասած նեյլոնից վերնաշապիկները, թեյի-սուրճի սպասք տանելու համար ոչ փող է հերիքում, ոչ էլ ճամպուռկ...»²³⁹: «Քեմալ և Բուրաք» վեպի հերոս Իբրահիմն էլ երկու տարի անց վերադառնում է նվերներով լեցուն նոր մեքենայով: Սակայն արձակուրդն անցնում է, «գաթարբայթերները» ետեն գնում և ընտանիքներին նորից մնում է սպասել և կարոտել: Հոր կարոտից տանջվող Քեմալն իր հավատարիմ ոչխար Բուրաքի հետորոշում է գնալ նրամոտ: Առանց անձնագրի ու փողի միամիտ գյուղացի տղան գրքի սյուժեով կարողանում է հասնել Ստամբուլ և նույնիսկ ինքնաթիռ մտնել, որտեղ միայն նրան բռնում են անվտանգության աշխատակիցները: Երջանիկ

²³⁷ Նույն տեղում, էջ 8:

²³⁸ Նույն տեղում, էջ 9:

²³⁹ Bektaş H., Hamriyanım, s. 127.

պատահականությունը, սակայն, հենց այդ օրը հայրն էլ վերադառնում է Թուրքիա: Հայր և որդի հանդիպում են օդանավակայանում: Դարոցահասակ երեխաների համար նախատեսված պատմության երջանիկ ավարտը կյանքում հաճախ էր պատահում: Ճիշտ հակառակը, տարիների ընթացքում աստիճանաբար պակասում էին արտասահմանից եկող նամակները, վերադառնալու, նոր տուն գնելու, նոր կյանք սկսելու կամ ընտանիքը Գերմանիա տանելու խոստումների մեծ մասն էլ մնում չիրականացված: Եթե մնացողների համար դժվար էր, ապա գնացողներին էլ բնավ հեշտ չէր: Թուրք գրողները բավական մանրամասն են ներկայացնում գասթարբայթերների՝ Գերմանիա հասնելու և այնտեղ հաստատվելու դժվարություններով լի ճանապարհը: Յ. Փազարբայան այսպես է նկարագրում իր խոսքերով «Եվրոպայի ամենախեղճ զբոսաշրջիկների» մուտքը Գերմանիա. «Փախչում են, քոչում հեռում, շատ հեռում՝ օտարի ձեռքի մի բուխանկա հացի համար: Գերմանիա հասան: Սև օջախներին, սև ածխի օջախներին հասան: Իջան, իջան, իջան, երկրի տակ հասան: Սև հացին, մթություն հացին հասան»²⁴⁰: Այս սև հացին հասնելու համար թուրքերը պատրաստ էին խեղճ, աղքատ զբոսաշրջիկի անձնագրով կիսաքանդ ավտոբուսով գնալ²⁴¹, սոված-ծարավ մնալ սահմաններին կամ Յ. Փազարբայանի «Մահմուդը և Գյուլլիանեն» պատմվածքի հերոս Մահմուդի նման գտնել Գերմանիայում բանվոր-աշխատող Գյուլլիանեի պես մեկին և ֆիկտիվ ամուսնություն համար 5000 մարկ ծախել: «Գասթարբայթերական» աշխատանքի մեկնելու հնարավորությունն չունեցող աղջիկների համար էլ ամենամեծ հաջողությունն էր համարվում թեկուզև անձանոթ գերմանաբնակ թուրքի հետ ամուսնանալը. «...Թող գահիմար աղջիկը, գա, տեսնի այս դժոխքը, - ասում է Ս. Շեյնհարթի հերոսուհիներից Էսմեն, - գալու է, օտարության դատապարտվի, աղքատության մեջ մնա, չնայած, եթե չգա, ի՞նչ պետք է անի որ: Գյուլլի հովվի հետ ամուսնանա՞, ամբողջ կյանքը երեկոյան՝ բլղուրի փլավ, առավոտյան բանջարով ապուր պատրաստի, ամեն գարուն հղիանա՞, հետո էլ քառասուն տարեկանում թուլությունից գերեզման մտնի՞: Իհարկե, թող գա: Թող գան:

²⁴⁰ Pazarkaya Y., Oturma izni, s. 11.

²⁴¹ Նույն տեղում, էջ 39:

Գլուխներն օդերում, գժվում են Գերմանիա հարս գալու համար: Ինչ իմանան, Գերմանիան ի՞նչ է: Յայրերը քաշով մեկ ոսկի են ուզում աղջկա համար, մեր խելագար «գերմանացիներն» էլ տալիս են, տալիս, տալիս... նման բախտից ո՞վ կհրաժարվի... Թող գան, իրենց աչքով տեսնեն, թե ինչ է, տեսնեն, ի՞նչ գին են վճարել ու այդ արհեստական թելերի մեջ փաթաթվել ու, ոսկե շղթաները կրել ու, այդ մերսեդեսները, Ֆորդերն ու օփելները վարելով հայրենիք գնալ ու համար: Կարծես Գերմանիայում փող աշխատելը ծառից մի զգալիք հավաքել լինի: Թող գան, տեսնեն, թե ինչպես են տղամարդիկ, օրվա լույս չտեսնելով, հազար մետր հողի տակ մտնում, թոքերը ածուխ դարձնելով 10 տարում 20 անգամ ծերանում, կանայք էլ հոսքագծի մոտ են կյանքն անցկացնում...»²⁴²: Յազարավոր աշխատողների մի մասը, ինչպես, օրինակ Ա. Օրենի հերոս Ի. Գյունդոդոլուն կարողանում են իրականությունն դարձնել Գերմանիայի «թուրքական երազանքը». «Անվերջ հնարավորությունների երկիր՝ «փոքրիկ Ամերիկա» որպես գասթարբայթեր է եկել: Ատամները սեղմած պահակությունն, բանվորությունն է արել, ամոթ-մամոթ մոռանալով աշխատել, չի կերել-չի խմել, փող է հավաքել, նախ մի խանութ է բացել, հետո իր անունով խանութների ցանց ստեղծել և միլիոնատեր դարձել...»²⁴³: Նկատենք, որ թուրք գրողները և նույնիսկ վերլուծաբանները հաճախ են խոսում թուրքերի ցածր վարձատրության մասին՝ մոռանալով, որ Թուրքիայում նրանց եկամուտների համեմատ Գերմանիայում վճարվող գումարները վիթխարի էին և հնարավորությունն էին տալիս ոչ միայն մարդավայել ապրել, այլ նաև օգնել հայրենիքում մնացած ընտանիքներին: Օրինակ, Յ. Բեքթաշի հերոսուհի Ֆաթման երեք տարի աշխատելուց հետո կարողանում է ծնողների համար փոքրիկ տուն գնել²⁴⁴: Քիչ թե շատ բարվոք կյանքից չհրաժարվել ու համար թուրքերը պատրաստ են ամեն ինչի: Յ. Փազարբայայի հերոսներից ապրիլի մի գրանտ Յամգան՝ «Աղբը» պատմվածքի հերոսն, ոստիկանական ստուգման մասին լսելուն պես թաքնվում է աղբարկղի մեջ՝ չի զզվում, չի քաշվում, կարծես աղբի մի մասը

²⁴² Sheinhart S., Pusuda Kin, s. 11.

²⁴³ Ören A., Muhteşem Gündoğdu, İstanbul, 2011, s. 78.

²⁴⁴ Bektaş H., Hamriyanım, s. 128.

լինի: «Քըրշեհիր գյուղից գերմանական աղբաման», - գրում է հեղինակը: Նույն գրողի մեկ այլ՝ «Սյունուք» պատմվածքի հերոս Յասանը փաստաթղթեր չունենալու պատճառով ստիպված է շատ ցածր վարձատրություններ աշխատել: Նրա կյանքը հեղինակը այսպես է նկարագրում. «...Փախտական: Առանց ապագայի, առանց երաշխիքի: Բոլորին 15, Յասանին 5 էին վճարում... Մրսեց: Յիվանդացավ... Վառվում էր տաքության մեջ, գլուխը պտտվում էր, սիրտը խառնում, բայց աշխատում էր: «Յիվանդ եմ», - չէր կարող ասել, լեզուն չգիտեր²⁴⁵... Խոսել, զբոսնել, հիվանդանալ, ուրախանալ արգելված է: Բոլորը 15 են ստանում, քեզ 5 են տալիս...»²⁴⁶: Յասանը միևնույն է գոհ է, որովհետև հայրենի գյուղում մի տարում այնքան փող չէր կարողանա վաստակել, որքան Գերմանիայում մեկ ամսում:

Փողն ու բարեկեցությունն աստիճանաբար դառնում են միգրանտների գերնպատակ: Բանը նրան է հասնում, որ «Ե-5» վեպի հերոս Սալիմը հոր հանկարծամահ լինելուց հետո փող խնայելու, ավելորդ քաշքշուկից խուսափելու համար որոշում է հոր մարմինը հայրենիք տեղափոխել հեռուստացույցի տուփի մեջ: Արդյունքում տուփից եկող փտահոտի պատճառով սահմանին նրանց բռնում են, մեղադրում հոր սպանության մեջ: Սալիմի ընկերոջը՝ Ադիլին, գրած նամակից պարզ է դառնում, որ նրան ամենից շատ հուզում է այն, որ եթե ժամանակին չվերադառնա Գերմանիա, աշխատանքից կզրկվի²⁴⁷:

1970-ականներից գործազրկությունը դառնում է թուրքերի կարևորագույն խնդիրներից: Որակավորում չունեցող մարդկանց դժվար է գործ գտնել: Այս պատճառով թուրքերն համաձայնվում են նույնիսկ ամենավտանգավոր տեղերում, ամենավատ ժամերին, ամենամեծ ծանրաբեռնվածությամբ աշխատել: Թուրք Մեհմեդը Յ. Բեքթաշի «Բեդել» պատմվածքից աշխատում է վտանգավոր թթուների հետ, երբ նամիօր հիվանդանում է, ոչ ոք չի ցանկանում փոխարինել նրան նույնիսկ հավելավճարով²⁴⁸: Յ. Բեքթաշի «Ազգային մրցախաղ» պատմվածքի հերոսի խոսքերը. «Մեր գործարանն երեք հերթափոխով է աշխատում: Մենք, աշխատողներս, ասում ենք առավոտվա, ցերեկվա,

²⁴⁵ Pazarkaya Y., Oturma İzni, s. 27.

²⁴⁶ Նույն տեղում, էջ 28:

²⁴⁷ Dal G., E-5, İstanbul, 1979, s. 230.

²⁴⁸ Bektaş H., Kapıkule Nerde, s. 95.

գիշերվա հերթափոխ: Առավոտվա և ցերեկվա հերթափոխին աշխատում են գերմանացիները, գիշերը մենք, թուրքերս... Գերմանացիները չեն ուզում գիշերներն աշխատել: Անընդհատ մտածում եմ, այս գերմանացիները հիմար են: Ինձ ինչ, իրենք թող ցերեկն աշխատեն, մենք գիշերը: Տվողը գոհ է, վերցնողը գոհ է»²⁴⁹: Գ. Դալի «Ե-5» վեպի գլխավոր հերոս Սալիմը հոր հետ զրույցում ասում է, որ գերմանացիներն իրենց են պահում ամենահեշտ գործերը, չեն էլ հոգնում, ինքը, սակայն, «չի բարկանում նրանց վրա մյուս ընկերների պես: Իրենց երկիրն է, իրենց պահեստները, իրենց փողոցները, իրենց տները, իրենց տնօրեններն ու իրենց ոստիկանությունը»²⁵⁰: Ուշագրավ է, որ «գասաթարբայ թերևորի» բանվորական առօրյան նկարագրող գրողների մի մասը, օրինակ Ֆ. Սալաշըն, Գ. Դալը 1970-ականներին գրված ստեղծագործություններում ներառում են սոցիալիստական գաղափարների տարրեր, կապիտալիստական համակարգի դեմ պայքար ծավալելու նպատակով ամբողջ աշխարհի աշխատավորների միասնության կոչեր, թուրք աշխատավորության ակտիվ մասնակցության կոչեր: Սրան հակառակ թուրք բանվորների համար հաճախ անընդունելի էր նույնիսկ սեփական իրավունքների համար պայքարն. «Մարդիկ գործադուլ են անում, այն էլ անօրեն գործադուլ,-ասում է 1973 թ. Ֆորդ գործարանում տեղի ունեցած մեծածավալ գործադուլի ընթացքը նկարագրող Յ. Բեքթաշի «Աշխատանքային աքսոր» վեպի հերոսներից մեկը, - քեզ պես հորն ու մորը, երեխաներին կերակրելու համար այստեղ գտնվող մուսուլմաններին էլ խանգարում են այդ շները: Սրանք հյուր լինելն ի՞նչ է, տան տիրոջը հարգելն ի՞նչ է չիմացող մարդիկ են: Սրանք իրենց կերակրող սեղանը պղծող անհավատներ են: Նույնիսկ դժոխքում տեղ չունեն»²⁵¹: Գ. Դալը «Աշխատանքային աքսոր» վեպում ներկայացնում է բժշկական և արտադրության ծովախոզուկներին հետևող Քադիր Դերյային, ում վրա բժիշկներն որոշում են փորձարկել կրծքերը մեծացնող հորմոնալ նոր դեղամիջոցը: Ամեն անգամ, երբ Քադիրի ստամոքսը ցավում է, նրան այս դեղն են տալիս:

²⁴⁹ Նույն տեղում, էջ 68:

²⁵⁰ Dal G., E-5, էջ 8:

²⁵¹ Dal G., İş Sürgünleri, İstanbul, 1976, s. 26.

Արդյունքում նրա կուրծքը սկսում է մեծանալ: Գիտնականների փորձը, փաստորեն, հաջողվում է: Սակայն, խեղճ Քադիրը օրըստօրե մեծացող իր կրծքերի պատճառով խոր ընկճախտի մեջ է հայտնվում, նույնիսկ հիվանդանոց ընկնում: Այս մասին իմանալով՝ նրա ղեկավարներն անհանգստանում են միայն խոզուկների ճակատագրով: Նման հրեշավոր անտարբերությունը և արհամարհական վերաբերմունքը թերևս լիովին կոմպենսացվում է այն գործազրկության ու տարեցտարի ավելացող երեխաների համար վճարվող մեծ նպաստներով, որոնք հնարավորություն են տալիս բարվոք ապրել նույնիսկ առանց աշխատելու: Թեև նպաստստանալն էլ հեշտ գործ է: Օրինակ, Յ. Փազարբայայի «Կանաչ ում է» պատմվածքի հերոս Յամիդն գործից դուրս մնալուց հետո ոչ մի կերպ չի կարողանում ո՛չ նոր գործ գտնել, ո՛չ էլ նպաստ ստանալ: Աշխատանքի կոմիտեի թուրք թարգմանիչը նրան ամենակոպիտ ձևով ասում է. «Եթե աշխատանք չունես, Թուրքիա վերադարձիր: Յորդազարակը չի Գերմանիան: Քանի տարի աշխատեցիր, հերիք չի՞»²⁵²:

Միգրանտների վերադարձի հարցը իսկապես սուր է դրված: Երկար ժամանակ՝ ընդհուպ մինչև 1980-ականների կեսեր գերմանացիները կարծում էին, որ թուրքերն ուշ թե շուտ հեռանալու են իրենց երկրից: Թուրքերն էլ ամեն կերպ շեշտում էին, որ առաջին իսկ հնարավորության դեպքում վերադառանալու են տուն: Այդ համատեքստում գրականության մեջ լայն տարածում էր գտել կարոտի թեման: Տունն ու ընտանիքը ամիսներով չտեսած մարդկանց համար Թուրքիան աստիճանաբար իդեալակացվում էր՝ հատկապես գերմանական իրականության հետ համեմատության մեջ դրվելիս: Ս. Շեյնհարթը իր «Ատելությունը ծուղակում» վեպում գրում է. «Թվում էր, թե հայրենիքում աշխարհի բոլոր դժբախտությունները մեզնից հեռու են եղել»²⁵³: Յ. Բեքթաշի «Չատուցում» պատմվածքի հերոս Մեհմեթի մասին հեղինակը գրում է. «Չորս տարի անցավ թաշկինակի մեծության մի պատուհան ունեցող փոքրիկ սենյակում... Պատուհանը մեծ էլ լիներ, ինչ օգուտ, Գերմանիայի

²⁵² Pazarkaya Y., Oturma İzni, s. 75.

²⁵³ Scheinhardt S., Pusuda Kin, s. 144.

զգվել ի տաք երկինքն էր երևալ ու»²⁵⁴: Յեռվում մնացած թուրքիայ ին հակադրվում է նոր, օտար իրականությունը: Ա. Օրենս իր «Նան ծաղիկը» գրքում Բեռլինից Անթալիա եկած թրքուհու և Սիդեի բնակիչ Ալիի սիրո պատմության համատեքստում ներկայացնում է Տավրոսի լեռների անվերջ գեղեցկությունը, «արևի, ծովի և պատմության միախառնման կետում գտնվող անծայրածիր զբոսաշրջական դրախտ Անթալիան»²⁵⁵, պատմում հին թուրքական ավանդույթների ու խորհրդանիշների մասին՝ չմոռանալով այս ամենին հակադրել Բեռլինի արճիճե երկինքը²⁵⁶: Գրող Յ. Փազարբայան օտար երկիրը ասոցացնում է ցրտի, աշնանային ամպամած երկնքի հետ. «Գաղթով սկսված նոր կյանքում երազանքներն ու հիշողությունները վերջանում են, հույսերը կոտրվում»²⁵⁷: Թուրքիան, հակառակը, ներկայացվում է որպես տաք, արևոտ տեղ. «...Մարդու համար հայրենիքից լավը կա՞: Լեզուն խոսում-հասկանում էս: Խորականությունն չկա: Բոլորը քոնն են: Առավել ևս երբ արձակուրդի ես գալիս: Մեքենա ունես, գրպանումդ մարկ... Գերմանիայում մարդ արևին կարոտ է մնում: Ոչ միայն արևին: Ընկերոջը, բարեկամին, մարդուն...»²⁵⁸», - ասում է Յ. Փազարբայան ի հերոսը: Չնայած այս բոլոր դրական նկարագրություններին՝ վերադառնալու գաղափարը երազանքից իրականության չի վերածվում: Արձակուրդից արձակուրդ թուրքիայում լինող գասթարբայ թերները հետզհետե ավելի են ընտելանում Գերմանիայում ապրելուն: Այս մասին են վկայում Յ. Փազարբայանի «Ճանապարհին» պատմվածքում հնչող այս նախադասությունները. «...Միևնույն է, ինչքան մտածում եմ, մի օր այստեղ [Թուրքիա-Ն.Պ.] հիմնական վերադառնալու մասին, այնքան ինքս ինձ ասում եմ. «Աստված տա, մոտ ժամանակներս Գերմանիայից մեզ չքշեն»: Յայրենիքն, իհարկե, հրաշալի է, բայց լավ կլինի Գերմանիայից թոշակ ստանանք, հայրենիքում առոք-փառոք ծերությունն անենք: Իհարկե, եթե գործից չհանեն»²⁵⁹: Նույն թեման է արծարծում նաև Ս.

²⁵⁴ Bektaş H., Kapıkule nerde, s. 95.

²⁵⁵ Ören A., Nar Çiçeği, İstanbul 1988, s. 11.

²⁵⁶ Նույն տեղում, էջ 54:

²⁵⁷ Kocadoru Y., Աշված աշխ., էջ. 69:

²⁵⁸ Pazarkaya Y., Oturma izini, s. 83.

²⁵⁹ Նույն տեղում, էջ 82:

Շեյնհարթը իի գրքի հերոսուհի Էսմեի միջոցով. «Ամուսինս ասում էր երկու, քարը տրաքի երեք տարուց կվերադառնամ... Եկանք, երկու երեխա էլ այստեղ ունեցանք: Չորս երեխայի համար ստացած փողով վատից-լավից ապրում ենք, ամուսնուս աշխատավարձը գրեթե ամբողջությամբ բանկ ենք դնում... 10 տարի եղավ, ինչ այստեղ ենք, որքան արագ է թռչում ժամանակը»²⁶⁰: Յայրենիք վերադառնալ - չվերադառնալ ու հարցի համատեքստում Ա. Օրենն անդրադառնում է կարևոր, բայց այս շրջանում քիչ արժարժվող խնդրի. թեև աշխատելով Գերմանիայում գասթարբայ թերևերն, առաջին հերթին, անձնական կարիքներն էին բավարարում, դժվար է, սակայն, գերազնահատել նրանց ուղարկած գումարների ու ներդրումների դրական ազդեցությունը թուրքական տնտեսության վրա:

Թուրք գրողները նաև իրենց որոշակի բողոքն են հայտնում Թուրքիայի իշխանությունների մոտեցումների վերաբերյալ: Օրինակ՝ Ա. Օրենը նշում է. «Իրականում մեզ ապրանքի պես վաճառեցին, սակայն շարունակում են սուտ խոստումներ տալ. «Օտարության մեջ գտնվող մեր աշխատողներ: Օտար ափերում ձեր հայրենիքին եք ծառայում: Ձեզնով հպարտանում ենք, առողջ եղեք, շեն եղեք, ձեր ուղարկած փողերով, տեսեք, երկրի ապագան է կառուցվում: Ձեզ շնորհակալ ենք, պարտական, երբեք ձեր խնդիրների հետ մենակ չեք մնա»²⁶¹: Յատկանշական է, որ հետագա տարիներին Ա. Օրենի արտահայտած այս դժգոհությունն էլ ավելի է խորանում, նման գաղափարներ հանդիպում ենք 1990-ականներին ստեղծագործող շատ հեղինակների մոտ:

Թուրքաբնակ գրողների արժարժած սոցիալական թեմատիկան առավել վառ և բազմակողմանի է ներկայացված XX դարի թուրք գրականության հայտնի դեմքերից և գյուղագրական արձակի կարևոր ներկայացուցիչներից Ֆաբիր Բայբուրթի մոտ: Իր ստեղծագործություններում ու հրապարակախոսական հոդվածներում Ֆ. Բայբուրթն արժարժում էր թուրքական հասարակության ամենացավոտ խնդիրներն, անդրադառնում երկրում տիրող համատարած աղքատությանն ու թշվառությանը,

²⁶⁰ Sheinhart S., Pusuda Kin, s. 15.

²⁶¹ Ören A., Muhteşem Gündoğdu, s. 49.

իշխանությունների բռնատիրության ու կամայականություններին²⁶²: Ֆ. Բայքուրթն, իր ձախակողմյան հայացքների համար տարիներ շարունակ հալածանքների ենթարկվելուց հետո, 1979 թ. նշանակվեց Գերմանիայում թուրքական դպրոցների տեսուչ, հաստատվեց Դույսբուրգ քաղաքում: Եվրոպայի Նոր թուրք բնակիչների առօրյան, նրանց հոգսերն ու խնդիրները, եվրոպական ու, մասնավորապես, գերմանական իրականության մեջ նրանց տեղն ու դերը դարձան Ֆ. Բայքուրթի 1980-ականների ստեղծագործությունների հիմնական թեմաները: Միգրանտական թեմատիկային են նվիրված գրողի «Կես հաց», «Մեծ Յոնոս», «Բարձր վառարաններ» վեպերը ներառող «Դույսբուրգյան եռագրությունը» և «Գիշերային պահակախումբ», «Խաղաղության կարկանդակ» պատմվածքների ժողովածուները²⁶³:

«Դույսբուրգյան եռագրություն» հատորներից ամեն մեկը պատմում է Դույսբուրգում բնակվող մի թուրքական ընտանիքի մասին: Սակայն ամեն հաջորդ վեպի գործողությունների համատեքստում ներկայացված է նաև նախորդ գրքի հերոսների ճակատագիրը: Երեք վեպի հերոսների նախատիպն էլ իրական մարդիկ են: Վեպերի առաջաբաններում հերոսները ներկայացնում են Գերմանիա գալու իրենց պատմությունն ու խնդրում, որ գրողն այդ ամենը պատմի աշխարհին: «Մեծ Յոնոս» վեպի հերոս՝ Սալիմ Սարըքայան ասում է. «Գյուղերից, քաղաքներից վերկացանք կես հացի համար 3500 կմ ճանապարհ անցանք: Պատրաստվում էինք երկու տարի աշխատել -վերադառնալ ... Այս կյանքը մեզ ու՞ր հասցրեց»²⁶⁴: Իսկ «Բարձր վառարաններ» վեպի գլխավոր հերոսուհին՝ Էլիֆ Մուշլուկ ասում է. «Բարձր սարահարթերից եկանք Գերմանիայի ֆաբրիկաների կեղտոտության մեջ: ...Դժոխքից փրկություն չկա... Աշխարհը գլուխն առավ, լուսնին հասավ: Մենք մեր դարդերով հետ

²⁶² Ֆ. Բայքուրթի «նախագերմանական» շրջանի ստեղծագործությունների մանրամասն վերլուծությունը տե՛ս Մելքոնյան Ռ., Թուրք գրող Ֆաբիր Բայքուրթի «Գերանդին» վեպը, Գարուն, N 12, Երևան 2004, էջ 71-73, Նույնի, Թուրք գրող Ֆաբիր Բայքուրթը, Նոր-դար, N 4, Երևան, 2004 էջ 117-124, ինչպես նաև Меликли Т., Литература Турции: Корни и крона, Москва, 1998, стр. 33-43.

²⁶³ Մելքոնյան Ռ., «Գասթարբայթերների» թեմատիկան թուրք գրող Ֆաբիր Բայքուրթի ստեղծագործություններում, Արևելագիտության հարցեր, N6, 2006, էջ 258-261:

²⁶⁴ Baykurt F, Koca Ren, Istanbul, 2003, s. 9.

մնացինք... Ես ինքս էի ուզում պատմել, բայց խոսքեր չուներ... Դու պատմի»²⁶⁵: «Կես հաց» վեպի էջերից Ֆ. Բայքուրթը կարծես պատասխանում է իր հերոսներին. «Ինչի՞ համար ես վեր կացա և ինձնից առաջ եկողների ետևից եկա: Միթե՞ ոչ նրանց պատմությունները գրի առնելու համար»²⁶⁶: Ֆ. Բայքուրթի վեպերի ու պատմվածքների էջերում ականատես ենք դառնում իրական մարդկանց խնդիրներին, թուրք միգրանտների համար առանցքային կարևորություն ունեցող հարցերին: Յեղիակը ստեղծում է վառ, ինքնատիպ կերպարներ, ներկայացնում խնդիրների լայն սպեկտր:

1980-ականների կեսերը բեկումնային էին Գերմանիայի թուրքական համայնքի համար: Այս շրջանում կամաց-կամաց սկսում են կյանք մտնել թուրք միգրանտների երեխաները՝ փոխելով թուրքի մասին ստանդարտ պատկերացումները, ծնողներին հակառակ փորձելով գերմանացիների հետ շփման եզրեր գտնել: Եվ պատահական չէ, որ Ֆ. Բայքուրթի գրքերում յուրահատուկ տեղ ունեն երեխաները: «Մեծ Յեննոս» վեպի գլխավոր հերոսը տասնչորսամյա պատանի է, իսկ «Խաղաղության կարկանդակ» պատմվածքների ժողովածուն ներկայացնում է թուրք միգրանտների կյանքը երեխաների աչքերով:

Երեխաների թեմայի համատեքստում Ֆ. Բայքուրթն անդրադառնում է թուրքական համայնքի համար այսօր էլ չլուծված և առանցքային նշանակություն ունեցող կրթության խնդրին: Որպես դպրոցների տեսուչ անձամբ ծանոթ լինելով կրթական խնդիրներին՝ Ֆ. Բայքուրթը վարպետորեն ներկայացնում է թուրք աշակերտներին ու նրանց ծնողներին հուզող խնդիրները, գերմանական կրթական համակարգում նրանց սպասող դժվարություններն ու խութերը: Այս խնդրի շուրջ է զարգանում «Մեծ Յեննոս» վեպի սյուժեն: Գրքի գլխավոր հերոսների՝ Սարըքայա ընտանիքի հինգ երեխաներից մեկը՝ Ադեմը դպրոցահասակ է: Թուրքիայում բացարձակ առաջադիմություն ունեցող որդուն հայրը՝ Սալիմը, տեղափոխում է Գերմանիա, քանի որ նրա, ինչպես նաև թուրքերի մեծ մասի կարծիքով «գերմանական նշանակում է լավ:

²⁶⁵ Baykurt F., Yüksek Fırınlar, İstanbul, 2002, s. 7.

²⁶⁶ Baykurt F., Yarım Ekmek, İstanbul, 2002, s. 7.

Գերմանացիներն ի՞նչն է վատ անում, որ կրթությունը վատ կազմակերպի»: Սակայն նոր դպրոցում Ադեմին հետապնդում են անհաջողությունները՝ մի կողմից ուսուցչուհու կողմնակալ վերաբերմունքը, մյուս կողմից դասընկերների մի մասի արհամարհանքը: Նրա կողքին նստող աղջիկը՝ Մելանյան, նույնիսկ խնդրում է տեղափոխել իրեն ուրիշ տեղ, քանի որ Ադեմը հիմար է, սահմանափակ ու գարշահոտ²⁶⁷: Ավելին, նատղային խորհուրդ է տալիս մազերը դեղին ներկել, որ գերմանացու նմանվի ու գնահատականներն էլ փոխվեն: Օտար երկրում միայնակ մնացած Ադեմի ամենամտերիմ ընկերն է դառնում Յուսուս գետը: Նա ժամանակ առ ժամանակ գնում է գետի մոտ ու պատում նրան իր դժբախտությունները: Վեպում տեղ գտած այս երկար մենախոսություններն ընթերցողին ծանոթացնում են Գերմանիայի թուրքերի առօրյայի ուշագրավ մանրամասնություններին: Վեպի սյուժեից պարզ է, որ ոչ միայն Ադեմը, այլև թուրք երեխաների մեծ մասը դպրոցում լուրջ խնդիրներ ունեն: Այդ խնդիրներն շտապ լուծումներ են պահանջում, քանի որ հեղինակի բերած տվյալներով «եթե 100 տարի առաջ Գերմանիան, Ռուրի ավազանը լցված էր լեռնաքարանոցների երեխաներով, ապա այժմ էլ սև աչք-ուներով թուրք երեխաներով է լի... որոշ դպրոցներում միգրանտ երեխաների թիվը 30-40 % է, իսկ Յամբորն, Մեյդերիչ, Բրուքհաուսեն, Մարքսլոհ դպրոցներում՝ 50-60 %»²⁶⁸: Թուրք երեխաներն այնքան շատ են, որ նրանց ծնողների համար դպրոցական ժողովներն առանձին են կազմակերպվում՝ ավելի ուշ ժամի և թարգմանչի մասնակցությամբ: Երեխաների ցածր առաջադիմության պատճառները ծնողները փնտրում են դպրոցում, իսկ ուսուցիչները տանը՝ ծնողների անտարբերության մեջ: Իրականում երկու կողմերի մեղավորությունն էլ կա: Ինչպես իրավացիորեն ասում է «Բարձր վառարաններ» վեպի հերոս Օսման հոջան. «Երեխաների խնդիրները մի քիչ ծնողների անուշադրության, մի քիչ էլ համակարգի անկատարելության արդյունքն են»²⁶⁹: Ամեն դեպքում կրթական մակարդակների տարբերությունն այնքան մեծ է, որ ուսուցիչներն

²⁶⁷ Baykurt F., Koca Ren, s. 41.

²⁶⁸ Baykurt F., Yüksek Fırımlar, s. 43.

²⁶⁹ Նույն տեղում, էջ 44:

ՆՈՒՅՆԻՍԿ ամառարկում են թուրք երեխաների համար ամանձին դասարաններ բացել, որտեղ բոլոր ամարկաները և, ամառին հերթին, գերմաներենը կդասավանդվեն հատուկ ծրագրերով:

Կրթության հետ անմիջականորեն կապված է գերմաներեն սովորելու, իմանալու, խոսելու հարցը: Ֆ. Բայքուրթի ստեղծագործություններից պարզ է դառնում, որ Գերմանիա ստեղծափոխվելուց տասը-քսան տարի հետո էլ միգրանտների մեծ մասը գրեթե չի տիրապետում այդ լեզվին: «Բարձր վառարաններ» գրքի հերոս Իբրահիմ Մութլունն ասում է. «Տարիներն անցան-գնացին, գերմաներեն նորմալ չսովորեցի: Մի քիչ հասկանում եմ, դրակեսի չափ էլ խոսում»²⁷⁰: Պատկերն այլ է երեխաների պարագայում: Տանից բացի նրանք թուրքերենն օգտագործում են միայն կրոնի ու լեզվի դասերին, իսկ բակում ու դպրոցում գերմաներեն են հաղորդակցվում: Արդյունքում նրանցից շատերը «Սևգին վառվեց» պատմվածքի հերոս Մուսթաֆայի պես, ծնողներից լավ գերմաներենին տիրապետելով, թարգմանչի դեր են ստանձնում: Միգրանտների երեխաների մոտ թուրքերենը կամաց-կամաց ետին ալան է մղվում, ինչը անխուսափելիորեն հանգեցնում է թուրքական մշակույթի նկատմամբ անտարբերության և նույնիսկ արհամարհանքի: Օրինակ, «Բարձր վառարաններ» վեպի հերոսներից տասնհինգամյա Ալին, ով գերազանց տիրապետում է գերմաներենին և, հետևաբար, սերտորեն առնչվում գերմանական մշակույթի հետ, այլևս չի ցանկանում թուրքերեն սովորել, թուրքերի հետ շփվել, թուրքական երաժշտությանը նվիրվել: «Անընդհատ աման, աման ասելով՝ ինչ կստացվի»²⁷¹, - բողոքում է տղան: Թուրքերեն չիմացող երեխաներն, ինչպես, օրինակ, «Երանի արձակուրդ չգնայի» պատմվածքի հերոսները արժանանում են հատկապես թուրքիայում մնացած հարևան-բարեկամների պարսավանքին. «Երեք ու կես օր Գերմանիայում ապրելով՝ մոռացաք ձեր ծագումը: Մարդ մայր-հայրենիքը, մայրենի լեզուն ինչպես կարող է այսպես նվաստացնել»²⁷², - բարկանում է գերմաներեն խոսող երեխաների վրա մի պատահական անցորդ: Այսպիսով, թուրք երիտասարդները

²⁷⁰ ՆՈՒՅՆ տեղում, էջ 31:

²⁷¹ ՆՈՒՅՆ տեղում, էջ 200:

²⁷² Baykurt F., Barış Çöreği, İstanbul, 1982, s. 191.

հայտնվում են երկու լեզվի խառնաշփոթում՝ թուրքերենի և գերմաներենի միջև չկարողանալով միանշանակ ընտրություն կատարել: Լեզվական հակասությունները միգրանտների երկրորդ սերնդի երկու մշակույթների միջև առկա վիճակում ապրելու փաստի առաջին ցուցիչն են դառնում:

Մեկ այլ կարևոր խնդիր, որը \$․ Բայքուրթի ուշադրության կենտրոնում է, թուրք աղջիկների ու կանանց դրությունն է, ովքեր նույնիսկ ազատական եվրոպական հասարակության մեջ մեծ մասամբ ստիպված են լինում մնալ տանը փակված, դպրոց չգնալ, ամուսնանալ հոր կամ եղբոր ընտրած տղամարդու հետ: Յեղիսակը հետևողականորեն կերտում է վառ ու հետաքրքիր կանացի կերպարներ: Ավանդական թուրք կնոջ թերևս ամենավառ կերպարը Էլիֆ Մութլունն է, ով հազարավոր հարսնացուների նման հաջող ամուսնացել է «գերմանացու», այսինքն՝ թուրք միգրանտի հետ: Ամուսնությունից առաջ իրենց գյուղից բացի ոչինչ չտեսած Էլիֆը Գերմանիայում էլ ապրում է ավանդական «ամուսինն է, ճիշտ է» կարգախոսով, լուռ դիմանում տեղի-անտեղի ծեծին (իսկ ծեծի պատճառ կարող է դառնալ ցանկացած մանրուք, անգամ ընկերոջ հետ կինո գնացած ամուսնունս առանց սպասելու քնելը)՝ միայն մեկ-մեկ զայրույթի պահին ասելով. «Երանի գյավուրի եղունգի չափ ինեիր: Կնոջը շարունակ չծեծեիր»²⁷³: Նույնիսկ երբ հիվանդանոցում՝ ծննդաբերությունից ժամեր անց ամուսինը հարձակվում է նրավրա և փորձում խեղդել, Էլիֆն ամեն կերպ արդարացնում է նրան, հրաժարվում ոստիկանությանը հանձնել: Յարյուրավոր կանանց նման նա էլ երբեք չի մտածում բաժանվելու կամ գոնե սեփական իրավունքները ինչ-որ կերպ պաշտպանելու մասին: Էլիֆի համբերության բաժակը լցվում է միայն, երբ ամուսինը բացարձակապես անհիմն սկսում է կասկածել իրեն անհավատարմության մեջ: Չկարողանալով կուլ տալ վիրավորանքը՝ նա դանակով մի քանի տեղից վիրավորում է ամուսնունս, սակայն հետագայում շարունակում ապրել նրա հետ և դիմանալ ամուսնու բռնություններին:

²⁷³ Baykurt F., Yüsek Fırılar, s. 12.

Ֆ. Բայքուրթը ցավով է ներկայացնում թուրք ընտանիքների համար դասական դարձած այս մոդելը և դրան հակադրում նաև ինքնուրույն, ընդգծված անհատականություն ունեցող կանանց կերպարներ, որոնք իրենց մեջ ուժ են գտնում ընդվզել դարավոր կարգերի դեմ և գոնե ինչ-որ չափով ձևափոխել դրանք: Ակտիվ, էմանսիպացված թուրք կնոջ կերպար է, օրինակ, «Բարձր վառարաններ» վեպի հերոսուհիներից Սաբահաթ Դոդան-Մոնշը: Անհաջող ամուսնությունից հետո որդու հետ Գերմանիա տեղափոխված Սաբահաթը գերմարդկային աշխատասիրության շնորհիվ կարողանում է սովորել լեզուն, աշխատանք գտնում, ապա, արհամարհելով հայրենակիցների կարծիքը, ամուսնանում գերմանացի Փեթերի հետ և իսկական եվրոպացու կյանք վարում: Նրա բանիմացությունը, ճշտապահությունն ու ինքնուրույնությունը նույնիսկ կանանց մշտապես արհամարհող թուրք տղամարդկանց ստիպում են հարգանքով վերաբերվել նրան:

Կանանց կերպարներից ուշագրավ է նաև «Մեծ Յռենոս» վեպի հերոսուհիներից Գյուլը: Նրա ամուսինը սովորական «գասթարբայթեր» չէ, ատենախոսություն է գրում գերմանական համալսարաններից մեկում և աշխատելու ժամանակ չունի: Ընտանիքի ողջ հոգսը Գյուլի ուսերին է: Տարիներ շարունակ մատուցողուհու գրոշներով բավարարվող Գյուլի կյանքը լիովին փոխվում է, երբ նա հանդիպում է դույսբուրգյան կավատների «արքա» Քենանին և նրա հովանավորությամբ սկսում մարմնավաճառությամբ զբաղվել: Շատ փող վաստակելու այս «հեշտ» միջոցն որքան էլ տհաճ լինի աղջկան, որքան էլ նա վախենա թուրքիայում մնացած բարեկամների կարծիքից, ետ կանգնելու, նորից աղքատության ճիրաններում հայտնվելու համարձակություն չունի: Որքան էլ տարբեր լինեն Ֆ. Բայքուրթի նկարագրած կանանց ճակատագրերն ու նրանց ընտրած ճանապարհները, մի բան պարզ է. բոլորի կյանքում որոշիչ դեր ունի կողքին գտնվող տղամարդու կեցվածքը: Թուրք տղամարդիկ, սակայն, տասնամյակներով Գերմանիայում ապրելուց հետո էլ ուղղորդվում են դարեր շարունակ թուրքական գյուղերում ձևավորված կարծրատիպերով: Օրինակ, «Մեծ Յռենոս» վեպի էջերից պարզ է դառնում, որ

դպրոցական ծնողական ժողովին կնոջ մասնակցելն անընդունելի է թուրք տղամարդկանց համար: Ավելին, նրանք զարմանում ու զայրանում են, որ դպրոցի տնօրենը կարող է կին լինել. «Կնոջ տնօրեն լինելն էլ այստեղ տեսանք»²⁷⁴, - դժկամությամբ փսփսում են նրանք: Նմանատիպ հետադեմ մտածողությամբ կերպարներ բավական շատ են հանդիպում Ֆ. Բայքուրթի ստեղծագործություններում: «Իսկական թուրք տղամարդ» է նաև «Բարձր վառարաններ» գրքի հերոս Իբրահիմ Մութլուն: Հազարավոր թուրքերի նման նա էլ Գերմանիայում չարքաշ աշխատանքով է զբաղվում. «Մենք մեռնում ենք կրակի առաջ: 1800 աստիճանում է հալում երկաթը: Հալեցնելուց մենք էլ ենք հալվում... Սրանից առաջ նույն ֆիրմայում երեք տարի մուրճ էի խփում... Դիմանալու չէր: Քանի որ մարզիկ էի, հսկա, աշխատանքի վերցրին: Ծատ շնորհակալ եմ, բայց մեռնելու էի: Մեր բաժնի վարիչ պարոն Բոյունլին աղաչեցի-պաղատեցի: Լավ, - ասաց,- կփոխենք, պարոն Մութլուն: Դարբնությունից հանեց, այս անգամ էլ կրակի առջև կանգնեցրեց: Հին գործը վատն էր, նորն էլ՝ հազար անգամ ավելի վատն է: Տաք վառարանի առջև մի օր գոլորշիանալու եմ, թռչեմ-գնամ»²⁷⁵: Վեպի սկզբում Իբրահիմի կինը՝ Էլիֆը, տղա է ունենում. անսահման երջանկության զգացումով լցված Իբրահիմը նույնիսկ ուզում է նրան ծաղիկներ նվիրել, ինչը, անշուշտ, տղամարդուն հարիր բան չի համարվում թուրքական գյուղում: Բայց հանկարծակի նրասրտում կասկած է հայտնվում, որ երեխան իրենից չի: Իբրահիմը սկսում է հաշվարկել բեղմնավորման օրն ու հասկանում, որ երեխան ծնվել է բեղմնավորման օրվանից ոչ թե 9 ամիս 10 օր հետո, ինչպես պարտադրում է իրենց գյուղում ընդունված ավանդույթն, այլ ավելի շուտ: Ընդ որում, նամոռանում է հաշվարկել 31 օր ունեցող ամիսները, չի ուզում հավատալ, որ բնության օրենքները չեն ենթարկվում թուրքական ավանդույթներին, այլ առանց երկար-բարակ մտածելու որոշում է սպանել դեռ ծննդատանը գտնվող կնոջը: Բժիշկների միջամտությամբ սպանության փորձը ձախողվում է, Իբրահիմն էլ, բժշկի խորհրդին հետևելով, համաձայնում Դևթ հետազոտություն

²⁷⁴ Baykurt F., Koca Ren, s. 90.

²⁷⁵ Baykurt F., Yüksek Fırımlar, s. 17.

անցկացնել: Գրքի ամբողջ ընթացքը ԴՆԹ թեսթի արդյունքների սպասումն է, որ ուղեկցվում է Իբրահիմի ու Էլիֆի ներքին մենախոսություններով և զուգորդվում վեպի մյուս հերոսների կյանքի շուրջ զարգացումներով, որոնք բոլորը միասին ստեղծում են 1980-ականների կեսերի թուրքական Դույսբուրգի իրական պատկերը: Իբրահիմի կերպարն ամբողջացնելու համար ասենք, որ Նույնիսկ, երբ ԴՆԹ թեստի արդյունքում պարզ է դառնում, որ Էլիֆը նրան չի խաբել, նա չի կարողանում ընդունել իր սխալը, ներողություն խնդրել, այլ նախընտրում է արհամարհել կնոջը:

«Գասթարբայթերի» ավանդական կերպարից տրամագծորեն տարբերվող, ինքնատիպ հերոս է «Մեծ Յեռնոս» վեպի գործող անձանցից Քենանը: Ի տարբերությունն օր ու գիշեր գերմանական ֆաբրիկաներում աշխատող իր հայրենակիցների նա գտել է արագ և հեշտ հարստանալու բանաձևը՝ հարուստ գերմանացիների համար թուրք աղջիկներ է գտնում: Փողի մոլուցքով տարված մարմնավաճառության է դրդում Նույնիսկ իր սիրած աղջկան՝ Գյուլիին, երբեմն-երբեմն արթնացող խղճի ձայնն էլ հեշտությամբ լռեցնում, քանի որ ինչքան էլ անարդար թվա, «Կավատների արքա» Քենանը առավոտից իրիկուն չարքաշ աշխատանք անող «գասթարբայթերներից» անհամեմատավելի հարուստ է:

Այս ծայրահեղ, գրոտեսկի հասնող կերպարների կողքին Ֆ. Բայբուրթը ներկայացնում է նաև թուրք տղամարդկանց, որոնք, տարիներ շարունակ մենակ ապրելով, սովորում են ինքնուրույն հոգալ իրենց կարիքները: «Եղբորս անհետացումը» պատմվածքի հերոսը պատմում է. «Կյանքը մարդկանց ամեն ինչ է ստիպում: Յարս ճաշ է եփում, լվացք է անում: Նույնիսկ մաքրություն է կարողնում անել, ամանները լվանալ: Մայրս էլ գյուղում վար է անում, սարից փայտ բերում²⁷⁶»: Կյանքի բերումով աշխատանքի ավանդական բաժանումը սկսում է կորցնել արդիականությունը, նոր իրողությունը ստիպում է համակերպվել նոր դերերի հետ: Այս համատեքստում կարևոր է նաև, որ Գերմանիայում միայնակ ապրող թուրք տղամարդկանց մեծ մասի համար «տղամարդկություն» չափանիշ է դառնում գերմանուհի սիրուհի ունենալը, շատերը Նույնիսկ նոր

²⁷⁶ Baykurt F., Barış Çöreği, s. 51.

ընտանիք են կազմում, երեխաներ ունենում, հաճախ մոռանում
Թուրքիայում մնացած կնոջն ու երեխաներին, իսկ լավագույն
դեպքում ունենում երկու ընտանիք՝ «գերմանական» և «թուրքական»:
Այս թեմային անդրադառնալով՝ Ֆ. Բայքուրթը ստեղծում է գավեշտի
հասնող պատկերներ: Օրինակ, «Բարձր վառարաններ» վեպի հերոսուհի
Քսմեթն ու նրա ամուսնու սիրուհին նույն ծննդատանը, մի քանի
Ժամկա տարբերությամբ երեխա են ունենում: Ընտանեկան
խնդիրների շրջանակում կարևորագույն դեր ունի
խառնամուսնությունների հարցը, որ 1980-ականներին թուրք
միգրանտների համար գնալով ավելի արդիական էր դառնում:
Խառնամուսնությունների յուրօրինակ վիճակագրություն կարելի
է համարել այն, որ «Բարձր վառարաններ» վեպում ծննդատան փոքրիկ
հիվանդատենյակում պառկած չորս կանանցից մեկը թուրքի հետ
ամուսնացած գերմանուհի է, մեկը՝ գերմանացու հետ ամուսնացած
թուրք, երկուսը գուտ թուրքական ընտանիքներից են²⁷⁷:
Խառնամուսնությունների անխուսափելիության մասին է վկայում
ևս «Կես հաց» վեպում ներկայացվող Աջար ընտանիքի
պատմությունը: Ամուսնու մահից հետո երկու աղջիկների և որդու
հետ Գերմանիայում բնակվող տիկին Քեզիքը թեև գոհ է, որ մեծ
աղջիկը թուրքի հետ է ամուսնացել, սակայն պատրաստակամորեն
ընդունում է նաև որդու գերմանուհի կնոջն ու կրտսեր աղջկա
գերմանացի ընկերոջը: Սրա հետ մեկտեղ վեպի ընթացքից պարզ է
դառնում, որ ինչքան էլ պաշտոնյաները սա համարեն
«ինտեգրացիայի լավագույն ասացույց», իրերի նման դրվածքն ո՛չ
թուրքական համայնքի, ո՛չ էլ գերմանական մեծամասնության
կողմից հիմնականում չի ողջունվում: Պետք է նշենք, որ Ֆ.
Բայքուրթի ստեղծագործություններում ինտեգրացիատերմինը քիչ
է հանդիպում և հիմնականում հումորային համատեքստում: Օրինակ,
«Կես հաց» վեպում Աջարների ընտանիքին հյուր եկած նպարավաճառ
Յաքուբը իր հետ մի շիշ գինի է բերում: Տանտիրուհին ասում է.
«Լրիվ գերմանացի ես դարձել: Նվերներով ես գալիս»: Յաքուբի՝ «20
տարի է այստեղի գարեջուրն եմ խմում, վաղուց ինտեգրվել եմ»,

²⁷⁷ Նույն տեղում, էջ 58:

պատասխանը ներկաների բուռն ծիծաղն է առաջացնում²⁷⁸: Եթե թուրքերը ծիծաղում են ինտեգրման անհրաժեշտության վրա, ապա գերմանացիների մի մասը թուրքերի հետ շփման հնարավորությունն նույնիսկ չի ուզում դիտարկել: «Խաղաղության կարկանդակ» պատմվածքի հերոսները թույլ չեն տալիս որդուն տուն հրավիրել թուրք խաղընկերուհուն՝ վախենալով, որ նա գողություն կանի: Յեղիսակը այս կերպ անդրադառնում է գերմանացիների՝ թուրքերի որպես անկիրթ, վայրենի մարդկանց ընկալմանը և նշում, որ նման կարծիքի ձևավորումը նաև թուրքերի մեղքն է. «Թուրքերի համար տուն գտնելը դժվար է... Առաջին պատճառը տների քչությունն է: Երկրորդը՝ տուն փնտրող տեղացիների ու օտարերկրացիների մեծ թիվը: Երրորդն էլ մենք ենք [թուրքերը - Ն. Պ.], քանի որ թուրք ենք: Երկրից դուրս շատ լուրջ ազգ ենք: Կատակ չենք հասկանում: Ամենափոքր խնդրի համար դանակ ենք հանում»²⁷⁹:

Սակայն սխալ կլինի պնդել, որ թուրք-գերմանական շփումներն առհասարակ բացակայում են: Ֆ. Բայքուրթի ստեղծագործություններում տեսնում ենք, որ երեխաների մեծանալուց հետո մենակ մնացած տարեց գերմանուհիները (հեղինակը բազմիցս ստեղծում է նման կերպարներ՝ հակադրելով թուրքական մեծ ավանդական ընտանիքը գերմանական նուկլեար ընտանիքներին ու որոշակի տարիքից հետո ծնողների հետ շատ սահմանափակ շփվելու սովորությունը) մտերմանում են իրենց թուրք վարձակալների հետ, սկսում ապրել նրանց խնդիրներով ու առօրյայով, երեխաներին գերմաներեն սովորեցնել: Ֆ. Բայքուրթը չի բացառում նաև գերմանացու և թուրքի մտերմությունն ու բարեկամությունը: «Մեծ Յոննոս» վեպում գլխավոր հերոսներից Սալիմ Սարըքայայի ամենավստահելի ընկերը գերմանացի Ախիմն է: Սալիմը խորհուրդ է հարցնում նրանից տղայի ուսման մասին. «Ինձ խորհուրդ տուր: Ինչ ուզում է լինի, գերմանացի ես, ինձնից խելոք ես, մի բան ասա, իմ սիրելի ընկեր»²⁸⁰: Ախիմը պատասխանում է. «Յիսկ երեխան շատ է, Սալիմ: Երեխան մեծ պատասխանատվություն է... Լսիր, ինչ եմ ասում: Երկու երեխա ունեցար, մեքենա չես կարող գնել,

²⁷⁸ Baykurt F., Yarım Ekmek, s. 59.

²⁷⁹ Baykurt F., Yüksek Fırımlar, s. 133.

²⁸⁰ Baykurt F., Koca Ren, s. 96.

երեքը՝ արձակուրդ չես կարողանա գնալ, չորսը՝ կյանքի համը չես կարողանա հասկանալ: Այժմ նույնիսկ քիչ երեխան մեծ խնդիր է: Ճիշտն ասած, այժմ ամուսնանալ էլ պետք չէ: Ամուսնանալ ու ց հետո գոնե պետք է խելք ունենալ, երեխա չծնել»: Սալիմը հակադարձում է. «Բայց մենք այդպիսին ենք, Ախիմ: Ամուսնանում ենք, ամուսնանալ ու ց հետո երեխա ենք ունենում: Ձեզ, եվրոպացիների, նման չենք համբուրվում կանգառներում, կայարաններում: Առանց ամուսնանալ ու, առանց աղոթքի կնոջ երեսը չենք բացում, մի բարձի գլուխ չենք դնում: Կարծում ես, դա՞ է պատճառը, որ հետ ենք մնացել, Ախիմ»²⁸¹: Աշխարհայացքների նման տարբերությունը չի խանգարում Սալիմի և Ախիմի ընկերությունը, որով \$. Բայքուրթը փորձում է ցույց տալ, որ տարբեր մտածելակերպին ու արժեհամակարգերին հակառակ երկու հասարակությունների միջև երկխոսությունը հնարավոր է:

Երեխաների քանակը \$. Բայքուրթի ստեղծագործություններում դառնում է թուրքական և գերմանական մշակույթների տարբերության ու շագրավ ցուցիչ: 1960-ականներից հետո Գերմանիայում անընդհատ անկում ապրող ծնելիության պարագայում այս հարցն առավել քան արդիական է դառնում: «Մեծ Զռենոս» վեպում ու շագրավ են հնչում քահանա Ռուդոլֆի խոսքերը. «Պարոն Սարըքայա, գերմանացի կանայք այլևս երեխաներ չեն ունենում: Դուք, թուրքերդ, մի քանի հարևանով հավաքվեք, մի քիչ ջանք թափեք, արագ մեկ-երկուսը ունեցեք: Ձեր ծնելիության մակարդակը մեր Դույսբուրգում, փառք Աստծո, շատ բարձր է»²⁸²: Այս թեմայով վեճեր նույնիսկ երեխաներն են ունենում: «Խաղաղության կարկանդակ» պատմվածքում թուրք աղջիկ Ջևրիեն երեք կտորե տիկնիկ է պատրաստում, իսկ նրա գերմանացի ընկեր Մարտինը պնդում է, որ երեք երեխան շատ է, մեկն էլ է բավական: Ջևրիեն էլ երեխային բնավ ոչ հատուկ լրջությամբ պատասխանում է. «Բայց արդեն եղել են, հոդեն չեմ նետի»²⁸³:

Այլ կենցաղային մանրուքներում ևս վառ արտացոլվում է երկու ժողովուրդների ընկալումների տարբերությունները:

²⁸¹ Նույն տեղում, էջ 97:

²⁸² Նույն տեղում, էջ 34:

²⁸³ Baykurt F., Barış Çöreği, s. 13.

«Խաղաղութայն կարկանդակ» պատմվածքի հերոս Մարտինը երազում է, որ ծերանոցում ապրող իր տատիկն էլ Ջևրիեի տատիկի պես տեղափոխվի իրենց տուն, իրեն հեքիաթներ պատմի²⁸⁴: Ինչպես «Մսագործը» պատմվածքի հերոսի շուրթերով դիպուկ նկատում է հեղինակը՝ ինտեգրումն անհնար է լինելու, քանի դեռ «Եվրոպայի սիրտեկանք, բայց Անատոլիական գլուխներուն ենք»²⁸⁵:

Ֆ. Բայքուրթի ստեղծագործություններում բարձրաձայնվող կարևորագույն հարց է նաև Թուրքիա վերադարձի խնդիրը: «Գրողը» պատմվածքում փոքրիկ Ահմեդն ասում է. «Մեր հայրերին «գասթարբայթեր» են ասում: Դա էլ նշանակում է հյուր-աշխատող: Սակայն նրանք ինչ հյուր են, ո՞ր: Մայրս ասում է. «Յուր գնալը երեք օր է տևում»: Այն էլ վաղուց: Յիմա նույնիսկ մի օր էլ չի տևում: Յեռախոսով պայմանավորվում ես, թեյ խմելու կամ մի բան ուտելու ես գնում և վերջ: Տասնութ երկար ու ձիգ տարի է անցել հորս գալուց: Մեր գալուց էլ տասնմեկ: Ի՞նչ հյուր»²⁸⁶: Միջանկյալ նշենք, որ այս պատմվածքում դպրոցի տեսուչի դերում հանդես է գալիս ինքը Ֆ. Բայքուրթը և ներկայացնում Դույսբուրգում որպես տեսուչ աշխատելու տարիներին իր ունեցած փորձառությունը: Միավորելով ինքնակենսագրական նոթերի, վեպնեպրոտաժի և պատմվածքի ժանրերը՝ գրողը ստեղծում է յուրօրինակ խառնուրդ:

Ֆ. Բայքուրթի հերոսներն աստիճանաբար հրաժարվում են կյանքի օրոք Թուրքիա վերադառնալու պատրանքներից, երազում այնտեղ թաղվելու մասին: «Կես հաց» գրքի հերոս Ջելիլն է ասում. «Ես Գերմանիայում թաղվելու մասին չեմ էլ մտածում: Ի՞նչ գործ ունեմ այդ փափուկ-մափուկ հողերում, ես կգնամ, իմ Չելթեքի հողում կթաղվեմ»²⁸⁷: Գերմանիայում մնալու, Թուրքիա չվերադառնալու պատճառները շատ են: Տնտեսական, ֆինանսական պատճառների կողքին պակաս կարևոր չէ երկրում տիրող քաղաքական դրությունը, որին Ֆ. Բայքուրթը նույնպես բավական մեծ տեղ է տալիս, քանի որ ինչպես նշել ենք, նա ակտիվորեն ընդգրկված էր 1960-1970-ականներին Թուրքիայում տեղի ունեցող հասարակական-քաղաքական

²⁸⁴ Նույն տեղում, էջ 14:

²⁸⁵ Նույն տեղում, էջ 68:

²⁸⁶ Նույն տեղում, էջ 7:

²⁸⁷ Baykurt F., Yarım Ekmek, s. 181.

գործընթացներում: «Մեծ Յոնոս» վեպի հերոսներից մեկը՝ Սարըքայա ընտանիքի ավագ որդի Ադնանը, ցուցարար լինելու մեղադրանքով բանտարկված է և հնարավոր է նույնիսկ մահապատժի ենթարկվի: Թուրքիայում տիրող դրուժյունն ու եղբոր դառը ճակատագիրը Յոնոսին պատմելիս, Ադեմն ասում է. «Այնտեղ չգնաս, Մեծ Յոնոս: Այնտեղի դարդը քեզ համար շատ է: Այնտեղ թըզըլ ըրմաք կա: Թող նա դիմանա այդ ցավին»²⁸⁸: Գերմանիայում ապրած և մեծացած երեխաների համար Թուրքիան օտար է, նրանք պարզապես վերադառնալու տեղ չունեն, իսկ նրանց ծնողներն էլ նախընտրում են երեխաների կողքին մնալ: «Կես հաց» վեպում տիկին Քեզիքն ասում է. «...Չկարողացանք վերադառնալ, հիմնովին մնացինք: Յիմա էլ տղաս ամուսնացել է, աղջիկս ամուսնացել է: Նրանք ետ չեն գա, ես միայնակ գամ, ի՞նչ անեմ»²⁸⁹: Թուրքիայի հետ կապը կարծես վերջնականապես խզելու համար նա իր երեխաներին համոզում է նույնիսկ Թուրքիայում թաղված հոր ոսկորները Գերմանիա տեղափոխել: Անընդհատ շարունակվող ներհոսքի և բնական աճի հաշվին թուրքերի քանակը գնալով ավելանում է: Նրանք աստիճանաբար կենտրոնանում են քաղաքի կոնկրետ թաղամասերում: «14 տարի է Գերմանիայում նույն տանն ենք ապրում՝ Լինդեն փողոց, 23 հասցեում: Երբ նոր էինք տեղափոխվել 5 գերմանական ընտանիք կար: Ոչ մեկը չմնաց»²⁹⁰:

Այսպիսով, թուրք գրող Ֆաբիր Բայքուրթի ստեղծագործական կյանքում իր ուրույն տեղն ունի «գասթարբայ թերական» թեմատիկան: Լինելով գյուղագիր-արձակագիր՝ Ֆ. Բայքուրթը փաստորեն շարունակում է ներկայացնել գյուղացիների կյանքը արդեն գերմանական իրականության մեջ: Խորքային առումով նրա հերոսները չեն փոխվում. նույն են նրանց խնդիրներն, հայացքներն ու աշխարհընկալումները: Ֆ. Բայքուրթը ցույց է տալիս թուրքականից տարբեր արտաքին միջավայրում այդ ամենի դրսևորումը, արմատացումը, երբեմն էլ վերափոխումը, անդրադառնում այդ միջավայրի ազդեցության տակ միգրանտների

²⁸⁸ Baykurt F., Koca Ren, s. 11.

²⁸⁹ Baykut F., Yarım ekmeğ, s. 171.

²⁹⁰ Նույն տեղում, էջ 184:

երեխաների շրջանում տեղի ունեցող գիտակցության փոփոխությանը:

Ենթագլուխն ամփոփելով նշենք, որ սոցիալական թեմատիկան դարձավ այն կարևոր հարթակը, որի վրա զարգացավ Գերմանիայի թուրքական գրականությունը: Յարկ է շեշտել նաև, որ 1960-ականների վերջին - 1980-ականների կեսերին թուրքական համայնքի դրության մասին ընդհանուր և ամբողջական պատկեր կազմելը շատ դժվար կլիներ առանց այս գեղարվեստական ստեղծագործությունների, որոնց մեծ մասը հիմնված է փաստագրական նյութի և անձնական փորձառության վրա:

2.3 ԱՐԵՎՄՈՒՄ ՏՔ-ԱՐԵՎԵԼ Ք ՅԱԿԱԴՐՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԲԱԽԱՆ ԽՆԴԻՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների, քիրստոնեություն-իսլամ գաղափարախոսությունների՝ կենսական մի շարք խնդիրների ընկալման և դրանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի, տրվող գնահատականների հարցում տրամագծային տարբերությունը հատման դեպքում անխուսափելի է դարձնում դրանց բախումը: Հատկապես այն պարագայում, երբ կողմերից ոչ մեկը չի պատրաստվում գիջել իր դիրքերը և նախապես կանխակալ վերաբերմունք է դրսևորում դիմացինի արժեքների նկատմամբ: Քաղաքակրթությունների դասական բախման փոքրիկ մոդել կարելի է համարել նաև թուրքական համայնք - գերմանական հասարակություն և հարաբերությունները: Թուրքական խուլ գյուղերից եկած, Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի²⁹¹ ձեռնարկած բարեփոխումների նակառակ իսլամական նախապաշարմունքների ու դարեր շարունակ կարծրացած ավանդույթների աշխարհում ապրող թուրքմիգրանտների համար գերմանական ազատական հասարակության վարքն ու բարքն իսկական մշակութային շոկ կարելի է համարել: Գերմանացիների համար էլ թուրքերն իրենց ավանդույթներով, արգելքներով ու սահմանափակումներով տարօրինակ, խորթ և անգամ ծիծաղելի էին: Երկկողմ անընկալելի լինելը պետք է խորը հակասությունների ու ճգնաժամային իրավիճակների առիթ դառնար, ինչն էլ, իր հերթին, չէր կարող դուրս մնալ գրականության ու շարժումներից: Թուրք հեղինակների համար ընդունող հասարակության անդամների հետ տարածայնությունները, փոխընկալման բարդությունները առաջնային տեղ ունեն և սոցիալական խնդիրներից ոչ պակաս կարևորություն են ստանում:

²⁹¹ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը Թուրքիայի Հանրապետության հիմնադիրն է և առաջին նախագահը: Քեմալի իշխանության տարիներին Թուրքիան վերածվեց աշխարհիկ երկրի, նրա ձեռնարկած բարեփոխումների արդյունքում թուրքերը սկսեցին օգտագործել լատինատառ այբուբեն, արգելվեց չադրա և ֆես կրել, կանայք ստացան ընտրելու և ընտրվելու իրավունք: Աթաթուրքի առաջ քաշած սկզբունքները դարձան թուրքական պետականության հիմք: Հարկ է նշել, սակայն, որ նրա կատարած բարեփոխումներն առավել ակնառու եղան Ստամբուլի, Անկարայի պես մեծ քաղաքներում, իսկ երկրի գյուղական մասերում և հատկապես արևելյան հատվածներում մարդիկ այդպես էլ չհրաժարվեցին իրենց ավանդական նիստուկացից:

Նրանք լուրջ տեղ են հատկացնում թուրքիայի համար մշտապես այնքան արդիական Արևելք-Արևմուտք մշակութային բախման, քրիստոնեական և իսլամական քաղաքակրթությունների հակադրման համատեքստում սեփական թուրքական և նոր, գերմանական մշակույթի համադրմանն ու համեմատական ներկայացմանը: 1960-ականների վերջում–1980-ականների կեսերին ստեղծագործող գրողների մոտ, սակայն, մենք չենք հանդիպում խորը հոգեբանական վերլուծություններ: Թուրք գրողներն որպես ռեալիստական ուղղության հետևորդներ նույնիսկ Արևմուտք-Արևելք հակամարտությունը ցույց են տալիս սովորական առօրեական օրինակներով: Թուրք գրողների ստեղծագործություններում ակնառու կերպով արտացոլվում են երկու մենթալիտետների տարբերությունները: Մտածողության տարբերությունները հատկապես վառ են արտացոլվում կնոջ կերպարի, կին-տղամարդ հարաբերությունների, ընտանիքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հարցում երկու մշակույթների մոտեցումները ներկայացնող ստեղծագործություններում: Գերմանացիների՝ ամուսնությունից առաջ իրար հետ երկար հանդիպելու և նույնիսկ ապրելու արակտիկան հակասության մեջ է մտնում թուրքական ամուսնանալուց հետո միայն ծանոթանալու սովորույթի հետ²⁹², թուրք կանանց իրավագուրկ վիճակը՝ գերմանացիների հավասարը հավասարի պես քննարկումներ անելու, համատեղ որոշումներ ընդունելու սովորության հետ: Ավելին, գերմանացի տղամարդիկ նույնիսկ կնոջ դավաճանությունն են ներում, իրենք էլ հաճախ բացեիբաց դավաճանում են, մինչդեռ թուրքական իրականությունում «տղամարդը ինչ էլ անի, ձեռքերը կլվանա, մաքուր դուրս կգա: Իսկ կինը, եթե հանկարծ մեկին այլ հայացքով նայի, վերջ, սպանությունը պատրաստ է»²⁹³: Թուրքերի համար տարօրինակ ու անընդունելի են նույնիսկ այնպիսի մանրունքներ, ինչպիսին են գերմանացի կանանց կարճ սանրվածքները. «Կին

²⁹² Այս մասին է գրում Ս. Շեյնհարթը «Ատելությունը ծուղակում» վեպում, տե՛ս Sheinhart S., Pusuda Kin, s. 89.

²⁹³ Նույն տեղում, էջ 20:

կոչվածի մագերը երկար պետք է լինեն, ոչ թե այսպես ցից-ցից»²⁹⁴, - ասում է Յ. Բեքթաշի «Իմ Չամրիյան» վեպի հերոսուհի Ֆաթման:

Գերմանիայում հայ տնված թուրք կանանց մեծ մասը շարունակեց ասրել դարերով գյուղում ընդունված կենցաղով: «Մենք [կանայք - Ն. Պ.], - ասում է Ս. Շեյնհարթի «Ատելությունը ծուղակում» վեպի հերոսուհի Սունան, - կրկին իրավունքներ չունեինք, իրականում ցանկություններ էլ չունեինք: Դրսում ուրիշ Գերմանիակար, բայց մեր Գերմանիան սաեր, իսկ այն մյուսը գերմանացիների Գերմանիան էր: Ոչ մենք էինք ուզում նրանցը ճանաչել, ոչ էլ նրանք՝ մերը: Իրականում կարիք էլ չկար, իսկապես չկար: Նրանք էլ պետք է որ այդպես մտածեին, եթե դրությունն այդպես տարիներով շարունակվում էր, ամեն ոք իր վիճակից գոհ էր»²⁹⁵: Արդյունքում Գերմանիայում բնակվող թրքուհիների մի մասը նույնիսկ տեղափոխվելուց տարիներ անց հստակ չէր պատկերացնում, թե որտեղ է գտնվում. «Մյուս խենը որտեղ է չգիտեմ, - պատմում է վեպում իր ընկերուհիներին Սունան, - Այսքան տարի Գերմանիայում եմ, ոչ մի բանի տեղը չգիտեմ: Գերմանացիների հետ առաջին հանդիպումս՝ հիվանդանոցում, երկրորդն էլ բանտում եղավ: Յայրենիք վերադառնամ, ի՞նչ եմ պատմելու, որ գերմանացիները կամ անվտանգության աշխատակից են, կամ էլ բուժքույրներ, որ Գերմանիան ինձ համար սպիտակ բարձր պատերն ու վատ հոտն է...»²⁹⁶: Սունայի ճակատագրին նման են նաև բանտում նրան ընկերակից մյուս կանանց ճակատագրերը: Նրանցից մեկը նույնիսկ իր վրա է վերցրել ամուսնու կատարած հանցագործությունը: Վերջինս, սակայն, փախել է սիրուհու հետ, թողնելով խեղճ կնոջը բախտի քմահաճույքին: Նմանատիպ խնդիրները ստիպում են Սունային կասկածել Ալլահի գործության մեջ: Նա իր հույն ընկերուհուն խնդրում է. «Մի քիչ էլ քո Աստծուն աղոթիր, իմինից այս վիճակում օգուտ չկա»²⁹⁷: Գեղարվեստական գրականության մեջ տեղ գտած այս ինքնակենսագրական տողերն արտացոլում են թուրք կանանց բավական մեծ խմբի իրական դրությունը, ինչի մասին են վկայում

²⁹⁴ Bektaş H., Hamriyanım, s. 53.

²⁹⁵ Sheinhart S., Pusuda Kin, s. 72.

²⁹⁶ Նույն տեղում, էջ 99:

²⁹⁷ Sheinhart S., Pusuda Kin, s. 76.

նաև բազմաթիվ սոցիոլոգիական ուսումնասիրություններ: Անշուշտ, թուրք կանանց մի հատված էլ կամաց-կամաց փոխառեց գերմանական նորմերը: Կանայք սկսեցին հասկանալ իրենց իրավունքներն ու պայքարել դրանց ոտնահարման դեմ: Այս յուրօրինակ էվոլյուցիան երևում է նաև գրական ստեղծագործություններում: Եթե Յ. Փազարբայայի հերոսներից մեկի բնորոշմամբ «Կին լինելը վատ արվեստ է, ավելի վատ է օտար երկրում կին լինելը»²⁹⁸, իսկ Գ. Դալի հերոս Սալիհը հանդիմանում է իր կնոջը դռան շեմին կանգնելու համար. «Ի՞նչ է եղել, աղջի՛: Ի՞նչ ես գնչուի պես դռան առաջ նստել: Տե՛ս, գերմանացիներն ինչպես են քեզ նայում: Չե՞ս մտածում մեր պատվի, մեր ազգի մասին»²⁹⁹, ապա Ս. Շեյնհարթի հերոսուհի Սուլան ամուսնու ֆիզիկական ու սեռական բռնություններին տարիներ շարունակ դիմանալ ուց հետո իր մեջ ուժ է գտնում պայքարել նրադեմ:

Վարքի, ընկալ ումների այս փոփոխությունները վերաբերում են հատկապես աշխատող կանանց, ովքեր նյութական անկախություն ստանալով, իսկ հաճախ նույնիսկ ամուսնուն էլ կերակրելով, հոգնում են ամուսնու հլուհնազանդ ծառան լինելուց: Ֆեթիի Սավաչըն «Ճանապարհ գնացող կինը» պատմվածքում ցույց է տալիս, ինչպես է աղքատությունը ստիպում կանանց դուրս գալ իրենց փակ աշխարհից, դառնալ ինքնուրույն: Կանանց էմանսիպացիան հասարակության կողմից միանշանակ չի ընդունվում: Յ. Փազարբայայի «Քեմալը և Բուրաքը» գրքի գյուղաբնակ հերոսների համար հարևան գյուղից առաջին կնոջ մեկնումը Գերմանիա ումբի պայթյունի է նման, քանի որ սովորաբար տղամարդիկ կանանց, աղջիկներին ու քույրերին նույնիսկ ավանի շուկա չէին ուղարկում, մութն ընկնելուց հետո թույլ չէին տալիս տնից դուրս գալ³⁰⁰: Յ. Բեքթաշի հերոսուհի Ֆաթման, ով Գերմանիայում աման լվացողի աշխատանքով է փող վաստակում, նկարագրելով Գերմանիա մեկնող կանանց դրությունը, ասում է. «...Գյուղական տեղ է: Այնտեղ արձակուրդ եկող աշխատողի չեն սպասում, այլ անբարոյականի: Գերմանիա բոլոր գնացողներին անբարոյական են համարում:

²⁹⁸ Pazarkaya Y., Oturma İzni, s. 11.

²⁹⁹ Dal G., E-5, s. 51.

³⁰⁰ Pazarkaya Y., Kemal ile Burak, s. 10.

Այս տեղ ուրիշ բան ու գործ ունենք ո՞ր, միայն սիրով զբաղվելն է...»³⁰¹: Անտանելի աղքատությունից դուրս գալու հնարավորությունը, սակայն, շատերին ստիպում է արհամարհել հասարակական կարծիքը: Երբեմն էլ թուրք կանանց ազատականացումը տեղի է ունենում լիովին անսպասելի պայմաններում: Ս. Շեյնհարթի հերոսուհի Սուևան, օրինակ, անընդհատ իրեն սեռական բռնությունների ենթարկող ամուսնուհի սպանելու համար գերմանական բանտ ընկնելուց հետո է միայն հասկանում իրենց ավանդական կարգերի հետամնացությունը. «...Ամենից շատ գերմանացի կանանց էի նայում, կարծես կյանքումս գերմանացի չէի տեսել: Մի քիչ էլ հիացմունքով: Նրանք ինչ անում էին, ես էլ փորձում էի այդպես անել, քանի որ նրանց պահվածքում շատ բաներ ինձ ավելի ճիշտ էին թվում»³⁰²: Յերոսուհին չի ցանկանում բանտում եղած թուրք կանանց հետ շփվել, քանի որ «նրանք կոպիտ էին, անխնամ, մկրատ չտեսած մազերով, կոշտացած կրունկներով»³⁰³... Նույնիսկ երբեմն ամաչում էի, որ թուրք եմ: Գերմանացիների հեգնական հայացքները տեսնելիս, ուզում էի գետնի տակ անցնել»³⁰⁴: Սուևան սկսում է գերմանուհիների նման հագնվել, ծխել և ճակատագրի հեգնանքով բանտում է ստանում կյանքում առաջին անգամ որոշում ընդունելու ազատություն³⁰⁵:

Կնոջ դերի փոփոխությունը թեև շատ դանդաղ, բայց թուրքերի անշեղորեն ընթացող վարքային ձևափոխումների մի արտահայտությունն է միայն: Այս գործընթացը անխուսափելիորեն տարածվում է կյանքի բոլոր ոլորտներում: Գերմանիայում բնակվելու առաջին երկու տասնամյակներում միգրանտները դեռևս խորը կապերով են կապված հայրենիքի հետ: Յեռավորությունն ու ժամանակն, սակայն, անում են իրենց գործը՝ մարդիկ սկսում են կամաց-կամաց համակերպվել ընդունող հասարակության նորմերի հետ, քանի որ հակառակ դեպքում տիպիկ միջադեպերն անխուսափելի են: Գ. Դալի «Աշխատանքային աքսոր» վեպի հերոս Շևթեթին, արևելյան անճշտապահության նորմերով առաջ նորդվելով,

³⁰¹ Bektaş H., Hamriyanım, s. 127.

³⁰² Sheinhart S., Pusuda Kin, s. 7.

³⁰³ Նույն տեղում, էջ 9:

³⁰⁴ Նույն տեղում, էջ 10:

³⁰⁵ Նույն տեղում, էջ 79:

արձակուրդից նշված օրվանից 3 օր ուշ վերադառնալ ու համար աշխատանքից ազատում են: Նրա զայրացած բողոքներին ի պատասխան ընկերներից մեկն ասում է. «Աստված վկա, ախար տղա, այստեղի կարգերն իմանալով, լավ բան չեմ կարող ասել: Այստեղ, ութ տարի ապրելով, մի բան սովորեցի. սրանք աշխատանքի չգալ ու համար ոչ թե երեք օրվա, այլ նույնիսկ մի քանի վայրկյանի համար են հաշիվ պահանջում»³⁰⁶: Նման իրավիճակներ հանդիպում ենք նաև այլ գրողների ստեղծագործություններում: Արդյունքում թուրքերը սկսում են ստիպված ընդունել իրենց պարտադրվող պայմանները: Ժամանակի հետևրանց կյանք են մտնում նաև գերմանական կյանքի ամենատարբեր ատրիբուտներ՝ հեռուստացույց, լվացքի մեքենա և նույնիսկ Ամանորի տոնածառ: Օրինակ, Ա. Օրենի «Յրաշալի Գյունդողդուն» վեպի գլխավոր հերոս գերմանացիների համար Աբրահամ դարձած Իբրահիմը Գերմանիայում 15 տարի ապրելուց հետո այնքան է փոխվում, որ աղջկա հարսանիքն կազմակերպում է լիովին գերմանական ոճով. հինգհարկանի տորթ, գերմանուհի պարուհիներ և նույնիսկ երկլեզու հրավիրատուներ³⁰⁷:

Թե Օսմանյան կայսրության գոյության վերջին հարյուրամյակում և թե, հատկապես, Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո եվրոպականացումը եղել է կարևոր նպատակներից մեկը, իսկ եվրոպական կենսակերպն ասոցացվում էր զարգացվածության և առաջադիմության հետ: Ուստի գերմանական զարգացած միջավայրում հայտնված թուրքերը չեն ուզում նորից վերադառնալ իրենց նախկին, հետամնաց կենցաղին: Թուրքական իրականության մեջ էլ գերմանական բարեկեցության պատրանք ստեղծելու համար հայրենիք են ուղարկում էլեկտրական հարդարիչներ, իքնեփ-կաթսաներ, տրանզիստորային ռադիոներ և Թուրքիայում չտեսնված այլ «հրաշք մեքենաներ»: Սակայն հաճախ էլեկտրականություն չունեցող գյուղերում այս ամենից օգտվելու հնարավորություն անգամ չկա, տարօրինակ տեխնիկայի փոխարեն գյուղաբնակները կնախընտրեն նոր եզուներնալ կամ հողակտորներ ձեռք բերել: Միգրանտների գերմանամոլությունը

³⁰⁶Dal G., İş sürgünleri, s. 8.

³⁰⁷ Ören A., Muhteşem Gündoğdu, s. 6.

հաճախ զավեշտի է վերածվում: Գ. Դալի «Ե-5» վեպի հերոսներից մեկը Գերմանիայից կապույտ գույնի լողարան է տանում իր հետ՝ առաջացնելով նույնիսկ թուրքերի ծիծաղը. «Լողանալու թաշտ է տանում, համամի թաշտ է, ի՞նչ էր անունը... լողարան... կապույտ լողարան: Մարդը հայրենիք տանելու ուրիշ բան չգտավ: Ինչ խեղճ ու կրակ ազգ ենք»³⁰⁸, - ասում են սահմանն անցնելու իրենց հերթին սպասող թուրքերը: Յ. Փազարբայայի «Սկյուռը» պատմվածքի հերոս Ջասանը դանակ-պատառաբաղ է ուղարկում տուն. «Ջնուց տան ամբողջ գործը մի բուրդ դանակ էր անում: Նույնիսկ հացը դանակով չէին կտրում, մեղք էր: Այժմ դանակ է ուղարկել, այն էլ ճիշտ, - բարկացած մտածում է եղբայրը, - նամակում էլ գրել է, պատառաբաղը ձախ ձեռքով է պետք բռնել, դանակը՝ աչ: Խոզի վիժվածք: Գերմանիա գնաց, խոզացավ»³⁰⁹:

Նմանատիպ առօրեական, երկրորդական թվացող դժգոհություններով է սկիզբ առնում այն անդունդը, որ տարիներ հետո բաժանելու է թուրքիայում բնակվող թուրքերին գերմանաբնակ այսպես կոչված «alamanci» [կիրառվում է գերմանասեր կիսահեգնական իմաստով – Ն. Պ.] թուրքերից: Այս տարբերություններն աչքի են զարնում, հատկապես, Գերմանիայում մեծացող երեխաների պարագայում: Տեղին են Ս. Շեյնհարթի «Ատելությունը ծուղակում» վեպի հերոսուհիներից Էսմեի խոսքերը. «...երեխաները մեծացան, բոլորը գերմաներեն են սովորել, ամեն օր տուն են դառնում մի նոր սովորույթ սովորած, սիրում են այս երկիրը: Գերմանացիների ամեն ինչը հավանում են, մեկ ամսվա արձակուրդն էլ հայրենիքում քթիցս են բերում, տխրում են այնտեղ: Ասում են. «Ի՞նչ անենք ձեր գյուղում, մեզ այստեղ թողեք, գնացեք»: Ինչքան էլ վախենում էի, որ ժամանակի հետ ավելի կօտարանան, ուզում էի հայրենիքին, մեր սովորույթներին կապված լինեն: Չստացվեց»³¹⁰: Նույն խնդրին իր վերաբերմունքն է արտահայտում վեպի գլխավոր հերոսուհի Սունան. «Արտաքինից թեև դեռ հայրենիքում կարծես ապրեինք, սակայն ամեն ամառ հայրենիք արձակուրդ գնալով միայն զգում էինք, թե ինչքան ենք տարբերվում

³⁰⁸ Dal G., E-5, s. 77.

³⁰⁹ Pazarkaya Y., Oturma İzni, s. 26.

³¹⁰ Sheinhart S., Pusuda Kin, s. 16.

այն տեղի մարդկանցից, մեր պահվածքի համար երբեմն-երբեմն հայրենիքում օտար էին համարում. այն տեղ մարդիկ մեզնից շուտ էին տեսնում մեր օտարանալը և իրավացի էին: Մենք գլուխներս առանք, գնացինք, մեր մշակույթից, ավանդույթներից, գեղեցիկ սովորություններից հրաժարվեցինք, սակայն դրանց փոխարեն գերմանացիներից վերցրինք նրանց մշակույթի ոչ թե լավ, այլ ամենավատ, անպետք, նվաստացնող կողմերը»³¹¹:

Գերմանիայում մեծացող թուրք երեխաները ավելի ու ավելի են հեռանում իրենց ծնողների մշակույթից: Նրանց մի մասը նույնիսկ թուրքերեն չգիտի: Պատահական չէ, որ շատ վեպերում հեղինակներն անդրադառնում են այս խնդրին: Գ. Դալի «Աշխատանքային արտոր» վեպի հերոս Քադիրի երեխաներն հրաժարվում են թուրքերեն խոսել: Յոր թուրքերեն հարցերին բացառապես գերմաներեն են պատասխանում: Յ. Փազարբայայի հերոսներից փոքրիկ Էնդերն Էլ թեն թուրքերեն խոսում է, բայց ոչ գերմաներենի պես: Գերմաներեն բառեր է խառնում թուրքերենին³¹²: Յ. Բեքթաշի «Դու ո՞վ ես» պատմվածքի Յարավսլավիայում ծնված, սակայն Գերմանիայում բնակվող գլխավոր հերոսը՝ Բեհզաթ Յըլմազը գրում է. «Մի աղջիկ ունեմ: Այստեղ է ծնվել: Ինը տարեկան է: Ոչ գերմաներեն գիտի, ոչ թուրքերեն, ոչ հարավսլավերեն»³¹³: Յ. Բեքթաշի «Տիկին Ֆանք» պատմվածքի հերոս երեքուկեսամյա Մուրադն Էլ գերմանացու պես է թուրքերեն խոսում³¹⁴: Այս բոլոր պատմություններում, սակայն, երեխաների գիտելիքներին հակադրվում է ծնողների լեզվի չիմացությունը: Թեև Յ. Բեքթաշի հերոսուհի տիկին Ֆանքն անկեղծորեն զարմանում է, որ Մուրադի ծնողներն 12 տարի Գերմանիայում ապրելով այդպես էլ չեն կարողացել նորմալ գերմաներեն սովորել³¹⁵, սակայն նրանք բացառություն չեն: Յ. Փազարբայայի հերոսներից փոքրիկ Էնդերը չի կարողանում ծիծաղը զսպել, երբ ծնողները մի կերպ գերմաներեն են խոսում³¹⁶: Ս. Շեյնհարթի հերոսուհի Սունայի խոսքերով. Գերմանիայում մոտ 5

³¹¹ Նույն տեղում, էջ 87-88:

³¹² Pazarkaya Y., Oturma İzni, s. 68.

³¹³ Bektaş H., Kapikule Nerde, s. 83.

³¹⁴ Նույն տեղում, էջ 57-65:

³¹⁵ Նույն տեղում:

³¹⁶ Pazarkaya Y., Oturma İzni, s. 68.

տարի ապրել ուց հետո էլ «լեզուս կապում էր: Չէի կարողանում խոսել, չէի ուզում խոսել, բացի այդ գերմաներեն երկու բառ չէի կարող իրար հետևից ասել³¹⁷»: Լեզվի չիմացությունը խանգարում է թուրք աշխատողներին, հանգեցնում թյուրքմբռնումների: Օրինակ, Ֆ. Սավաչչըի հերոսներից մեկը գերմաներեն չիմանալու պատճառով չի կարողանում հասկանալ նախատեսվող գործադրելի ժամն ու վայրը և մասնակցել դրան: Թուրքերի մի մասն էլ ոչ միայն չգիտեն գերմաներեն, այլև չեն էլ ուզում սովորել: Յ. Բեքթաշի «Ազգային մրցախաղ» պատմվածքի հերոսն ասում է. «Իհարկե, մեր ֆաբրիկան դրական կողմեր էլ ունի: Ոչ մեկս գերմաներեն չգիտենք: Նույնիսկ մեր լեզվով չենք կարողանում գրագետ խոսել, օտար գերմաներենն ինչպես սովորենք: Մեր վարպետը տեսավ անհնար է, ինքը մի քիչ թուրքերեն սովորեց: Նրա հետ կիսագերմաներեն-կիսաթուրքերեն հատուկ լեզվով ենք խոսում»³¹⁸: Փաստորեն, թուրքերն առանձնահատուկ ջանքեր չեն գործադրում գերմանական իրականությանը խորքային առումով հարմարվելու համար, մյուս կողմից գերմանացիներն էլ հակված չեն նրանց հետ շփվել: Այդ հակակրանքն այնքան ուժեղ է, որ երեխաների վրա էլ է տարածվում: Յ. Փազարբայայի «Ձիու շագանակ» պատմվածքի հերոս դպրոցահասակ Էրդեմիլ ավագույն ընկերն օրերից մի օր հայ տարարում է. «Քեզ հետ չեմ խաղալու, քանի որ դու գերմանացի չես»³¹⁹: Դասընկերները թույլ չեն տալիս Էրդեմիլն իրենց հետ շագանակ հավաքել. «Չես հավաքելու, - ասում են նրանք, - սա գերմանական շագանակ է: Դու գերմանացի չես, դու օտարական ես»³²⁰: Յ. Փազարբայայի «Կառլ Բաուերի օտարությունը» պատմվածքում տեսնում ենք հարևան գերմանացիների հետընկերական հարաբերություններ հաստատելու համար բառացիորեն պայքարող թուրք տղամարդուն, ով կարողանում է քայլ առ քայլ մտերմանալ իր հարևան Կառլի հետ՝ նախ երեխաների միջոցով, ապա նաև անձամբ: Պատմվածքի վերջում Կառլը, քննադատելով իր հայրենակիցների վերաբերմունքը միգրանտների նկատմամբ, ասում է. «Օտարեկրացիների կյանքն էլ բարդ է: Ասում

³¹⁷ Sheinhart S., Pusuda Kin, s. 6.

³¹⁸ Bektaş H., Kapikule Nerde, s. 69.

³¹⁹ Pazarkaya Y., Oturma İzni, s. 65.

³²⁰ Նույն տեղում, էջ 66:

են. «Սա ի տալ ացի է, սա թուրք է»: Մեկին մակարոն, մյուսին քիմիոն: Քիթ են պտտում: Կարծես իրենք ավելի լավն են»³²¹: Նման կերպ մտածող գերմանացիների թիվը, սակայն, մեծ չէր, հատկապես մինչև 1980-ականների կեսերը: Շատ գերմանացիներ շարունակում էին թուրքերին դիտարկել լուրջ որպես աշխատուժ, երկրորդ-երրորդ կարգի մարդ, ում զգացմունքներով կամ կարծիքներով հետաքրքրվելու կարիք չկա, նրանց անվանում էին «դեղին խոզ»: Կատարյալ արհամարհական վերաբերմունքի ցայտուն օրինակ են Գ. Դալի «Աշխատանքային աքսոր» վեպի գլխավոր հերոսին կանաչ լույսի տակ ուշ շարժվելու համար քննադատող մի գերմանացու խոսքերը. «Ինչ ասեմ, մեր հասարակության կանոններից անտեղյակ օտարերկրացի է»³²²: Ավելի ուշ ադիր նայելուց հետո ավելացնում է. «Միսլ վեցի, պարզվում է թուրք է: Նույնիսկ օտարերկրացի լինել անկարող մի արարած»³²³:

Ս. Շեյնհարթի հերոսուհի Սունան նշում է. «...Գիտեինք, ինչպես կարող էինք չիմանալ, որ գերմանացիները մեզ այնքան էլ չեն սիրում, ասում են «թուրքերից վատ հոտ է գալիս» կամ էլ «զգվելի օտարերկրացիները մեր սոցիալական համակարգը շահագործում են», սակայն մենք դրանից այնքան էլ չէինք նեղանում»³²⁴: Ավելին, թուրք երիտասարդները բացահայտ ագրեսիվ պահվածք են ցուցաբերում: Ա. Օրենը «Անսպասելի այցելու» վեպում գրում է. «Թուրք երիտասարդները սրճարանում այնպես են իրենց պահում, կարծես կռվի են պատրաստվում»³²⁵, ... Հայնց Լեմբերթը մտնում է թուրքական սրճարան: ... Ներքին ձայնը զգուշացնում է, այստեղ մարդու գլխին ամեն տեսակ փորձանք կարող է գալ: Տես, բոլորը խոժոռ տեսքով, խաբեբայի հայացքներ, կեղծ արտահայտություններ, ետնաբալետի բացվող դռներ, մեկ էլ կասկածելի լեզու՝ անհասկանալի երկար Ա, Օ, ՈՒ-երով»³²⁶: Գերմանացիների համար թուրքը օտար է մնում նույնիսկ քաղաքացիություն ստանալուց հետո, նույնիսկ եթե նա ամբողջ կյանքը Գերմանիայում է ապրել,

³²¹ Նույն տեղում, էջ 23:

³²² Dal G., İş Sürgünleri, s. 5.

³²³ Նույն տեղում, էջ 6:

³²⁴ Sheinhart S., Pusuda Kin, s. 10.

³²⁵ Ören A., Beklenmedik Ziyaretçi, İstanbul, 1995, s. 203.

³²⁶ Նույն տեղում, էջ 135:

Թուրքիայում չի եղել: Ֆորդի գործարանում 1973 թ. տեղի ունեցած խոշոր գործադուլին նվիրված «Աշխատանքային աքսոր» վեպում ծանոթանում ենք միգրանտների խնդրի վերաբերյալ գերմանական պահպանողական թևի կարծիքին. «Գերմանիայի Դաշնային Հանրապետության քաղաքացիները սղաճից և գործազրկությանից վախենալու բան չունեն: Քանի որ մի օր, մեր երկրում բնակվող 3 միլիոնից ավելի հյուր-աշխատողներին իրենց երկիր ուղարկելով, մենք կրկին կկարողանանք մեր երկրի կենսամակարդակը այսօրվա գծին պահել³²⁷, ... բացի այդ պետք է հաշվի առնենք նաև մեր ժողովրդի հյուր-աշխատողների նկատմամբ գնալով աճող անբարյացկամությանը³²⁸»: Նույն պահպանողականները թերևս ոչ լրիվ անհիմն շեշտում են. «Այս աշխատողներն իրենց երկրում չունեցած ազատությանները մեր երկրում ստանալուն պես չեն իմանում, ինչ անեն: Ով գիտի, գուցե իրենց երկրում նման գործադուլ անելու համար տարիներով բանտերում փոստին, մինչդեռ մենք միայն խնդրում ենք վերջ տալ գործադուլին: Ի պատասխան այս խնդրանքին հին երգի խոսքերով ասում են. «Հեռացեք այս տեղից, արյունարբու ֆաշիստների երեխաներ»³²⁹:

Այս իրողությանը հակառակ արդեն 1980-ականներին թուրքերը դադարում են իրենց ուղղակի հյուր գգալ և սկսում են պայքարել Գերմանիայում որպես հասարակության լիիրավ անդամ ապրելու իրավունքի համար: Ա. Օրենը գրում է. «...սոցիալական բաժանումը վաղուց իրականացվել է: Մի ժամանակ Թուրքիայից Գերմանիա եկածներ այժմ կան գերմանական հասարակության բուրգի բոլոր մակարդակներում: Եվ նորմալ է, որ իրենց ընկալում են որոշակի սոցիալական շերտի մաս և ցանկանում այդպես երևալ ...»³³⁰: Սակայն գերմանական իշխանությանները շարունակում էին պնդել, թե Գերմանիան միգրանտական երկիր չէ, չնայած որ այնտեղ բնակվում էին միլիոնավոր միգրանտներ: Թուրք հետազոտող Քենան Մորթանը նշում է. «Գերմանիայի սահմանադրությամբ թեև ամրագրված է, որ Գերմանիան միգրանտական երկիր չէ, դա ավելի ու ավելի անհիմն է

³²⁷ Dal G., İş Sürgünleri, s. 33.
³²⁸ Նույն տեղում, էջ 34:
³²⁹ Նույն տեղում, էջ 38:
³³⁰ Ören A., Özel Bir Sürgün, s. 82.

դառնում: Պետք է հասկանան, որ այստեղ փոքրիկ ստամբուլներ սարքեցինք, բայց վերադառնալ, այնտեղ, Թուրքիայում, փոքրիկ Գերմանիա ստեղծել չենք ուզում: Մեկ էլ չմոռանանք, որ մեր այստեղ բնակվելու փաստը դեր խաղաց եվրոպայում ներկայիս նոր ինքնուրույն ու գիտակցության փնտրտուքում: Առանց մեզ նոր եվրոպայի մասին խոսք չիսել չէր կարող»³³¹: Նման գաղափարները լայն տարածում են գտնում նաև գրականության մեջ: Ա. Օրենի «Յուրահատուկ աքսոր» վեպի հերոսն ասում է. «Յոթ տարում իմ մեջ շատ բան փոխվեց: Ավելի խորքային ճանաչեցի հասարակությունը: Տեսակ-տեսակ հագուստներ ունեմ, մեքենա ունեմ, բայց հասկացա, որ դա բավարար չէ փախլ ավաբյորեք ուտողների և սեխ ուտողների»³³² միջև սահմանը վերացնելու համար, և գիտես, եղբայր, ես այժմ ինձ լիարժեք իրավունք եմ վերապահում այստեղ ապրել»³³³: Նմանատիպ մտքեր ենք հանդիպում նաև այլ գրողների մոտ: «Ես արդեն քեզ նման թուրք չեմ, առյուծս, - ասում է Յ. Բեքթաշի հերոս Մեթինն իր ընկեր Չըթին, - մի տարի է գերմանացի եմ»³³⁴: Առավել ևս իրենց Գերմանիայի մասնիկ են համարում այդ երկրում մեծացած երեխաները: Իսկապես, առաջին սերնդի թուրքերին նույնիսկ քաղաքացիությունը ստանալուց, Գերմանիայում հիմնովին տեղավորվելուց հետո էլ մշակութային, հասարակական մակարդակով ինտեգրվելը, օտարության զգացումը հաղթահարելը շատ դժվար էր, հատկապես հաշվի առնելով գերմանացիների անբարյացկամությունը և օտարերկրացիների ինտեգրման հարցում նրանց անտարբերությունը: Ա. Օրենը «Յուրահատուկ աքսոր» գրքում այս առիթով գրում է. «...ինտեգրացիա ասելով նախընտրությունը տալիս են չինտեգրվածությանը»³³⁵: ... Այս պատճառով թուրքերն էլ բավարարվում են մի ժամանակ իրենց ճամպուրակներով բերած մշակույթով կամ էլ եկտրոնային միջոցներով, ամեն օր իրենց եկած երկրից արտահանվող մշակույթով են սահմանափակվում»³³⁶: 1980-

³³¹ Mortan K., նշված աշխ., էջ 295-296.

³³² Գրողը փախլ ավան համարում է հարուստների թանկարժեք ու նրբաճաշակ աղանդեր, մինչդեռ աղքատները ստիպված են բավարարվել էժան սեխով:

³³³ Ören A., Özel Bir Sürgün, s. 83.

³³⁴ Bektaş H., Gölge Kokusu, s. 322.

³³⁵ Ören A., Özel Bir Sürgün, s. 82.

³³⁶ Նույն տեղում, էջ 83:

ականների կեսերին կյանք մտնող թուրքերի երկրորդ սերունդը հայ տնվում էր տանը ստացած թուրքական արժեքների և հասարակության գերմանական արժեքների բախման կիզակետում: Երկու օտարությունների միջև ապրող նախկին «գաթարբայ թերներն» ու նրանց երեխաները դառնում են այդ բախման կրողը, զոհն ու իրականացնողը միաժամանակ, մշակույթների հատման խաչմերուկում չեն կարողանում գտնել իրենց տեղը:

Այս մոլորված վիճակը հասկանալի է դառնում նույնիսկ Գերմանիայի թուրք գրողների 1980-ականներին գրված ստեղծագործությունների վերնագրերից՝ «Փնտրվում է եսը», «Դու ո՞վ ես» և այլն: Յ. Փազարբայայի «Փնտրվում է եսը» վեպում «հյուր-աշխատողի», «գաթարբայ թերի» կերպարին փոխարինելու է գալիս մշակութային վակուումում հայտնված անհատը³³⁷: Վեպի գլխավոր հերոս Օրհան Բարուքը գնացել է Գերմանիա կրթություն ստանալու համար: Ավարտելուց հետո Օրհանը ետ չի վերադարձել, ամուսնացել է գերմանուհի Մարիայի հետ: Սակայն նա ոչ մի կերպ չի կարողանում իր երջանկությունը գտնել. կորցրել է հին հայրենիքը, սակայն նոր հայրենիք չի գտել: Ավելին, հայրենիքի հետ իր «ես»-ն էլ է կորել: «Ես»-ի փնտրտությունում Օրհանը երկար ճանապարհ է կտրում: Ճանապարհի ուղղությունն ու ժամկետները չեն հստակեցվում, որովհետև թերևս միգրանտի փնտրտված ժամանակային ու տարածքային սահմանափակումներ չունի: Շատ քննադատներ այս վեպը համարում են ինքնակենսագրական՝ գտնելով, որ Օրհանի միջոցով Յ. Փազարբայան ներկայացրել է իր ապրած ճգնաժամը³³⁸: Ուշագրավ է, որ վեպն ունի թուրքերեն ու գերմաներեն տարբերակներ, որոնք տարբերվում են նրբերանգներով ու մատուցման ձևով³³⁹: Սեփական «եսը» գտնելու անհրաժեշտության մասին է գրում Յ. Բեքթաշը. «Ես ո՞վ եմ, -ինքն իրեն հարցնում է «Դու ո՞վ ես» պատմվածքի հերոս Բեհզաթ Յըլմազը, - Չգիտեմ: Եթե իմացող կա, թող գա... Նախկինում վարպետս ասում էր. «Չայրենիքդ չե՞ս կարոտում: Ե՞րբ ես վերադառնալու»: Ո՞ր հայրենիքը: Որի՞ կարոտը:

³³⁷ Boyacı İ., նշված աշխ., էջ 882.

³³⁸ Նույն տեղում, էջ 888:

³³⁹ Նույն տեղում, էջ 893:

Ընտրի, ընտրի, որը կուզես... Երեք հատ... Ես որի՞ կարոտը քաշեմ»³⁴⁰: Այս թեմային է անդրադառնում նաև Ա. Օրենը «Խնդրում եմ, ոչ մի ոստիկանություն» վեպում՝ ներկայացնելով թուրք մնալու կամ գերմանացի դառնալու երկընտրությունը և փորձելով հասկանալ, թե թուրքական ինքնության որ մասը կարող են պահպանել թուրքերը նոր իրականության մեջ: Այս խնդիրը բարձրաձայնվում է նաև «Յուրահատուկ աքսոր» գրքում, որի վերջաբանում հեղինակը գրում է. «Սակայն գնալով կամրջի [Ա. Օրենի բնորոշմամբ, գասթաբայ թերևերը գերմանական և թուրքական մշակույթների միջև կամուրջ են - Ն. Պ.] երկու կողմերը սկսում են չհասնել ավերից և ոչ մեկին: Չեմ կարծում, թե կամուրջն է կարճանում, հակառակը, ես կարծում եմ, որ երկու ավերն են գնալով ավելի ու ավելի արագ իրարից հեռանում: Կամուրջն էլ վերածվում է մի ուրիշ, առանձին իրականության: Սա էլ ճիշտ և ճիշտ գասթաբայ թերևերի վիճակին է նման»³⁴¹: Հատկանշական է, որ Ա. Օրենի առաջ քաշած այս գաղափարն ընդունելի էր նաև շատ գերմանացիների, քանի որ համահունչ էր երկու քաղաքական ճամբարների միջև բաժանված Բեռլինում տիրող սառը պատերազմի ոգուն³⁴²:

Բազմամշակութայնության գաղափարի պաշտոնական ներդրումից գրեթե մեկ տասնամյակ առաջ թուրք գրողներն արդեն խոսում էին մշակութային երկխոսության հնարավոր զարգացման կամ նույնիսկ մշակութային սինթեզի մասին: Առաջին անգամ այս թեմաներն արծարծել է Ա. Օրենը «Բեռլինյան եռագրության» մեջ: Ա. Օրենը գտնում էր, որ տարբեր ազգությունների մարդկանց շփումը հանգեցնում է միմյանց մասին ունեցած պատկերացումների փոփոխության, նոր փոխարարությունների, որոնց ազդեցությամբ առաջ եկած հայացքների փոփոխությունն էլ կոչվում է ինտեգրացիա, որը չի նշանակում հրաժարում ազգային արմատներից, այլ պատրաստակամություն միմյանց ընդունել

³⁴⁰ Bektaş H., Kapıkule Nerde, s. 83.

³⁴¹ Ören A., Özel Bir Sürgün, s. 52.

³⁴² Pazarkaya Y., Göç Süreciyle Yurtdışında Oluşan Türk Edebiyatı, s. 584.

այնպես, ինչպիսին որ կան³⁴³: Իսկ Յ. Փազարթայան, ինքն իրեն հռչակելով մշակութային միջնորդ, պնդում էր, որ միայն թուրքական ու գերմանական մշակույթի սինթեզի արդյունքում հնարավոր է ապահովել երկրում հասարակության կայունությունը: Մշակույթների երկխոսության հնարավորության ապացույցն է, օրինակ, Ս. Շեյնհարթի ինքնակենսագրական «Ատելությունը ծուղակում» վեպում գերմանիայում զարգացող թուրք-հունական բարեկամությունը, որը երկու ժողովուրդների միջև առկա խոր հակասությունների և հատկապես Կիպրոսյան խնդրի լարման շրջանում գրեթե անհնար է թվում: Վեպի գլխավոր հերոսուհուն՝ Սունային ամենից շատ աջակցողներից մեկն է հույն Յորգոն. «Ինչքան տարօրինակ են այս հույները, և թշամի են, և ամենալավ ընկեր, - մտածում է Սունան, - Ալլահը նպատակներդ կատարի, Յորգո եղբայր: Երկու աշխարհում իմ եղբայրն ես, լավ մնա և իմացիր, ես թուրք եմ, եթե քո փոխարեն լինեի, իմ փոխարեն էլ, Աստված չտա, մի հույն կին, միթե ես նրան չէի՞ օգնի, նրա համար չէի՞ անի ամեն հնարավոր բան: Ես մարդ եմ, Յորգո եղբայր»³⁴⁴:

Այս գաղափարներին զուգահեռ գերմանական հասարակության բացասական վերաբերմունքի համատեքստում թուրք գրողների ստեղծագործություններում տեսնում ենք թուրքական ազգայնականության քարոզման տարրեր, թյուրքականության իդեալականացման և գովերգման դրսևորումներ: Պատահական չէ, որ տարածում են գտնում «Թուրքը երջանիկ է, որ թուրք է», «Ալլահի ամենսիրելի ծառաները թուրքերն են»³⁴⁵, «Թուրքից բացի թուրքն ուրիշ ընկեր չունի», «Թուրքն ինչ անում է, ճիշտ է անում», «Ամբողջ աշխարհը թուրքին է խոնարհվում»³⁴⁶ և այլ նմանատիպ արտահայտությունները: Թուրք հեղինակները միտում ունեն հերոսացնելու օսմանյան անցյալը: Օրինակ, Ա. Օրենը «Անսպասելի այցելու» գրքում ներկայացնում է սուլթանական Ստամբուլի ողջ շքեղությունը՝ հակադրելով այն հրեաներին հալածող դաժան եվրոպային: Այլ գրողները ևս փոքրիկ պատմական էքսկուրսների

³⁴³ Утургаури С., Турецкая диаспора в Германии. Социокультурная эволюция, Сборник "Ближний Восток и современность". Выпуск 21, Москва, 2004, стр. 463.

³⁴⁴ Sheinhart S., Pusuda kin, s. 103.

³⁴⁵ Ören A., Beklenmedik Ziyaretçi, s. 137.

³⁴⁶ Ören A., Muhteşem Gündoğdu, s. 15.

միջոցով փորձում են հիշեցնել, որ, չնայած այդ պահի վիճակին, իրենք դարեր շարունակ եվրոպան սարսափի մեջ պահած օսմանների ժառանգներն են, այն մարդիկ են, ում հայրերն ու պապերը մի քանի տասնամյակ առաջ Դարդանելում հաղթել են դաշնակիցների զորքերին: Գ. Դալի «Ե-5» վեպի գլխավոր հերոսի՝ Սալիհի հայրն ասում է. «Թուրքերն այսպիսին են, որդիս: Մենք շատ պատերազմ ենք տեսել: Ոչ մի բանից չենք վախեցել... Եթե մոռացաք այս ամենը, թուրքերիս համար շատ վատ կլինի»³⁴⁷: Երբ գերմանական իշխանությունները հրաժարվում են երկարացնել նրա մնալու թույլ տվող թյունը, որդուն կշտամբում է. «Չասացիր, որ այդ Չասան կոչեցյալը գերմանացիների հետ Չանաքբալեում անգլիացիների, ֆրանսիացիների, Անգաֆի խոզերի դեմ է կռվել: Գերմանացիները նրան մեղալ են տվել»³⁴⁸: Գերմանացիների նման վերաբերմունքն այնքան է բարկացնում ծեր Չասանին, որ նա ասում է. «Ոչ գյավուրի բժիշկն եմ ուզում, ոչ էլ տղայիս տանը մնալու համար ոստիկանության թույլ տվող թյունը»³⁴⁹... Դուք էլ մարդ եղեք, հավաքվեք, ետ եկեք: Տեսա, այստեղ մեզ հարմար չէ: Մարդուն մադկոթյունից, հերոսին հերոսությունից զրկում են»³⁵⁰:

Այսպիսով, գերմանաբնակ առաջին սերնդի թուրք գրողների ստեղծագործություններում կարևոր տեղ է զբաղեցնում ինտեգրման խնդիրը: Ինտեգրում եզրույթը քիչ է հանդիպում, ինչպես քիչ են նաև այս առաջին ստեղծագործություններում հոգեբանական ասպեկտի խոր ուսումնասիրությունները, վերլուծությունը, ինտեգրման խնդրի ուռճացումը: Ինտեգրվել-չինտեգրվելու, ինքնության փնտրտուքի, այս ճանապարհին սեփական «ես»-ը կորցնելու մասին մտահոգություններն ու մտորումներն արտահայտված են հասարակ լեզվով հասարակ մարդկանց կյանքից բերվող առօրեական միջադեպերի ներկայացման միջոցով:

1960-80-ականները դարձան Գերմանիայի թուրք գրականության կայացման կարևորագույն փուլ: Այս շրջանի գրողների

³⁴⁷ Dal G., E-5, s. 14.

³⁴⁸ Նույն տեղում, էջ 24:

³⁴⁹ Նույն տեղում, էջ 25:

³⁵⁰ Նույն տեղում, էջ 26:

ստեղծագործությունները լի են «գաթարբայ թերական» ներկան մանրակրկիտ ներկայացնող սյուժեներով: Մյուս կողմից էլ թուրքիան իր բոլոր խնդիրներով մշտապես հեղինակների ուշադրության կենտրոնում է:

ԳԼՈՒԽԵՐՐՈՐԴ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 1990-2000-ԱԿԱՆՆԵՐԻՆ

3.1 ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐԲ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ
ՁԵՎԱԿՈՐՈՒՄԸ. ԹԵՄԱՏԻԿ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1980-ականների վերջը-1990-ականների սկիզբը գլոբալ աշխարհակարգի փոփոխության ժամանակաշրջան էր: Գերմանիան հայտնվեց իրադարձությունների հորձանուտում. երկու մասի բաժանված երկիրը միավորվեց և փոխվեց ողջ գերմանական հասարակության, այդ թվում նաև թուրքական համայնքի կյանքը: Յ. Փազարբայան այս առիթով գրել է. «1989 թ. Բեռլինյան պատի քանդվելուց և 1990 թ. Գերմանիայի միավորումից հետո թուրքերին ինտեգրելու փորձերին ու դրահամար ծախսվող գումարներին վերջ դրվեց: Երկրորդ սերունդը մնաց օդում կախված»³⁵¹: Թեև այս խոսքերը ճշմարտության ունից հեռու չեն, պետք է շեշտել, սակայն, որ XX դարի վերջին տասնամյակում գերմանական իշխանության ունեներն ի վերջո ստիպված եղան ընդունել իրենց երկրում միգրանտական խնդրի առկայությունը և սկսեցին ակտիվորեն ճանապարհներ որոնել դրա լուծման համար. առաջ քաշվեց բազմամշակութայնության գաղափարը, կյանքի կոչվեցին միշտ քօրենսդրական բարեփոխումներ: Այս ամենը նպաստեց երկրի մշակութային, քաղաքական ու տնտեսական կյանքին թուրքական համայնքի ինտեգրման խորացմանը: Սակայն ընդհանուր առմամբ թուրք-միգրանտների ներգրավվածությունը հասարակական կյանքում շարունակում է մնալ ցածր, իսկ գործազրկության,

³⁵¹ Kocadoru Y., նշված աշխ., էջ 68.

հանցավորության, անգրագիտության ավանդական խնդիրները՝ չհաղթահարված:

Երկրում տեղի ունեցող այս կարևոր զարգացումները, բնականաբար, իրենց արտացոլումն են գտել Գերմանիայի թուրքական գրականության էջերում: XX դարի վերջին տասնամյակում Գերմանիայի թուրքական գրականության մեջ տեղի ունեցան լուրջ փոփոխություններ. գրական ասպարեզ մտան նոր գրողներ (այդ թվում մեծ թվով կին-գրողներ), ովքեր իրենց հետքերեցին նոր մեթոդներ և թեմաներ, լեզվաոճական թարմություն:

Այս գրողներից ոմանք բավական լուրջ ճանաչում ստացան գրական շրջանակներում, արժանացան ամենատարբեր գրական մրցանակների: Օրինակ՝ Էմինե Սևգի Օզդամարի ստեղծագործությունները պարբերաբար ներառվում են «Լավագույն գրքերի» ռեյտինգային տարբեր ցուցակներում: Չաֆեր Շենոջաֆին գրաքննադատներն անվանում են ժամանակակից Գերմանիայի ամենանորարար և ամենափնտելեկտուալ գրողներից մեկը³⁵², իսկ Ֆերիդուն Չափմոզլուն նույնիսկ համարվում է Նոբելյան մրցանակի արտեսցիալ հավակնորդ³⁵³: 1980-ականների վերջին-1990-ականների սկզբին գրական ասպարեզ մտած գրողներին հաճախ միավորում են «երկրորդ սերունդ» անվան տակ ցույց տալու համար, որ նրանք հիմնականում երկրորդ սերնդի միգրանտներ են և գրականություն են մուտք գործել մոտավորապես նույն ժամանակահատվածում: Ինչ վերաբերում է ըստ թեմատիկ առանձնահատկությունների կամ գրական ուղղվածությունների այս գրողների ստեղծագործությունների դասակարգմանը, ապա, ինչպես իրավացիորեն նշում է գերմանացի գրականագետ Շրեդերը, միատարր երկրորդ սերունդ գոյություն չունի, քանի որ կախված կոնկրետ մարդու Գերմանիա գալու տարիքից, նրա ծնողների աշխատանքի բնույթից, շրջապատից նրա մոտեցումներն ու ընկալումները խիստ տարբեր կարող են լինել: Նմանատիպ կարծիք է արտահայտում նաև մեկ այլ ճանաչված գրականագետ Թ. Չիզմանը՝ գրելով, որ ծագումով

³⁵² Zafer şenocak, ed. By Cheessman T., Yeşilada K., Cardiff, 2003, p. 43.

³⁵³ Mortan K., նշված աշխ., էջ 260.

թուրք գերմանական գրողները միմյանց հակասող կարծիքներ ու մոտեցումներ ունեցող, չհամախմբված անհատների խումբ են:

Նշենք, որ գրական ասպարեզում են մնում նաև Յ. Փազարբայան, Գ. Դալը և մի շարք այլ առաջին սերնդի գրողներ, ովքեր նոր ժամանակի հրամայականները հաշվի առնելով՝ հրաժարվում են որոշ ուղղություններից և թեմաներից: Օրինակ, Գ. Դալը ռեալիզմից անցում է կատարում դեպի արստմոդեռնիզմ:

1990-ականների կեսերից գերմանական հասարակությունը սկսում է ավելի ու ավելի մեծ հետաքրքրություն ցուցաբերել միգրանտական գրականության հանդեպ: Թուրք գրականագետ Ն. Քուրույազը ջըն գրում է. «Երկրորդ սերնդի գրողներն այժմ հետաքրքրություն են ներկայացնում այլ ևս ոչ միայն և ոչ այնքան էկզոտիկ երկրից եկած լինելու և Արևելքի մասին պատմելու համար, այլ այդ ամենի մասին գիտելիքները արևմտյան մշակույթի հետ միավորելու և, հատկապես, արևմտյան մշակութային համակարգից տարբերվող մշակութային սինթեզ ստեղծելու համար»³⁵⁴: Թուրք գրողների գործերի նկատմամբ հետաքրքրության աճը պայմանավորված էր նաև դրանց 1990-ականների կեսերից գրեթե բացառապես գերմաներենով տպագրվելու փաստով: Ընդ որում որոշ թուրք գրողների մոտ գերմաներենը զարմանալի ձևափոխությունների է ենթարկվում: Օրինակ, Ֆերիդուն Չափմօղլուն դասական գերմաներենի փոխարեն օգտագործում է միգրանտական «քանաք»³⁵⁵ տարբերակը, չի խուսափում փոզոցային, կիսագռեհիկ արտահայտություններից, որոնք, մասնագետների մի մասի կարծիքով, նրա գրքերին հատուկ գունավորում են տալիս: Գրողներ Մեհմեթ Քըլըջը, Ռենան Դեմիրքանը տեքստում ներառում են ամենատարբեր թուրքերեն արտահայտություններ ու մեջբերումներ: Իր գրքերում է. Ս. Օզդամարը մեծ թվով թուրքական երգեր, ասույթներ է օգտագործում: Նրա գերմաներեն տեքստերը

³⁵⁴ Özbakır I., Almanya “Konuk İşçi Edebiyatı’nın bir Türk Temsilcisi Renan Demirkan’ın “Üç Şekerli Demli Çay”ında Kimlik Problemi, Türklük Bilimi Araştırmaları, N. 9, 2000, <http://www.ibrahimozbakir.com/privat/makaleler/demirkan.pdf>, s. 212.

³⁵⁵ «Քանաք» լեզուն գերմաներենի և թուրքերենի խառնուրդն է՝ համեմված ժարգոնային արտահայտություններով ու բառերով: Այս լեզուն լայն կիրառվում է գերմանաբնակ թուրք միգրանտների շրջանում: Հատկանշական է, որ նրանց երբեմն անվանում են «քանաքեր», այսինքն «քանաք» լեզվով խոսողներ:

թուրքերենից բառացի թարգմանություներ են հիշեցնում: Չնայած հեղինակը կատարելապես տիրապետում է գերմաներենին՝ նամիտումնավոր քերականական, ուղղագրական և կետադրական սխալներ է անում՝ այս կերպ ընդգծելով իր պատկանելությունն օտար մշակույթին: Է. Ս. Օզդամարի այս առանձնահատուկ մոտեցման վառ օրինակներից է նրա առաջին վեպի անվանումը՝ «Աշխարհը մի քարվանսարայ է: Մի ծայրից մտնում, մյուսից դուրս ենք գալիս»: Գերմաներենում տասնինը բառից բաղկացած այս վերնագիրը համարվում է XX դ. ամենաերկար վերնագրերից մեկը: Տասնութ սովորական բառերի կողքին դրված պարսկերենին, թուրքերենին հատուկ և եվրոպական լեզուներով գրեթե չթարգմանվող «քարվանսարայ» բառը, արևմտյան գրականագետների գնահատականով, գերմանալեզու և անգլալեզու ընթերցողների լեզվական համատեղությունը փչացնող մարտահրավեր է³⁵⁶:

Գերմաներենի աղճատումները, սակայն, միանշանակ չեն ընկալվում նույնիսկ թուրքերի կողմից: Չայտնի գրող Չ. Շենոջաքը կիսահեգնական ոճով խիստ քննադատության է ենթարկում այդ փորձերը. «Այժմ որոշ արաբ և թուրք հեղինակներ իրենց պապերի պատմությունը պատմելու արվեստն են հայտնագործել... Չեքիաթները նորից հաջողություն են բերում... Այս տեքստերի հիմնական հերոսները ուղտերն ու իմաստուն էշերն են... Բոլոր էշերն էլ գերմաներեն են խոսում, սակայն սատարօրինակ գերմաներեն է, քանի որ իրենց ասած բաները գերմաներեն չեն մտածում: Էշերը գերմաներենով մտածել չեն կարող, սակայն փորձում են ցույց տալ, որ որևէ լեզվով գրելու համար պետք է այդ լեզվով մտածել: Ավելին, այդ լեզուն հարստացնում են նոր, նույնիսկ լեզվի կրողների համար անհասկանալի բառերով: Գերմանացիները հանդուրժողական ազգ են: Աչք են փակում այն ամենի վրա, ինչ կատարվում է իրենց լեզվի հետ...»³⁵⁷: Չ. Շենոջաքը նաև կտրականապես դեմ է միգրանտական ծագումը ինքնագովազդի համար օգտագործելուն. «Իմ ընկեր գրողները, ում օտար լինելն ակնհայտ է մուգ մաշկ ունենալու կամ գերմաներեն ակցենտով

³⁵⁶ Gramling D., The Caravansarai Turns Twenty: or Rethinking new German literature –in Turkish?, <http://www.journals.istanbul.edu.tr/iuaded/article/view/1023010317/1023009556>, p. 56.

³⁵⁷ Şenocak Z., Tehlikeli akrabalık, İstanbul, 2006, s. 122.

խոսելու պատճառով, կարծես թե բնավ չեն նեղվում օտարերկրացի լինելուց: Ման են գալիս ամբողջ երկրով, մասնակցում իրենց նման օտարերկրացի հեղինակների գրքերի ընթացումներին: Այս միջոցառումների ունկնդիրներն են այն գերմանացիները, ովքեր ցանկանում են օտարերկրացի տեսնել: Ամեն ինչ մանրակրկիտ հաշվարկված է թվում: Հաջողակ նախագիծ է: Գերմանիայում միգրանտական ոճով գրված մի քանի տողանոց կիսաբանաստեղծական տեքստով մարդ կարող է գրողի ճանաչում ձեռք բերել: Չեմ հավանում: Այդ պատճառով մերժում եմ օտարերկրացիների թեմային վերաբերող բոլոր ռեպորտաժների առաջարկներն ու ընթերցումների հրավերները... Մի կազմակերպիչ նույնիսկ ինձ մի անգամ ներկայացրեց որպես «գերմանացի լինելու երկրպագու»: Շատ հավանեցի...»³⁵⁸: Լեզվի նկատմամբ մոտեցումների ու վերաբերմունքի տարբերությունը ևս մեկ անգամ ապացուցում է 1990-ականներից ստեղծագործող թուրք գրողների անմիաբանությունը:

Նոր գրողների մուտքը գրականությանն ազդարարվեց նաև թեմատիկ փոփոխություններով: Տրամաբանական է, որ, ի տարբերություն հասուն տարիքում Գերմանիա եկած առաջին թուրք գրողների, ովքեր իրենց ուշադրությունը կենտրոնացնում էին միայն թուրքիայի և գուտ «թուրքական խնդիրների» վրա, երիտասարդ հեղինակներն անդրադառնում են գերմանական իրականությանը, գերմանական հասարակությանը հուզող հիմնական խնդիրներին: Այդ հարցերի շրջանակում հատկապես կարևոր տեղ է զբաղեցնում Բեռլինյան պատի փլուզումը: Այս իրադարձությունը որպես սկզբնակետ, որպես անցյալի ու ներկայի բաժանարար գիծ իր տեղն ունի գրեթե բոլոր թուրք գրողների գործերում: Օրինակ, «Սելամ, Բեռլին» վեպում հեղինակ Յադե Քարան մանրամասն ներկայացնում է պատի փլուզմանը նախորդած իրադարձությունները. «Սա հեղափոխություն էր, - գրում է նա, - եթե Ստամբուլում լինեիր, գլուխներ կռչեին, բայց Բեռլինում՝ երբեք: Ամեն ինչ սարսափեցնելու չափ սովորական անցավ: Կախարդական էր:

³⁵⁸ Նույն տեղում, էջ 121:

Յրաջալի»³⁵⁹: Պատի փլուզման հետևանքներին անդրադառնալով՝ հեղինակը նկարագրում է հանկարծակի Արևմտյան Բեռլինը հեղեղած նախկին Գերմանիայի Դեմոկրատական Յանրապետության բնակիչներին. «Արևելյան գերմանացիները բեժ և մոխրագույն ժակետներ են հագնում: ... Արևմտյան բեռլինցիների նման չաղ չեն»³⁶⁰: Այսպես շտուկ է. «...Վեսսել տառիկը [հերոսուհիներից մեկը - Ն. Պ.] հերթերի պատճառով այլևս ոչ մի խանութ չի գնում: Արևելյան գերմանացիներն ամեն ինչ սրբել, տարել են»³⁶¹: Վեպի հերոսին թվում է, որ ապրանքների հետևանք տարել են նաև բեռլինցիների հանգստությունն ու երջանկությունը, նույնիսկ իր ծնողների բաժանումն ու սիրելի պապիկի հիվանդությունը նակապում է պատի քանդման հետ: 2. Շենոջաքն էլ այսպես է նկարագրում Գերմանիայի միավորումը. «Այո, արդեն սահմանային հսկողությունն չկար, կարող էինք հանգիստարևելյան Բեռլին գնալ: Բայց դրակարիքը մի տեսակ չէր զգացվում: Ինձ զարմացրեց, որ չնայած անանձնապես բան չէր փոխվել, քաղաքում բոլորը փոփոխություններից էին խոսում»³⁶²: Առհասարակ բեռլինյան պատի քանդումը շատ մեծ տեղ է գրավում վերջին երեք տասնամյակներում գրված ստեղծագործություններում: Պատի փլուզումը խորհրդանշում է հին կարգի վերացում և նոր կյանքի սկիզբ, սակայն այդ նոր կյանքը միանշանակ դրական չի ընկալվում, հակառակը՝ ականատես ենք լինում անցյալի մասին նոստալգիկ հիշատակումների:

Գերմանական խնդիրների նկատմամբ աճին զուգահեռ հետաքրքրությունը թուրքական խնդիրների հանդեպ պակասում է: Թուրքիան հետզհետե վերածվում է ավելի ու ավելի առասպելական մի վայրի, որտեղ նույնիսկ արձակուրդի գնալ ու ցանկությունն չկա. «Յայրենիք, ինչ ծիծաղելի բան է, -ասում է 2. Շենոջաքի «Աշխարհն երկու ծայրունի» վեպի հերոսուհի Ռանան, - յոգուրտի է նման»³⁶³: Թուրքիան լավագույն դեպքում մանկական հիշողությունների մի

³⁵⁹ Kara Y., *Selam Berlin*, İstanbul, 2004, s. 56.

³⁶⁰ Նույն տեղում, էջ 20:

³⁶¹ Նույն տեղում, էջ 41:

³⁶² Şenocak Z., *Tehlikeli Akrabalık*, s. 18.

³⁶³ Şenocak Z., *Dünyanın İki Ucu*, İstanbul, 2011, s. 60. Այստեղ ականատես ենք լինում բառախաղի թուրքերեն «yurt»՝ հայրենիք և «yoğurt»՝ յոգուրտ, մածուն բառերի միջև: Այս կերպ հեղինակը ևս մեկ անգամ շեշտում է թուրքերի նոր սերնդի սառը վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ:

մասն է, որ ժամանակ առ ժամանակ հառնում են հերոսների առջև: Գ. Դալ ի «Փիտրած կապիկ» վեպի հերոս Օ. Քուլը ասում է. «Սոխի հոտը մանկությունս, արևի լույսով ողողված սենյակները և ... մորս է հիշեցնում, այս ձյունոտ, ցուրտ գերմաներեն խոսող միջավայրից կտրում-տանում»³⁶⁴: Այս հիշողությունները այլևս միգրանտների կյանքի ամենակարևոր մասը չեն: Նոր սերունդը նույնիսկ սկսում է ըմբոստանալ թուրքական բարեկամներին օգնելու սովորության դեմ: Անցած տարիներին հետադարձ հայացք գցելով՝ միգրանտները սկսում են վերաբերվել իրենց ապրած կյանքը, կրկին մեղադրել թուրքական իշխանություններին անտարբերության, շահամոլության մեջ: Վերոնշյալ գերմանացի հրապարակախոս-գրող Գյունթեր Վալլրաֆին տված հարցազրույցում թուրք գրող Ս. Թուրանն ասում է. «Այստեղ [Գերմանիայում – Ն. Պ.] դժվարություններ ունեցան Անատոլիայից եկած թուրքերն, ովքեր երբեմն նույնիսկ էլ եկտրականության գոյության մասին տեղյակ չէին... Սակայն դանրանց մեղքը չէ: Երկու երկրների մեղքն է՝ Գերմանիայի և Թուրքիայի: Գերմանիան այն ժամանակ էժան աշխատուժի կարիք ուներ, Թուրքիան էլ՝ իհարկե փողի: Մեզ շատ էժան ծախեցին»³⁶⁵: Ռ. Դեմիրքանն էլ, անդրադառնալով այս հարցին, գրում է. «Թուրքական իշխանությունները եթե պատասխանատու լինեին, մարդկանց համար աշխատատեղեր կստեղծեին, ոչ թե նրանց կվաճառեին՝ ամեն մեկը 640 մարկով»³⁶⁶: Թուրքիայի նկատմամբ անտարբեր վերաբերմունքն ու առավել ևս իշխանությունների հասցեին հնչող բողոքները ցույց են տալիս, որ Թուրքիա վերադառնալու գաղափարը 1990-ականներին նույնիսկ որպես երազանք չի շրջանառվում միգրանտների մոտ: «Մեկ տարի, երկու տարի, երեք տարի անցավ, սակայն ոչ մի թռչուն հետ չվերադարձավ», - գրում է Է. Ս. Օզդամարը³⁶⁷: Ավելին, հայրենիք վերադառնալու փորձերն էլ հիմնականում անհաջող ավարտ են ունենում: Ավելին, օրինակ, գրող Ալև Թեքինայի (ծնվ. 1951 թ.) «Տունդարձ կամ Յելգա մորաքույրն ու Յանս քեռին» պատմվածքի հերոսները երկար

³⁶⁴ Dal G., Kilları Yolunmuş Maymun, İstanbul, 1988, s. 150.

³⁶⁵ Turan S., Şok. Bir Hostein Anıları, İstanbul, 1993, s. 10.

³⁶⁶ Demirkan R., Üç Şekerli Demli Çay, İstanbul, 1992, s. 53.

³⁶⁷ Özdamar E. S., Avludaki Ayna, s. 146.

ժամանակ Մյունխենում ապրելուց հետո Թուրքիա վերադառնալով՝ չեն կարողանում հարմարվել, այնտեղ իրենց օտար, զբոսաշրջիկ են զգում և ի վերջո որոշում նորից գնալ Գերմանիա³⁶⁸: Ռ. Դեմիրքանի «Երեք կտոր շաքարով թեյ» վեպի հերոսներն էլ, Թուրքիա վերադառնալով, մեծ հիասթափություն են ապրում, որովհետև չեն գտնում «հին Թուրքիան»: Իսկ Յ. Քարայի հերոսները Գերմանիայից Ստամբուլ վերադառնալուց շատ տարիներ հետո էլ տարբերվում են տեղացի թուրքերից՝ աննշան ակցենտով և նույնիսկ գերմանացիներին բնորոշ հստակ և ուղղակի ոչ ասելու ունակությամբ, որ արևելյան մշակույթում հաճախ չի հանդիպում³⁶⁹:

Այնուամենայնիվ, Թուրքիան դեռևս շարունակում է որոշակի դեր ունենալ թուրք գրողների ստեղծագործություններում՝ հատկապես Է. Ս. Օզդամարի գրքերում: Սեփական ընտանիքի պատմության հիման վրա գրողն իր վեպերում կենդանացնում է 1950-60-ականների Թուրքիայում տիրող աղքատությունը, Դեմոկրատական կուսակցության վարած քաղաքականության հետևանքները, Աթաթուրքի պաշտամունքի հարցը, քրդառյացությունը, երկրում տարածված ամերիկամոլությունը, պատմում թուրքական ավանդույթների մասին, բանահյուսական ամենատարբեր տարրեր օգտագործելով ներկայացնում հասարակությունը պարուրած սևահավատությունը, անդրադառնում մի շարք պատմական խնդիրների: Ուշագրավ է, սուլթան Աբդուլ Յամիդ II-ի նկարագրությունը. «Աբդուլ Յամիդ սուլթանը 32 տարի կառավարեց: Սուլթանը բռնապետ էր: Վախենում էր ապստամբություններից: Այնքան շատ էր վախենում, որ ոչ մեկին, նույնիսկ սեփական դերձակին թույլ չէր տալ իսմոտենալ իրեն: Այդ պատճառով շորերը միշտ մեծ էին լինում»³⁷⁰: Յետաքրքիր է նաև մեծ քաղաքների ու գյուղերի միջև տարբերությունն ընդգծող հետևյալ դիպուկ արտահայտությունը. «Ստամբուլի մարդիկ պատին սիրով կացրած նկարներն են, իսկ անատոլիացիները փոշու, հողի մեջ մոռացված

³⁶⁸ Кутузова И., К проблеме «пограничья» в литературном творчестве турецких мигрантов Германии, Современные проблемы науки и образования, № 3, 2009, стр. 127, http://www.science-education.ru/download/2009/03/2009_03_099.pdf.

³⁶⁹ Kara Y., Selam Berlin, s. 5.

³⁷⁰ Özdamar E. S., Hayat Bir Kervansaray, İstanbul, 2008, s. 145.

նեգատիվները»³⁷¹: Է. Ս. Օզդամարի ստեղծագործություններում կարևոր տեղ ունեցող և Գերմանիայի թուրք գրականության նախորդ շրջանին այնքան բնորոշ բոլոր սոցիալական թեմաները 1990-ականներին գրեթե չեն արժարժվում այլ գրողների կողմից: Այս տարիներին ավելի կարևորվում է թուրք-գերմանական մշակութային տարբերությունների վերլուծությունը, գերմանացիների հետ թուրքերի հարաբերությունների ուսումնասիրումը, գերմանական հասարակության մեջ համայնքի ունեցած տեղի և դերի արժևորումը, ինտեգրացիոն մեխանիզմների քննարկումը և այս բոլորի հանրագումարում ստացվող թուրքական ինքնության փոփոխման, պահպանման խնդրի ուսումնասիրությունը: Ընդ որում, այս բոլոր խնդիրները ներկայացված են բավական հակասական, իրարամերժ տեսանկյունից, գրողները չեն կարող առաջարկել պատրաստի լուծումներ, քանի որ այդպիսիք չկան: Գրականության մեջ հանդիպում ենք ծայրահեղությունների՝ թուրքական ազգայնականության բացահայտ քարոզչությունից մինչև թուրքականությունից վերջնական հրաժարման կոչեր:

Է. Ս. Օզդամարը գրում է, որ 1990-ականներին Բեռլինը սկսեց թուրքերեն հասկանալ: Դրան հակառակ միգրանտների կյանքը մեծ մասամբ շարունակում է այնքան գետտոյացված լինել, որ գերմանացի մտավորականները թրոյզբերգն անվանում են «Թուրքիայի մեծությամբ երրորդ քաղաք», ուր բացառությամբ մի քանի գերմանական ընտանիքի ապրում են Թուրքիայի տարբեր ծայրերից եկած թուրքեր, քրդեր, լազեր, արաբներ: Այստեղ տները շատավելի են նման թուրքականի. մարդիկ միայն թուրքական թերթեր են կարդում, ռադիոյով երաժշտություն լսում, ամբողջ օրը թուրքերեն խոսում, թեյ խմում, կոտլետ և քյաբաբ ուտում: Ժողովրդի մեջ տարածված կատակի համաձայն. «...հսկական թուրքը պետք է թրոյզբերգի լինի»³⁷²: Նման փակ կենցաղով ապրող թուրքերը իրենց երեխաներին էլ փորձում են դաստիարակել թուրքական ոգով. «Մենք այստեղ օտարերկրացի ենք, - հաճախ

³⁷¹ Նույն տեղում, էջ 35:

³⁷² Özdamar E. S., Annedili, s. 72.

կրկնում են ծնողները, - և միշտ մնալ ու ենք օտարերկրացի»³⁷³:
 Գերմանացիների նկատմամբ թաքնված անբարյացկամությանն այնքան մեծ է, որ երբ «Չայրենիքի դավաճան Նիյազին» գրքի հերոսը դառնում է Գերմանիայի ֆուտբոլի ազգային հավաքականի մարզիչ, թուրքերն այս ձեռքբերման համար ուրախանալու փոխարեն անսահման բարկանում են: Լուրի հրապարակումից հետո հերոսի՝ Թուրքիայում բնակվող ծնողների տան մոտ հավաքվում են շրջակայքի բոլոր բնակիչներն ու բողոքում հայրենիքի «դավաճանի» դեմ: Յորն ու մոր ցասումն էլ անսահման է: Չայրն ասում է. «Այս հայրենիքի համար կյանքը Չանաքբալեում տված հորս ոսկորները անպատվեցիր: Անիծված շան տղա... Գյավուրի վիժվածք... Չայրենիքը դավաճանեցիր»³⁷⁴, իսկ մայրն, արտասվելով, ավելացնում. «Ավելի Լավ էր քո փոխարեն քար ծնեի»³⁷⁵:

Թուրքերը հատկապես աղջիկ երեխաներին արգելում են տնից դուրս գալ, գերմանացի ընկերներ ունենալ, սովորել, աշխատել: Ա. Սոնայը «Այստեղ եմ ուզում ապրել» ինքնակենսագրական վեպում գրում է. «Դեպի Արևմուտք տանող դուռը միշտ կիսաբաց էր մեր առջև, սակայն մի քայլ անելն ու ներս մտնելը կտրականապես արգելված»³⁷⁶: Որքան շատ են լինում արգելքները, այնքան ավելի է մեծանում դրանք խախտելու ցանկությունը. «...Երբեմն նույնիսկ մտածում էի, - գրում է Ա. Սոնայը, - երանի ես էլ գերմանացի ընկերներիս և նրանց Բարբի տիկնիկների պես շիկահեր, կապուտաչյա և սպիտակամաշկ լինեի»³⁷⁷: Մի քիչ մեծանալուց հետո աղջիկները ցանկանում են ոչ միայն արտաքին տեսքով, այլ և իրենց ունեցած հնարավորություններով նմանվել գերմանացիներին. «Լավ, ինչ ո՞ւմ ենք՝ թուրք-միգրանտների աղջիկներս, չէինք կարող մեր գերմանացի հասակակիցների հետ միասին նույն երազանքներն ունենալ ու իրավունք ունենալ, - ըմբոստանում են Ա. Սոնայի հերոսները, - Ինչ ո՞ւմ մեր նմանները պետք է ստիպված լինեին հրաժարվել մյուս երիտասարդ աղջիկների ծնվելուց ի վեր

³⁷³ Demirkan R., Üç Şekerli Demli Çay, s. 29-30.

³⁷⁴ Canbolat M., Vatan Haini Niyazi, İstanbul, 1999, s. 28.

³⁷⁵ Նույն տեղում, էջ 34:

³⁷⁶ Sonay A., Burada Yaşamak İstiyorum, İstanbul, 1999, s. 52.

³⁷⁷ Նույն տեղում, էջ 10:

ուևնեցած ազատություններից և բոլոր զվարճանքներից»³⁷⁸: Այս պայմաններում մեծ ձեռքբերում է համարվում այն փաստը, որ հայրը թույլ է տալիս փոքրիկ աղջիկներին բակում խաղալ, ավելի մեծերին գլխաշոր չկապել, գերմանացիների տուն հյուր գնալ կամ վարորդական դասընթացների մասնակցել: Աղջիկներին նման բաներ թույլ տվող հայրն արժանանում է հարևանների խիստ քննադատությանը, մյուս կողմից էլ աղջիկներն էլ ավելի շատ ազատություն են ուզում և հորը դատի տալիս իրենց իրավունքները ոտնահարելու համար: Արդյունքում թուրքերը նրան մեղադրում են իր դստրերի նկատմամբ քիչ խստության մեջ, իսկ գերմանացիները բանտ են նստացնում այդ նույն խստության համար³⁷⁹: Միևնույն երևույթի նկատմամբ նման տրամագծորեն տարբեր վերաբերմունքը շատ բնորոշ է գերմանական և թուրքական հասարակութայնություններին: Թուրք գրողների ստեղծագործություններից պարզ է դառնում, որ երկու ժողովուրդների մոտ ընդունված նորմերը գրեթե միշտ հակասում են իրար: Գ. Դալի «Փիտրած կապիկ» վեպի հերոս պարոն Քուլը նկատում է, որ տարբեր են, առաջին հերթին, գերմանացիների և թուրքերի խառնվածքները. գերմանացիներն այնքան մանրակրիկիտ են գրանցումներ անում, որ վաղուց մահացած մարդկանց ամբողջ կյանքը կարելի է հեշտությամբ վերծանել, մինչդեռ թուրքերի մոտ ամեն ինչ քառսային է³⁸⁰: Գերմանացիները պատրաստակամորեն վճարում են նույնիսկ շուն պահելու հարկը, իսկ Թուրքիայում թաղապետարանները ջրի և լույսի վարձը գանձելու համար ստիպված են դրամահավաք խմբեր ստեղծել³⁸¹: Հակասություններն ակնհայտ են նաև մյուս ոլորտներում. «Մենք, հարավային մարդիկ, այստեղ հարյուր տարի էլ ապրենք, չենք սովորի տաք-տաք հագնվել: Ես, օրինակ, ամենացուրտ ձմռանը սվիտերով և պիջակով եմ դուրս գալիս», - ասում է Գ. Դալի հերոս պարոն Քուլը³⁸²: Տղամարդ-կին հարաբերությունների անդրադառնալով՝ Ս. Թուրքանի հերոսուհին ասում է. «Ինչքանով որ հասկանում եմ, այստեղ շնանալը մեղք չէ: Ամեն կին կարող է ցանկացած տարիքում,

³⁷⁸ Նույն տեղում, էջ 9:

³⁷⁹ Նույն տեղում, էջ 8:

³⁸⁰ Dal G., Kilları Yolunmuş Maymun, s. 43.

³⁸¹ Cambolat M., Vatan Haini Niyazi., s. 98.

³⁸² Dal G., Kilları Yolunmuş Maymun, s. 148.

ցանկացած տղամարդու հետ քնել: Ամուսնացած լինելն էլ նշանակություն չունի... քանի որ պատվի խնդիրը սրանց համար ծիծաղելի տերմին է»³⁸³: Ա. Սոնայի հերոսուհին էլ այս թեմայով ասում է. «Թուրքիայում պատիվը կորցրած, ոչ կույս աղջիկն առաջին ամուսնական գիշերը խայտառակ է լինում և հոր տուն է ուղարկվում: Երիտասարդ ամուսինն էլ իրեն չափազանց ստորացած կզգա, եթե սենյակի դռան մոտս պասոզ տարեց կանանց մաքուր, առանց բծի սավան ցույց տա: Մինչդեռ Գերմանիայում, գոնե իմ ապրած տեղում, քսան տարեկանում դեռևս տղամարդու հետ սեռական կապ չունեցած աղջիկը պետք է ամաչի»³⁸⁴: Տարբեր է նույնիսկ փողի նկատմամբ վերաբերմունքը. «Այն երկրում, որտեղ ես եմ ծնվել ու մեծացել, փողն իսկապես ամեն ինչի կենտրոնում է, - գրում է Չ. Շենոջաքը «Վտանգավոր բարեկամություն» գրքում, - Մարդիկ, սակայն, իրենց այնպես են պահում, կարծես ամեն ինչ և կենտրոնում գտնվող փողն էլ անկարևոր են: Փող չունեցողը նույնիսկ հասարակության անդամ չի համարվում, փող ունեցողն էլ անհրաժեշտություն չի զգում ինչ-որ բանի մասին մտահոգվել՝ նույնիսկ փողի: Սա է պատճառը, որ այս երկիր եկած խելացի մարդիկ ուզում են առաջին հերթին ոչ թե գերմանական անձնագրի պես անարժեք բան, այլ գերմանական մարկ ունենալ: Այս երկրում գոյության խնդրի հետ կապված հարցերի լուծումը միմիայն գերմանական մարկից է կախված»³⁸⁵: Պապիկիս երկրում դրությունը լրիվ այլ է: Փողը այնտեղ էլ հստակեցնում է մարդկանց միջև բոլոր հարաբերությունները, բայց ամեն ինչ փող չէ: Եթե նայենք փողի քանակին, ապա աշխարհում ոչ մի այլ տեղ այդքան շատ փող չկա: Սակայն, ափսոս, որ այդ փողն արժեք չունի: Բացի այդ, քանի որ ամեն օր փողն էլ ավելի է արժեզրկվում, մարդկանց խոսելու միակ թեման էլ փողն է: Տարօրինակ է, որ փողն ինչքան կորցնում է արժեքն, այնքան կարևոր է դառնում»³⁸⁶: Թուրքերն ու գերմանացիները տրամագծորեն տարբեր ընկալումներ ունեն նաև հարգալից և կիրթ վարվել ակերպի վերաբերյալ. «...Յայրս զգուշացրեց, որ այս

³⁸³ Turan S., Şok: Bir Hostesin Anıları, s. 48.
³⁸⁴ Sonay A., Burada Yaşamak İstiyorum, s. 85.
³⁸⁵ Şenocak Z., Tehlikeli Akrabalık, s. 11.
³⁸⁶ Նույն տեղում:

երկրում դպրոցի տնօրենի ձեռքը չեն համբուրում, միայն սեղմում են: Այդպես արեցի, չնայած պարզ էր, որ նրա տարիքն է անգամ ստիպում ձեռքը համբուրել: Ողջունից հետո նա ինձ, ութամյա թզուկիս, աթոռ առաջարկեց... Յոթս համաձայնության նշանից հետո նստեցի... Այս երկրում ինչ-որ բան սխալ է...»³⁸⁷, - գարմանքով պատմում է Ա. Սոնայի գրքի հերոսներից մեկը:

Իսլամադավան թուրքերը բնականաբար չեն նշում Սուրբ Ծնունդն ու Նոր տարին, երեխաների ծննդյան տոները. «Մեր մանկությունից ի վեր երազում էինք Նոր Տարին այլ գերմանական ընտանիքների նման նշել ... Սակայն գիտեինք, որ դամեր տունը չէ:³⁸⁸ Յորիցս շատ էինք ինդրում տոնածառ, - գրում է Ա. Սոնայը, - սակայն նա ասում էր. «Դամիայն գերմանացիների համար է, մեզ համար չէ» և ավելացնում. «Նրանց կրոնն ուրիշ է»: Չէինք հասկանում, ինչ կապ ունի ծառը կրոնի հետ: Ծննդյան տոներին մեր տունը նման էր երջանկության ծովի մեջ գտնվող անմարդաբնակ կղզու»³⁸⁹: Թուրքական տոներն էլ գերմանացիների համար են անծանոթ և խորթ. «Մեր տոներն էլ նրանց համար էին տարօրինակ, - գրում է Սոնայը, - Նոր մորթած միս եթե հարևաններին ուղարկեինք, ապա տուն վերադառնալ ուն պես կամ ոստիկանությունն էր մեզ սպասելու կամ կենդանիների պաշտպանության ընկերության պաշտոնյաները: Իսկ ամենավատն այն էր, որ մեր տոներն աշխատանքային օրերի հետ էին համընկնում: Նման դեպքերում քանի որ չէինք ուզում բավարարվել դասից ու աշխատանքից հետո կազմակերպված փոքրիկ տոնով, ստիպված հետաձգում էինք մինչև հանգստյան օրեր, դրանից էլ, իհարկե, հավեսներս փախչում էր»³⁹⁰:

Որքան էլ խորը լինեն տարբերությունները, տարիներ շարունակ գերմանիայում ապրելով, թուրքերն աստիճանաբար սկսում են ընդօրինակել գերմանական կենցաղային մի շարք ավանդույթներ: Թուրքերի սերունդների միջև տեղի ունեցող ձևափոխումը լավագույնս արտացոլում են գրող Էրգին Օզգենի «Վիլլիներ» պատմվածքի հետևյալ տողերը. «...Այս շոգին վերարկու հագած,

³⁸⁷ Նույն տեղում, էջ 97:

³⁸⁸ Sonay A., Burada Yaşamak İstiyorum, s. 9.

³⁸⁹ Նույն տեղում, էջ 11:

³⁹⁰ Նույն տեղում, էջ 13:

գլուխը կապած մի տարեց թուրք մոր կողքին տեսնելով կրծքերն ընդգծող բարակ բլուզ հագած աղջկան՝ մնում ես զարմացած...»³⁹¹:

Սերունդների միջև գերմանական հասարակության ինտեգրման մակարդակի տարբերությունն է արտացոլում նաև գերմաներենի իմացության աստիճանը: Լեզուն որպես կարևորագույն բաղադրիչ դառնում է թուրքական ինքնության ձևափոխման կարևորագույն ցուցիչ և այս համատեքստում լուրջ քննարկման ենթարկվում Գերմանիայի նոր սերնդի թուրք գրողների ստեղծագործություններում: «Մայրենի լեզուն» գրքում, օրինակ, Է. Ս. Օզդամարը ինքնության խնդիրը նեղացնում է մինչև լեզվի խնդիր: Ա. Սոնայի «Ուզում եմ այստեղ ապրել» գրքի հերոսուհին պատմում է. «Գերմանիա եկած առաջին թուրք աշխատողների սերունդը շատ մակերեսորեն, անբավարար կերպով գիտեր գերմաներեն: Օտար երկրում գտնվելու ցավը մեղմելու միակ միջոցը, որ ունեին, մայրենի լեզվին կառչած մնալն էր: Նույնիսկ ամեն օր ուսուցչանոցում գերմանացի կոլլեգաների հետ խոսող հայրս էր դժվարանում: Մայրս շատ քիչ գերմաներեն գիտեր, բառապաշարը հերիքում էր միայն առևտուր անելու և ճանապարհ հարցնելու համար»³⁹²: Ք.Յադայի հերոսի խոսքերով էլ. «[Յայրս - Ն. Պ.] 20 տարուց ավելի այստեղ է ապրում, բայց շտրասսե, շափգել բառերը դեռ շետեռռռասսե, շիփփիիգել է ասում»³⁹³: Շատերի համար տարօրինակ է ծնողների Գերմանիայում ապրելով գերմաներեն չսովորելու փաստը: «Եթե մարդ չի հասկանում մի երկրի լեզուն, այդ երկիրը պատի օրացույցից չի տարբերվում նրա համար, - գրում է Չ. Շենոջաքը, - Մարդուն մնում է կանգնել -նայել քիչ թե շատ գեղեցիկ նկարներին»³⁹⁴: Գերմաներենի չիմացությունը արդարացնելու են գալիս Ք. Յալչընի այս խոսքերը. «Իմ լեզվի սահմանները իմ աշխարհի սահմաններն են: Դրոշները փոխվում են, սահմանները փոխվում են, սակայն մայրենի լեզուն հեշտ չի փոխել: Մեր հողերից կարող ենք պոկվել, բայց լեզվից հրաժարվել և հեշտ չի լինում»³⁹⁵:

³⁹¹ Özgen E., Derin Sularda, İstanbul, 1990, s. 58.

³⁹² Sonay A., Burada Yaşamak İstiyorum, s. 57.

³⁹³ Kara Y., Selam Berlin, s. 64.

³⁹⁴ Şenocak Z., Tehlikeli Akrabalık, s. 96.

³⁹⁵ Yalçın K., Almanya'da Türkçe Anadil Eğitimi, s. 7.

Երեխաները, ի տարբերություն ծնողների, լավ են տիրապետում գերմաներենին, որ իրենց առօրյա շփման լեզուն է: Ավելին, նոր սերնդի շատ ներկայացուցիչների համար թուրքերենը սոսկ մանկության հիշողությունն է: Պապերի լեզուն սովորելու համար լեզվական կուրսերի գնացած 2. Շենոջաքի հերոսը զարմանքով բացահայտում է, որ իր նման ծնողների լեզուն որպես օտար լեզու սովորողների քանակը բավական մեծ է³⁹⁶: 2. Շենոջաքը «Վտանգավոր բարեկամություն» վեպում գրում է. «Ինձ համար թուրքերենը Գերմանիայում, գերմաներեն լեզվով կառուցված տան մի պատուհանն է, պատուհան, որ բացվում է դեպի մանկության տարբեր համերի, հոտերի աշխարհ»³⁹⁷: Այդ վեպի հերոս Սաշան ասում է. «...Երբեք թուրքերեն որպես այդպիսին չեմ կարողացել սովորել: Միայն մի քանի բառ գիտեմ: Միջին գերմանացի զբոսաշրջիկից ոչ ավելի»³⁹⁸: Իսկ Սաշային երևակայական հարցազրույց տվող հեղինակն ինքն իր մասին ասում է. «...ոչ մի բառ թուրքերեն խոսել չեմ կարող և հնդեվրոպական լեզուներից լիովին տարբերվող տրամաբանությամբ այդ խառը լեզուն սովորելու հարցում դժվարանում եմ»³⁹⁹: Ֆ. Չախմոլլուն էլ հավելում է. «Բոլորն ինձ ասում են, քո մայրենի լեզուն թուրքերենն է: Այդ դեպքում գերմաներենն ի՞նչ է: Գերմաներենը խորթ մորս թե՞ փեսայիս լեզուն է»⁴⁰⁰: Բ. Յալչընի «Նորահարս» (Sarı gelin) վեպի հերոսուհիների՝ գերմանաբնակ ադըյամանցի աղջիկների՝ Ռուքենի, Բերֆինի, Դիլանի, Չերինի «շփման լեզուն գերմաներենն էր: Ոչ քրդերեն, ոչ էլ թուրքերեն լավ չգիտեին: Ամենափոքր Չերին գրեթե չէր խոսում [թուրքերեն կամ քրդերեն - Ն. Պ.]»⁴⁰¹: Այս փաստը շատ տրամաբանական բացատրություն ունի. թուրք երեխաները թուրքերեն սովորելու հնարավորություն ունեն միայն հիմնական դասերից հետո անցկացվող լրացուցիչ պարապմունքների ընթացքում, իսկ ծնողներն առանձնապես չեն փորձում թուրքերենի նկատմամբ հետաքրքրություն սերմանել: Լեզվի կորուստը, սակայն,

³⁹⁶ Şenocak Z., Tehlikeli Akrabalık, s. 63.

³⁹⁷ Նույն տեղում, էջ 100:

³⁹⁸ Նույն տեղում, էջ 12:

³⁹⁹ Նույն տեղում, էջ 121:

⁴⁰⁰ Zengin E., Աշված աշխ., էջ 340:

⁴⁰¹ Yalçın K., Sarı Gelin, İstanbul, 2005, s. 33.

միանշանակ չի ընկալվում: Է. Ս. Օզդամարը ցավով գրում է. «Եթե կարողանայի իմանալ, երբ կորցրի մայրենի լեզուն»⁴⁰²: Նրա հերոսուհին նույնիսկ իր արմատներին ավելի մոտենալու համար սկսում է սովորել արաբերեն և օսմաներեն⁴⁰³:

Թրքախոս ընտանիքի և բացառապես գերմանախոս հասարակության համադրումը բարդ է: Ծենոջաքն այսպես է ասում. «Ծատկարդացող, թրքախոս ընտանիք ունեի, նման միջավայրում թուրքերենը պահպանվեց: Մեր տանը գերմաներեն չկար, տան լեզուն թուրքերենն էր: Տնից դուրս գալուն պես թուրքերենն անհետանում էր»: Իսկ գրող Էրթունգ Բարինի խոսքերով. «Միաժամանակ երկու լեզու կրելը հեշտ չէ: Կարծես երկու մարդ մի մարմնով ապրեն: Երբ ես առավոտյան տանից դուրս եմ գալիս և փակում եմ իմ հետևից դուռը, ես գերմանական աշխարհ եմ ընկնում: Այստեղ թուրքերենն ինձ պետք չէ»⁴⁰⁴: Թուրքերենի և գերմաներենի հատման կետում կիրառության մեջ է մտնում նաև նոր խառնուրդ լեզուն՝ թուրքական «քանաքը»: «Յայրենիքի դավաճան Նիյազին» գրքում հանդիպում ենք հետևյալ զավեշտալի իրավիճակի նկարագրությանը: Մի թուրք կին փորձում է մեկ այլ թուրքի բացատրել ինչ-որ հասցե. «Դուք այժմ geradehaus [ուղիղ (*գերմ.*) - Ն. Պ.] գնացեք, ձեր առջև մի մեծ Haptstraze [զլխավոր մայրուղի (*գերմ.*) - Ն. Պ.] կլինի...»⁴⁰⁵: Բեռլինի փողոցների թուրքական խանութների ցուցանակներն էլ են հաճախ այս տարօրինակ լեզվով գրվում, օրինակ «mush ovasi» թուրքական «muş ovası»-ի [Մշո դաշտ – Ն. Պ.] փոխարեն, որ բեռլինցիներն հասկանան⁴⁰⁶: «Քանաք» լեզվի տարրեր են պարունակում նաև շատ գեղարվեստական ստեղծագործություններ: Թուրք միգրանտների ինքնագիտակցությունն էլ զարմանալիորեն նման է «քանաքին».

թուրքական և գերմանական մշակույթների խաչասերումն է, որ նման է երկուսին, բայց միաժամանակ երկուսից էլ տարբերվում է: Ս. Թուրանն այս առիթով ասում է. «Երբ Գերմանիա եկա 17 տարեկան էի և 21 տարի այստեղ եմ ապրում: Երբ հայրենիք եմ գնում, այնտեղ միայն գերմանացի թուրք եմ: Այսինքն օտար եմ: Իսկ այստեղ օտար ու օտար

⁴⁰² Özdamar E. S., Annedili, s. 9.

⁴⁰³ Նույն տեղում, էջ 11:

⁴⁰⁴ Кутызова И., նշված աշխ., էջ 127:

⁴⁰⁵ Cembolat M., Vatan Haini Niyazi, s. 40-41.

⁴⁰⁶ Özdamar E. S., Avludaki Ayna, s. 149.

եմ»⁴⁰⁷: Երկու մշակույթներից մեկին նախընտրություն տալը գրեթե անհնար է, և Ալև Թեքինայի խոսքերով երկրորդ սերնդի միգրանտներն վերածվում են «խեղճ, անտեր» սերնդի⁴⁰⁸: Թուրքերի դրությունն այսպես է նկարագրում գրող Ն. Ջումարթը. «Թեև գրպանումս գերմանական անձնագիր ունեմ, գերմանացի չեմ: Եթե պնդեմ, որ թուրք եմ, ևս բացարձակ սուտ կլինի»⁴⁰⁹:

Ինտեգրացիայի խնդրին վերաբերող ուշագրավ դիտարկումներ է անում 2. Շենոջաքը 2006 թ. դեկտեմբերին ESI-ն տված հարցազրույցում. «Իհարկե, ինտեգրացիայի հետ կապված խնդիրներ կան: Իրականում դրանք բնական են, եթե հաշվի առնենք Գերմանիայի տնտեսական վիճակը, Թուրքիայից եկած մարդկանց սոցիալական ծագումը, եթե հաշվի առնենք, որ այն աշխատանքների մեծ մասը, որոնց համար եկել էին թուրքերն, այլևս չկան»: Յեղիսակը նաև ընդգծել է, որ չի կարելի խոսել ինտեգրացիայի ձախողման մասին, քանի որ ինտեգրմանը միտված լուրջ քաղաքականություն չի ելեղել⁴¹⁰:

Իսկապես, ինտեգրացիան երկկողմ գործընթաց է: Թուրքերի դիրքորոշումից ու մոտեցումներից ոչ պակաս կարևոր են նաև գերմանացիների՝ որպես ընդունող հասարակության տրամադրվածությունն ու փոփոխությունների պատրաստակամությունը: Թուրքերը վստահ են, որ գերմանացիները չեն ուզում իրենց որպես հասարակության լիիրավ անդամ դիտարկել: Ավելին, գրական ստեղծագործությունների էջերից հաճախ տեսնում ենք գերմանացիների վերաբերմունքի նկատմամբ անթաքույց բողոք և դժգոհություն: 2. Շենոջաքի «Աշխարհի երկու ծայրը» վեպի Գերմանիայից Թուրքիա տեղափոխված հերոս Ֆաթիհն ասում է. «Ֆաթիհ անունով մեկը Գերմանիայում անելիք չունի»⁴¹¹: Այս խնդիրը գրող 2. Շենոջաքին բավական շատ է հետաքրքրում: Լինելով երկրորդ սերնդի միգրանտ, նա թերևս մշտապես առերեսվել է երկու մշակույթի մեջ տեղում ոչ մի մշակույթին չպատկանելու

⁴⁰⁷ Turan S., Şok: Bir Hostesin Anıları, s.10.

⁴⁰⁸ Göbenli M., Göç ve edebiyat, Multitudes/Altyazı, Paris, 2003, N 3-4, s. 5.

⁴⁰⁹ Kocadoru Y., Աշված աշխ., էջ 71:

⁴¹⁰ Zafer Şenocak's, Interview with ESI, 7 December 2006, http://www.esiweb.org/index.php?lang=en&id=322&debate_ID=1&slide_ID=16.

⁴¹¹ Şenocak Z., Dünyanın İki Ucu, s. 113.

խնդրին: Պատահական չէ, որ գրքի գլուխներից մեկում կերպարը հանդես է գալիս որպես լրագրող, ով հարցազրույցներ է անում թուրքական համայնքի ներկայացուցիչների հետ և դրանց հիման վրա հոդվածներ պատրաստում: Այդ կերպարը հարցազրույց է վերցնում նաև հեղինակից՝ Չենոջաքից, ով պատմում է իր կյանքի, իր փորձառության մասին: «Գրող եմ, - ասում է նա, - ոմանց կարծիքով թուրք գրող: Այս թուրք գրողը, սակայն, գերմաներեն է գրում: Այժմ գերմանական անձնագիր ունի, սակայն միևնույն ժամանակ արտասանությամբ դեռևս շատ դժվար համարվող այնպիսի մի ազգանուն ունի, որ ամեն անգամ ստիպված է տառ առ տառ կոդավորել այն. Շ - Շամուել, Է - Էմիլ, Ն - Նյուրնբերգ, Օ - Օտտո, Ջ - Ջեսար /Կեսար/, Ա - Արկտիկա, Ք - Քարլ: Այսպիսով, մի Էկզոտիկ անունից յոթ ծանոթ անուն է ծնվում»⁴¹²: «Մարդիկ չքան Գերմանիայում իրեն տանը զգա, ինչքան գերմանացիների հետ մտերմանա, գերմանացիների աչքում այդքան օտար կմնա»⁴¹³, - հավելում է Չ. Շենոջաքը: Ավելին, թուրքերը գերմանական հասարակությունն ընդգրկվելու հույս էլ չունեն. «Իսկապես հավատում ես, որ հետագայում նորմալ գործես ունենալու, - ասում է «Սելամ Բեռլին» վեպի գլխավոր հերոսի մայրը, - որպես միգրանտաբնու վարորդ կամ ամենաշատը մատուցող ես լինելու»⁴¹⁴: Նման հոռետեսական տրամադրվածությունը կապված է ոչ այնքան չինտեգրվելու, սեփական նկարագիրը ինչ գնով ու գումար էլ ինի պահելու թուրքերի ձգտումով, որն անշուշտ պետք չէ անտեսել, այլ գերմանացիների շարունակական բացասական մոտեցումներով: Գերմանացիների վերաբերմունքի յուրօրինակ մեկնաբանություն է գրող Մեհմեթ Քըլըչի 1994 թ. տպագրված «Ձեզ զգացեք, ինչպես տանը» վեպը: Վեպի հերոսին՝ Քեմալին, դիմավորելով նրա գերմանացի ընկեր Գյունթերն ասում է. «Ձաքեզ ինչպես տանը»: Այս արտահայտությունը, որ մի կողմից բարյացկամության նշան կարող է համարվել, միանգամից ինչ-որ սահմանների մեջ է դնում հյուրին, ստիպում հիշել, որ նա տանը չէ: Մ. Քըլըչի կարծիքով թուրքերը Գերմանիայում նմանատիպ

⁴¹² Նույն տեղում, էջ 95:

⁴¹³ Şenocak Z., Tehlikeli Akrabalık, s. 98.

⁴¹⁴ Kara Y., Selam Berlin, s. 14.

դրույթի մեջ են⁴¹⁵: 2. Շենոջաքի հերոս Սաշան Բեռլինի մուսուլմանական մզկիթների մասին հոդված է գրում և վերնագրում «Ուրբաթ օրերը՝ նամազ, կիրակի՝ սեղանի թենիս»՝ նկատի ունենալով, որ գուտկրոնական հարցերից բացի մզկիթները նաև կազմակերպում են թուրքերի հանգիստը, դրանց անդամները միասին սեղանի թենիս ու ֆուտբոլ են խաղում: Թերթի խմբագրությունը հոդվածը վերանվանում է «Մուսուլմանները մեր թաղամասերում սպառնալիք են ստեղծում»⁴¹⁶: Ա. Սոնայի հերոսուհին պատմում է. «Փչացած ժամացույցս տարա ժամագործի մոտ: Նա ասաց. «Ես օտարերկացիների ժամացույցները չեմ սարքում»⁴¹⁷: Ս. Թուրանի «Շոկ» վեպի հերոսներին կանգնեցնում է ակումբի անվտանգության աշխատակիցը հետևյալ խոսքերով. «Կարդալ-գրել չգիտե՞ք: Նայեք այս ցուցանակին. «Թուրքերի և շների մուտքն արգելվում է»⁴¹⁸: Երբ Գ. Դալի «Փիտրած կապիկ» վեպում ծեր լրագրավաճառուհին ուզում է օգնել գլխավոր հերոս պարոն Քուլլին և խնդրում գերմանացի հաճախորդին սպասել, վերջինս արհամարհական տոնով ասում է. «Մի «քանաքերի» պատճառով չես կորցնել ու գերմանացի հաճախորդին, տիկին Քյորբել»⁴¹⁹: Այս դեպքից հետո պարոն Քուլլը ցավով շեշտում է, որ նախկինում գերմանացիները թուրքերի հանդեպ շատ ավելի բարեհամբույր էին⁴²⁰: Բացահայտ ատելություններից ավելի վատ է թվում Ա. Սոնայի հերոսներին որոշ գերմանացիների քաղաքավարության տակ թաքնված ռասիզմը. «Օօօ, ձեզնից սխտորի հոտ չի գալիս»⁴²¹, կամ «ինչպե՞ս թե, ձեր հայրն ուսուցիչ է»⁴²²:

1990-ականների կեսերին գերմանական ազգայնամուլական խմբավորումները թուրքերի իսկական որս սկսեցին: «Սքինհեդների» հարձակումները, դրա պատճառներն ու հետևանքները իրենց արտացոլումը գտան գրականության մեջ: Ս. Թուրանը «Շոկ» վեպում, անդրադառնալով հարձակումներին, գրում է. «Թուրքերի բիզնեսները սնկի պես ավելանում են... Այս պատճառով

⁴¹⁵ Zengin E., նշված աշխ., էջ 111:

⁴¹⁶ Şenocak Z., Tehlikeli Akrabalık, s. 103.

⁴¹⁷ Sonay A., Burada Yaşamak İstiyorum, s. 60.

⁴¹⁸ Turan S., Şok: Bir Hostesin Anıları, s. 64.

⁴¹⁹ Dal G., Kilları Yolunmuş Maymun, s. 152.

⁴²⁰ Նույն տեղում, էջ 28:

⁴²¹ Sonay A., Burada Yaşamak İstiyorum, s. 73.

⁴²² Նույն տեղում, էջ 77:

հարձակումներն էլ են վերջին ժամանակներս շատացել ... Իսկ գերմանական իշխանությունները աչք են փակում սափրագլուխների, նեոնացիստների վրա»⁴²³: Գերմանական անհանդուրժողականության հետաքրքիր վերլուծությունն ենք տեսնում Ֆ. Չախմոզլուի «Գերմանիայում մշակութային պատերազմը ամեն ինչ վերացնելու է» հոդվածում: Ֆ. Չախմոզլուն շեշտում է, որ գերմանացի «պահպանողականները» աշխատում են օտարեկրացիներին իրենց նմանեցնել և թույլ չեն տալիս, որ միգրանտերիան գերմանացուց ավելի հաջողությունների հասնի, իսկ պետք եղած դեպքում իսլամն ու թուրքերին դարձնում են «քավության նոխազ»⁴²⁴: Միջանկյալ շեշտենք, որ թուրքերի դժգոհությունը Գերմանիայում իրենց նկատմամբ վերաբերմունքից միանգամայն հասկանալի է: Բայց ուշագրավ է, որ սեփական մշակույթի, ավանդույթների հանդեպ հարգանք և ըմբռնում պահանջող թուրքերն իրենց երկրում բնակվող այլ ազգիների կրոնական, ազգային իրավունքների մասին կարծես չեն հիշում: Մինչդեռ թուրքաբնակ ոչ մուսուլմանները, ովքեր, հատուկ ընդգծենք, որ միգրանտներ չեն, այլ տեղաբնիկներ, մշտապես ենթարկվել և ենթարկվում են այնպիսի խտրական մոտեցման, ինչպիսին Գերմանիայում նույնիսկ պատկերացնել չի լինի: Մի կողմ թողնելով Օսմանյան պատմությունը՝ փաստենք, որ հանրապետության գոյության տարիներին հայերը, հույները, հրեաները ենթարկվել են թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ մշակութային, թե՛ նույնիսկ ֆիզիկական ճնշումների, որոնց պատճառով շատերը հեռացել են Թուրքիայից:

Վերադառնալով մեր թեմային՝ նշենք, որ գերմանացիներն իրենք էլ չեն կարողանում գտնել թուրքերի տեղն իրենց արժեհամակարգում, թեև հստակ գիտակցում են, որ այլևս չեն կարող նրանց վերաբերվել որպես լոկալ աշխատուժի: Հատկապես եթե հաշվի առնենք, որ «գերմանական փողոցները վաղուց դյուներ են բուրում: Մխտորը Բեռլինում գրեթե գլխավոր դերում է»⁴²⁵: Խանութների պատասխաններին գրված է. «Մեզ մոտիսլամի կանոններով մորթված միս է

⁴²³ Turan S., Şok: Bir Hostesin Anıları, s. 75.

⁴²⁴ Onur B., Alman Kültüründe Türk İmgesi - 2, Ankara, 1993, s. 11.

⁴²⁵ Özdamar E. S., Avludaki Ayna, s. 147.

վաճառվում»⁴²⁶: Թուրքական այդքան մեծ ներկայացվածությանը հակառակ գերմանացիները քիչ բան գիտեն նրանց մասին: Գերմանական դպրոցներում թուրքերի և թուրքիայի մասին ոչինչ չի դասավանդվում: Աշակերտները նույնիսկ խառնում են թուրքերին և արաբներին: Երբ մաթեմատիկայի ուսուցիչը հանրահաշվի մասին պատմելիս ասում է, որ հանրահաշիվը արաբներն են հայտնագործել, բոլոր երեխաները պտտվում են ք. Յալչընի «Ապրելու ուժ» փաստագրական վեպի հերոս Օնուրի կողմ և ասում. «Այսինքն ձեր պատճառով է այս ամենը: Դուք եթե հանրահաշիվը չհնարեիք, այս դժվարությունները ստիպված չէինք լինի կրել: Մեղավորը դուք եք»⁴²⁷:

Թուրքերի նկատմամբ վերաբերմունքի համատեքստում կարևոր ենք համարում անդրադառնալ թուրքերի և հրեաների որպես Գերմանիայի ներկայիս և նախկին ամենամեծաթիվ փոքրամասնական համայնքների համեմատությանը, որն իր արտացոլումն է գտնում գրականության մեջ: Նշենք, որ դեռևս 1970-ականներից Գերմանիայի ձախակողմյան ուժերը գերմանական ֆաբրիկաներում աշխատող թուրքերին համեմատում էին համակենտրոնացման ճամբարներում զոհված հրեաների հետ⁴²⁸: Ս. Թուրանը «Շոկ» վեպում գրում է. «Այժմ էլ մենք ենք մեծամասնությունը: Ճիշտ և ճիշտինչ պես մի ժամանակ հրեաները: Սրանք [գերմանացիները - Ն.Պ.] մեծամասնությանը ոչնչացնելու փորձ ունեցող ժողովուրդ են... Պարզ չէ՞, որ կամաց-կամաց ուզում են վերադառնալ այն ժամանակին»⁴²⁹: Նույն վեպի հերոսուհուն գերմանացի կոլեգաները հարց են տալիս. «Ո՞րն է հրեայի և թուրքի տարբերությունը»: Նա պատասխանում է. «Կրոնը... նրանք հուդայական են, մենք մուսուլման»: Բոլորը ծիծաղում են և ասում. «Չրեայի և թուրքի տարբերությունն այն է, որ հրեաներից ազատվել ենք, հիմա էլ հերթը թուրքերինն է»⁴³⁰:

Չրեական խնդրի հետ կապված հետաքրքիր անդրադարձներ կան 2. Շենոջաքի «Վտանգավոր բարեկամություն» վեպում: Գերմանիայում

⁴²⁶ Նույն տեղում:

⁴²⁷ Yalçın K., Yaşama Gücü, İstanbul, 2013, s. 71.

⁴²⁸ Adelson L. A., The Turkish Turn in Contemporary German Literature: Toward a New Critical Grammar of Migration, New York, 2005, p. 85.

⁴²⁹ Turan S., Şok: Bir Hostesin Anıları, s. 61.

⁴³⁰ Նույն տեղում, էջ 80-81:

և ընդհանրապես աշխարհում հրեաների ունեցած ազդեցության, Յուդոքոստի և հետիոլոքոստային Գերմանիայի մասին մտորումներն կարևորագույն դեր ունեն նրա համար: Գերմանիայում Յուդոքոստի հարցում տարածված համընդհանուր մեղքի զգացման ալիքի վրա գրքում հրեաների մասին խոսվում է ակնածանքով, մինչդեռ քրիստոնյաները ներկայացվում են որպես սադրիչներ ու դավաճաններ: Ընդ որում, այս իդեալականացված վերաբերմունքին արժանանում են, առաջին հերթին, Թուրքիայում բնակվող հրեաները. «Դարեր շարունակ հրեաները Օսմանյան կայսրության հլուհնազանդ հպատակներն են եղել՝ միշտ պարտական ու միշտ հավատարիմ: Մինչդեռ քրիստոնյաները ոչ միայն դարերով հալածել են հրեաներին, հսպանիայից Օսմանյան կայսրությունն գալուց հետո նրանց դիտարկել որպես թշամիներ, այլև կազմակերպել Յուդոքոստ և այսօր էլ շարունակում են անտիսեմիտիզմի գաղափարներ քարոզել ոչ միայն Գերմանիայում, այլև ամբողջ աշխարհում»⁴³¹: 2. Շենոջաքի համար հրեական և թուրքական ճակատագրերի միասնականության ու բարեկամության լրջագույն ապացույց է այն փաստը, որ ինչպես XVI դարում հազարավոր հրեաներ տեղափոխվեցին Թուրքիա, այնպես էլ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին բազմաթիվ հրեաներ նացիստական հետապնդումներից զերծ մնալու համար տեղափոխվում են Ստամբուլ: Պատերազմի նախօրեին և դրա տարիներին, հեղինակի վկայությամբ, «գերմանական հրեաների համայնքը Թուրքիայում գնալով ավելանում էր: Շվեյցարիայում գործող կազմակերպությունը հրեա գիտնականներին՝ իրավաբաններին, տնտեսագետներին, բանասերներին ուղարկում էր թուրքական համալսարաններ»⁴³²: Այն փաստը, որ Թուրքիան Գերմանիայի «չպատերազմող դաշնակիցն» էր, գրքում անտեսվում է: Բայց կրկին առաջ է քաշվում քրիստոնյաների ու հրեաների հակադրումը: Մասնավորապես, գրքում շեշտվում է, որ երկրորդ համաշխարհային տարիներին Ստամբուլի Թոքաթլյան հայկական հյուրանոցը⁴³³

⁴³¹ Şenocak Z., Tehlikeli Akrabalık, s. 68.

⁴³² Նույն տեղում, էջ 52:

⁴³³ Թոքաթլյան հյուրանոցն, իսկապես, հայտնի է եղել Ստամբուլում: Սակայն, նրա տերն էլ է դարձել Ունեցվածքի հարկի զոհ: Երբ հայ գործարար Թոքաթլյանը

նացիստների հավաքատեղի էր, ուր հրեաների մուտքն արտոնված չէր: Նշենք, որ հակառակ հեղինակի պնդումներին հրեաները թե՛ Օսմանյան Կայսրությունում, թե՛ Թուրքիայի Հանրապետությունում թիվս այլ ոչ մուսուլմանների ենթարկվել են բռնաճնշումների և հալածանքների: Բավական է հիշատակել Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին Ունեցվածքի հարկի կիրառումը: Հրեաները, ինչպես և հայերն ու հույները ստիպված էին իրենց ունեցվածքը տասնյակ անգամ գերազանցող հարկ վճարել պետությանը: Ունեցվածքի հարկի միջոցով թուրքական իշխանությունները հիմնովին հարստահարեցին իրենց երկրում բնակվող ոչ մուսուլմաններին⁴³⁴: Թուրք-հրեական բարեկամության մասին պնդումներին հակասում է նաև նույն տարիներին տեղի ունեցած «Ստրումա» նավի պատմությունը: Եվրոպայում տարածվող հակահրեական նացիստական մթնոլորտից զգուշանալով՝ 1941 թ. դեկտեմբերի 12-ին 790 հրեա Ռումինիայից բուլղարական «Ստրումա» նավով ուղևորվում են դեպի Պաղեստին: Դեկտեմբերի 15-ին նավի շարժիչը փչանում է Թուրքիայի ջրային տարածքում՝ Բոսֆորի նեղուցում: Թուրքական իշխանությունները, ձգտելով իրենց հավատարմությունը ցույց տալ Գերմանիային, մերժում են նավից եկող օգնության խնդրանքը: Մոտ 9 շաբաթ ջրում կանգնած մնալ ուց հետո 1942 թ. փետրվարի 24-ին նավը խորտակվում է: Ըստ որոշ տվյալների, այն պայթեցվել է թուրքական սուզանավի կողմից: Փրկվել կարողանում են միայն երկու ուղևոր: Հետագայում այս պատմությունն իր գեղարվեստական արտացոլումն է գտել թուրք գրող, հրապարակախոս, դիվանագետ Չուլլաֆուլ Լիվանելիի «Սերենադ»⁴³⁵ վեպի սյուժեում: Փաստորեն, թուրք-

բոլորի համար անսպասելի կերպով կարողացավ կանխիկ հավաքել իր համար սահմանված բավական խոշոր 1 մլն լիրա հարկի գումարը և տարավ այն Ստամբուլի հարկային վարչություն, թուրք պաշտոնյաները հանկարծակի հայտարարեցին, որ նրա հարկը ոչ թե 1 մլն, այլ 10 մլն թուրքական լիրա է և սխալ մամբ մեկ գրոչի գրվել: Լսելով այս՝ Թաթաթլյանը սրտի կաթված ստացավ: Այս մասին մանրամասն տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության (1920-ականներից մինչև մերօրերը), Երևան, 2010, էջ 19:

⁴³⁴ Այս մասին մանրամասն տե՛ս Մելքոնյան Ռ., «Ունեցվածքի Հարկը» (Varlık Vergisi) կամ տնտեսության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում, Թուրքագիտական և Օսմանագիտական հետազոտություններ, N 5, Երևան, 2008, էջ 127-143:

⁴³⁵ Livaneli Z., Serenad, İstanbul, 2011.

հրեական բարեկամությանը սոսկ մի՛Ք է, որը թուրքերը փորձում են օգտագործել պետք եղած դեպքերում:

Հատկանշական է, որ գերմանացիների համար հրեա-թուրք համեմատության պարագայում նախընտրելի են հրեաները: Յեղիևակյայ սիրողությանը ներկայացնում է օգտագործելով մի այրի կնոջ հետևյալ խոսքերը. «Հիմիկվաթուրքերն այն ժամանակվա հրեաներից շատ ավելի վասն են: Հրեաներն գոնե գերմանացի էին ձևանում, գերմանացիների պես էին իրենց պահում... Հրեաների ու գերմանացիների միջև ասելու թյանը միախառնված սերկար, սակայն թուրքերի ու գերմանացիների միջև ասելու թյունից բացի ուրիշ բան չկա»⁴³⁶: Գրքի մեկ այլ դիպվածային հերոս՝ Հայնրիխը, ում հետ Սաշան ծանոթանում է համալսարանի գրադարանում 1930-ականների թուրք-գերմանական հարաբերություններն ուսումնասիրելիս, ասում է. «Գերմանացիները պատմությանից ոչինչ չեն սովորել: Հիմա էլ թուրքերին վերցրին-բերին: Մինչդեռ նույնիսկ հրեաների հետ փոխզիջման չեն եկել»⁴³⁷: Գրքում մեջբերված են նաև գերմանացի լրագրող Կառլ Շումանի հետևյալ դիպուկ խոսքերը. «Թուրքերի մեծաթվությունը նվազեցնում է եվրոպական ազգերի պաշտպանվելու ուժը: Աթաթուրքի բարեփոխումները միայն թուրքերի հագուստներն եվրոպական դարձրին, սակայն դիմակները չեն կարող թաքցնել նրանց ասիական, արևելյան բնույթը: Թուրքերը կայսերական ազգ են: Իշխող ազգ: Միշտ ուզում են իշխանությունն իրենց ձեռքը վերցնել: Հրեաների գոհի շափկը նրանց չի սազում: Հրեաներից տարբերվում են, իշխանությունն են ուզում: Արվեստով ու գիտությամբ չեն բավարարվելու: Դրանք թուրքերի ուժեղ կողմերը չեն: Բանակ և քաղաքականությունն են ուզում մտնել, քանի որ կարողանում են լավելույթ ունենալ ու պատերազմ վարել»⁴³⁸:

Փաստորեն, Գերմանիայի համար ավանդական հրեաներ-գերմանացիներ հակամարտության մեջ 1960-ականներից որպես երրորդ կողմ ընդգրկվում են նաև թուրքերը: Ըստ Չ. Շենոջաքի, մեր օրերում «ո՞վ է իսկական գերմանացի» հարցի պատասխանը, այսինքն սեփական ինքնության փնտրտուքը, պետք է դիտարկել թուրքեր,

⁴³⁶ Şenocak Z., Tehlikeli akrabalık, s. 62.

⁴³⁷ Նույն տեղում, էջ 77:

⁴³⁸ Նույն տեղում, էջ 81:

գերմանացիներ, հրեաներ եռանկյան համատեքստում: 2. Շենոջաքը գերմանաբնակ թուրքերի մեծ մասին այնքան հուզող սեփական «ես»-ի հարցը ձևակերպում է վերաշարադրելով հայ տնի հեքիաթի բառերը. «Յայելի, հայելի ինձ ասա, ո՞վ է այս Գերմանիայում ամենագերմանացի»⁴³⁹:

Այսպիսով, 1990-ականներին Գերմանիայի թուրք գրականությանը թևակոխեց զարգացման նոր փուլ: Ասպարեզ մտան նոր, երիտասարդ անուններ, ովքեր բերեցին նոր հարցադրումներ: Թուրքիան և նրան վերաբերող խնդիրներին անդրադարձները իրենց տեղը զիջեցին գերմանական իրականության պատկերմանը: Սոցիալական թեմատիկայի կողքին թուրք գրողները սկսեցին ուսումնասիրել նաև ինտեգրացիայի, մշակույթների բախման հարցերը՝ փորձելով ոչ միայն ներկայացնել դրանց կենցաղային մակարդակը, ինչպես անում էին նախորդ շրջանի հեղինակները, այլ և տալ հնարավորինս խոր, բազմակողմանի վերլուծություններ:

3.2 ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԻՆԴՐԻ ԱՐՃԱՐՃՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐԹԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

⁴³⁹ Նույն տեղում, էջ 85:

Ըստ Գերմանիայի դաշնային վիճակագրական վարչության տվյալների միջին վիճակագրական թուրքը Գերմանիայում բնակվում է 24 տարի: Ինքնուրույն ձևավորման համար սաբադական լուրջ ժամանակ է: Ստացվում է, որ հատկապես երիտասարդ թուրքերն իրենց սոցիալական կայացման փուլն ամբողջությամբ անց են կացրել գերմանական մշակութային դաշտում: Այս փաստին հակառակ թուրքերի մեծ մասը ոչ գերմանական, ոչ էլ թուրքական միջավայրում ամբողջապես ադապտացված չէ: Որևէ խմբին չպատկանելու գիտակցումը հանգեցնում է սեփական «ես»-ի մշտական փնտրտուքի:

Ինքնուրույն ձևափոխման, պահպանման խնդիրները կենտրոնական տեղ են զբաղեցնում թուրք գրողների ստեղծագործություններում: Ինքնուրույն փնտրտուքում թուրք գրողները անդրադառնում են անցյալին, գովաբանում Օսմանյան պետությանը: Ազգայնականության յուրօրինակ արտահայտություն կարելի է համարել Է. Ս. Օզդամարի հետևյալ տողերը. «Կարծում եմ, բուլղարները շատ ուրախ են ԵՄ մտնելու համար: «Ինչ էլ է, - մտածեցի,- ինչ հաճելի է, որ բուլղարներն այլևս չեն նեղանում դարավոր օսմանյան տիրապետության համար»: Այժմ բուլղարները ԵՄ-ում են, իսկ թուրքերը դեռ խնդրում են մուտքի մոտ: Դա պետք է որ նրանց համար փոքրիկ մխիթարանք լինի: Նույն պատճառով տարիներ առաջ ուրախացել էի նաև ԵՄ մտած Զոլեսաստանի համար»⁴⁴⁰: Թուրք գրողները փորձում են նաև քննադատել արևմտյան արժեքները: Ֆ. Չափմոզլուի գերմանացի գրող Գյուլնթեր Շենքելի հետ համատեղ տպագրած «Սև կույսեր» թատերական մոնոլոգների շարքում մուսուլման կանայք, խոսելով իրենց սեքսուալ փորձառության մասին, նշում են, որ երիտասարդների համար գլխաշորը դառնում է խոչընդոտ: Այս ստեղծագործության մեջ Ֆ. Չափմոզլուն փորձում է ցույց տալ, որ մուսուլմանները բացարձակապես հեռու չեն կյանքի հաճույքներից, իսկ արևմտյան հասարակություններն ավելի շատ կոմպլեքսներ ունեն: Ազգայնական գաղափարներով տարված թուրք գրողները գերմանական հասարակությունը մի օր հեղափոխելու ցանկություններ են

⁴⁴⁰ Özdamar E. S., Avludaki Ayna, s. 111.

փայ փայ ու մ: 2. Շենոջաքի հերոսներից անշարժ գույքի գործակալ Ալիս ասում է. «Յիվանդներ: Գերմանացիները հիվանդ են: Ամենալավ երկրներից մեկում եք ապրում... ամենահարուստներից եք... Ո՞ր տեղից է այդ անհանգստությունը... Ձեզ լավ նայեք, որովհետև մենք գալիս ենք... Մենք Գերմանիայի նոր հայրենասերներն ենք... Մենք հեռու երկրում ծնվածներս այս երկրում 30 տարի բանվորություն ենք անում... Մի վախեցեք, ձեզ չենք խեղդի, քանի որ հարամ մսին ձեռք չենք տալիս... Մենք վաղվա գերմանացիներն ենք... Նամուս, բարոյականություն և ամոթի զգացումը մեզնից կարող եք սովորել»⁴⁴¹: Թուրքական ազգային դիմագիծը Գերմանիայում տարածելու գաղափարներ առաջ քաշող գրողների կողքին կան նաև մարդիկ, ովքեր հարում են տրամագծորեն հակառակ ուղղվածությանը, փորձում ժխտել թուրքական ամեն ինչ: Գրող Ալև Թեքինայի «Ալի Շտերն» պատմվածքի հերոսն՝ Ալի Յըլդըզը, օրինակ, ամեն կերպ փորձում է հեռանալ իր թուրքական ինքնությունից, լիովին տարալուծվել, միախառնվել գերմանական հասարակությանը: Ծանոթ թուրքերի հետ նա բացառապես գերմաներեն է խոսում և համաձայն է տանել օտարերկրացիների նկատմամբ արհամարհական վերաբերմունքը: Արդյունքում նա «դառնում է օտար օտարների մեջ, մշակութային անդամալույծ: Անունն է փոխում, Յըլդըզ [աստղ (թուրք.) – Ն. Պ.] բառը փոխարինելով գերմաներեն «շտերն» համարժեքով»⁴⁴²: Սեփական արմատներից վերջնական հրաժարում առաջարկող գրողներից ոմանք էլ հերոսներին տեղափոխում են Թուրքիայից և Գերմանիայից տարբերվող մշակութային ու քաղաքակրթական նոր դաշտ՝ երրորդ երկիր և փորձում այնտեղ կառուցել նրանց ապագան: Թուրք գրողների մի մասն էլ պարզապես անտեսում է միգրանտական անցյալը՝ լիովին հանելով միգրանտական թեմատիկան ստեղծագործություններից: Օրինակ, Աքիֆ Փիրինչչու դետեկտիվ վեպերի հերոս է դառնում Ֆրենսիս անունով կատուն⁴⁴³:

⁴⁴¹ Şenocak Z., Tehlikeli Akrabalık, s. 92.

⁴⁴² Кудашова Ю., К проблеме адаптации турецких мигрантов в Германии (Литературоведческий аспект), Современные проблемы науки и образования, 2009, № 3, стр. 126, http://www.science-education.ru/download/2009/03/2009_03_099.pdf.

⁴⁴³ Ekiz T., Աշված աշխ., էջ 45:

Գերմանաբնակ թուրքերի «խառը ինքնություն» հարցը լայնորեն լուսաբանվում է թուրք գրող Ֆ. Չախմոզլունի ստեղծագործություններում: Իր գործերից ամեն մեկում նա ներկայացնում է ինքնության խնդրի մի կոնկրետ կողմ, թուրք-գերմանական մշակութային հակասությունների հաղթահարման, համադրման մի տարբերակ: «Քանաք շփաք» գրքի հերոսները սոցիալական սանդուղքի ամենացածր մակարդակում կանգնած «քանաքեր» թուրքերն են՝ գողեր, կավատներ, տղամարդ-մարմնավաճառներ, թմրամուլներ, հոգեբուժարանի հիվանդներ, տրանսեքսուալներ, աղբ հավաքողներ, մի քանի գործազուրկ և այլն⁴⁴⁴: Նրանց հետ իրականացված հարցազրույցների հիման վրա տպագրված գիրքը, ըստ Թ. Չիզմանի, իսկական «գետտոյական խոսակցություն» է, ընդ որում շատ օրիգինալ «քանաք» գերմաներենով լի հիփ-հոփ ռիթմերով, բանահյուսական տարրերով⁴⁴⁵: Ինքը Ֆ. Չախմոզլունն ասում է. «Դա սկզբի պատմությունն էր: Ես անդրադառնում եմ մանկությանս միջավայրին... Մեզ Գերմանիայի նեգրեր էին ասում: Գերմանացիները միշտ այս միգրացիային որպես տեխնիկական գործի էին վերաբերվում և ծուղակն ընկան: Մի ուսուցիչ մի անգամ «արվեստագետ եմ ուզում դառնալ» նախադասության պատասխանեց. «Օդում ես սավառնում, մարդու պես մեխանիկ դարձիր, դա թուրքի համար հերիք է»⁴⁴⁶:

«Սիրո նշաններ, ալ կարմիր» նամակագրական վեպում Ֆ. Չախմոզլունն ցույց է տալիս արդեն սոցիալական հարթության երկու ծայրերում գտնվող թուրքերի խնդիրները: Նրա հերոսներից Չաքանը գանգստերական խմբավորման անդամ է, տիպիկ «քանաքեր», իսկ Սերդարը՝ գերմանական մշակույթին և ապրելակերպին հնարավորինս ինտեգրված կերպար: Երկու հերոսների հակադրությամբ Ֆ. Չախմոզլունն ցույց է տալիս Գերմանիայի թուրքերի տասարդության երկվության խնդիրը: Սրա հետ մեկտեղ տարբերություններին հակառակ նրանց ամուր ընկերությունը թուրքական միասնության յուրօրինակ խորհրդանիշ է, գերմանական

⁴⁴⁴ Adelson L. A., նշված աշխ., էջ 95:

⁴⁴⁵ Նոյն տեղում, էջ 97:

⁴⁴⁶ Mortan K., նշված աշխ., էջ 262-264:

հակազդեցության պայմաններում նրանք միշտ պատրաստ են միավորված հանդես գալ: Երկու ծայրահեղությունները ցույց տալով, \$ Չախմուղլունն ոչ մեկին բացահայտ նախընտրություն չի տալիս: Նա ցանկանում է ցույց տալ, որ ունի վերսալ լուծում գոյություն չունի, որ կարևորը մարդիկ են, ոչ թե խմբակային մոտեցումը: Զերոսներն իրենց անատոլիացի են անվանում, Գերմանիան՝ Ալմանյա՝ կարծես պահպանելով կապը Թուրքիայի հետ: Զեդինակը փորձում է ցույց տալ, որ այս մարդիկ ունիկալ միջմշակութային ինքնություն ունեն, որ վեր է թե թուրքական, թե գերմանական կարծրատիպերից: «Գերմանական խելագարություն» վեպում գերմանաբնակ թուրք արվեստագետի պատմության համատեքստում \$ Չախմուղլունն ներկայացնում է գերմանական մշակույթը, որ իրականում հեռու է կատարյալ լինելուց, սակայն գերմանացիները փորձում են այն պարտադրել բոլոր փոքրամասնություններին: Որպես օտարերկրացի, միգրանտ գերմանական մշակույթի քննադատումը իրական մարտահրավեր էր: Զատկապետ, որ \$ Չախմուղլունն ներկայացնում է իր կարծիքը առանց հարցնելու կամ քննարկելու որպես բացարձակ ճշմարտություն: Կիրառելով էքսպրեսիոնիզմի և նատուրալիզմի տարրեր, նա ստեղծում է վառ կերպարներ ու նկարագրություններ, գռոտեսկի հասնող դրվագներ: Ըստ հայ տնի գրականագետ Լ. Ա. Անդելսոնի՝ այս կերպ \$ Չախմուղլունն հարթում է ճանապարհ դեպի նոր ռեալիզմ: Ցույց տալով, որ թե մարգինալները, թե հասարակության ամենաբարձր մակարդակում ապրող մարդիկ նույն բնագիծերով ու ցանկություններով են առաջնորդվում, նույն մտքերն ու պահվածքն են ցուցաբերում՝ հեղինակը փորձում է ապացուցել, որ մարդիկ հավասար են անկախ սոցիալական կարգավիճակից, կրթությունից, ազգությունից: «Գերմանական խելագարություն» գրքում \$ Չախմուղլունն հատուկ ընդգծում է, որ բոլոր հասարակությունների ու սոցիալական շերտերի ներկայացուցիչների համար սեքսուալ ցանկություններն ու հաճույքներն են պահվածք ձևավորում: \$ Չախմուղլունն մերժում է գերմանաթուրքական գրականության բազմաթիվ ավանդական մոտեցումներ: Նա դեմ է դուրս գալիս միջմշակութային

հասարակությանը հասկացությունը: Ֆ. Չախմուզյանը գտնում է, որ այդ բոլոր խնդիրների ու ռճացումը միտված է իրական խնդիրներից, սոցիալական ու քաղաքական անարդարություններից ու շահարկություն շեղելուն: Ուշագրավ է, որ Ֆ. Չախմուզյանի վերջին ստեղծագործությունները, մասնավորապես, նրա մոր կյանքը ներկայացնող «Լեյլա» վեպը և 2015 թ. Գերմանիայում լավագույնը ճանաչված «Յոթ աշտարակ» գիրքը ներկայացնում են թուրքական իրականությունը: Փաստորեն, Ֆ. Չախմուզյան փորձում է վերադառնալ արմատներին, վերափաստավորել դրանք:

Այսպիսով, 1990-ականների կեսերից մինչև մեր օրերը ինքնության խնդիրը ամենատարբեր արտահայտումներով առանցքային դեր ունի Գերմանիայի թուրք գրողների ստեղծագործություններում: Հարցի նկատմամբ տարբեր հեղինակներ ունեն յուրօրինակ և հաճախ իրարամերժ մոտեցումներ և ընկալումներ: Գոյություն ունեցող կարծիքների պալիտրան վկայում է խնդրի բարդության, բազմաշերտության և հետաքրքրության մասին:

3.3 ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԵԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ինքնուրույն փնտրտուքների խաչմերուկներում, որքան էլ զարմանալի թվա, Գերմանիայի թուրք գրողների համար ուսումնասիրման և քննարկման առարկա է դառնում Հայոց Գեղասպանության հարցը: Այս թեմային ծավալուն անդրադարձների ենթ հանդիպում հատկապես 1990-ականների կեսերին գրված ստեղծագործություններում: Ժողովրդավարական ու ազատական եվրոպական հասարակությունը պարարտ հող էր ստեղծում պատմական իրողությունները բազմակողմանի ուսումնասիրելու և օբյեկտիվ գնահատականներ տալու համար: Արդեն եվրոպական նորմերով մեծացած Գերմանիայի թուրք գրողների համար թերևս փոքր-ինչ ավելի հեշտ էր կոտրել թուրքիայում այդ ժամանակ դեռ խստորեն պահպանվող ցեղասպանության տաբուն⁴⁴⁷:

Հարկ ենթ համարում նշել, որ թուրքական իշխանությունները մշտապես փորձել են երկրից դուրս բնակվող քաղաքացիների շրջանում պահպանել և տարածել արտաքին և ներքին քաղաքական միջարք հարցերի շուրջ՝ ինչպես, օրինակ, Քրդական հարցը, Կիպրոսի խնդիրը, Հայոց ցեղասպանության ժխտումը, թուրքիայի պաշտոնական տեսակետները: Այս նպատակով թուրքիայի դիվանագիտական ներկայացուցչություններն, իսկ ավելի ուշ՝ նաև պաշտոնական Անկարայի կողմից \$ինանսավորվող ամենատարբեր հասարակական կազմակերպությունները բավական ակտիվ գործունեություն են ծավալել Գերմանիայում թուրքական համայնքի սկզբնավորման առաջին տարիներից: Միջանկյալ շեշտենք, որ թուրքիայի կառավարության 2010 թ. որոշմամբ արտերկրում բնակվող թուրքերի և ազգակից հասարակությունների վարչություն⁴⁴⁸ ստեղծումից հետո այս գործունեությունը սկսեց ավելի համակարգված և ուղղորդված բնույթ կրել և ներկայումս

⁴⁴⁷ XX դարի թուրք գրականության մեջ Հայոց ցեղասպանության թեմայի արժարժման առանձնատկությունների մասին մանրամասն տե՛ս Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության թեման արդի թուրքական գրականության մեջ, Երևան, 2010:

⁴⁴⁸ Վարչություն մասին մանրամասն տե՛ս Պողոսյան Ն., Կարապողոսյան Ս., Թուրքիայի Հանրապետության և թուրքական սփյուռքի համագործակցության հակահայկական ուղղվածությունը, Երևան, 2016, էջ 29-34:

իրականացվում է ոչ միայն քաղաքական, հասարակական, այլ նաև կրթական ու մշակութային մակարդակով: Բնական է, որ բոլոր այս մակարդակներում գործող ամենատարբեր թուրքական կազմակերպությունների թիրախային կետերից մեկն էլ մշտապես եղել է Հայոց ցեղասպանության ուրացման ամրապնդումը և հակահայկական լոբբինգը (փոփոխական հաջողությամբ):

Տարիներ շարունակ իրականացվող հակահայկական գործունեությանն ուշագրավ անդրադարձներ ենք հանդիպում Գերմանիայում երկար տարիներ պաշտոնավարած թուրք դիվանագետ Ջան Ունվերի «35 տարվա միգրացիան և իմ բյուրոկրատական վկայությունները» հուշագրության մեջ: Թուրք դիվանագետը գրում է, որ Հայոց ցեղասպանության հարցը տարիներ շարունակ՝ հատկապես արտաքին քաղաքականության համատեքստում, գլխացավանք է եղել Թուրքիայի համար: Նա «արդարացի» ցասումով նշում է, որ Գերմանիան, երկար տարիներ այս խնդրի շուրջ լռություն պահպանելուց հետո, 2005 թ. Բունդեսթագում ցեղասպանությունը դատապարտող բանաձև է ընդունել: Ավելին, դեռևս 1990-ականների կեսերին գերմանական իշխանությունները հրաժարվել են արտոնել «հայ ոճրագործ» Ս. Թեհլերյանի կողմից գնդակահարված Թալեաթ փաշայի սպանության վայրում հիշատակի միջոցառում անցկացնելը, միևնույն ժամանակ Բրեմեն քաղաքում տեղական իշխանությունների աջակցությամբ կառուցվել է ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձան: Նման վերաբերունքի մասին Ջ. Ունվերի բողոքին ի պատասխան գերմանացի պատգամավորներից մեկն ասել է, որ անկարելի է հաշվի չառնել Գերմանիայում բնակվող 3000 հայերի զգացմունքները: Թուրք դիվանագետի անսահման ցասումն առաջացրած այս պատասխանը ստիպել է նրան համոզվել, որ գերմանացիների վերաբերմունքն «անարդար ու կողմնակալ» է⁴⁴⁹:

Ուշագրավ է, որ ոչ միայն ցեղասպանության խնդիրը, այլ ցանկացած հարմար առիթ թուրքական կողմը դարձնում է խեղաթյուրման և հակահայկական քարոզչության նյութ: Օրինակ, նույն Ջ. Ունվերի վկայությամբ, այն բանից հետո, երբ 1990 թ.

⁴⁴⁹ Մանրամասն տե՛ս Ümver C. O., նշված աշխ., էջ 271-273.

հունվարի 19-ին և 20-ին հայերը կարմիր բանակայիների հետ համատեղ Բաքվում ադրբեջանցիների «ջարդ» են կազմակերպել⁴⁵⁰, ի նշան աջակցության ադրբեջանցի եղբայրներին և «հայերի վայրագությունների» վրա միջազգային հանրության ուշադրությունը հրավիրելու նպատակով Գերմանիայի թուրքերը փետրվարի 3-ին բողոքի ցույց են կազմակերպել⁴⁵¹: Ջ. Ունվերը գրքում հիշատակում է նաև ԱՍԱԼԱ-ի կողմից սպանված թուրք դիվանագետների հիշատակին նվիրված երեկոները, որոնց, սակայն, շարունակական բնույթ տալ չի հաջողվել⁴⁵²: Չնայած Ջ. Ունվերի որակավորմամբ «վիրավորական և սարսափելի» է այն, որ որոշ թուրք պատգամավորներ ձայներ ստանալու համար ընդունում են ցեղասպանության իրագործման փաստը կամ չեզոք դիրք գրավում⁴⁵³, սակայն Եվրոպական ամենատարբեր կառույցներում ներկայացված թուրք պաշտոնյաների մեծ մասն ունի ընդգծված հակահայ կական դիրքորոշում:

Այսպիսով, պարզ է դառնում, որ Չայոց ցեղասպանության թուրքական պաշտոնական թեզից տարբերվող տեսակետներ ներառող ստեղծագործությունները հիմնականում անընդունելի են թուրքական համայնքի համար: Սրան ավելացնելով թուրքիայից անխուսափելիորեն եկող բացասական անդրադարձը՝ կարող ենք փաստել, որ նույնիսկ Եվրոպայում բնակվող թուրք գրողի համար ցեղասպանության թեմային անդրադարձ կատարելը բավական համարձակ քայլ է, որն արժանի է ուսումնասիրման և արժևորման:

Գերմանաբնակ թուրք գրողների շարքում Չայոց ցեղասպանության թեման վեր են հանել Չաֆեր Ծենոջաքը, Էմինե Սևգի Օզդամարը, Քեմալ Յալչընը: Ընդ որում, եթե Ք. Յալչընի ստեղծագործություններն որոշ չափով հայտնի են հայ ընթերցողին, իսկ նրա «Սիրտս քեզնով է խայտում» գիրքը նույնիսկ

⁴⁵⁰ Նշենք, որ թուրքական հերթական խեղաթյուրման արդյունքում Ջ. Ունվերի գրքում որպես ադրբեջանցիների «ջարդ» ներկայացված է 1990 թ. հունվարի 13-ին Բաքվում սկսված և շուրջ մեկ շաբաթ շարունակված հայերի կոտորածը, որի արդյունքում 300-ից ավելի հայ զոհվեց, իսկ տասնյակ հազարավորները ստիպված եղան փախտականի կարգավիճակով ապաստան գտնել ՅՅ, ՌԴ և աշխարհի այլ երկրներում: 250000 հայ բնակիչ ունեցող Բաքուն լիովին հայաթափվեց:

⁴⁵¹ Մանրամասն տե՛ս Ünver C. O., նշված աշխ., էջ 119-120:

⁴⁵² Նույն տեղում, էջ 231-232:

⁴⁵³ Նույն տեղում, էջ 271-273:

հասանելի և՛ արևելահայերեն, և՛ արևմտահայերեն, ապա Է. Ս. Օզդամարի և Զ. Շենոջաքի անունները Հայաստանում գրեթե անծանոթ են: Մինչդեռ նրանց ստեղծագործություններում Հայոց ցեղասպանությանը վերաբերող ակնարկները, առաջին հայացքից հպանցիկ թվացող հիշատակումները բավական ուշագրավ են:

Ցեղասպանության թեմային փոքրիկ ակնարկով անդրադարձել է նաև ավելի վաղ սերնդի գրող Նիհաթ Բեհրանը: Նրա «Օտարություն» գրքի հերոսներից մեկը՝ Մուսան իր որդուն՝ Վեյսելին քառասունքից դուրս գալուց հետո ուղարկում է Կարսի մոտակայքում գտնվող հայրենի գյուղում ապրող իր տարեց քրոջ մոտ: Քույրը երեխային չորս տարվա ընթացքում հեքիաթի փոխարեն անընդմեջ 1910-ականների «հայկական դեպքերն» է պատմում. «Գարբիսյանը 30 մարդով Ուզունմիևարեն գրավեց: Իմամ Սեիդը միևարեի վրա երեկոյան Էզան Էր կարդում: Աբբաս Բեյը ձիով դուրս եկավ Միրզա Բեյի մոտ: Լուր տարավ: Ձիմշիթը Բյույուք դերեում Էզանի ավարտին Էր սպասում: Հորթերը սկսեցին բռնաչել, ոչխարները մկկալ: Ագռավները զգացին արյան հոտը: Գյուղը տակնուվրա եղավ: Սովերները սև ամպերի նման կախվեցին երկրի վրա: Ձագերը կաղկանձում էին, շները ոռնում: ... Ձիերը խրտնել էին, թխական հավերը ձագերին հավաքելով բներն էին քաշվում: Նազարյանը դանակը կոկորդում ընկավ Ասլան Բեյի դռան մոտ: Չարկերակից ցայտող արյունը ձեռքից շուտ հասավ դռան բռնակին... Երեսը մրջյունները պատեցին: Ձայնը խռարտեց, խեղդվեց»⁴⁵⁴:

Զ. Շենոջաքի «Վտանգավոր բարեկամություն» վեպը թուրքական միջավայրում Հայոց ցեղասպանությանը անդրադարձող առաջին ստեղծագործություններից է: Այս վեպով ամբողջանում է ավելի վաղ տպագրված «Ներքնաշապիկով մարդը» և «Պրերիա» ստեղծագործությունների գլխավոր հերոսի՝ Սաշայի կյանքը:

Մեծ ճանաչում չվայելող գրող Սաշան փորձում է սեփական «ես»-ը գտնել գերմանական հասարակության ոլորաններում: Թուրք հորից և գերմանացի-հրեա մորից սերող Սաշան ինքն իրեն հասկանալու համար նույնիսկ մեկնում է ԱՄՆ, սակայն այնտեղ էլ չգտնելով իր հարցերի պատասխանը՝ վերադառնում է Գերմանիա:

⁴⁵⁴ Behram N., Gurbet, İstanbul, 1998, s. 35.

«Վտանգավոր բարեկամություն» վեպը սկսվում է տխուր իրողության փաստամբ. Սաշայի տարիներ առաջ բաժանված ծնողները նրա համար անհասկանալի պատճառով նույն ավտոմեքենայով վթարի են ենթարկվում և զոհվում: Որպես միակ ժառանգ, նա ստանում է բավական լուրջ կարողություն: Սակայն, երբևէ գումարի կարիք չունեցած, Սաշայի համար առավել մեծ կարևորություն է ներկայացնում հորից մնացած արծաթյա տուփը, որտեղ պահված են դեռևս 1936 թ. ինքնասպանություն գործած պապի օրագրերը: Գուցե՞ այս «մոխրագույն կազմով, սովորական ֆրանսիական» տետրերի արաբատառ և ռուսատառ գրությունները լույս կսփռեն պապի տարօրինակ ինքնասպանության պատմության վրա և կօգնեն հերոսին ավարտի հասցնել իր փնտրտուքները: Գրականագետ Ջեյմս Ջորդանը գրում է. «Սաշան հույս ունի, որ գոյություն ունի բացահայտման կարոտ հստակ ինքնություն և որ ընտանիքի անցյալը պարզելուն պես բոլոր կապերն ինքնըստինքյան կհաստատվեն»⁴⁵⁵: Տետրերն այնքան կարևոր են թվում հերոսին, որ նա նույնիսկ չի ուզում դրանք որևէ մեկին ցույց տալ. որոշում է սովորել թուրքերեն և համադրելով արաբերենից իր ունեցած գիտելիքներն ապակոդավորել գրություններն, ապա դրանց հիման վրա պապի մասին վեպ գրել: Որոշ ժամանակ անց, սակայն, Սաշան հասկանում է այդ աշխատանքի ապարդյուն լինելը և դիմում թարգմանչի օգնությանը: Մի քանի ամսվա ընթացքում մաս-մաս թարգմանվող տետրերից նա անսպասելի բացահայտումներ է անում:

Այս պատմության ամբողջ ընթացքում, որ ներառում է տուփը ստանալուց մինչև օրագրերի թարգմանությունները ընթերցողին ներկայացնելու պահը, երկխոսություններ գրեթե չկան, սյուժեն կառուցված է Սաշայի հոգեվիճակը արտացոլող մտորումների պատկերման հիման վրա: Այդ մտքերն իրականում ոչ միշտ են կապված պապի օրագրերի կամ ինքնության խնդրի հետ: Իրարից համարներով առանձնացված գրքի 35 գլուխները արտացոլում են գերմանական հասարակությանը հուզող ամենատարբեր խնդիրների վերաբերյալ այդ պրիզմայում բնակվող հրեա-թուրքի տեսանկյունը: Գլուխները

⁴⁵⁵ Jordan J., Zafer Şenocak's essays and early prose fiction: from collective multiculturalism to fragmented cultural identities, Zafer Şenocak, editors: Cheesman T., Yeşilada K., Cardiff, 2003, p. 101.

հստակ տրամաբանական կապ չունեն՝ իրար հաջորդելով ու միախառնվելով քննության են առնվում պապի ինքնասպանությանից մինչև Բեռլինի պատի քանդման պատճառներն ու հետևանքները ներառող հարցեր:

Գրքի ողջ ընթացքում պապը, ում անունն այդպես էլ չենք իմանում, բայց ով փաստորեն կարևոր գործող անձ է, միայն հպանցիկ է հիշատակվում: Փաստերն ի մի բերելով՝ հասկանում ենք, որ Սաշայի պապը ծագումով Կարսից է: 1914-1918 թթ. օսմանյան բանակի զինվոր է եղել, բաց գույնի մաշկ ունենալով և հայերենին ու ռուսերենին լավ տիրապետելով շնորհիվ հետախուզական աշխատանքով է զբաղվել⁴⁵⁶: Պատերազմի տարիներին հայերի անունները ներառող առաջին ցուցակը նաեկազմել: Այդ ցուցակում 500 անուն պետք է լիներ, սակայն մի կնոջ անուն անհայտ պատճառով դուրս է մնացել ցուցակից⁴⁵⁷: Այս հարցն ամենասկզբից հուզում է Սաշային: Յատկանշական է, որ նրան չի հետաքրքրում, թե 500 անուն ներառող ցուցակն ինչ նպատակով է կազմվել: Այսինքն՝ ի սկզբանե հեղինակը նպատակ չի դնում ներկայացնել Յայոց ցեղասպանությունը: Այն ավելի շուտ \$ոնային երևույթ է, քան հիմնական թեմա: Ուստի զարմանալի չէ, որ հեղինակն որևէ բացատրություն չի էլ տալիս: Միայն պապի օրագրից 1921 թ. փետրվարի 21-ին արված մի գրությունն է մեջբերում. «Մեր մշակույթում մեղավորություն տերմինը չկա: Մենք միայն մեղք գիտենք: Մեղքը մեր կրոնական, աստվածային գոյության առջև ունեցած պատասխանատվության սահմաններն է շրջագծում: Սակայն երբևէ ինքներս մեր առջև պատասխանատվություն չենք զգում: Մեղավորությունը մարկային հարց է: Մարդը իր մեղքի հետ միշտ մենմենակ է: Մենք միայնակ մնալուն սովոր չենք»⁴⁵⁸:

1920-ական թվականներին պապն եղել է քեմալական շարժման ակտիվ մասնակից, կռվել «մեծ փրկիչ» Մուսթաֆա Բեմալի կողքին: Ավելին, Բեմալը Սաշայի պապիկի ու տատիկի հարսանիքի վկան է եղել: Յանրապետության հռչակումից հետո պապը կարողացել է լուրջ հաջողությունների հասնել, նույնիսկ Ստամբուլում

⁴⁵⁶ Şenocak Z., Tehlikeli Akrabalık, s. 37.

⁴⁵⁷ Նույն տեղում, էջ 38:

⁴⁵⁸ Նույն տեղում, էջ 110:

համայնքապետ դառնալ: Պապի կերպարի ողջ նկարագրությունն այս քանով է սահմանափակվում: Ամբողջ գրքի ընթացքում պահպանվող այս անհստակությունը, տողատակերում ինչ-որ բան գտնելու, կիսաավարտ նախադասություններում թաքնված փաստերի հայթայթելու անհրաժեշտության ինտրիգ է ստեղծում, ստիպում անընդհատ լարված մնալ և անհամբեր սպասել վերջաբանին: Սակայն հեղինակը բնավ չի շտապում: Եվ մեղքի զգացման կամ հայերի ցուցակների մասին մտորումներից հանկարծակի անցում է անում, օրինակ, պատերազմից հետո այրիացած գերմանացի կանանց խնդիրներին:

Չուտ գերմանական խնդիրներին գրքում բավական լուրջ տեղ է հատկացված, մինչդեռ Թուրքիան գրքում ներկայացված է հիմնականում բացասական երանգներով: Օրինակ, պապի կենսագրությունը ներկայացնող մի դրվագ հստակ արտացոլում է Թուրքիայում տիրող ոչ ժողովրդավարական մթնոլորտը. «Պապ 35 տարեկան է: Ու ժեղ մարդ է: Համայնքապետի թեկնածու: Մրցակիցն էլ է նույն կուսակցությունից: Պապ կեղծիք է անում, որպես կաշառք ընտրողներին ընտրությունից առաջ ձախ ոտքի կոշիկներ է բաժանում է: Մյուսն էլ ընտրությունից հետո է խոստանում տալ: Նա ընտրությունից առաջ կոշիկի գործարան է հիմնում: Ընտրություններում հաղթում է»⁴⁵⁹: Ավելին, մարտահրավեր նետելով Աթաթուրքի անվան անձեռնմխելիությանը՝ հեղինակը մի տեսակ հեգնանքով է գրում բոլորին կրթելու, քաղաքակրթելու նրա մոլուցքի մասին. «Միգուցե նա կարողացավ փրկել, բայց քաղաքակրթել՝ երբեք»⁴⁶⁰: Նման վերաբերմունքը հատկապես աչքի է ընկնում, քանի որ գրքում ինչ-որ իրադարձությունների կամ մարդկանց հստակ գնահատականներ գրեթե չկան: Հեղինակը միշտ աշխատում է փաստերի համարությունը վերջնական հետևությունները թողնել ընթերցողին:

Թարգմանչական աշխատանքի ավարտին Սաշայի սպասմանը զուգահեռ գրքում զարգանում է փոքրիկ երկրորդ սյուժետային գիծ, որն անմիջական կապ ունի հայերի հետ: Սաշայի կինը՝

⁴⁵⁹ Նույն տեղում, էջ 38:

⁴⁶⁰ Նույն տեղում, էջ 30:

գերմանուհի Մարին, վավերագրական ֆիլմ է նկարահանում Թալեաթ փաշայի մասին: Թալեաթի կերպարի վերաբերյալ Մարին դիրքորոշումն հստակ է. հարյուր հազարավոր անմեղ զոհերի մարդասպանը արդարացում չունի: Սակայն այս փաստը զարմանալիորեն տիաճ է Սաշային: Որքան էլ նա հեռու է իր թուրքական արմատներից, այնուամենայնիվ նա ըմբոստանում է Թալեաթ փաշայի ցեղասպան կերպարի դեմ: Նա նույնիսկ կնոջը մեղադրում է Թալեաթ փաշայի կերպարը միայն եվրոպական աղբյուրների հիման վրա ձևավորելու մեջ և առաջարկում նրան ծանոթանալ Թալեաթի գործունեությանը նվիրված թուրք հեղինակների անդրադարձներին՝ միակողմանի կարծիքից խուսափելու համար: Դիմելով կնոջը և նրա կերպարում, անշուշտ, ամբողջ Եվրոպային, նա ասում է. «Իսկական արևելյան ժողովուրդ հայերին համարում են արևմտյան միայն այն պատճառով, որ քրիստոնյա լինելով՝ ապրում են մուսուլմանների շրջապատում: Սրա հետ մեկտեղ տարածաշրջանի բոլոր ժողովուրդներից առավել ուժեղ արևմտյան կողմնորոշում ունեցող թուրքերին մուսուլման լինելու պատճառով երբեք Եվրոպայի, Արևմուտքի մաս չեն համարում»⁴⁶¹: Ավելին, ժխտելով հայերին ցեղասպանելու թուրքերի միտումը՝ միաժամանակ պատմությունից օրինակներ բերելով, Սաշան ուզում է ցույց տալ, որ նույնիսկ եթե հայերի զանգվածային սպանություններ են եղել, դա դեռ աղմուկ բարձրացնելու առիթ չէ. «Ֆրանսիացիներն էլ Ալժիրում են կոտորած կազմակերպել, իսկ բրիտանացիներն ընդհանրապես աշխարհի կեսը կողոպտել են, սակայն նրանց Եվրոպայի հորհրդից և Եվրոպայի Միությանից չեն հանել: Դուք, եվրոպացիներդ, կեղծ խաղ եք խաղում, երկերեսանի եք: Սպիտակ մարդը միշտ երկերեսանի է»⁴⁶²: Հեղինակը խուսափում է հստակ եզրահանգումներ անելուց և նույնիսկ Թալեաթ փաշային վերաբերող որևէ գնահատական, վերջնական կարծիք գրքում չենք հանդիպում: Սաշան ինքն իրեն հարցնում է. «Թալեաթ փաշան Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հարյուր հազարավոր հայերի օսմանյան

⁴⁶¹ Նույն տեղում, էջ 15:

⁴⁶² Նույն տեղում, էջ 15:

կայ սրու թյ ու ն ու մ բռնագաղթի համար պատասխանատու՞ Լ Է: Ինչ պե՞ս կարող էր լ ու սավորության կողմնակից, հաջողակ քաղաքական գործիչը զանգվածային սպանության կազմակերպիչ լինել»⁴⁶³: Հարցը մնում է անպատասխան: Մարին մեկնում է Սալոնիկ, ապա Թուրքիան որ նյութեր հավաքել ու համար: Ընթերցողը չի իմանում, սակայն, թե ինչեր է նա այնտեղ բացահայտում, նոր տեղեկություններն ամրապնդում են նրա կարծիքը թե՞ գուցե ստիպում հրաժարվել գնահատականներից: Կարծես հեղինակը չի ուզում կարծիք պարտադրել, միայն մտածել ու համար հիմք է ստեղծում:

Սաշայի մեկը մյուսին հետևող մտքերի հորձանուտում պապի մասին տրվող ցաքուցրիվ տեղեկություններն ամբողջանում են գրքի վերջին գլխում: Տեսրերն ընթերցված են, պապի ու, հետևաբար, նաև ամբողջ ընտանիքի պատմության մի մեծ գլուխ՝ բացահայտված. Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին որպես օսմանյան զինվոր հայերի տեղահանության իրագործողներից է եղել: Հիշյալ ցուցակի 500 հոգուց միայն մեկի անունն է ջնջել, մնացածներից և ոչ մեկի չի խղճացել, ոչ մեկի հանդեպ մեղքի զգացում չի ունեցել: Ավելին, չնայած երկիրն աղքատացել է, բայց նակարողացել է երկրի արևելքում ստեղծված կողոպուտի հնարավորություններն օգտագործել և տեղահանվածների «լքյալ գույքի» հաշվին հարստանալ, քանի որ, իր իսկ վկայությամբ, «նրանց վերադարձն անհնարին է: Դրա համար անհրաժեշտ ամեն ինչ արված է»: Եվ կրկին ոչ մի ափսոսանք: Սաշան, վերածնակերպելով պապի նոթերը, գրում է. «Հաշվի չէր առնում, որ մի օր նորից ստիպված է լինել ու անցյալի մասին մտածել: Երեկ երեկ էր, այսօր այսօր է, հատկապես, երբ պետք է եղած-անցածը մոռանալ»: Ավելին, պապը գտնում էր, որ իր երկրի անցյալով կարող է հպարտանալ, քանի որ «նույնիսկ բոլոր պարտություններից հետո ոտքի վրա մնաց: Ամեն անգամ վերջնական հաղթանակին հավատաց: Հաղթեց: Թանկ վճարեց: Սակայն, եթե հաղթանակի համար թանկ չես վճարում, հաղթանակն արժեք չի ունենում: Իրական հաղթանակները ձեռքբերումների հետ կապ չունեն: Կորուստներով են լի»⁴⁶⁴:

⁴⁶³ Նույն տեղում, էջ 67:

⁴⁶⁴ Նույն տեղում, էջ 124:

Պապն էլ, չնայած հաղթանակել է, հերոս է հռչակվել, բայց կորցրել է իր կյանքի ամենակարևոր կնոջը, իր կյանքի իմաստը: Նորից ցիտելով պապին՝ Սաշան գրում է. «Այն կնոջը սիրում էր: Այն ժամանակ, սակայն, դեռ չգիտեր, թե սերն ինչպիսի զգացմունք է: Կարծում էր, որ այդ զգացմունքն իրեն չի սազում: Սպանելու համար էր պետք պայքարել, ոչ սիրելու: Այն ժամանակ կյանքն իմաստ ուներ»⁴⁶⁵: Ճակատագրի հեգնանքով այդ կինը հայուհի է և հենց նրա անունն է ջնջել տխրահռչակ ցուցակից: Սակայն ընթերցողի համար անհայտ մնացող պատճառներով այդ կինն էլ է տարագրվել: 1936 թ. անցյալից ստացված մի նամակ տակնուվրա է անում պապի կարծես թե հաջողված կյանքը: Նամակից ընդամենը մի քանի տող մեջբերելով՝ հեղինակը ներկայացնում է մի ամբողջ կործանված կյանք: Կինը գրում է. «Մեր աղջիկը քեզ չի ճանաչում: Մինչդեռ արդեն 20 տարեկան է: Կարծում է, հայրը մահացել է: Այնքան էլ հեռու չի ճշմարտության ունից, այնպես չէ՞: Թե ինձնից անտեղյակ դեռ ապրում են: Եթե այլևս չկարողանանք միասին լինել, կյանքիդ վերջ ես տալու, չէ՞ իր խոստացել... Փախուստի ճանապահին հազար անգամ հարձակումների ենթակվեցի: Գուցե մեր երեխան էլ քեզնից չի, դեմս դուրս եկած մորթարարներից և զինվորական համազգեստով վիժվածքներից է»⁴⁶⁶: Պապի կյանքն մի ակնթարթում տակնուվրա է լինում: «Դողում էր, - պատմում է թոռը, - կյանքի միակ սիրած կինը նա էր: Ինչպե՞ս էր այսքան տարի առանց նրա ապրել: Ինչպե՞ս էր կարողացել ուրիշ կնոջից երեխա ունենալ»: Նա այլևս չի կարող սպասել և ինքնասպան լինում: Գիրքը վերջանում է առանց եզրահանգման և մեկնաբանման, թե ի՞նչ է զգում Սաշան, ինչպե՞ս է փոխվում նրա աշխարհայացքը: Չոհի ու դահիճի արյունը կրելու գիտակցությունը ի՞նչի կհանգեցնի: Տեղասպանությունը գրքի սյուժեի առանցքային մասն է կազմում, սակայն կարծես չշոշափված է մնում: Չկան մանրամասն նկարագրություններ, փաստեր, թվեր: Ինչու՞, ինչպե՞ս և ու՞ր են ուղարկել հայերին, ի՞նչ է պատահել նրանց հետ: Այս հարցերի պատասխաններն ամփոփված են վերը նշված հակիրճ նախադասություններում: Հայերը տեղահանվել են,

⁴⁶⁵ Նույն տեղում, էջ 126:

⁴⁶⁶ Նույն տեղում, էջ 127:

սպանվել, կողոպտվել, ունեզրկվել: Ավելին, երիտթուրքերն ու քեմալականները գրեթե նույնականացված են՝ պապի անցումը մի թևից մյուս թև հեշտ ու բնականոն է թվում: Այս ամենը, սակայն, պարզ գրված չէ և դա պետք է տեսնել տողատակերում: Գրականագետ Լ. Անդերսոնը գրում է. «Տեքստը [2. Շենոջաքի «Վտանգավոր բարեկամությունը» - Ն. Պ.] երբեք հստակ չի ներկայացնում 1915 թ. Չայնոց ցեղասպանությունը: Սակայն այն առաջինն է ներկայացնում հայերի տեղահանության ցուցակները»⁴⁶⁷:

Այսպիսով, 2. Շենոջաքի «Վտանգավոր բարեկամությունը» վեպը յուրօրինակ անդրադարձ է Չայնոց ցեղասպանության թեմային: Գրքում թեև քողարկված, բայց ներկայացված են Չայնոց ցեղասպանության հիմնական դրվագները և չկա որևէ քննադատություն, բացասական վերաբերմունք, բայց ստահոտ ժխտողականություն և խեղաթյուրում էլ չկա:

Հարկ է նշել, որ Չայնոց ցեղասպանությանը վերաբերող անդրադարձներ հանդիպում ենք Չաֆեր Շենոջաքի նաև այլ ստեղծագործություններում: Օրինակ, նրա «Ուր ենք գնում» վեպի գլխավոր հերոսի՝ արվեստի գործերի ոչնչացումով զբաղվող թուրք երիտասարդ Ջումեյթի նախկին դայակը՝ Լարան ծագումով հայ է: Չեղինակը ներկայացնում է Լարայի կյանքի պատմությունը: Նրան գտել են գնչուներն արևելքի լքված գյուղերից մեկի ավիրված եկեղեցու դռան մոտ սարսափելի ցրտից կիսաու-առատ պաշտպանող մի ծածկոցի մեջ փաթաթված: Երեխայի կենդանի մնալն արդեն հրաշք պետք է համարվի: Գնչուները նրան որոշ ժամանակ իրենց հետ պահելուց հետո վաճառել են⁴⁶⁸: Շատ դառը օրեր է ապրել Լարան և որ ամենասարսափելին է ութ տարեկան հասակում, երբ Անկարայում մի վաճառականի տանն էր ապրում, ենթարկվել է դաժան սեռական բռնությունների. «Ինչպես է, որ ութ տարեկան աղջիկ երեխային ստիպում են շոկոլադով քսված առնանդամ լպստել: Նուշով շոկոլադի համը սիրում էր, սակայն այն վատ մարդն ավելին էր ուզում: Այդ բանը մինչև կոկորդն այնպես էր մտցնում, կարծես ուզում էր սրտին հասնել: Չետո գետնի վրա փսխանքը հավաքելիս,

⁴⁶⁷ Adelson L. A., նշված աշխ., էջ 108.

⁴⁶⁸ Şenocak Z., Yolculuk Nereye, İstanbul, 2007, s. 37.

մտածում էր, թե ինչու՞ իր նկատմամբ միշտ բարի այդ մարդն հանկարծ այդքան կոպտանալով վատն էր դառնում⁴⁶⁹: Սրա հետ էլ, սակայն, համակերպվեց ու այդ մարդու ցանկությամբ եղածների մասին ոչ մեկի չպատմեց»⁴⁷⁰: Այսպես, ձեռքից ձեռք անցնելով, 15 տարեկանում Լարան հասել է Ջուլմեյթի տուն, որտեղ ապրած տարիները Լարայի համար ամենաերջանիկն են եղել: Այդտեղից էլ, սակայն, ստիպված հեռացել է. «... օդանավակայանի ճանապարհին փողոցները դատարկ էին, քանդուած: Նկատեց, որ հայերին և հույներին պատկանող կամ այդպիսիք համարվող խանութները կողոպտված են...⁴⁷¹ Ինքնաթիռ նստելիս հասկացավ, որ Ստամբուլ այլևս երբեք չի վերադառնալու: Այո՛, այո՛, մի ժամանակ իր ընտանիքի հայրենիքը համարվող, սակայն այժմ արդեն նրան չընդունող, օտարի աչքով նայող այս երկիր չէր վերադառնալու»⁴⁷²: Լարայի հանկարծակի հեռանալու գաղտնիքն այդպես էլ չբացահայտված է մնում: Արդեն մեծահասակ Ջուլմեյթն հիշում է, որ մայրը Լարայի գնալու մասին իր հարցին շատ խորհրդավոր տեսքով պատասխանել է, որ Լարայի համար ուրիշ երկրում ապրելն ավելի լավ կլինի, քանի որ նա հայ է⁴⁷³: Նույնիսկ տարիներ հետո Թուրքիայի հետկապերը լիովին կտրած Ջուլմեյթի համար այս փաստն անհասկանալի է մնում: Լարայի կերպարը ներկայացնելով՝ Չ. Շենոջաքը փաստորեն ներկայացնում է հազարավոր հայ երեխաների ճակատագիրը, որոնք դատապարտված են եղել կիսատրկային կարգավիճակով ապրել թուրքերի ու քրդերի տանը, իրենց ուսերին կրել կենցաղի ծանր բեռը և նույնիսկ դառնալ նրանց այլասերված ցանկությունների կատարող:

Լարայի պատմության մեջ ուշագրավ է այն, որ տարիներ անց նրան հաջողվում է Փարիզում գտնել իր մորն ու մինչև վերջինիս մահը

⁴⁶⁹ Նույն տեղում, էջ 31:

⁴⁷⁰ Նույն տեղում, էջ 32:

⁴⁷¹ Հավանաբար ի նկատի ունի 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի ջարդարարությունները, որոնց արդյունքում հունական և հայկական համայնքները լուրջ վնասներ կրեցին: Սեպտեմբերի 6-7 դեպքերի մասին մանրամասն տե՛ս Մելքոնյան Ռ., 1955 թվականի սեպտեմբերի 6-7-ի դեպքերը (Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների դեմ բռնությունների հերթական դրսևորումը), Արևել ագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), հ. 8, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 144-156:

⁴⁷² Şenocak Z., Yolculuk Nereye, s. 36.

⁴⁷³ Նույն տեղում, էջ 40:

վայելել այն սերն ու ջերմություները, որ երբեք չէր ունեցել: «Այդ երկու տարիները Լարայի կյանքի ամենակարևոր փուլն էին: Մոր հետ երկար խոսակցությունների ընթացքում ճանաչեց ընտանեկան նկարին պատկերված շատ դեմքեր, բազմիցս լսեց այդ դեմքերի անուններն ու պատմությունները, նրանց տեղավորեց իր հիշողության մեջ և վերգտավ իր ինքնությունն, որի մասին տարիներ շարունակ անտեղյակ էր եղել»⁴⁷⁴: Ցեղասպանությունից հետո մասնատված ընտանիքների կարևոր հարցերից մեկն էլ փաստորեն դուրս չի մնում թուրք գրողի ու շարժողությունից:

2. Շենոջաքի Չայոց ցեղասպանության առնչությամբ արված անդրադարձների մասին խոսելիս, կցանկանայինք ներկայացնել նաև 2005 թ. գերմանական թերթերից մեկում տպագրված «Ժխտված ցեղասպանություն» հոդվածին⁴⁷⁵: Եթե վեպերում ցեղասպանությունը ներկայացված է մի տեսակ քողարկված, ապա հոդվածում 2. Շենոջաքը գրում է, որ Չայոց ցեղասպանության հարցում թուրքական մերժողականությունը, առավել ևս հայկական սփյուռքին ազգայնականության մեջ մեղադրելու փորձերը բացահայտ անամոթություն են: Նա շեշտում է, որ թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչումը հույժ կարևոր է և ոչ մի դեպքում չի կարող փոխարինվել քննարկումներով կամ պատմաբանների տված գնահատականներով: Չեղիևակը ցավով նշում է, որ ժխտողականությունն այնքան խորն է արմատավորվել թուրք հասարակության մեջ, որ դրանից հրաժարվելը դարձել է դժվար: Ամենից շատ 2. Շենոջաքին անհանգստացնում է այն փաստը, որ թուրքական իշխանություններն հայերի ողբերգությունն օգտագործում են Գերմանիայում թուրքական ազգայնականությունը բորբոքելու համար: Նման վերաբերմունքը սխալ և անթույլատրելի որակելով՝ մտավորականը դա համարում է արտերկրում բնակվող թուրքերի իրական խնդիրների նկատմամբ կատարյալ անտարբերություն և նրանց միայն սեփական շահերը առաջ տանելու գործիքի վերածելու փորձ: Իսկապես, թուրքական սփյուռքի հետ կապված պաշտոնական Անկարայի հայտարարություններից պարզ է

⁴⁷⁴ Նույն տեղում, էջ 35:

⁴⁷⁵ Şenocak Z., A genocide denied, 11.05.2005, <http://www.signandsight.com/features/154.html>.

դառնում, որ սփյուռքը դիտարկվում է որպես բացառապես պրոթուրքական գաղափարներն առաջ տանելու միջոց, թուրքական մշակույթի ազդեցությունը ավելացնելու հարթակ:

2. Շենոջաքը անդրադառնում է նաև Թուրքիայի ԵՄ անդամակցման հարցին: Նա գրում է. «Եթե հասարակությունն ի վիճակի չի ընդունել, քննադատել նման ծավալի հանցագործությունը և հրաժարվում է իր մեղքը կամ գոնե պատասխանատվությունը ճանաչել, ապա նույն հանցանքի կրկնությունը բացառված չէ: Հիշելու կարողությունն չունեցող հասարակությունը դատապարտված է անցյալի սխալներում բանտարկված մնալուն: Նման վճիռը շատ ավելի դժան է, քան ցանկացած դատավարություն, որ կարող է բաժին ընկնել մի կառավարության: XXI դարում թուրքական հասարակությունը, եթե ուզում է եվրոպացիների շրջանում ընդունված լինել, չի կարող այլևս թույլ տալ իրեն այսփուսածուկոպիտ պատմական խեղաթյուրումը: Թուրքերը չեն կարող պահանջել, որ մյուսներն ընդունեն իրենց պատմությունը, երբ իրենք անձամբ կարող են հավատալ միայն իրենց իսկ հորինած տարբերակին»⁴⁷⁶:

Ինչպես արդեն նշել ենք, Հայոց ցեղասպանության թեման իր արտացոլումն է գտել նաև Էմինե Սևգի Օզդամարի ստեղծագործություններում: Ի տարբերություն 2. Շենոջաքի, Է. Ս. Օզդամարն, իր գիտակից կյանքի մեծ մասը ապրելով Թուրքիայում և այնտեղի միջավայրին շատ լավ ծանոթ լինելով, իր ստեղծագործություններում հիմնականում անդրադառնում է թուրքական իրականությանը կամ գոնե խնդիրները ներկայացնում սովորական թուրքի տեսանկյունից: Նրա ստեղծագործություններում մեծ տեղ է տրված Թուրքիայի խուլ գյուղերի և դրանց սևոտիապաշտ կենցաղի նկարագրությանը, Ստամբուլն իր աղմկոտ փողոցներով:

Է. Ս. Օզդամարի ստեղծագործություններում Հայոց ցեղասպանությունը ոչ թե սյուժեի բաղադրիչ մասն է, այլ կարծես հերոսների կյանքի լուսանցքներում մնացած դրվագ: Նա ցեղասպանությունը ներկայացնում է որպես իր տատիկի և պապիկի

⁴⁷⁶ Առավել մանրամասն տե՛ս Şenocak Z., A genocide denied, 11.05.2005, <http://www.signandsight.com/features/154.html>.

կենսաագրության փոքրիկ, բայց անբաժանելի հատված: Ընդ որում ցեղասպանությանը վերաբերող մեկ-երկու դրվագ կրկնվում են հեղինակի կյանքի տարբեր փուլեր ներկայացնող ինքնակենսագրական վեպերում ու պատմվածքներում:

Է. Ս. Օզդամարի հորական տատիկը ծագումով Կապադովկիայից է եղել, որտեղ մեծ թվով հայեր են բնակվել: Ցեղասպանության ժամանակ երիտասարդ աղջիկը ականատես է եղել անհամար դաժանության ու նենդի: Տասնամյակներ անց ցեղասպանության պատկերները հանգիստ չեն տալիս նրան: Ուստի զարմանալի չէ, որ տատիկի մասին խոսելիս, Է. Ս. Օզդամարը ամեն անգամ մեջբերում է հետևյալ տողերը. «Տառս հանկարծակի վեր էր թռչում տեղից, վազում պատուհանի մոտ ու գոռում. «Աբոոո՛, Աբոոոոոո՛, Աբոոոո՛, հայ հարսներն իրենց կամուրջներից ցած են նետում: Յետո նորից տեղն էր նստում...»⁴⁷⁷: Է. Ս. Օզդամարի վկայությունը ամբ, տառը իրեն պարտավոր էր զգում օգնել Ստամբուլի իրենց բնակարանի շրջակայքում բնակվող հայերին: Յատկապես հաճախ է հեղինակը հիշատակում իրենցից մի քանի տուն այն կողմ նկուղում բնակվող ծեր հայ ու հուս, ով գրպանում միշտ չոր հաց էր պահում, որպեսզի սովից չմեռնի, եթե նորից ստիպված լինի քարանձավում թաքնվել ⁴⁷⁸:

Եթե Է. Ս. Օզդամարի հորական տատիկը պարզապես ողբերգական դեպքերի ականատեսն էր եղել և ամբողջ կյանքում փորձում էր ինչ-որ կերպ օգնել հայերին ու աղոթում էր զոհերի հոգիների հանգստության համար, ապա մորական պապը իրադարձությունների թոհու բոհում է եղել, սակայն ոճրագործների ճամբարում: Գրողը, իր մոր խոսքերի վրա հենվելով, պատմում է, որ պատերազմի տարիներին նա զբաղվել է հայերի տեղահանությամբ: Կոտորածի ժամանակ տեսել է կամրջից գետը նետվել պատրաստվող հայ ու հուս և փրկել նրան: Է. Ս. Օզդամարի մայրն այսպես է բնորոշում հորը. «Դաժան մարդ չէր: Երիտասարդ հայ աղջկան կոտորածից փրկելու համար երկրորդ անգամ ամուսնացավ»: Սակայն աղջիկն այդպես էլ չի կարողանում հաշտվել իր ճակատագրի հետ, ամուսնուն չի ներում, իսկ տեղահանության ժամանակ ապրած վախերն անհետևանք չեն

⁴⁷⁷ Özdamar E. S., Aynadaki Avlu, İstanbul, 2012, s. 136.

⁴⁷⁸ Özdamar E.S., Tuhaf Yıldızlar Dünyaya Bakıyorlar Gözlerini Kırpmadan, İstanbul, 2012, s. 194.

անցնում: Նրա հոգեկան աշխարհը խանգարվում է: Գրողի մայրը պատմում է. «Չայ մայրս կարծում էր հողը կրակից է, վախից բակ դուրս չէր գալիս, միշտ տանն էր մնում: Չավատացեք ինձ, հայրս կրակը պակասեցնելու համար ոտքերը սառը ջրով լվանում էր»⁴⁷⁹: Նույնիսկ սիրո նման արտահայտումները չեն ստիպում նրան ներել ամուսնուն:

Չայոց ցեղասպանությանը և առհասարակ թուրքիայի հայության խնդիրներին է. Ս. Օզդամարն անդրադառնում է նաև Չրանտ Դինքի սպանության կապակցությամբ գրված իր հոդվածում: Չոզվածը սկսվում է հետևյալ պատկերով. «Սևացավ ծովը... Բեռլինյան տաքսի եմ նստել: Ձեռքիս բաց թերթ: Թերթում մի դիակ: Այնտեղ պառկած է, մեջքով դեպի ինձ: Չրանտ Դինքի մեջքն է: Սպանել են: Մի հունվարյան օր, Ստամբուլում: Ոչ Չրանտ Դինք, ոչ Չրանտ Դինք, այս երկրում աղավնիներին սպանում են»⁴⁸⁰: Այնուհետև գրողը սկսում է երևակայության մեջ երկխոսել Սև ծովի հետ: Ծովը լալիս է. «Ամեն արցունքում մի դիակ կա, անգույն և հազացող: Ինչքա՛ն ժամանակ է, գերեզման չունեցող դիակների հետ է ապրում: Այստեղ մնացեք, իմ մեջ այնքան մահ կա որ... Պոնտոսի հույներ, հայեր, թուրքեր, արաբներ, հռոմեացիներ, սկյուռներ, մաքրոններ, քուհներ, քարդուքներ, վրացիներ, աբխազներ... նրանց երեսներին նայեք: Ծուրթերը դեռ գյուղերի անուններն են մրմնջում: Լսեք, լսեք»⁴⁸¹: Ծովը դիմում է մարդկանց. «Էհ, ախերիս մոտայ ժմ ապրող թուրքեր, Պոնտոսի հույները, հայերը չկան, ձեր արյունը ավելի մաքո՞ւր է, ձեր արյունը մաքրվե՞լ է»⁴⁸²: Նշենք, որ այս տողերը գրելիս է. Ս. Օզդամարը, հավանաբար, ակնարկում է Չրանտ Դինքի՝ «Ագոս» թերթում 2004 թ. փետրվարի 13-ին տպագրված հայտնի հոդվածը, որում հեղինակն հայկական սփյուռքին կոչ էր անում ազատվել «թուրքական» թունավոր արյունից և դրա փոխարեն ներարկել Չայաստանն ու հային կապող ազնվական երակով հոսող մաքուր արյուն: Ինչպես հետագայում՝ նույնիսկ Դինքի մահից տարիներ անց, բազմիցս նշվել է, «թուրքական» թունավոր արյունն ասելով՝ նա

⁴⁷⁹ Özdamar E. S., Hayat Bir Kervansaray, s. 228.

⁴⁸⁰ Özdamar E. S., Aynadaki Avlu, İstanbul, 2012, s. 130.

⁴⁸¹ Նույն տեղում, էջ 132:

⁴⁸² Նույն տեղում, էջ 133:

Նկատի ունենալով թյուրքախոսացու թյան սերնդեսերունդ փոխանցվող գաղափարը: Թուրքիայի իշխանությունները այս արտահայտությունը որակեցին թուրքական արժանապատվությունը վիրավորող և Դինքը կանգնեց դատարանի առաջ 301-րդ հոդվածը խախտելու մեղադրանքով⁴⁸³:

Երևակայական երկխոսությունից գրողն անցնում է լրիվ իրական գրույցի տաքսու վարորդի հետ: Վարորդն ասում է. «Ես էլ լաց եղա, քույրիկ: Ամաչ ում եմ, որ մարդասպանը Սև ծովի կողմերից է: Ես էլ եմ Սև ծովից: Յրանտ Դինքը նրանց ի՞նչ է արել: Այդ \$աշխատը չի կարող սևծովցի լինել: Մենք \$աշխատ չենք... Բայց եթե այդպես է, ուրեմն ես այլևս թուրք չեմ»⁴⁸⁴: Տաքսիստը ասում է. «Ո՞վ գիտի, Ստամբուլի հայերն ու հրեաները ինչքան են վախենում: Իսկ նրանց պետք է պաշտպանել: Նրանք մեր դեմոկրատիայի երաշխիքն են: Եթե մեր հայերին ու քրդերին չկարողացանք պաշտպանել, Թուրքիան ԵՄ ինչպե՞ս կմտնի»⁴⁸⁵: Է. Ս. Օզդամարի ստեղծագործություններում ներկայացված դրվագներն ու դրանց մեկնաբանությունները, կարծում ենք, Հայոց ցեղասպանության խնդրի գրական արտացոլման հետաքրքիր և ուշադրություն արժանի մոտեցումներ են:

Հայոց ցեղասպանության անբաժան մասը հանդիսացող իսլամացումները և ծայրալ հայերի⁴⁸⁶ խնդիրը գեղարվեստի նյութ է դարձրել Թուրքիայից Գերմանիա տեղափոխված Քեմալ Յալչընը: Եթե 2. Ծենոջաքը և Է. Ս. Օզդամարը ցեղասպանության թեմային անդրադառնում են հպանցիկ, փոքրիկ անդրադարձների ձևով, ապա Ք. Յալչընի «Քեզնով է սիրտս ուրախանում», «Սարը գելին» վեպերում և «Անատոլիայի զավակները. 100-ամյակի վկաները» փաստագրական-գեղարվեստական գրքում մանրակրկիտ ներկայացված է իսլամացված հայերի կյանքը, նրանց կրած զրկանքներն ու կորցրած երազանքները, ցեղասպանությունից մազապուրծ հայերի նկատմամբ թուրքական պետության վարած հետագա քաղաքականությունը:

⁴⁸³ Այս մասին մանրամասն տե՛ս Bildirici Hürriyet'in Dink Cinayetindeki Rolünü Yazdı, <http://www.agos.com.tr/tr/yazi/427/bildirici-hurriyetin-dink-cinayetindeki-rolunu-yazdi>.

⁴⁸⁴ Նույն տեղում:

⁴⁸⁵ Նույն տեղում:

⁴⁸⁶ Հայոց ցեղասպանության ընթացքում հայերի բռնի իսլամացումների և ժամանակակից Թուրքիայում ծայրալ հայերի դրությունն ու խնդիրների մասին տես՝ Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, 2010:

«Սարը գելին» վեպում ներկայացված Քյոլնում բնակվող ադրյամանցի մի քուրդ ընտանիքի պատմության համատեքստում բացահայտվում է թուրքական պետության վարած իսլամացման քաղաքականության ողջ խորությունը և դրա զոհերի ողբերգությունը, որ չի փարատվում նույնիսկ ցեղասպանությունից մեկ դար անց: «Սարը գելինը» առաջինն էր այն ստեղծագործություններից, որոնք լույս սփռեցին հայության տասնամյակներով մոռացված մի հատվածի՝ ծայրայ հայերի խնդրի վրա: Գրքի հերոսուհին՝ Շիրինը, դպրոցահասակ տարիքում է իմանում իր հայ լինելու մասին: Յայրը՝ հաջը Իբրահիմն է նրան պատմում. «Աղջիկս, մի ժամանակ մեծ աղետ է եղել, մեր հայ նախնիների մեծ մասը մահացել, սպանվել է... Ես էլ հաստատ չգիտեմ: Եղել անցել է: Կենդանի մնացողները փրկվելու, ապրելու համար իսլամ են ընդունել... Յերեկը մզկիթ էին գնում, գիշերները տանը գաղտնի-գաղտնի խաչակնքվում... Մի օր չէ, երկու օր չէ... Մարդիկ, ովքեր ամբողջ կյանքում ստիպված շրջապատից թաքուն են ապրել... Ահա մենք այդ մարդկանցից ենք: Իրար գիտենք: Ասեմ հայ ենք, հայ չենք, ասեմ մուսուլման ենք, մուսուլման էլ չենք: Մենք ահա այս բախտի մարդիկ ենք... Ազգուտակով, ցեղով, արմատով հայ ենք, լեզվով՝ քուրդ, կրոնով՝ մուսուլման: Մարդ առանց իր ցանկության ինչքան կարող է մուսուլման լինել, այդ չափով էլ ենք»⁴⁸⁷: Աղջկա համար վերջապես պարզ է դառնում, թե ո՞վքեր էին այն տարօրինակ «մերոնք»՝ մարդիկ, որոնք ժամանակ առ ժամանակ իրենց տուն էին գալիս, և ով, ծնողների հետխոսելիս, աչքերով խոսելու տարօրինակ, բոլորի համար անհասկանալի, գաղտնի լեզու էին օգտագործում⁴⁸⁸: Շիրինը, սակայն, չի հասկանում գաղտնի, ծայրված ապրելու իմաստը: Յայրը բացատրում է. «Նույնիսկ Գերմանիայում ապրելիս մարդ պիտի մտածի թուրքիայում մնացած բարեկամների մասին: Այս տարիքին եմ հասել, դեռ միջիցս վախը չեմ կարողանում վերացնել: Չուզեցի, դուք էլ վախի մեջ մեծանաք»⁴⁸⁹: Թուրքիայում տիրող վախի, անվստահության մթնոլորտն էլ ավելի ակնառու է դառնում, երբ Շիրինն արձակուրդներին գնում է Ադրյաման. հարազատներն

⁴⁸⁷ Yalçın K., Sarı Gelin, s. 59.

⁴⁸⁸ Նույն տեղում, էջ 49:

⁴⁸⁹ Նույն տեղում, էջ 62:

անընդհատ խնդրում են նրան զգուշ շարտահայտվել, ոչ ոքի չվստահել: Չորս կողմից նրան ասում են. «Աման, աղջիկս, նատաճիկ է: Մի վստահիր», «Աման, Շիրին, նա մերոնցից չի, լռիր», «Աղջիկս, ձագուկս, այ ստեղ Գերմանիա չէ: Ծառու շադիր եղիր, ու՞ր ես գնում, ի՞նչ ես ասում»⁴⁹⁰:

Ադըյամանցի ծպոյալ հայերի պատմությունների միջոցով հեղինակը ներկայացնում է ցեղասպանությունից հետո ել թուրքիայում ապրել շարունակող հայերի դաժան ճակատագիրը. «Անատոլիայում մնացած հայերը գրեթե արհամարված էին: Ստամբուլի հայերը դպրոցներ ունեին: Հայկական անուններ կարող էին օգտագործել: Սակայն այս իրավունքները Անատոլիայում, Ադըյամանում, Դիարբեքիում, Մարաշում, Մալաթիայում, Շըրնաքում, Բինգյուլում, Դերսիմում, Քասթամունում, Սինոփում և մնացած տեղերում չկար: Ավելին, նման իրավունքներ պահանջելն էր նույնիսկ վտանգավոր ցանկություն⁴⁹¹... Դպրոցում քուրդ լինելը մեղք էր, սակայն հայ լինելը՝ մեղք էր: Նույնիսկ հայ հոյանք էր»⁴⁹²: Շիրինն իմանում է նաև, որ տեղի հարուստների ունեցվածքի մեծ մասը հայերին է պատկանել. «Չկարծես, որ այդ տաճիկի հարստությունը հորից է մնացել: Հայ Հակոբի ունեցվածքով, կյանքով հարուստ դարձավ: Սակայն հարամ ունեցվածքը հալալ չի լինում: Աստված տա, մի օր մի ցավի գա, սատկի... Այն աղայի գլուխ գովալուն մի նայիր: Հայ աքսորյալների քարավանները կողոպտողների ղեկավարներից է եղել: Հայերի ոսկիները կարասներով է տուն բերել: Բայց Աստված ամեն ինչ գիտի, մի օր պատիժը կստանա»⁴⁹³: Բոլոր բարդություններին հակառակ «Կոտորածից փրկված մարդիկ նորից սկսեցին իրենց կյանքը դասավորել, երեխաներ ունենալ: Ադըյամանցի հայերը այդքան դժվարությունների, աղքատության մեջ երեխաներին դպրոց էին ուղարկում: Սակայն դպրոց գրանցված երեխաներին թուրքական անուններ էին տալիս»⁴⁹⁴: Դպրոցների և դասավանդման մեթոդների թեմային հեղինակի անդրադարձն առհասարակ շատ ուշագրավ է: Մի

⁴⁹⁰ Նույն տեղում, էջ 94:

⁴⁹¹ Նույն տեղում, էջ 111:

⁴⁹² Նույն տեղում, էջ 118:

⁴⁹³ Նույն տեղում, էջ 95:

⁴⁹⁴ Նույն տեղում, էջ 108:

քանի դրվագներ լավագույնս արտահայտում են թուրքական մերժողական քաղաքականության հիմնաքարերը: Մասնավորապես, գլխավոր հերոսների երեխաներին դպրոցում հանձնարարում են «Օսմանյան պետության կործանման շրջանում հայերի անջատողական գործողությունները» թեմայով ռեֆերատներ գրել⁴⁹⁵:

Իսկ «Անատոլիայի գավակները. 100-ամյակի վկաները» գրքի հերոսներից մեկը՝ ասորի Սաբրի Աթմանը ասում է. «Մեր ուսուցիչների սովորացրած առաջին սուտն այն էր, որ մայրենի լեզուն լավը չէ, վտանգավոր է, մեր մայրենի լեզվով խոսելը վատ է, և ամենուր՝ տանը, քաղաքում, ճանապարհին թուրքերեն խոսելն է ճիշտ»⁴⁹⁶: Նույն գրքում տեղ գտած Չայ Առաքելյան Եկեղեցու Գերմանիայի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Գարեգին Բեքչյանի խոսքերով նույնիսկ Ստամբուլի հայկական դպրոցներում հայ ուսուցիչները ստիպված էին աշակերտներին սովորեցնել, որ «հայերը թուրքերին մեջքից խփեցին: Դավաճանություն և խաբեբայություն արեցին: Մեր մեջ եղած հայ թշնամիները Օսմանյան կայսրության կործանման գործում արտաքին թշնամիների հետ համագործակցեցին»⁴⁹⁷: Չայկական դպրոցներում դասավանդվող պատմության դասագրքերի բովանդակությունը Գարեգին Սրբազանի խոստովանությամբ Ստամբուլից Գերմանիա տեղափոխվելու իր որոշման վրա ազդած կարևորագույն գործոններից էր: «Անատոլիայի գավակները. 100-ամյակի վկաները» գրքում ներկայացված Գարեգին Սրբազանի պատմությունը շատ հուզիչ է. «Ես բարեկամներ, քեռիներ, պապիկներ, տատիկներ չունեի: Նախանձում էի տատիկ-պապիկ ունեցող երեխաներին: «Մայրիկ, իմ տատիկ-պապիկներն ու՞ր են, - հարցնում էի: Մայրս կամ լռում էր, կամ էլ պատասխանում. «Մահացել են»: Ու սկսում էր լացել: Ոչ մի բան չէի հասկանում»⁴⁹⁸: Երբ 18 տարեկան դարձա, մայրս ասաց, որ մի շարք հիշողությունների, բայց ինձ չի ուզում պատմել, որ չտխրեցնի: Երբ պնդեցի. «Պատմիր դառը հիշողություններդ, ես էլ եմ ուզում իմանալ», պատմեց: «Որդիս, - ասաց, - իմ կողմը հարուստ,

⁴⁹⁵ Նույն տեղում, էջ 112:

⁴⁹⁶ Yalçın K., Anadolu'nun Evlatları: Yüz Yılım Tanıkları, Köln, 2008, s. 65.

⁴⁹⁷ Նույն տեղում, էջ 120:

⁴⁹⁸ Նույն տեղում, էջ 112:

շատ մեծ ընտանիք էր»: 1915 թ. սրանք արքայի ուղարկվեցին և նրանցից լուր էլ չեղավ: Մայրս, այս դառը հիշողություններն պատմելիս, սակայն չասաց, թե ինքն ու հայրս ինչպես են փրկվել: Մի քանի անգամ հարցրի: Ասաց. «Ոչ դու հարցրու, ոչ էլ ես ասեմ»⁴⁹⁹: Բոլոր զրկանքներին հակառակ հայերը փորձում էին շարունակել ապրել իրենց հայրենիքում, սակայն հանրապետության տարիներին էլ թուրքական իշխանությունների ձեռնարկած մի շարք միջոցառումներ ստիպում էին նրանց թողնել-հեռանալ: Այդ դեպքերից, 20 դասակարգ զորակոչին⁵⁰⁰, Ունեցվածքի հարկին⁵⁰¹, սեպտեմբերի 6-7 շարդարարություններին⁵⁰² անդրադառնալով՝ ք. Յալչընը հմտորեն ցույց է տալիս, որ թուրքական ցեղասպան քաղաքականությունը շարունակվել է նաև հանրապետական Թուրքիայում: «Սարը գելին» վեպում ասվում է. «Մնացածները [նկատի ունի ցեղասպանությունից փրկվածները - Ն. Պ.] նոր կյանք սկսեցին, անցյալի սարսափները փորձեցին մոռանալ, մեկ էլ 20 դասակարգ զորակոչ, հայ, հույն, ասորի տղամարդիկ բանակ զորակոչվեցին: Քրիստոնյա այս մարդկանց զենք չտվեցին: Շագանակագույն աղբահավաքի հագուստ տվեցին, ստիպեցին այսպես կոչված «բանվորական ջոկատներում» քար քաշել: Երբ «բանվորական ջոկատներից» վերադարձան, մտածեցինք «Փառք Աստծո, փրկվեցինք»: 1942 թ. Ունեցվածքի հարկի մասին օրենքը ընդունվեց: Թուրքիայի Հանրապետության քրիստոնյա քաղաքացիներին պարտադրվեց առեւտրի հարկ վճարել⁵⁰³: Նրանց, ովքեր չկարողացան վճարել, 1942 թ. ձմռանը ուղարկեցին Աշքալեում ստեղծված «աշխատաքնային ճամբար»⁵⁰⁴: 1950 թ. առաջին անգամ բազմակուսակցական ռեժիմին անցանք:

⁴⁹⁹ Նույն տեղում, էջ 113:

⁵⁰⁰ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Մելքոնյան Ռ., Եթնիկ զորակոչ Թուրքիայի հանրապետությունում (1941-1942 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2012, N 2-3, էջ 42-50:

⁵⁰¹ Ունեցվածքի հարկի մասին օրենքի ընդունման, կիրառման և հետևանքների մասին մանրամասն տե՛ս, Մելքոնյան Ռ., «Ունեցվածքի հարկը» կամ տնտեսության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում, Թուրքագիտական և Օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2008, N5, 127-143:

⁵⁰² Այդ շարդարարությունների մասին մանրամասն տե՛ս Մելքոնյան Ռ. Հ., 1955 թ. սեպտեմբերի 6-7 դեպքերը (Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների դեմ բռնությունների հերթական դրսևորում), Արևելագիտության հարցեր, Երևան, 2013, N 8, էջ 144-156:

⁵⁰³ Yalçın K., Sarı Gelin, s. 123.

⁵⁰⁴ Նույն տեղում, էջ 124:

Ընտրություններ եղան: Մենդերեսը կառավարություն ստեղծեց: ... Կարծեցինք, ժողովրդավարություն է, փրկվեցինք, մեկ էլ 1955 թ. սեպտեմբերի 6-7 գիշերը Ստամբուլում քրիստոնյաների, հատկապես հույների, խանութները, ունեցվածքը, գույքը, տները, եկեղեցիները թալանվեցին, այրվեցին, ջարդվեցին...⁵⁰⁵»: Սարսափելի մանրամասներով տասնյակ նման պատմություններ են տեղ գտել նաև «Անատոլիայի գավառները. 100-ամյակի վկաները» գրքում: Գարեգին Սրբազանը, օրինակ, պատմում է, որ իր հորը, ով ընդամենը մի աղքատ կոշկակար էր, պարտադրել են ահռելի հարկ վճարել և չվճարելու համար աքսորել Աշքալե⁵⁰⁶: Գրքի մեկ այլ հերոսի՝ Գարո էրոյանի որդու խոսքերով, նրա հայրը, հորեղբայրն և նրանցից տարիքով ավելի մեծ քեռին երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին բանակ են զորակոչվել: Չորս տարվա ընթացքում նրանց գենք չեն տվել, ռազմական գործի հետ կապված որևէ կրթություն չեն ստացել, «աղբահավաքի» շագանակագույն հագուստով քարի հանքերում են աշխատել⁵⁰⁷: XX դարի կեսերի թուրքական վայրագության ակնաստես Ջովհաննես Գարավարյանը պատմում է, որ 1941 թ. մի օր առավոտյան եկել և առանց նախազգուշացման հորն ու իրենց թաղամասի մյուս հայերին տարել են⁵⁰⁸: Որոշ ժամանակ անց, իմանալով, որ նրանք ողջ են, հույս կա, որ կվերադառնան, շատ են ուրախացել⁵⁰⁹: Սակայն, զորակոչից վերադառնալուց ամիսներ անց նրա հայրը կրկին աքսորվել է, այս անգամ Աշքալե Ունեցվածքի հարկը չվճարելու համար⁵¹⁰: Մեկ այլ ակնաստեսի Վարդգես Գաբրիելյանի վկայությամբ 20 դասակարգ զինակոչվածների թվում եղել են հաշմանդամներ, հոգեկան հիվանդներ⁵¹¹: Իսկ 1955 թ. Վ. Գաբրիելյանի խոսքերով «այնքան վատ, կեղտոտ բաներ արեցին, որ խիղճ ունեցող մարդը չէր կարողանա անել: Աղջիկների, կանանց նկատմամբ էլ շատ վատ վարվեցին»⁵¹²: 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի ջարդարարությունների մասին խոսելիս հարկ է անդրադառնալ նաև Գերմանիայի թերևս

⁵⁰⁵ Նույն տեղում:

⁵⁰⁶ Yalçın K., Anadolu'nun Evlatları: Yüz Yılım Tanıkları, s. 111-112.

⁵⁰⁷ Նույն տեղում, էջ 228:

⁵⁰⁸ Նույն տեղում, էջ 242:

⁵⁰⁹ Նույն տեղում, էջ 245:

⁵¹⁰ Նույն տեղում, էջ 248:

⁵¹¹ Նույն տեղում, էջ 427:

⁵¹² Նույն տեղում, էջ 431:

ամենահայ տնի թուրք գրողներից մեկի՝ Արաս Օրենի գնահատականին. «1950-ականներին սկսվեց գյուղերից Ստամբուլ միլիոնների հասնող մեծ աշխատանքային միգրացիան, որ այսօր էլ շարունակվում է: Սա անցողիկ, սեզոնային միգրացիա էր: Մնայուհի էր: Քաղաքի նոր բնակիչները իրենց հետքերեցին այլ ժամանակի պատկանող կյանք ու մշակույթ և, օրեցօր Ստամբուլի սեփական ժամանակի կոսմոպոլիտ դեմքը շեղելով, մեծ քաղաքին ինտեգրվելու փոխարեն իրենց բերած մշակույթը իշխող դարձրին: Նրանց գալուց հետո 1955 թ. սեպտեմբերի 6-ի և 7-ի, Կիպրոսյան առաջին ճգնաժամը պատրվակ դարձնելով, առաջին հերթին քաղաքի հունական փոքրամասնության, ապա նաև մնացած փոքրամասնությունների նկատմամբ չափ ու սահման չունեցող ջարդարարությունների, վանդալիստական գործողությունների արդյունքում հույն, հրեա ու հայ փոքրամասնությունները հեռացան հարյուրամյակներով ապրած քաղաքից, քաղաքի մոզակյան մաս-մաս եղավ: Ստամբուլի նախկին մշակութային ժամանակն ավարտվեց»⁵¹³:

Այսպիսով, Չայոց ցեղասպանության խնդիրը 1990-ականների սկզբից եղել է գերմանաբնակ թուրքերի առաջադեմ ներկայացուցիչների ուշադրության ոլորտում: Թուրք գրողների երբեմն մանրամասն, երբեմն էլ հպանցիկ անդրադարձները մի կողմից մասնագետներին ուսումնասիրման համար բավական հետաքրքիր նյութ են տալիս, մյուս կողմից էլ հասարակ գերմանացի կամ թուրք ընթերցողին թույլ են տալիս ծանոթանալ XX դարասկզբի մեծ ողբերգության առանձին դրվագների հետ:

⁵¹³ Ören A., Özel Bir Sürgün, s. 28.

ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության մեջ ներկայացված Գերմանիայի թուրքական «համայնքային» գրականության կայացման ու զարգացման հիմնական փուլերի ուսումնասիրման, թուրքաբանակ և գերմանաբանակ թուրք գրողների ստեղծագործությունների վերլուծության, դրանց թեմատիկ ու ժանրային առաձևահատկությունների վերհանման արդյունքում եկել ենք հետևյալ եզրակացությունների.

1. 1950-60-ականների եվրոպական «տնտեսական հրաշքի» համատեքստում սկիզբ առած հյուր-աշխատողների ներգաղթի արդյունքում Գերմանիայում ձևավորվեց թուրքական մեծ համայնք, որի ինտեգրումն ընդունող հասարակությանը միջարք պատճառներով ամբողջական չէ: Այս ուղղությամբ իշխանությունների ձեռնարկած միջոցները բավարարողունքներ չեն տալիս: Միևնույն ժամանակ փաստ է, որ միգրանտներն իրենց տեղն ունեն հասարակության բոլոր օղակներում՝ քաղաքականությունից և տնտեսությունից մինչև մշակույթ ու սպորտ:
2. Թուրքիայից Գերմանիա միգրացիան այնքան կարևոր և մասշտաբային երևույթ էր թուրքական իրականությունում, որ իր արտացոլումը գտավ գրականության մեջ: 1960-80-ականներին թուրք գրականության մեջ ձևավորվեց և իր տեղը գտավ «գասթարբայթերական» թեմատիկան: Այդ խնդիրներին անդրադարձող գրողների մեծ մասը, մի քանի տարի Գերմանիայում աշխատելով կամ քաղաքական պատճառներով այնտեղ հայտնվելով, թղթին են հանձնում իրենց փորձառությունը, որը հազարավոր հյուր-աշխատողների ապրած կյանքի հավաքական ներկայացումն էր:
3. Թուրք գրականության մեջ «գասթարբայթերական» ուղղության զարգացմանը զուգահեռ Գերմանիայում 1960-ականների վերջից ի հայտ եկավ նոր յուրատեսակ «համայնքային գրականություն», որի շրջանակներում գերմանաբանակ թուրքերի խնդիրներին են անդրադառնում հենց այնտեղ բնակություն հաստատած գրողներ: 1960-80-

ականները կարելի է անվանել Գերմանիայի թուրք գրականության առաջին փուլ :

4. 1980-ականների կեսերից թուրք գրողները արժարժում են երկու մշակույթների համատեղ խաղաղ գոյակցության հարցը՝ համարյա մեկ ու կես տասնամյակով նախորդելով Գերմանիայում բազմամշակութայնության գաղափարի պաշտոնական ներդրմանը : 1980-ականների վերջից Գերմանիայի թուրք գրականությանը մտնում է զարգացման նոր փուլ՝ վերածվելով թուրքական ու գերմանական մշակույթների, երկու հասարակությունների շփման, համադրման արդյունքում ձևավորվող նոր, երրորդ հարթության, որի կրողներն են թե՛ թուրքերը, թե՛ գերմանացիները :
5. Վերջին քսան-քսանհինգ տարիների ընթացքում ինքնության խնդիրը ամենատարբեր արտահայտումներով առանցքային դեր ունի Գերմանիայի թուրք գրողների ստեղծագործություններում : Սեփական «ես»-ի փնտրտուքների ճանապարհներին գրողները, ծայրահեղությունից ծայրահեղություն ընկնելով, մերթ ժխտում են թուրքականությունը, մերթ դառնում մոլի ազգայնական, մերթ ընդհանրապես խուսափում այդ խնդրի քննարկումից :
6. 1990-ականների սկզբից Հայոց ցեղասպանության խնդիրը գերմանաբնակ թուրքերի առաջադեմ ներկայացուցիչների հետաքրքրությունների շարքում է : Իրենց ստեղծագործություններում հպանցիկ անդրադարձներով թուրք գրողներ Է. Ս. Օզդամարը, Չենոջաքը, Ք. Յալչընը ներկայացնում են ցեղասպանության ողջ ընթացքը՝ բռնի տեղահանությունից մինչև հայերի ունեցվածքի սեփականացում : Երբեմն բացահայտ, երբեմն էլ տողատակերում թաքնված ակնարկներով ներկայացնում են եղելությունը : Նույն հեղինակներն իրենց հրապարակախոսական ելույթներում բացեիբաց քննադատում են թուրքական իշխանությունների ժխտողականությունը, կոչ անում ճանաչել անցյալում գործած դաժանությունները :

Աղբյուրներ

ա) ռուսերեն

1. Ёылдыз Б., Солнце в стене, в сборнике: Утургаури С., Баролина И., Солнце в стене: повести и рассказы турецких писателей, Москва, Наука, 1979, 215 стр.

բ) թուրքերեն

2. Ağaoğlu A., Fikrimin İnce Gülü, İstanbul, İş Bankası Kültür Yayınları, 2006, 272 s.
3. Akçam D., Sevdam Ürktü, Ankara, Simavi Yayınları, 1998, 118 s.
4. Baykurt F., Yarım Ekmek, İstanbul, Adam Yayınları, 2002, 344 s.
5. Baykurt F., Koca Ren, İstanbul, Adam Yayınları, 2003, 291 s.
6. Baykurt F., Barış Çöreği, İstanbul, Remzi Kitabevi, 1982, 192 s.
7. Baykurt F., Yüksek Fırımlar, İstanbul, Adam Yayınları, 2002, 350 s.
8. Behran N., Gurbet, İstanbul, Gendaş, 1998, 430 s.
9. Behran N., Kız Ali, İstanbul, Everest Yayınları, 2001, 167 s.
10. Bektaş H., Kapıkule Nerde, İstanbul, Derinlik Yayınları, 1983, 123 s.
11. Bektaş H., Hamriyanım, İstanbul, Remzi Kitabevi, 1989, 224 s.
12. Bektaş H., Gölge Kokusu, İstanbul, Can Yayınları, 2000, 245 s.
13. Canbolat M., Vatan Haini Niyazi. İstanbul, Gül Yayınları, 1999, 240 s.
14. Dal G., E-5, İstanbul, Karacan Yayınları, 1979, 232 s.
15. Dal G., İş Sürgünleri, İstanbul, Milliyet Yayınları, 1976, 168 s.
16. Dal G., Kolları Yolunmuş Maymun, İstanbul, Inter Yayınları, 1988, 360 s.
17. Demirkan R., Üç Şekerli Demli Çay, İstanbul, Real Yayınları, 1991, 105 s.
18. Kara Y., Selam Berlin, İstanbul, Inkilap, 2004, 359 s.
19. Ören A., Beklenmedik Bir Ziyaretçi, İstanbul, AFA Yayınları, 1995, 324 s.
20. Ören A., Berlin Savignyplatz, İstanbul, AFA Yayınları, 1993, 192 s.
21. Ören A., Muhteşem Gündoğdu, İstanbul, Everest Yayınları, 2011, 145 s.
22. Ören A., Nar Çiçeği, İstanbul, AFA Yayınları, 1988, 204 s.
23. Ören A., Özel Bir Sürgün, İstanbul, Dünya Yayınları, 2004, 120 s.
24. Özdamar E. S., Annedili, İstanbul, İlteşim, 2013, 103 s.
25. Özdamar E. S., Aynadaki Avlu, İstanbul, Yapı Kredi Yayınları, 2012, 152 s.

26. Özdamar E. S., Haliçli Köprü, İstanbul, Turkuvaz Kitap, 2008, 264 s.
27. Özdamar E. S., Hayat Bir Kervansaray, İstanbul, Turkuvaz Kitap, 2008, 289 s.
28. Özdamar E.S., Tuhaf Yıldızlar Dünyaya Bakıyorlar Gözlerini Kırpmadan, İstanbul, İletişim, 2012, 212 s.
29. Özgen E., Derin Sularda, İstanbul, Cem Yayınevi, 1990, 85 s.
30. Pazarkaya Y., Oturma İzni, İstanbul, Derinlik Yayınları, 1977, 143 s.
31. Pazarkaya Y., Kemal ile Burak. Cennet Ülkesine Yolculuk, Ankara, Türkiye İş Bankası, 1998, 151 s.
32. Scheinhardt S., Pusuda Kin, İstanbul, Belge Yayınları, 2006, 144 s.
33. Şenocak Z., Dünyanın İki Ucu, İstanbul, Alef Yayınları, 2011, 152 s.
34. Şenocak Z., Tehlikeli Akrabalık, İstanbul, Alef Yayınları, 2006, 128 s.
35. Şenocak Z., Yolculuk Nereye, İstanbul, Alef Yayınları, 2007, 104 s.
36. Sonay A., Burada Yaşamak İstiyorum, İstanbul, Arion Yayınları, 1999, 214 s.
37. Turan S., Şok. Bir Hostein Anıları, İstanbul, Milliyet Yayınları, 1993, 135 s.
38. Yalçın K., Yaşama Gücü, İstanbul, Say Yayınları, 2013, 240 s.
39. Yalçın K., Anadolu'nun Evlatları: Yüz Yılın Tanıkları, Köln, 2008, 640 s.
40. Yalçın K., Sarı Gelin, İstanbul, Bir Zamanlar Yayıncılık, 2005, 290 s.
41. Yıldız B., Alman Ekmeği, İstanbul, Everest Yayınları, 2011, 82 s.
42. Yıldız B., Beyaz Türkü, İstanbul, Everest Yayınları, 2010, 75 s.
43. Yıldız B., Türkler Almanya'da, İstanbul, Everest Yayınları, 2012, 195 s.

Մենագրություններ

ա) հայերեն

1. Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության (1920-ականներից մինչև մեր օրերը), Երևան, ՎՄՎ-պրինտ, 2010, 104 էջ:
2. Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2010, 184 էջ:
3. Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության թեման արդի թուրքական գրականության մեջ, Երևան, ՎՄՎ-պրինտ, 2010, 128 էջ:

4. Նահապետյան Յ., Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայկական գործունեությունը, Երևան, «Նորավանք» ԳԿՅ, 2010, 262 էջ:
5. Պողոսյան Ն., Կարապողոսյան Ս., Թուրքիայի Հանրապետության և թուրքական սփյուռքի համագործակցության հակահայկական ուղղվածությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, 146 էջ:
6. Ջրբաշյան Էդ., Գրականագիտության ներածություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, 416 էջ:
7. Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1980, 496 էջ:
8. Սաֆարյան Ա., Չիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», Երևան, ԵՊՀ հրատ., 2012, 300 էջ:
9. Սաֆրասյան Ռ., Մելքոնյան Ռ., Դուրմանյան Ա., Տեր-Մաթևոսյան Վ., Չաքրյան Հ., Հովհաննիսյան Ա., Թուրքիայի Հանրապետության պատմություն, Բուհական դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, 396 էջ:

բ) ռուսերեն

1. Алькаева Л., Бабаев А., Турецкая литература. Краткий очерк, Москва, Наука, 1967, 190 стр.
2. Алькаева Л., Из истории турецкого романа (20-50-е годы XX в.), Москва, Наука, 1975, 278 стр.
3. Алькаева Л., Очерки по истории турецкой литературы (1908-1939), Москва, изд. АН СССР, 1959, 220 стр.
4. Алькаева Л., Сюжеты и герои в турецком романе, (конец XIX начало XX вв), Москва, Наука, 1966, 187 стр.
5. Бабаев А., Очерки современной турецкой литературы, Москва, Наука, 1959, 251 стр.
6. Баролина И., Турецкая народная песня/Тюркские литература и фольклор, Москва, 2004, 287 стр.
7. Бахтин М., Вопросы литературы и эстетики: Исследования разных лет, Москва, 1975.
8. Меликли Т., История литературы Турции, Москва, Рема, 2010, 266 стр.
9. Меликли Т., Литература Турции: Корни и крона, Москва, Рик Русанова, 1998, 160 стр.

10. Репенкова М., От реализма к постмодернизму. Современная турецкая проза, Москва, Гуманитарий, 2008, 289 стр.
11. Розалиев Ю., Классы и классовая борьба в Турции, Москва, Наука, 1967, 167 стр.
12. Розалиев Ю., Особенности развития капитализма в Турции (1923-1960 гг.), Москва, ИВЛ, 1972, 654 стр.
13. Розалиев Ю., Экономическая история Турецкой Республики, Москва, Наука, 1980, 304 стр.
14. Саррацин Т., Германия. Самоликвидация, Москва, Рид-групп, 2012, 400 стр.
15. Старченков Р., Трудовые ресурсы Турции. Демографический, экономический и социальные аспекты, Москва, Наука, 1981, 202 стр.
16. Старченков Р., Проблема занятости и миграции населения Турции, Москва, Наука, 1975, 168 стр.
17. Утургаури С., Турецкая проза 60-70-х годов: основные тенденции развития, Москва, Наука, 1982, 215 стр.
18. Фиш Р., Писатели Турции: Книги и судьбы, Москва, Советский писатель, 1963, 269 стр.
19. Фиш Р., Турецкие дневники. Встречи. Размышления, Москва, Наука, 1977, 208 стр.
20. Хализев В. Е., Теория литературы, Москва, Высшая школа, 2002, 437 стр.
21. Яковлева Н., Турецкая новелла от первых шагов до поры зрелости, «Плата за молчание: рассказы турецких писателей», Москва, изд. Художественная литература, 1974, 368 стр.

գ) անգլերեն

1. Adelson L. A., The Turkish Turn in Contemporary German Literature: Toward a New Critical Grammar of Migration, New York, Palgrave Macmillan, 2005, 274 p.
2. Halman T. S., A Millenium of Turkish Literature (Concise history), Ankara, Ministry of Culture and Tourism, 2009, 224 p.
3. The Cambridge History of Turkey, vol. 4: Turkey in the Modern World, Edited by Reşat Kasaba, Cambridge: Cambridge university press, 2008, 567 p.
4. Zafer Şenocak, ed. By Cheessman T., Yeşilada K., Cardiff, University of Wales Press, 2003, 150 p.

η) ρηΛ ρρτρητς

1. Almanya'ya Emek Göçü - Bir Bavul, Umut ve Hayalleriyle Çıktılar Yola, Editörler: Fındıkçiođlu Ü. S., Güler E. Z., İstanbul, Yazılama Yayınevi, 2012, 220 s.
2. Aytaç G., Çađdaş Türk Romanı Üzerine İncelemeler, Ankara, Dođu Batı Yayınları, 2012, 480 s.
3. Batı Avrupa Türkleri F. Almanya'da 30. yıl, Ankara, Avrupa Türk İslam Birliđi, 1992, 164 s.
4. Beş Romancı Köy Romanı Üzerine Tartıřıyor, İstanbul, Düşün yayınevi, 1960, 95 s.
5. Ecevit Y., Türk Romanında Postmodernist Açılımlar, İstanbul, İletişim , 2004, 240 s.
6. Gitmez A. S., Yurtdışına İşçi Göçü ve Geri Dönüşler "Beklentiler...Gerçekleşenler", İstanbul, Alan, 1983, 295 s.
7. Gür M., Sütü Küstürmek. Almanya'da Anadolu Kadınları, İstanbul, Günizi Yayınları, 2004, 319 s.
8. Keskin H., Göçün 50 Yılında Türklerin Gölgesinde Almanya. Geleceđe Yönelik Uyum Politikası İçin Görüşler, İstanbul, Dođan Kitap, 2011, 212 s.
9. Koçak B., Kiliñç K. Avrupa'nın Türk Patronları: En Üsttekiler, İstanbul, Ekonomi vitrini, 1996, 525 s.
10. Mortan K., Sarfati M., Vatan Olan Gurbet. Almanya'ya İşçi Göçünün 50. Yılı, İstanbul, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 2011, 370 s.
11. Onur B., Alman Kültüründe Türk İmgesi 1, Ankara, Gündođan, 1993, 208 s.
12. Onur B., Almanya'da Türk Kültürü- Çok-Kültürlülük- KültürlerarasıEđitim; İstanbul, Bilgi Üniversitesi Yayınları, 2012, 380 s.
13. Öztürk A.O., Alamanya Türküleri: Türk Göçmen Edebiyatının Sözlü Öncü Kolu, Ankara, Kültür bakanlıđı yayınları, 2001, 302 s.
14. Pürsün D., Nasıl Kazandılar – Almanya'da Zirveye Çıkan Türk İşadamları Anlatıyor, İstanbul, Gül yayınları 1998, 253 s.
15. řen F., 50. Yılında Göç, Ankara, Kültür Bakanlıđı, 2011, 336 s.
16. Sönmez T., Yeryüzü Gurbeti: İsveç, F. Almanya, Türkiye, İstanbul, Yansıma, 1981, 175 s.
17. Turan K., Almanya'da Türk Olmak, İstanbul, Sümer Yayınları, 1992, 287 s.
18. Türkdođan O., İkinci Neslin Dramı Avrupa'daki İşçilerimiz ve Çocukları, İstanbul, Orkun Yayınevi, 1984 , 223 s.
19. Uđurlu A.R., Almancı Yabancılar. İstanbul, İlgi yayınevi, 1997, 94 s.

20. Ünlü M., Türkçede Öykü-Roman, İstanbul, İnkilap Kitabevi, 2009, 624 s.
21. Ünver C. O., Otuzbeş Yıllık Göç ve Bürokrasi Tanıklıklarım, Ankara, Phoenix, 2008, 333 s.
22. Wallraf G., En Alttakiler, Köln, Milliyet yayınları, 1986, 263 s.

Գիտական հոդվածներ

ա) հայերեն

1. Գալ շոյան Ա., Դասակարգերի փոխհարաբերության խնդիրը Յաջար Քեմալի «Թիթեղը» վիպակում, Արևելագիտության հարցեր, հ. 7, Երևան, 2012, էջ 342-362:
2. Դումանյան Ա., Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում 1960-70-ական թթ., Թուրքագիտական և Օսմանագիտական հետազոտություններ, հ. 4, Երևան, 2006, էջ 103-113:
3. Խաչատրյան Է., Օրհան Քեմալ. գրական դիմանկարի փորձ, Արևելագիտության հարցեր, հ. 7, Երևան, 2012, էջ 363-370:
4. Մարտիրոսյան Ա., Թուրքական քաղաքական վեպի թեմատիկառանձնահատկությունների շուրջ (1980-ական թվականներ), Արևելագիտության հարցեր, հ. 7, Երևան, 2012, էջ 371-378:
5. Մարտիրոսյան Ա., Քաղաքական վեպի ժանրի ձևավորումն ու զարգացումը թուրքական գրականության մեջ (XX դարի 50-70-ական թթ.), Գարուն, թիվ 11-12, Երևան, 2012, էջ 20-24:
6. Մելքոնյան Ռ., Թուրք գրող Ֆաբիր Բայքուրթը, Նոր-դար, N 4, Երևան, 2004, էջ 117-124:
7. Մելքոնյան Ռ., «Գասթարբայթերների» թեմատիկական թուրք գրող Ֆաբիր Բայքուրթի ստեղծագործություններում, Արևելագիտության հարցեր, N 6, Երևան, 2006, էջ 258-261:
8. Մելքոնյան Ռ., «Ունեցվածքի հարկը» կամ տնտեսության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում, Թյուրքագիտական և Օսմանագիտական հետազոտություններ, N 5, Երևան, 2008, էջ 127-143:
9. Մելքոնյան Ռ., 1955 թ. սեպտեմբերի 6-7 դեպքերը (Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների դեմ բռնությունների հերթական դրսևորում), Արևելագիտության հարցեր, N 8, Երևան, 2013, էջ 144-156:

10. Մելքոնյան Ռ., «Գյուղական ինստիտուտները» և գրական կյանքը
Թուրքիայում (1940-50-ական թթ.), Կանթեղ, N 1 (22), Երևան, 2005, էջ
139-144:
11. Մելքոնյան Ռ., Էթնիկ գորակոչ Թուրքիայի
հանրապետությանում (1941-1942թթ.), ՀՀ ԳԱԱ, Լրաբեր
հասարակական գիտության նսենրի, N 2-3, Երևան, 2012, էջ 42-50:
12. Մելքոնյան Ռ., Թուրք գրող Ֆաթիմ Բայբուրթի «Գերանդիս» վեպը,
Գարուն, N 12, Երևան, 2004, էջ 71-73:
13. Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրը Թուրքիայում,
ընդհանուր պատկերի ուղղագծման փորձ, 21-րդ դար, N 1, Երևան,
2008, էջ 107-123:
14. Սահակյան Լ., Դավթյան Ա., Յաքուբ Քարիի Քարասմանօղլում.
Գրական դիմանկարի փորձ, Կանթեղ, N 1, Երևան, 2010, էջ 41-50:

բ) ռուսերեն

1. Губанов Н., Роль диаспоры в системе турецко-германских экономических отношений, Современная Турция: проблемы и решения, Москва, Институт Ближнего Востока, Институт Востоковедения, РАН, 2006, стр. 184-214.
2. Кудашова Ю., К проблеме адаптации турецких мигрантов в Германии (Литературоведческий аспект), Современные проблемы науки и образования, № 3, 2009, стр. 126-127, http://www.science-education.ru/download/2009/03/2009_03_099.pdf.
3. Кутузова И., К проблеме «пограничья» в литературном творчестве турецких мигрантов Германии, Современные проблемы науки и образования № 3, 2009, стр. 127-128, http://www.science-education.ru/download/2009/03/2009_03_099.pdf.
4. Маштакова Е., К истории турецкого романа, Вопросы тюркской филологии, выпуск 4, Москва, изд. центр ИСАА при МГУ, 1999, стр. 207-216.
5. Маштакова Е., Утургаури С., Современные исследования советских тюркологов литературного процесса в Турции, Советская тюркология, N 6, Баку, АН Азербайджанской ССР, 1986, стр. 34-39.
6. Прокопович А., Социально-экономические проблемы миграции турецких рабочих в страны Западной Европы, Турция: История, экономика, политика, Москва, Наука, 1984, стр. 233-247.

7. Слободенюк В., Художественная литература турецкой диаспоры в Германии во второй половине XX-го начале XXI-го века: к вопросу о культуре пограничья, Научные проблемы гуманитарных исследований, N 4, Пятигорск, 2011, стр. 33-38.
8. Сумленный С., Турецкое население Германии: Бомба замедленного действия, «21-й ВЕК», N 1 (3), 2006, стр. 47-61.
9. Утургаури С., О некоторых особенностях современного турецкого критического реализма (на примере новеллистики Бекира Ыылдыза), Народы Азии и Африки: история, экономика, культура, N 6, Москва, Наука, 1976, стр. 114-124.
10. Утургаури С., Турецкая диаспора в Германии. Социокультурная эволюция, Сборник "Ближний Восток и современность". Выпуск 21. Москва, ИИИиБВ, 2004, стр. 457-467.

գ) անգլերեն

1. Bozkurt A., Education the key for Germany's Turks, <http://www.todayszaman.com/columnist-261884-education-the-key-for-germanys-turks.html>.
2. Diehl C., BlohmSource M., Rights or Identity? Naturalization processes among "Labor Migrants" in Germany, International Migration Review, vol. 37, No. 1 (Spring, 2003), New York, The Center for Migration Studies, pp. 133-162.
3. Gramling. D., The Caravansarai turns twenty:or rethinking new German literature in Turkish?, pp. 55-83, <http://www.journals.İstanbul.edu.tr/iuaded/article/view/1023010317/1023009556>.
4. Hoff H., Fifty years after the invite, Turks Are Still Outsiders in Germany, <http://www.time.com/time/world/article/0,8599,2026645,00.html>.
5. Kaya A., Aesthetics or diaspora: contemporary minstrels in Turkish Berlin, Journal of Ethnic and Migration Studies, vol. 28, No 1, January 2002, pp. 43-62.
6. Laurence J., Islam and citizenship in Germany, Muslim integration: challenging conventional wisdom in Europe and The United States, Washington DC, 2007, pp. 53-67.
7. Şenocak Z., A genocide denied, 11.05.2005, <http://www.signandsight.com/features/154.html>.
8. Şenocak Z., Turkey: the lost generation, http://www.ghi-dc.org/files/publications/bu_supp/supp006/bus6_175.pdf.

դ) թՈՒ ՐՔԵՐԵՆՆ

1. Ataseven F., Arafta Üretilen Yazınsal Metinler, Turkish migration conference selected proceedings, editors: Seker G., Tilbe A., Ökmen M., Yazgan P., Eroğlu D., Sirkeci İ, London, Transnational press, s. 505-512.
2. Boyacı İ., Pazarkaya Örneğinde Göçmen Türk Aydınının Kimlik Problemi ve Bu Problemin Çözümü, Turkish Studies: International Periodical For the Languages, Literature and History of Turkish or Turkic, vol. 5/2, Spring, 2010 , s. 878-896.
3. Bulut F., 68 Kuşağı Gençlik Olaylarının Uluslararası Boyutu ve Türkiye’de 68 Kuşağına Göre Atatürk ve Atatürkçülük Anlayışı, Çağdaş Türkiye Tarihi Araştırmaları Dergisi, XI/23, 2011/Güz, Buca-İzmir, s. 123-149, http://web.deu.edu.tr/ataturkilkeleri/ai/uploaded_files/file/dergi_23_en_on/06_.pdf.
4. Çelik R., 20. Yüzyılın İkinci Yarısında Rus Edebiyatında Ve Türk Edebiyatında Köye Yaklaşım, Turkish Studies International Periodical For the Languages, Literature and History of Turkish or Turkic, vol. 4 /8, Fall 2009, s. 791-803.
5. Demircioğlu M., Federal Almanya’dan Kesin Dönüş Yapan İşçilerimizin Sosyo - Politik Sorunları, www.journals.istanbul.edu.tr/iusskd.
6. Ekiz T., Avrupa Turk Edebiyatı ve Bir Temsilcisi: Emine Sevgi Özdamar, Journal of arts and science, N 7, Ankara, Çankaya universitesi, 2007, s. 33-47.
7. Göbenli M., Göç ve Edebiyat, Multitudes/Altyazı, Paris, 2003, No. 3-4, s. 3-11.
8. Göksu T., Türkiye’nin Dış Göç Politikası, 21. yüzyılında Türk Dış politikası, Editör İ Bal, İstanbul, 2004, s. 125-138.
9. Kocadoru Y., Yüksel Pazarkaya ve Nevfel Cumart’ın Şiirlerindeki Almanya İmgelerinin Karşılaştırılması, Osmangazi Üniversitesi Sosyal Bilimler Dergisi, c. 5, N 1, 2004, s. 67-73.
10. Özbakır İ., Almanya “Konuk İşçi Edebiyatı’nın bir Türk Temsilcisi Renan Demirkan’ın Üç Şekerli Demli Çay”ında Kimlik Problemi, Türklük Bilimi Araştırmaları, N 9, 2000, s. 211-222, <http://www.ibrahimozbakir.com/privat/makaleler/demirkan.pdf>.
11. Öztürk A.O., Göçmen Edebiyatı Olarak Almanya Türküleri Üzerine, <http://www.turkuler.com/yazi/gocmenedebyati.asp>.

12. Pazarkaya Y., Göç Süreciyle Yurtdışında Oluşan Türk Edebiyatı, Türk Edebiyatı Tarihi, c. 4, Ankara-İstanbul, TC kültür ve turizm bakanlığı yayınları, 2007, s. 579-593.
13. Topçu H., Avrupa ve Amerika'da Türk Edebiyatı, Turkish Studies International Periodical For the Languages, Literature and History of Turkish or Turkic, vol. 4 /1-I Winter 2009, s. 701-734.
14. Zengin E., Türk- Alman Edebiyatına Tarihsel Bir Bakış ve Bu Edebiyata İlişkin Kavramlar. Hacettepe Üniversitesi Türkiyat Araştırmaları Dergisi, 2010 Bahar (12), s. 329-349, <http://hutad.hacettepe.edu.tr/index.php/hutad/article/viewFile/121/87>.

ԷԼ ԵԿՍՊՈՆԱՅ ԻՆ ԿԱՅ ՔԵՐ ՎՅՈՒԼ ՐՔԵՐԵՆՆ

1. Alman Siyasetinde Türk Kökenliler, <http://www.dw.de/alman-siyasetinde-t%C3%BCrk-k%C3%B6kenliler/a-15481848>.
2. Başbakan Erdoğan'dan 'Mavi Kart' Sürprizi, <http://www.Turkpress.De/Siyaset/Basbakan-Erdogandan-mavi-kart-surprizi>.
3. Bildirici Hürriyet'in Dink Cinayetindeki Rolünü Yazdı, <http://www.agos.com.tr/tr/yazi/427/bildirici-hurriyetin-dink-cinayetindeki-rolunu-yazdi>.
4. Cumhurbaşkanı Gül'ün Türk ve Alman Gazetelerine Ortak Demeci Açıklaması, <http://www.sondakika.com/haber-cumhurbaskani-gul-un-turk-ve-alman-gazetelerine-2991833/>.
5. Göç Türküleri, <http://www.ozturk.de/kose.php?id=160>.
6. Hastürk M., Almanya siyasetinde Türk rüzgârı esiyor, <http://www.sabah.com.tr/dunya/2011/12/06/almanya-siyasetinde-turk-ruzgri-esiyor>.
7. Alamanya, Alamanya.... http://www.youtube.com/watch?v=0Ck_JOBqY0.
8. Kızılbuğa M., Almanya'da Neler Var, <http://mutlukizilbuga.blogspot.com/2014/01/almanyada-neler-var.html>.
9. Pulur H., Alamanya Yangınları, <http://www.milliyet.com.tr/2008/02/22/yazar/pulur.html>.
10. Sever M., Ahlaklı, Zeki Ve Çalışkan Türk İşçisi!, <http://www.sabah.com.tr/Pazar/Yazarlar/sever/2011/04/17/ahlakli-zeki-ve-caliskan-turk-iscisi>.